-486-

ՍՈՑՇԻՆԱՐԱՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏՆԵՐԻ Ի ՅԵՎ II ԿՈՒՐՍԵՐԻ ՀԱՄԱՐ
(ԽՍՀՄ ՎԱՐԻԱՆՏ)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԾԵՐԵՎԱՆ 1932

-486-
491.549-86
8 DEC 2017

ՍՈՑՇԻՆԱՐԱՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏՆԵՐԻ I ՑԵՎ II ԿՈՒՐՍԵՐԻ ՀԱՄԱՐ

(ԹԱՌԸ ՎԱՐԻԱՆՏ)

Կազմեցին՝ 1. ԳԵՐԵՆԻԿ ՍԱՑՍԱԴՅԱՆ
2. ԳԵՐԱՍԻՄ ԱՂԱՍՅԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ԵՐԵՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԵՎԱՆ 1932

Հայպոլիգրաֆի տպարան
Գլավլիտ № 7616 (բ.)
Հրատ. № 2338
պատվեր № 2798
տիրաժ 7000

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՄՍԱՐ
11-26937գր

Սրբագրեց՝ Սոս Հակոբյան

Հանձնված է արտադրության 17/VIII
Ստորագրված է տպելու 15/X

1. ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՏՈՒՓԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Մեքենան իջնում է, կարում ձորակը և սլանում սլաքի-նման ձգվող ճանապարհով։

Ահա հին դյուղը։

— Յեթե վարդագույն տուփը չլիներ, Արթիկի անունը մինչև Բելգիա չեր հասնի,—ասում է ընկերս։

Ահա կայարանը։

Գյուղի ծայրին դեղնած բարդիների մոտ, յերեք նոր շինության պատերը փայլփլում են արևի տակ։ Արթիկի կայարանը։ գընացքներն այստեղից ուղիղ պիտի գնան հեռուները՝ հազարավոր վերստեր կտրելով։ Մի խումբ բանվորներ քանդում են շենքերի առջև ընկած հողաբլուրը՝ ապագա պերրոնի համար։

Աջ կողմն ընկած է «Արթիկ-տուփի» ապագա ավանը, գլխավոր շինությունները, մի կամ յերկու հարկանի։ Շենքերի առաջ ընդարձակ ծածկոցն է։ Վերևում, բլուրների վրա՝ յերկաթյա այուներ, տախտակի կույտեր։ Իսկ ճիշտ մեջտեղը, բլուրի վրա—վիթխարի տրանս-ֆորմատորը՝ դեռ ծածկված գերաններով, սանդուղքներով ու տախտակներով։

Հրապարակում մեքենան կանգնում է։ Թեև մայրամուտ է, բայց աշխատանքը յեռում է։ Ընդարձակ ծածկոցների տակ սղոցում են, դուռ ու լուսամուտ պատրաստում, կույտը են յեփում՝ տան ծածկի գերանների գլուխը կպրելու, կրի ու բետոնի շաղախ են պատրաստում, ավազ մաղում, թիթեղագործը պատի վառարանների համար կլոր վահաններ է սարքում։ Միքանի հոգի սայլերը բարձում են գերաններով, բարակ ռելսերով, սև յերկաթյա խողովակներով և սալերով, ճը՛ռ հա ճը՛ռ բարձրանում են, ցրվում զանազան կողմի վրա այն նոր ճանապարհներով, որ յերակների նման ցրիվ են յեկել բլուրների վրա։

— Տու-դա, տու-դա,—գոռում է շենքի պատին կանգնածը։ Իսկ ներքևից միքանի հոգի հրում են գերանը և ռիթմով անքում։

Դրսում թափած են ցեմենտի տակառներ, պատրաստ գերան ու շպալ, կղմինդր ու աղյուս։ Գետինը պատած է տաշեղով, յերկա-

թի ու թիթեղի կտորտանքով։ Ցերբենն տաշեղների արանքից քարը մամռոտած լանջ է դուրս ցցել։ Ամեն ինչ այստեղ փոխվել է՝ գետնի յերեսը, ճանապարհը, հողն ու խոտը։

Ռելսերի կույտի վրա նստել է մի բիձա և դանդաղ, հոգնած մարդու ախորժակով հաց է ուտում։ Մոտենում եմ, խոսեցնում, հացի փշրանքներն զգուշությամբ հավաքում է բուռն մեջ և պատասխանում իմ հարցին։

— Հրաշք վոր ասել են, ես ե՝ Սա վոսկի աղբյուր է, լիություն և լուսավորություն։ Վատտոը կդա, դրանդ կլցրի։ Պատից կախ չեր, բերին ճակատից կախ տրին։ Մեր կնկտիք բոբիկ ելին, հիմա կաբմիր տուֆլի կհագնեն... Մի խոսք՝ գտած գանձ է, վոր եսքան հազար տարի հողի տակ պառկած եր...

Քարհանքը մոտիկ է։ Տներից վեր, բլուրի գագաթին մի քանի տեղ քար են հանում տեղական ձևով։ Ծանր մուրճերով զարկում են պողպատ ռելսերին՝ կոճակների նման, տեպերը շար են ընկնում փափուկ տուֆի լանջին, խրվում ներս ու մի հարված ել—հանքը ճեղք է տալիս, ինչպես շաքարի գունդը։ Տուֆը, կամ ավելի ճիշտ տուֆի լավոն ճեղքվում է հավասար և ուղիղ գծով։ Քարի այս հատկության վրա է հիմնված տեղական ձևը։

Այս քարհանքի հանումն ոգտագործում են նոր կառուցվող տների համար։ Վոչ մի տեղ մեզանում տների պատերն այդքան արագ չեն բարձրանում, վորքան «Արթիկի տուֆում», նոր շինած տներից մեկի պատերը շարել ելին ութ որում։ Իսկ տունը յերկհարկանի չեր, միջին մեծության։

Վերի քարհանքի նորությունը նեղ-գծանի վագոնետներն են, վորոնցով քարերի փշրանքն են թափում, քարհանքերը մաքրում և ապա կտրած քարը դարձյալ ռելսերի վրայով տեղափոխում ցած՝ կառուցումների վայրը։

Ամենահետաքրքրությունը մեքենայացված քարամշակումն է, վորտեղ կենտրոնացված է համարյա ամբողջ աշխատանքը։ Բլուրի լանջին տեղ-տեղ ռելսերի գծերը խաչաձևում են իրար։ Սև խողովակների շարանը ցույց է տալիս, վոր հեռվից, Ալագյազի փեշերից ջուր է բերվելու։

Դեռ նոր են մեքենաներն ել, մարդիկն ել, այն մարդիկ, վորոնք աշխատում են, աշխատում և տվչորում։ Գործը գեռ չի մեծացել։ Քարհանքերը, ինչպես և հղկող ժամանակավոր գործարանը, վորտեղ հղկում են տուֆը, կոկում այնպես, վոր քարն ապակու նման վորդկ է դառնում։ Քարհանքը, ժամանակավոր գործարանն աշխատում են փոքրիկ էլեկտրակայանի եներգիայով։

Շուտով Արթիկն եներգիա կստանա Լենինականից։ Ցեվ յերբ կառուցվեն յերկաթուղու այն չորս գիծը, վոր նոր կայարանից ճյուղավորվելով հասնելու են մինչ քարհանքերն ու ապագա մեծ գործարանը,—այն ժամանակ վիթխարի կաբել կրանը քարերը կբարձրացնի և շարժական կամուրջների վրայով կիջեցնի, բաց վագոնների վրա կդարսի, և վագոնները կշարժվեն։

— Նոր դարձ է Արթիկը, բայց մեծ գործ է... Ցերթ մենք տարին մի միլիոն կուբոմետր քար տանք, մոտ չորս հարյուր տարի կհերիքի այն պաշարը, վոր ունի ուսումնասիրված ռայոնը... Իսկ շատ տեղեր կան, վոր դեռ հետազոտված չեն։

---

1. Վոր ժամանակվանից և ոգտագործվում Արթիկի տուֆը.
2. Ինչպիսի տեխնիկական միջոցներով և մշակվում Արթիկի տուֆը։
3. Արթիկ-տուֆի նշանակությունը սոցիալիստական շինարարության գործում։

ՏԵՂԵԿԱՆՔ

Մենք մեր մտքերը հաղորդում ենք իրար վոչ թե անկապ հատ-հատ բառերով, այլ ամբողջական խոսքերով։

Ամբողջական խոսքերով մի միտք պնդում կամ ժխտում ենք, որինակ՝ «Մեքենան իջնում է» (պնդում)։ «Գործը դեռ չի մեծացել» (ժխտում)։

Պնդող կամ ժխտող բառը կոչվում է բայ՝ «իջնում է», «չի մեծացել».

Բայը ցույց է տալիս անել կամ լինել։ Որինակ.

— Մեքենան իջնում է.

— Ասում ե ընկերս. (ինչ և անում). խանդում են, կանգնում է.

— Գրեցեք վերջին յերեսի I հատվածը և ցույց տվեք բայերը։

---

2. ՀԵՐՈՍԱԿԱՆ

Կտրեց կրկին նա թելը,
Շարժի դրեց մեքենան,
Սրտում խինդը յելել եր,
Վոր անիվները դառնան։

Դեռ յերեկ եր, վոր դարձալ
Ֆրոնտներից արյունի,
Հիմա սրտումն իր պահած,
Հազար հուշեր նա ունի։

Ո՛, խրոխտ է նա հիմա,
Բարդիների նման սեզ,
Գալքարել է նա անտհ
Ցեվ միշտ անհաղթը յեղել։

Նա թշնամու գրոհին
Դիմադրեց կրծքաբաց,
Ցեվ ծիծաղեց իր հոգին,
Ցերբ հաղթություն տարան։

Հիմա կապում է թելեր,
Շարժի դնում մեքենան,
Սրտում հուշեր են յելել,
Վոր անիվները դառնան։

«Տղերք, դժվար կռիվ է,
Սահմաններից ել դժվար»,
Ցերբ խոսում է նա այսպես,
Դառնում է մեծ ու պայծառ։

Նա բայլևիկ է, կոփված
Հոկտեմբերի հրերով,
Դասակարգի համար նա
Կամքը ավել անհողդողդ։

Ու պայքարում է կրկին,
Շոինդներում այս ահեղ,

Վորպես անպարտ մի մարտիկ,
Կարծես նորից է ջահել։

Նորից կապում է թելերը,
Շարժի դնում մեքենան,
Սրտում հուշեր են յելել,
Վոր անիվները դառնան։

3· ՌԱԶՄԻԿ ՏՈՒՐԻՍՏՆԵՐԸ ԶՈՐԱԳԵՍՈՒՄ

Հունիսի կեսերին էր։ Լույսը նոր էր բացվում։ Ճամբարը նքնչում էր առավոտյան աղջամուղջի անդորրում։ Չէր լսվում վոչ մի ձայն, վոչ մի փսփսոց։

Միայն գիշերային պահակներն էլին զինված, համաչափ հետ ու առաջ քայլում։

Քաղաքի վերջին ծայրից, ճամբարի մոտ գտնվող հատ ու կենտ մենավոր տնակներից մերթընդմերթ լսվում էր շների ընդմիջվող հաչոցը, կայարանից լսվում էր շոգեշարժի սուլոցը, շրջակա բարձունքներից ու դալարագեղ հովիտներից՝ հոսող լուսակարկաչ ջրերի քրքինը։

Լռվա բարձրաբերձ ու ծանրանիստ լեռնախմբերը կամաց-կամաց հանում էլին իրենց լաղուբե կատարները, թանձրացած և անդուլն մշուշի ծալքերից։

Վաղորդյան նինջից արթնացած ձորակներում, թավուտ պուրակներում դեռ մնում էլին մշուշի շղարշի ծվենները։ Նրանք, կարծես ամաչելով յերկնակամարի ջինջ պատկերից, չվում էլին հեռու, հորիզոնից այն կողմ։

Մինչև արևածագ, մենք, ռազմիկ տուրիստներս չկարողացանք քնել, մեր ուղեղից չէր հեռանում Զորագեսի այն հսկա շինարարությունը, վոր պիտի տեսնելինք այդ որը։

Մենք այդ որը ժամանակից վաղ արթնացանք ու անհամբեր սպասում էլինք դիվիզիալի ակումբի պետի կարգադրության։

— Թովմաս, Միհրան,— կամացուկ ձայն տվեց մեր փոխ-դասակի հրամանատար Խաչատրյան Հայրապետը,— դե առաջ շարժվեք դեպի ակումբ, արդեն ժամանակն է։ — Մենք հետևեցինք նրան։ Բոլոր զորամասերից յեկել և դումարվել էլին նշանակված վայրը։ Թվով 35 էլինք։ Մեր ղեկավարն ու կազմակերպիչն ակումբի պետն էր։ Զորագնդերի արթնացման շեփորը դեռ չէր հնչել, յերբ լսվեց մի խրոխտ հրամանգ։—

— Շարժվի՛ր։

Բոլորս մի ակնթարթում կատարեցինք հրամանը, ապա «քայլով մարշ» հրամանգի տակ, մենք ձախ վոտքներս ուժգին խփեցինք առաջ ու մեկնեցինք դեպի կայարան։ Պլատֆորմի մոտ կանգնած շոգեշարժն ուժից ծանր հևում էր, տնքում և բերանից նավթահոտ գոլորշի բաց թողնում։

Մեր շարքը կանգ առավ վագոններից մեկի առաջ։ Հնչեց զանգի յերկրորդ զողանջը։ Ճամբորդներն էլ ավելի աշխուժացան, ապա բոլորը լցվեցին վագոնները։

Շոգեշարժը ծանր տնքաց, բերանից բաց թողեց ծխի ճերմակ քուլաներ, բարձրաձայն սուլեց, ապա շարժվեց ոճագաթը, դորշ ռելսերի վրայով։

Մենք սլանում էլինք Դեբետ գետի կանաչ ափերով, մթին, խոյունկ ու վոլորապտույտ ձորակներով։ Յես և ընկերս գլուխներս դուրս հանած լուսամուտից՝ հանդարտ դիտում էլինք մեզնից փախչող թավուտ ծմակները, ահռելի ձորերն ու ապառաժ ժայռերը։

Ընկերս տարված այս խայտանկար, հիասքանչ տեսարանով, կարծես չէր ուզում անգամ հետս խոսել։

— Թովմաս,— տեսնում ես ինչ գեղեցիկ, զովաշունչ պուրակներ կան, ինչքան հորդառատ գետակներ ու վճիտ աղբյուրներ են քշչքչում, տեսնում ես ինչքան մութ ու հսկա թոնելներ կան,— ասում էր նա ու միևնույն ժամանակ կետեր նշանակում բլոկնոտի էջերում։ Մենք սկսեցինք բաժանել մեր հիացմունքը։

Այդ տաք խոսակցության պահին մեզ մոտեցավ ակումբի պետը, սկսեց մի փոքրիկ զրույց։

— Դուք յերբևիցե Զորագեսը տեսել եք, թե վոչ։

— Վոչ, ընկեր պետ,— պատասխանեցինք յերկուսով միասին,— և ափսոսում ենք, վոր չենք տեսել։

— Լավ, չեք տեսել, չեք։ Նրա մասին ձեր քաղաքները խոմասած կլինեն պարապմունքի ժամանակ։ Յեկը ե ավարտվելու Զորագեսի կայանը։

Յես ասացի 5-ամյակի վերջում։ Ընկերս ձեռքերը շպպացրեց ծնկներին, վորով ուզում էր իր անհամաձայնությունն ու զարմանքը հայտնել։

— Վոչ, ընկեր պետ, մեր տեմպերը բայլևիկյան են... Շատ շատ, այս տարի հոկտեմբերին պատրաստ կլինի,— ասաց Սուրենը ժպտալով պետի յերեսին։

— Ճիշտ է,— ասաց պետը,— տեսնում եք, ընկեր բանակալիններ, մեր այս ձորերը, ուր առաջ ավազակախմբերը էլին բնակվում, այժմ խորհրդային իշխանությունն ինչքան խոշոր շինարարություն է տանում։

Շոգեմեքենան մեկդում էր ոդը և ոձի պես գալարվելով դա-նում պրաչ։ Մենք ճանապարհին հանդիպում էինք նորանոր ու հե-տաքրքիր տեսարանների, տեսնում էինք այդ ամեհի ձորում գոր-ծունեություն մեկը մյուսի ետևից։

— Այս, ընկերներ, մեղվաբուծարան է, այդ, որտեղ կ բանվորների ու ծառայողների բնակարաններն են։ Անցանք Զատան-յուի կամուրջը և հասանք Գոլոգերան կայարանը և թողնելով դուրս թափվեցինք վագոններից ու դուրս-դուրս շարք կանգնեցինք պլատ-ֆորմի վրա։

— Բալով մարշ, հրամայեց մեր ավագը ու շարժվեցինք առաջ։ Քիչ հետո մենք հասանք Զորագես։ Արևը հուրհրատում էր Զորագեսում, վոսկեգույն շողեր փռում Զորագեսի բարձր աշտարակի վրա։ Մերձակա բլրակներից, կանաչ հովիտներից լսվում էր հով-վական սրտդիպ ձայնը։ Հենց Զորագեսին մոտի բուսել են ասիական, կոլխոզային բինաները։

Ուսմնական ձորերի մեջ հպարտ ու խրոխտ կանգնած է Զորագեսը։ Մլիցիոները բացեց դուռն ու մենք ներս մտանք։

Մենք հիացած նայում էինք ահռելի Զորագեսի խրոխտ մե-քենաներին, ելևէջարաքաշներին։

Ցեկավ դիրեկտորի ոգնականը։ Մանրամասն ծանոթացրեց շի-նարարության հետ։

— Ընկեր կարմիր բանակայիններ և հրամանատարներ, — բարձ-բանալով բարձր քարի վրա, ասաց նա, — տեսնում եք այդ պղտոր Դեբեսը։ Սա յերկար տարիներ հոսել է բոլորովին անուղուտ։ Ցա-բական կառավարությունը և դաշնակները բնավ մտադիր չելին այս ձորերում վորևե բան անել, բացի կովից։ Խորհրդ. իշխանությունն անթիվ այդպիսի հիդրոկայաններ է կառուցում, վորոնցով պիտի շարժվի վողջ արդյունաբերությունը, վորոնցով պիտի լուսավորվեն մեր քաղաքներն ու գյուղերը։

Այս ամբողջ շինարարության վրա ներդրված է 10 միլ. ռուբ. գումար։ Շինարարությունը կատարված է 90 տոկոսով։

— Մի հարց, — ասաց մեր պետը, — ինչը եք բաց թողնելու ջուրը։

— Մենք 16-րդ կոնգրեսի կուսակցության առաջ խոսք տվինք, վոր այս տարի հոկտեմբերի 1-ին բաց թողնենք ու գործի դցենք կայանը։ Ցեվ կանենք։

— Մի հարց ևս, — ասաց յեղրիական վաշտից ընկեր Հասանը, — բանվորներն ինչքան փոխարություն են իրացրել։

— Տեղին հարց է, — ասաց դիրեկտորի ոգնականը։ — 100 տո-

կոսկ։ Կոնստանտի ու կոնստրուկցիան բջիջները լավ են աշխատում։ Ունենք վոխանցիկ դրոշ, վորը պիտի տանք այն բջիջին, վորը լավ է աշխատում։

— Բանվորների մեջ սիստեմատիկ դեպքեր նկատվե՞լ է, — հարց-րեց Ցիդրանը, դդստոր դիրքը ընդունելով։

— Ցեղել են, որինակ Նիկոլոս Սաֆարյանը, Մուսուչ Դանե-լյանը և նման մի քանի կեղծ հարվածայիններ չեն արդարացրել հար-վածային կոչումը։

Բանվորները մեկ տարան իրենց ճաշարանը։ Լավ ճաշեցին ու հետո, մեծ խանդավառությամբ մենք բաժանվեցինք աշխատան-քի ենտուզիաստներից։

Արևը սահում էր յերկնակամարով և իր պղնձագույն շողերը հավաքում Լոռվա լեռների հետևում, իսկ «գիժ» Դեբեսը գալարվում էր ժայռոտ ափերին, լիզում, տանում էր քար ու հող։

Ցերոկոն ինչնում էր մարդկանց առջև խնարքվող լեռների վրա։

1. Ինչպիսի դրության մեջ էր Լոռին Հայաստանի խորհրդայնացումից առաջ, դաշնակցականների տիրապետության տակ։

2. Ի՞նչ շինարարական աշխատանքներ են կատարվում այժմ խորհր-դային իշխանության հաստատվելուց հետո։

3. Ի՞նչ ոգուտներ է տալիս Զորագեսը մեր տնտեսաբերությանը և քաղաքի ու գյուղերի լուսավորության գործին։

4. Զորագեսի հեռանկարները II հնգամյակում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի վերջին պարբերության ուղ քանի բայ կա։ — գրագրեցեք տետրերում։

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ակումբի սրահը

Շչակը սուլեց հանգստի ժամը։

Գործարանի բաժանմունքներից, ցեխերից և արհեստանոցներից բանվորների խմբերը դիմեցին դեպի ակումբի սրահը, վորի բաց պա-տուհաններից մեղմ զովը ներս էր մտնում և ճոճում սրահի լար-քով կախած կարմիր պլակատները։

Մինչև կեռ գիշեր կոմերիտականների մի խումբ աշխատելիներներ։ Նրանք պատերից կախել էին հարվածային բրիգադիրների նկարները, պատրաստել էին բազմաթիվ լոզունգներ արդիմնալանի կատար-

ման, գործարքումների, սոցիալիստական մրցության և հարվածային-ների մասին։

Զարդարել էին բեմը, վորի ճակատին խոշոր տառերով գրել էին՝ «Փառքի և արիության հերոսները»։ Ապա թվել էին այն բրիգադները, վորոնք կատարել և գերակատարել էին պլանը։

Բեմի դիմացը, մուտքի ամբողջ պատը սև շրջանակի մեջ եր առնված։ Այստեղ կախված էին նրանց նկարները, վորոնք ավելի շատ բրտկ էին տալիս, վորոնք կեղծ հարվածային էին։ Զեյին խնայել հարբեցողներին, գործը լքողներին, ծուլերին։

Դուռն վերևը «կոմյերտական» Բալոյի նկարն եր։ Նա մեքենան թողել է տնտեր և վազում է ծոի հետևից, վոր ներս է մտել բաց պատուհանից։ Նրա կողքին վարպետ Անդրեյի նկարն է։ Անդրեյը լողում է ողու վիթխարի շշի մեջ։

— Համա կկատաղի հա վարպետը,— ասաց կոմյերիսներից մեկը, վոր նստել եր պատուհանին և տանքությունից հոգնած աչքերով նայում եր դուրս, ակումբին մոտեցող խմբերին։

— Տեղն է, թող չխմի,— պատասխանեց մյուսը։

— Ա՛յ, Անդրեյը,—մատը մեկնեց պատուհանին նստած յերիտասարդը։ Նրանք մոտեցան պատուհանին։ Բայց այդ րոպեին դուռը բացվեց և մանարանի ցեխից մի խումբ յերիտասարդ բանվորներ ներս մտան։

Հինգ րոպեից հետո դահլիճում նստելու տեղ չկար։ Ուշացողները կանգնում էին դռների մոտ, պատուհանների տակ։ Բայց դրուռնից յերևում էին բազմաթիվ գլուխներ։ Այդ՝ դուրսը տախտակների կույտի վրա տեղավորվածներն էին։

Մինչև ժողովի սկսվելը բանվորները դիտում էին պատերից քաշ արած նկարները և պլակատները։

— Այ թե լավ են նախշել հա...

— Թամամ Մոսկվա յե,— ասաց մի բանվոր, վոր նոր եր վերադարձել Մոսկվայից։ Նա մասնակցել եր տեքստիլ բանվորների խորհրդակցության։

— Են մուրթը տես, են մուրթը,—ծիծաղելով մատը մեկնեց մի ուրիշ բանվոր։ Պատից կախել էին մի դիմանկար։ Յերևում եր, վոր մարդը գիշերը թունդ հարբել եր, ընկել ցեխի մեջ։ Նկարի վրա մարդու յերեսին դեռ մնում էին ցեխի հետքերը։ Մազերը գզգված էին, գտակը ծուռ։ Զախ աչքի տակ նկարել էին ընկույզի չափ ուռուցք։

— Մեր վարպետին են լավ թրջել,— վրա բերեց մի ուրիշը, վոր տառերը կապելով վերջացրել եր լոզունգի ընթերցումը։

Աշխատանքը դառնում է պատվի յեվ արիության գործ

Նախագահի զանգը ընդհատեց սկսված խոսակցությունը վարպետ Անդրեյի մասին։ Տիրեց խոր լռություն։ Դուրսը յեղածներն ավելի մոտեցան պատուհանին։

Ժողովն սկսվեց։

Զեկուցումը

Զեկուցում եր մանարանի ցեխի վարիչը։

— Ուրեմն, ընկերնե՛ր, այսպիսով հարվածային բրիգադներից դուրս են մնացել միայն 6 հոգի, վոր ամբողջ բանվորության չնչին տոկոսն է կազմում։ Կարող ենք ասել, ընկերնե՛ր, վոր մեր ցեխը հարյուր տոկոսով հարվածային է...

Բուռն ծափահարություններն ընդհատեցին նրան։

Վերջին շարքերից մի խումբ յերիտասարդներ բղավեցին. «հուռռա...» Այդ հուժկու կանչն ալիքի նման հասավ մինչև առաջին շարքերը, մինչև բեմը, վորի վրա յել խիտ նստոտել էին։ Առաստաղից կախված կարմիր կտորները, վորոնց վրա լոզունգներ էին գրված, մեղմ ծփացին ծափահարությունների վորոտից։ Կարծես վերևում ճոճվում էին բազմաթիվ կարմիր դրոշներ։

— Բրակի տոկոսն այսպիսով իջել է։ Ես բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը։ Առաջ ունենում էինք պարապ դաղդյանները, այժմ քսան դաղդյանից մեկը պարապ չի մնում։ Թուլ ավեք, ընկերնե՛ր, բերեմ մի որինակ մեր դործարանի հարվածային բրիգադների աշխատանքից... Խոսքի որինակ՝ մեր կոմյերիսների հարվածային բրիգադները։ Ձեզ հայտնի յե, վոր նրանք կոմուն են կազմել և աշխատում են կոմունայի հիմունքով, փոխադարձաբար իրար ոգնում են, աշխատավարձը բաժանում են հավասար։ Յեվ տես, ընկերնե՛ր, նրանք արտադրությունը բարձրացրել են 40 տոկոսով...

— Կեցցե՛ն հարվածային կոմյերիսները,—բացականչեցին այս ու այն կողմից։

— Բայց, ընկերնե՛ր, նրանք սոցմրցման պայմանագիր են կապել Ալլահվերդու № 1 հանքի կոմյերիսների հարվածային արտելի հետ։ Նրանք մեզ ուղարկել են իրենց հաջողությունները։ Արտելը 3 հերթի յե աշխատում, մերոնք եր հունվար և փետրվար ամիսների պլանը նրանք կատարել են 150 տոկոսով, մերոնք այստեղ մի քիչ նահանջել են...

Առաջին շարքում ժպտացին։ Կոմբերիանների մեկը, վոր հարվածային կոմունի անդամ եր, տեղից բղավեց, թե ոխտ են հաշվել էրենց տոկոսը։

— Շուտով, շուտով,— մեղմ առաջարկեց նախագահը,— ասասի, եդ հարցն էլ կքննենք…

— Ընկերնե՛ր, ես դեռ չվերջացրի… Մարտ ամսում նահանջել է Ալլահվերդու հարվածայինների արտելը, իսկ մերոնք նորից են առաջ անցել…

Ծափահարությունների և բացականչությունների հորդ տարափը նորից ընդհատեց զեկուցողի խոսքը։

— Նրանք մարտ ամսվա պլանը վերջացրել են ամսի 25-ին, իսկ մերոնք՝ 15-ին…

— Այ թե հա,— ուրախ բացականչեց մի ծեր բանվոր։ Նրա սիրտը կոտրվել եր, երբ լսել եր զեկուցողի խոսքը մերոնց «նահանջի» մասին։

— Սկիր լինելու բան չի, վոր Ալլահվերդին մերոնց առաջը կարի։ Մերոնք ուրիշ են, ուրիշ…— շշնջաց նա հարևանի ականջին։

Սպա նա գլուխը դարձրեց դեպի լեռ։ Նրա աչքն ընկավ իր վարդու՝ կոմբերիա Վաղոյի քրանքից և աշխատանքից կարմրած դեմքին։ Վաղոն էլ եր հարվածային կոմունի մեջ։ Վորդին չնկատեց հոր հայացքը, նրա լարված ուշադրությունը բեմի կողմն եր։

Ինչպիսի հպարտությամբ և ջերմ գորովով եր նայում ծերունի հայրը կոմբերիա վարդուն։ Ով գիտի, ինչ մտքեր զարթնեցին նրա հիշողության խորքում։

Լսարանը

Դահլիճի խորքում, պատի տակ կուչ եր լեկել վարպետ Անդրեյը։ Նա միայն մի անգամ իր գլուխը բարձրացրել և նայել եր ծաղրանկարին։

— Անպիտաններ, վո՞նց եր սարքել են,— մրթմրթաց քթի տակ։

Մինչև նախագահի զանգահարելը կողքին նստողներն ուրախ կատակներ էլին անում նրա հետ։

— Գիշերը վո՞նց պիտի մտա բոթլի մեջ…

— Դու տես ես ժժդահա ջանդաքը վո՞նց են մացրել բոթուլը։

— Խմողի մաշտաբ ուրիշ է։

Սակայն վարպետը վոչ մի ուշադրություն չեր դարձնում այդ սրամիտություններին։ Գլուխը դժժում եր երեկվա խմած ողուց։

Ցերը զեկուցումն սկսվեց, խոստակցությունները դադարեցին, հանդիսատեսը վարպետ Անդրեյին։

Ցեվ գլուխը դարձրեց դեպի ծաղրանկարը։ Նա աչքի պոչով եր դիտում, վորպեսզի կողքին նստողները չնկատեն, թե ինքը հեռաքրքրվում է պատից կախված նկարով։

Հենց այդ բոպելին նրա ականջին հասավ մանարանի ցեխի վարիչի խոսքը, թե բոլորը հարվածային են հայտարարել իրենց, բացի վեց հոգուց… Նրանք չնչին տոկոսն են կազմում…

Ծափահարություններից խառնվել էլին նրա մտքերը։

Ցերը զեկուցողը շարունակեց իր խոսքը, վարպետն էլի նույն միտքն եր տնում։ «Չնչին տոկոս են… Ցես քսան տարվա վարպետ չնչին եմ, անպետք թելի կտոր»։ Նա մտքում մի քանի անգամ կրկնեց «չնչին» խոսքը և ամեն անգամ կարծես այդ բառը նոր իմաստ եր ստանում։

— Եդպես են ասում, վոր ես էլ հարբում եմ… Թե չե՝ ինչու պիտի խմեմ,— արդարացրեց ինքն իրեն։

Սակայն մի ներքին ձայն հակառակը պնդեց և, գնալով, այդ ներքին ձայնը հաղթեց։ Նա մտաբերեց իր բոլոր ընկերներին։ Ահա նրանց մի մասը բեմ է բարձրանում։ Նրանք աշխատանքի հերոսներ են, այսոր պիտի պարգևատրեն նրանց։

Ահա Զանոն, տղեխան, ինչպես ինքը։ Ամիսներ շարունակ դազդյահի վրա կռացած դիտում եր, ուսումնասիրում, կարծես առաջին անգամն եր տեսնում դազդյահը։ Ցեխում լուր էլին տարածել, վոր Զանոն նոր մաշին է հնարում։ առաջինը դարձյալ ինքը ծիծաղեց։

— Ինչանից ինչիներ չի դուրս գա… Արի, արի գնանք,— և ցուցամատը խփեց կոկորդին,— Մենք հե՛չ, մեր բանը պրծել է…

Իսկ Զանոն լուռ նայեց, ապա գլուխը կախ գցեց։

Այդ հայացքի մեջ և՛ հանդիմանություն կար, և՛ զայրույթ։

Ցեվ Անդրեյը վոտները քաշ տալով գնաց դեպի ողու խանութը։

Իսկապես Զանոն հնարեց մի նոր դազդյահ, ավելի ճիշտ յեղածը փոխեց, ավելի լավացրեց։ Գյուտարար Զանոյի և նրա դազդյահի մասին թերթերը գրեցին, ինժիներները յեկան, կազմվեց հանձնաժողով, քննեցին և վորոշեցին, վոր Զանոյի գյուտը շատ արժեքավոր է։

Ահա Զանոն նստել է բեմի վրա, մի անկյունում, գլուխը կախ, կարծես դարձյալ մտածում է դազդյահի մասին։

— Վորտեղից վորտե՛ղ…,— դառնությամբ մտածեց Անդրեյը,— միասին յեկանք գործարան… Այժմ նա աշխատանքի հերոս է, իսկ ես՝ չնչին տոկոս…

Վարպետ Անդրեյը

Զեկուցումը վերջացել եր։

Նախագահը կարդում եր առաջին հարվածային բրիգադի կատարած աշխատանքը և ֆաբրիկայի վորոշումը՝ նրանց պարգևատրելու մասին։

— Կեցցե՛ն առաջին հարվածայինները,— աղմուկից և ծափահարություններից թնդաց դահլիճը։ Բեմի վրա պատի նման կանգնել են առաջին բրիգադի հարվածայինները։ Դահլիճը ծափահարում եր, իսկ նրանք գլխարկները թևի տակ, կանգնել եյին։ Վոմանք հուզմունքից կարմրել եյին, վոմանք գլուխները մի կողմիվրա դարձրել։ Նախկին կարմիր բանակային Սեթն ուղիղ ձգվել եր, ինչպես զորահանդեսի ժամանակ։

Վարպետ Անդրեյի հետ մի զարմանալի բան կատարվեց։ Յերբ առաջին ծափերը պայթեցին, նա տեղից կիսով չափ բարձրացավ, ինքն ել սկսեց ծափահարել նախ թույլ, ապա՝ ուժգին։ Ծափի աղմուկը մեղմանում եր, բայց նրա բազուկները չեյին հոգնում։ Նրա ծափից վարակվում եյին և մյուսները, նորից եր թնդում աղմուկը։

Ապա հոգնած տեղը նստեց։ Ձեռքերը կարմրել եյին ու դողում եյին։

Կարդացին գյուտարար Ջանոյի անունը։ Նորից ծափեր, նորից աղմուկ։

Վարպետ Անդրեյը վոգևորված գդակը վեր շպրտեց։ Մի քանիսը հեռևեցին նրա որինակին։

Այդ ել դուր չեկավ վարպետ Անդրեյին։ Ինքը շարունակում եր ծափահարելը և ծափերի մեղմացած թափը նորից եր թնդում։ Ինքը գլխարկը ճոճեց, մյուսները հեռևեցին։ Մի մեղմ ուրախություն ծփաց ներսը, ինչպես ծովի թեթև կոհակները։

Չե՛, նա ել չպիտի խմի։ Նա չի ուզում, վոր իրեն համարեն «չնչին տոկոս»։ Նա պիտի դնա մյուսների հետ հավասար քայլերով, նա հետ չի մնա իր ընկերներից։

Վարպետ Անդրեյն աչքերը կիսախուփ արեց, կարծես ննջում եր։ Նրա մտքի առաջ հետ եր տալիս իր անցած տարիների գիրքը, կարծես փնտռում եր նշանավոր մի եջ, մի գլուխ, մի դեպք, վորից հետո տարիները գնացին ուրիշ ճանապարհով։

Գտավ։ Այդ դեպքը գտավ։

Սիրտը դառնությամբ եր լցված, գալրությունը նրան մղեց դեպի ողու խանութը։ Հետո տվելի հաճախ եր գնում։ Յեվ վարժվեց։ Վարպետը գլուխը վեր հանեց։ Արդեն ցրվում եյին, ժողովը վերջացել եր։

Վարպետը գլխարկը թևի տակը դուրս յեկավ։ Հանկարծ նա հանդիպեց Ջանոյին։ Վարպետը մի բոպե կանգնեց։ Ջանոն ժպտաց։

Յեվ հին ընկերները լուռ սեղմեցին իրար ձեռք։

Վարպետ Անդրեյը տեսավ մանարանի ցեխի վարիչին։

Քայլերն արագացրեց, հասավ նրան։ Վարիչը բարևեց։

— Հը, վարպե՛տ...

— Յես... ինձ ել գրեք հարվածային... Յես չեմ ուզում, — բայց նրա ձայնը դողաց և չկարողացավ խոսքը շարունակել և ասել, վոր չի ուզում դուրս մնալ շարքերից։

— Յես այդպես ել գիտեյի, վարպե՛տ...

Գործարանի սուլիչները ճչացին, աշխատանքն սկսվեց։

— Նկարագրեցեք ակումբը։ Տվեք մանարանի ցեխի վարիչի զեկուցման սեղմ բովանդակությունը։ Բնութագրեք լսարանի կազմն ու տրամադրությունը։ Բացատրեցեք վարպետ Անդրեյի դարձի պատճառները։

— Ի՞նչ մտքեր կարող եյին ծագել ծեր բանվորի մեջ, յերբ նա նայում եր պարգևատրման տեսարանին։

Հրավիրեցեք խմբի ուսանողության ընդհանուր ժողով և զեկուցեք խմբի ուսումնական պլանների մասին։

Կազմեցեք որինակելի արձանագրություն։

Ի՞նչ ձևով և հրավիրվում ժողովը։

Ի՞նչպես և տարվում ժողովը։

Նախագահի ու քարտուղարի ընտրությունն ու պարտականությունները։

Որակարգի հարցերի մշակումը։

Զեկուցման և մտքերի փոխանակության կարգը։

Կազմեցեք սոցմրցման և հարվածայնության պայմանագրեր, ցույց տալով կոնկրետ ցուցանիշներ՝ յելնելով ձեր արտադրության պայմաններից։

Շչակը սուլեց հանգստի ժամը։

Այս խոսքը կազմված և չորս բառից։

Յեթե այս խոսքի բայը (սուլեց) հանենք, մնացած բառերը միտք չեն արտահայտի։

Բայը խոսքի մեջ ամենագլխավոր բառն է. առանց բայի խոսք չի կարող լինել։ Որինակ՝ շչակը հանգստի ժամը — չի հասկացվում։

Բայը կարող է չգրվել, բայց զորությամբ պետք է հասկացվի։ Որինակ՝ «ահա Ջանոն, ալեխառն, ինչպես ինքը» (փոխանակ՝ ահա Ջանոն, ալեխառն է, ինչպես ինքը)։

---

5. ՔԱՐՇԱՏՆԵՐԸ

Լեռը խորդում եր։

Այդ քարհատներն ելին, վոր կողը մերկացրել, քլունգներով ընկել վրան՝ հարվածում ելին։

Ծայրի բեկորները, տհազին, անճոռնի գազանի պես բներից դուրս ցցված՝ կրճատում ելին իրենց տատմները քլունգների տակ։

— Դե՛, դե՛, մեկն ել շուռ տվեք ու շաբաշ,— հրահանգեց յերիտասարդ բանվորներին և քարի տրանքից դուրս յեկավ մի ծեր բանվոր և իջավ ներքև։

Վարպետ Սարգիսն եր։ Ճակատի քրտինքը ցուցամատով կուշտ քերեց, թորեց ու հողոտ բաճկոնը մեջքին գցելով նստեց ծխելու։ Աչքը տակավն բանվորների կողմն եր, վոր ծիծաղելով քլունգները խրում ելին ժայռի ճեղքի մեջ ու մանր քարերը մաքրում։ Սարգիսը, վոր դեռ աշխատանքի մեջ եր յեղել ամբողջ որը, գոհունակ նայեց որվա աշխատանքի արդյունքին—քարաբեկորներին, վոր անհեթեթ ձևով բերանսիվայր պառկել ելին հողաթմբերի փոսերի մեջ։

— Եգ է, եգ թևին մի քարը մնաց։ Եղուց են թևին պիտի քանդենք։

Իրիկնադեմ եր, բանթողի ժամանակ։ Քարհատները հոգնել ելին, քիչ-քիչ ձայները փորները գցած, քլունգներով հարվածելիս յերբեմն փուստ ելին անցնում։ Մի մեծ քարի շուրջն ելին խմբվել։ Մաքրել ելին բոլորքը և ուզում ելին գլորել ցած, փոսը։ Պետք եր տեղահան անել։ Բայց դուրս յեկավ, վոր այդ այնքան ել հեշտ չեր։ Քարը պինդ կպած եր ժայռի բնի մեջ, և սկզբում վոր հեշտ ելին կարծում գլորելը, հիմա դեմ առավ, մնաց։

— Հը՞, չեղավ,— ձայն տվեց Սարգիսը, ծուխը հաստ բեխերի տրանքից փչելով։

Քարհատները չպատասխանեցին ու նոր ուժով սկսեցին հարվածել քարի հիմքին և քլունգները խրելով հող ու ժայռի տրանքը՝ սկսեցին հրել քարը։

— Քլունգները խոր տվեք,— ասաց Սարգիսը,— մեկդ մեջքին գոռեք։

Յերեք քլունգ խրվեցին քարի հիմքը և բանվորները՝ վրան քնկնելով, սկսեցին կշռել։

Վարպետն սկսեց սրտնեղել։

— Զանըմ, փորի քոմն ինչ գործ ունիս, մեջքին ըսի—հրահանգեց նորից։—Դու՝ վոտքին,— գարձավ մյուսին։ Դե, հա... Զեղավ։

Քարհատներից ամենաուժեղն ուժ տալուց հոգնած, բաց թողեց քարն ու ժպտալով հեռացավ։

— Պինդ է։

Մյուսներն ել հետևեցին նրան՝ քանի վոր ամենաուժեղը ձեռնաթափ եր լինում։ Ու կանգնած սկսեցին բերանբաց մտիկ տալ քարի բեկորին, վոր համառ նստել եր իր տեղը։

Սարգիսը վեր կացավ, ծխելով մոտեցավ քարին, տնտղեց չորս բոլորը։

— Վոտքին քլունգ տվեք։

Յերիտասարդ բանվորները ժպտացին ու. ծուլ-ծուլ դարձյալ քլունգ տվին տակից։

— Դե՛, հիմի լավ գոռեք։

Գոռեցին։ Զաղոռվեց։

— Զանըմ, ինչ կենեք, չեմ հասկնա։ Կեցեք,— սրտնեղեց վարպետն ու պիչակը նետելով՝ մի կողմ թքեց պապիրոսն ու հարձակվեց քարի վրա։

— Վոտքին ըսի։ Երկուսդ անցեք կռնակը։ Երկուսդ ել վոտքին։ Տո՛, փորը թող, ըսի։

— Կռնակեն, կռնակեն... հա, հոփ, գոռ տվեք։ Հոփ։ Ներսո՛, մեկ ել։

Քարը դիմադրում եր։

Կանգ առան։

Ներսոն ուժեղ թևով սրբեց քրտնամխած դեմքը և հետ քաշվեց։

— Բան չի դուս դա։

— Եգուցվա բան է, թողնենք,— վրա բերին մյուսներն ու հետ կանգնեցին։

Սարգիսը ծուռ ու ծուռ մտիկ տվեց նրանց։

— Ծո՛, յես սարեր եմ քանդե՝ չեմ թամբալցե։ Մե քարիմ առաջ դեմ կառնեմ։ Ամոթ չե՞ քարհատին, քարը կիսահան թողնի ու փախչի։

— Շատ ա պինդ, ժամ չի գալիս,— սրտոտացավ մինը։

— Իրեն խոսքն է, վոր ժամ չգա։ Մաքուր գործ բռնեք, այ ողուլ, ամոթ է։ Տեսնողն ինչ պիտի ըսե՝ եստեղ վարպետ է եղե, մարդ է աշխատե, թե՞ ինչ... Դե, յալա՛...

Հինգ հոգին ուժ ու պիրկ թևերով գրկեցին քլունգն ու քարը և սկսեցին ճիգ թափել։

Բանվորները կարմրել ելին ինչպես բաղնիսում, քրտինքը ծլում եր վրաներից, շապիկները դարձել ելին լվացքաշոր։ Քարը կրճատում եր ժանիքները, փրշում։ Լեռը խորդում եր խուլ, համառ, դիմադրելով։ Բնությունը չեր ուզում տեղի տալ հարձակման, և տեղի չեր ունենում կատաղի պայքար մարդկանց ու նրա մեջ։

ՀՍՍՀ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

— Հրլը՛, հրլը՛, իշու ինատին, տես ժամ կուգա, — մռնչաց Սարգիսն ու աչքերն արնով լցված, կատաղած հարձակվեց, ինքն էլ գրկեց քարը, ինչպես վորսորդը արջին։ Ցեվ տաքացավ, մագոտ կուրծքը դեմ տվեց ժայռին, սկսեց կռիվ տալ։

Նա չեր խնայում իր չարչարված հողագործն մարմինը և հազար մի այսպիսի տաժանելի աշխատանքների մեջ քերված, կոշտացած մկանները, վոր հիմա քերվում, արյունոտվում էլին։ Նա տրյունը գլուխը տված, սևացած կրծքի միսն ու վոսկորներն անգթորեն տրորում եր քարի վրա ու ճգնում, հևում, տնքում։

Քարհատներն էլ մոռացան բանթողը, դժվարությունը։ Մրցումը գրավեց նաև նրանց և Սարգսի խոսքերից ու շարժումից մղված ուժեղացրին ըմբշամարտը։

— Դե, դե, դե՛, զոռ տվեք։ Հոփ։ Հոփ... ու ծղրտում եր դեմքը ծամածռելով։

Հանկարծ քարը դռմռաց ու վարազի պես դուրս պրծնելով լեռան ծոցից, բերնքսիվար ընկնելով փուխր հողի վրա, սահեց ներքև։ Բանվորներն ուրախ բացականչեցին։

---

1. Ինչպիսի՞ տիմպով եր աշխատում Սարգիսը քարհանքում։
2. Ի՞նչը խթան հանդիսացավ յերիտասարդ բանվորների աշխատանքի թափի բարձրացման։
3. Ի՞նչ յեղանակով կարելի յե հաղթահարել բնության արդելքները։
4. Ուսումնասիրեցեք քարհանքի աշխատանքները և նկարագրեցեք ձեր տպավորությունները։

---

6. ԱԼԼԱՇՎԵՐԴՈՒ ՊՂՆՁԱՇԱՆՔԵՐՈՒՄ

1.

Ցերեկ, յերբ դու ձի նստած անցնում եյիր լեռան վրայով, քայլում եյիր Շամլուղի չարդախավոր խրճիթների միջով, կարող եյիր յերևակայել, վոր այս չարդախավոր խրճիթների տակ, կանաչազարդ լեռան ներսում բանվորական ջոկատներ կան։

Ցեվ հիմա, յերբ հանքերի զոնգն առաջին անգամ արդեն խփել է, վոր բանվորները քնից զարթնեն, յերկրորդ անգամ խփել է, վոր բանվորները հագնեն իրենց մասնագիտական համազգեստը, պատրաստեն կարբիդի լամպերը և ձեռքերին բռնած՝ խմբերով իջնեն դեպի ձորը, դեպի տունելները, — կարող ես յերևակայել, վոր լեռը պիտի կլանի նրանց։

Զոնգը խփում է յերրորդ անգամ։ Քիչ հետո տունելների մոտ հավաքված բանվորների գորշահագուստ ջոկատներն անհետանում են։

Այդ նշանակում է՝ սկսվեց աշխատանքը պղնձահանքերում։

Ծերունի ինժենները քեզ արտոնագիր է տալիս, ապա կարգադրում է, վոր քեզ համար մասնագիտական հագուստ և կարբիդի լամպ բերեն։

Մեխանիկական արհեստանոցի հույն վարպետն սկզբում առարկում է, թե առանց որդերի չի կարելի լամպ բաց թողնել։ Բայց հետո, յերբ հասկանում է, վոր դու վոչ թե Լենինգրադից կամ Բագվից յեկած պրակտիկանտ ես, այլ՝ միորյա այցելու և լամպը յերկու ժամից հետո վերադարձնելու յես, — իսկույն պատրաստում է կարբիդի լամպը և տալիս ձեռքդ։

— Դուք պատրաստ եք հանքահոր մտնելու համար։

Բայց մինչ այս, մինչ տն՝ արդեն զոնգը խփել է առավոտյան դաղարը։ Դու պետք է գտնես առաջին ռայոնի ջոկապետ Պավլեյին, վորպեսզի նա առաջնորդի քեզ հանքահորերը և բացատրի, թե ինչ կա այնտեղ։

— Ուզում եք վերից մտնեք, թե վարից, — հարցնում է քեզ Պավլեն։

Քեզ համար միևնույն է։

Առաջ իջնում է Պավլեն։ Դու հետևում ես նրան։ Աստիճանները տեղ-տեղ փայտից են, տեղ-տեղ՝ հողից։ Պետք է ձախ ձեռքով պահես լամպը, իսկ աջով ամուր բռնես շախտի ամբողջ յերկարությամբ պատին ամրացրած փայտը, վոր գլխիվայր չգլորվես մինչև հատակը։

Կոշիկներդ ու շորերդ ամբողջովին ցեխոտվում են։

— Վոչինչ, — սիրտ է տալիս Պավլեն, — ուրիշ կերպ չի կարող լինել։

2.

Դեմից լույս է յերևում։ Մի բանվոր կարբիդի լամպը ձեռքին գալիս է։ Պավլեն հունարենով ինչ վոր խոսում է նրա հետ։ Անցնում ենք։ Շախտը հետզհետե դառնում է հորիզոնական։ Պատերն ու առաստաղն ամրացված են խիտ դրված հաստաբուն կաղնի գերաններով։

Պավլեն գերաններն ստուգելով առաջ է գնում։ Մի տեղ յերկար կանգ է առնում։

— Տեսնում եք, — դառնում է քեզ, — յերկու ամիս չկա, ինչ ամրացրել ենք, և արդեն իջել է։ Հարկավոր է արդեն փոխել, հարկավոր է շարունակ ամրացնել։ Ամենահաստ գերանները հազիվ յե-

բեք ամիս են դիմանում։ Ամրացման աշխատանքը հսկայական ժամանակ և ուժ է խլում այսպես։

— Այո, իհարկե, հարկավոր է շարունակ ամրացնել, — մտածում ես դու։

Պատահում է հաճախ, վոր թուլլ է ամրացվում, կամ վերամրացումը ժամանակին չի կատարվում։ Այն ժամանակ տունելը փլլվածքներ է տալիս և բանվորները վնասվածքներ ու ջարդվածքներ են ստանում. աշխատանքն այն մասում դադարում է՝ մինչև փլվածքը մաքրվի և վերամրացվի։ Իսկ արտադրությունը տուժում է դրանից։

— Պետք է շարունակ ամրացնել, վերամրացնել և լավ ամրացնել, — կարծես ինքնիրեն խոսում է Պավլեն։

Անցնում ենք առաջ։ Մի խումբ բանվորներ տնքոցներով և աղմուկներով ինչ վոր ծանրություն ներքևից վեր են քաշում։

— Այ զոչաղներ, — խրախուսում է Պավլեն։

Վերջապես բարձրանում է հսկայական գերանը։ Այդպիսի դժվարությամբ են տունել բարձրանում բոլոր հաստատուն սյուներն ու գերանները և նույն ճանապարհով էլ փտածներն ու անպետքացածները դուրս են տանում։

Շարունակում ենք առաջ գնալ։ Տեղ-տեղ հարկավոր է փորի վրա սողալ, վորովհետև պղնձահանքի մնացորդները դեռ դուրս չեն տարված վագոնիկներով։

Շարունակ իջնում ենք և իջնում։ Հանքահորը տասը հարկ է։ Մենք գտնվում ենք վեցերորդ հարկում։ Դեմ ենք առնում մի հողե բլրակի, վորը կարբիդի լույսի տակ վոսկեգույն շողշողում է։

— Այս պղինձն է, — բացատրում է Պավլեն և բռան մեջ առնելով՝ դեմ է անում քո աչքերին։

Պղնձահողի կույտի վրա ից փորսող տալով անցնում ենք։ Բանվորները քլունգներով և բահերով քանդում են պղնձահողի շերտերը։ Նրանք ժամանակ չունեն խոսելու։ Պղնձահողի փայլը, կարբիդի լույսով վողողված, շողշողում է նրանց դեմքին։ Նրանց դեմքերը խանդավառ արտահայտություն են ստանում։

Գանձերի հեքիաթական աշխարհում չենք արդյոք։

Վոչ։ Այդ հեքիաթ չէ, այլ իրականություն։

— Քիչ հետո, — բացատրում է Պավլեն, — այստեղ դինամիտ ենք դնելու, և յերբ ժամը 1-ին սկսի պայթել, բոլոր լեռները կդղրդան։

Հրաժեշտ ենք տալիս պղինձ հանող բանվորների ջոկատին և շարունակում ենք սողալ տունելներով։

— Պղնձահանքերի նշանակությունը ծանր արդյունաբերության համար։
— Եվ ինչ պղնձահանքեր կան Խորհրդային Հայաստանում։
— Ինչպես են հանքը ձեռք բերում.
— Ինչ վերնագիր կդնեք առաջին մասին. ինչ՝ յերկրորդին։

---

7. ՏՊԱՐԱՆԻ «ՊԱՊԱՇԱՆ»

1.

Ամենքն էլ ճանաչում էին գրաշար Դանելին, կամ ինչպես ասում էին՝ «տպարանի պապաշային»։ Քսան տարուց ավելի բանվորություն եր արել, միշտ տառերի արկղի վրա կռացած, յերկաթե վերստատական ձեռքին։

Շարել եր գրքեր, անհամար կոչեր, լրագիր ու ամսաթերթեր։ Տարիների աշխատանքից մի քիչ կռացել եր, գլուխը կրծքին խոնարհել։ Տառերի արճիճը, տպարանի մուրը ծծվել էին մաշկի տակ և նրա յերեսը, ձեռքերը արճիճի գույն էին ստացել։

— Մինչև մահս եսպես մրոտ եմ մնալու... վոր մեռա, կսիպտակեմ, — կատակով ասում եր նա տպարանի նոր բանվորներին, ցույց տալով վոսկրոտ մատները։

Պապաշան քիչ եր խոսում։ Նրանից կարգապահը և աշխատաները տպարանում չկար։ Նույնիսկ տան կենվորները գիտեին նրա կարգապահ լինելը. հենց վոր Դանելը տնից դուրս եր գալիս տպարան գնալու, բակի յերեխաներն էլ գիտեին, վոր ժամը 8-ից պակաս է 15 րոպե։

Ծեր գրաշարը յերբեմն ուրախ տրամադրությամբ եր ներս մտնում տպարանի ընդարձակ դահլիճը, ուր շարվեշար տեղավորված էին տառերի արկղները։

— Եսոր պապաշան զվարթ է, — ասում էին գրաշարներն իրար։ Նրա զվարթ լինելը հայտնի յեր և նրանից, վոր այդ ժամերին ծեր գրաշարը և՛ շարում եր, և՛ ինքն իրեն դնդնում միալար, շատերին անծանոթ մի յերգ։

Իսկ յեթե պապաշան զվարթ եր, ապա ուրեմն ընդմիջումի ժամանակ, յերբ գրաշարները հավաքվում են նախաճաշի, նա պատմելու յեր հետաքրքիր մի արկած հին «խաղելինի» կյանքից, իր յերիտասարդության որերի «խաղերից և ոլիններից»։

Բայց ամենից հետաքրքիրը և ծիծաղելին նրա շարած գրքերի վերնագրների անգիր ասելն եր։ Ինչքան գիրք եր շարել, ինչքան բրոշյուր, — բոլորի վերնագիրն էլ հիշում եր և կապում իրար այն-

պես, վոր ստացվում եր խառնաշփոթ, բայց և ծիծաղելի նախադասություն։

Այսպես եր տպարանի պապաշան, ընկերասեր, յերբեմն լուսկյաց, յերբեմն զվարթ, բայց առավոտ ութից մինչև ճաշ տառերի արկղի վրա կռացած։

2.

Յերեկոյան տպարանի կարմիր անկյունը լեփ-լեցուն եր։

Ժողովը դեռ չեր սկսվել։ Գրաշարները, տպագրիչները, նրանց կանայք խումբ-խումբ խոնվել ելին միջանցքում, դահլիճում, պատերի տակ։ Մի մեծ խումբ ել յերկար սեղանի շուրջը հավաքված, տաք-տաք վիճում եր։

Նրանց վեճի առարկան տպարանի նոր շենքի առաջ յեղած ավազի և խիճի կույտերն ելին, վոր մնացել ելին շենքը շինելուց հետո։ Մի թեթև քամի լինելուց փոշին բաց պատուհանով ներս եր լցվում։ Գանգատվում ելին մանավանդ առաջին հարկում տեղավորված տպագրիչները։

— Թող փոքրիկ պարտեզ անկեն, ոդը մաքուր կլինի, փոշուց ել կազատվենք, — կանչում եր տպագրիչներից մեկը, վորի կարճահասակ լինելը խանգարում եր նրան սեղանի մոտ նստած ընկերոջը տեսնելու։

— Պետք է մանկապարտեզ ել բաց անել, — վրա բերեց մի կին, — յերեխաները փողոցումն են ամբողջ որը։

Արդեն բավական բազմություն եր հավաքվել։ Տեղկոմի նախագահը հայտարարեց, վոր «հարյուր տոկոսով» ներկա յեն, յեթե չհաշվենք հանգստյան տուն գնացածներին և հիվանդներին։

— Ուրեմն ժողովը բաց արա, — ձայն տվին մի քանի հոգի։

Տեղկոմի նախագահը զանգը տվեց։

— Շուտ արեք, ընկերներ, նստեք... Միքիչ նեղվածք է, վոչինչ... Սեղրակ, տեղ տուր՝ պապաշան նստի...

— Արի, պապաշա։

— Մեզ մոտ արի..., — կանչեցին այս ու այն կողմից։

Դանիելը ժպիտն յերեսին կուչ յեկավ նստարանի ծայրին։ Նա այդ յերեկո յել զվարթ տրամադրություն ուներ։

— Ընկերներ, ընդհանուր ժողովը հայտարարում ենք բացված... խոսքը ընկեր Խաչիկյանինն է, վորն վոր ձեզ մանրամասն կհասկացնի բանի հանգամանքը։ Ուրեմն լսողություն։

Ընկեր Խաչիկյանը հանձնաժողովի կողմից ուղարկված եր քաղխորհրդի համար տպարանի կոլեկտիվից պատգամավոր ընտրելու։

Նա պարզ և հասկանալի սկսեց պատմել, թե ինչու համար է քաղխորհուրդը, ովքեր են մասնակցում նրա ընտրության։

Ընկերոջ զեկուցումից պարզվեց, վոր քաղխորհրդի անդամը պիտի աշխատի խորհրդի սեկցիաներից մեկն ու մեկում։ Նա պարտավոր է հաշիվ տալու իր ընտրողներին, լսելու նրանց պահանջները։

— Չե՛, մանկապարտեզն ստացանք, — ընդհատեց մեկը։

— Քաղխորհուրդն ունի առողջապահական, կրթական, կոմունալ, ֆինանսական և նման սեկցիաներ։ Պետք է ընտրել աշխատասեր, գիտակից և բանվորների շահը պաշտպանող ընկերոջ։

Մի ժամից զեկուցումը վերջացավ։ Մոտ կես ժամ ել տևեց հարցերը։ Նախագահը վերջում հայտարարեց.

— Այժմ, ընկերներ, տվեք համապատասխան թեկնածու... Ըստ որենքի մենք պետք է տանք յերկու պատգամավոր... Առարկություն չկա, վոր մեկը կին լինի։

— Չե՛, չե՛... Չկա։

— Ուրեմն տվեք անունները...

— Պապաշայից լավը չկա... — կանչեց մի տպագրիչ։

— Պապաշան, պապաշան..., — ձայնակցեցին մյուսները։

Բարձրացավ աղմուկ։ Ծափահարեցին։ Մի քանի հոգի ծեր գրաշարի թեերից բռնած մոտեցրին սեղանին։

Պապաշան մի բերան կանչում եր.

— Ուրիշին, ուրիշին... Յես հեչ...

— Ուրիշին չենք ուզում, — բղավեցին յերիտասարդ գրաշարները։

Դանիելն ինչքան հակառակեց՝ չեղավ ու չեղավ։

— Ընկերներ, յես լավ խոսալ չգիտեմ...

— Մեզ գործ անող է պետք... — կանչեցին տպագրիչները։

Յեվ միաձայն պապաշան ու կազմատան հավաքարար Մարիամն ընտրվեցին քաղխորհրդի պատգամավոր...

3.

Տպարանի շրջապատը յերկու տարում անճանաչելի դարձավ։

Ընտրությունից մի ամիս չանցած, քաղաքի գումակը մաքրեց ավազի և խճի կույտը։ Յերիտասարդները մի տոն որ բարակ լոբենիներ տնկեցին շենքի չորս բոլորը։ Քաղխորհրդի ծաղկանոցից առնկեր բերին և զարդարեցին փոքրիկ պարտեզը։

Պապաշան որն ի բուն աշխատում եր։ Նրա պահանջով ելեկտրական լուսերը հասցրին խուլ փողոցներից մեկի ծայրը։ Նոր շենքի առաջ քաղխորհուրդը ջրի ծորակ սարքեց։

Այժմ գարունը բացվելուց տերևակալում են լորենիները, ծաղկանոցի ծաղիկները բուլը են տալիս բաց պատուհանների յեռանց աշխատող հարյուրավոր մարդկանց, վորոնք շարում են գրքեր, թերթեր, շարում են, տպում, կազմում։

Գարնան հետ գալիս են սարյակները, ճռվողյունով ներս մըտնում, պուլյաններ անում կտուրի տակ։ Ծառերի տակ ուրախ վազվզում են տպարանի մանկապարտեզի յերեխաները։

Փայտե նստարաններ կան ծառերի տակ։ Նրանց վրա ընդմիջումի ժամերին հանգստանում են գրաշարները։

Նրանց հետ հանգստանում է և ծերունի Դանելը, վոր արդեն կենսաթոշակ է ստանում յերկարամյա աշխատանքի համար, եկ չի շարում գիրք ու լրագիր, սակայն ամեն որ գալիս է տպարանի պարտեզը։

Գալիս է, նստում փայտե նստարանին, լսում սարյակների ճրուվողյունը, մանուկների ուրախ կանչերը և զվարթ յերգում է՝ մեղմ, դողդոջ ձայնով...

— Նկարագրեցեք պապաշայի ճշտապահությունը և նրա ակտիվ մասնակցությունը հասարակական աշխատանքներին։

— Այցելեցեք մեր քաղխորհուրդը և ծանոթացեք նրա սեկցիաների աշխատանքներին։

— Ի՞նչ հրահանգներ են տվել ընտրողները քաղխորհրդի այս տարվա կազմին. ծանոթացեք այդ հրահանգների գլխավոր կետերին։

— Քանի՞ հոգի յեն քաղխորհրդի կազմում.

— Ի՞նչպես եր կառավարվում մեր յաղաքը խորհրդայնացումից առաջ, յեթե հնարավոր է, ձեռք բերեք այդ մասին նախորդ հարցում տված տեղեկությունները և համեմատեցեք իրար հետ. ի՞նչ յեզրակացության կհանգեք։

Եկսկուրսիայի արդյունքների մասին դասարանում զեկուցելու համար կազմեցեք ծրագիր և այն ոգտագործեցեք գրավոր աշխատանքի համար։

ՏԵՂԵԿԱՆՔ

Ցերը մի ամբողջական խոսքի մեջ միայն մեկ բայ կա, այդ դեպքում այդ խոսքը կոչվում է պարզ խոսք։ Իսկ յերբ մի քանի բայեր կան, կոչվում է բարդ խոսք։

Պարզ խոսքեր. գարնան հետ գալիս են սարյակները. ամենքն ել ճանաչում ելին գրաշար Դանելին։

Բարդ խոսքեր են՝ որինակ՝ թող փոքրիկ պարտեզ տնկեն, ողջ մաքուր կլինի, փոշուց ել կազատվենք։

Ինքդ նշիր հոդվածի մեջ մի քանի պարզ և մի քանի բարդ խոսքեր։

Բարդ խոսքը կազմված է ասույթներից։

Ասույթ կոչվում է բարդ խոսքի մասը կազմող այն բառերի կապակցված ամբողջականությունը, վոր խմբված են մի բայի շուրջը։

8. ՈՒՐԱԼՈՒՄ

1.

Ուրալում գործարանների դեպի յերկինք բարձրացած ծխնելուցները ճիշտ և ճիշտ անտառի տեսք ունեն։ Մոտակա բարձրությունից դեպի ցած նայելիս այդ ամենն այնքան պարզ են յերևում, վոր կարծես ամբողջ գործարանն ափիդ մեջ լինի։

Ցերեկը գործարանը ծածկված է խողովակներից քուլա-քուլա դուրս ժայթքած ծխի ու գոլորշու քողով, իսկ գիշերը պատած է բոսորագույն ուժեղ լույսով, վոր կարծես ամբողջ գործարանը բոցավառված լինի։

Հանքերի և գործարանների նախկին շահամոլ ու ապիկար տերերը բանվորների բնակարանների մասին յերբեք չեն հոգացել. բանվորներն ստիպված են յեղել իրենք իրենց բնակարանի մասին մտածել ու հոգալ մի փոքրիկ խրճիթ կամ հյուղ շինել ու պատրաստվել։ Այս է պատճառը, վոր այս գործարանն իր խրճիթներով և հյուղերով գյուղի յե նման։

2.

Անցյալներում շատ վատ եր Ուրալի բնակիչների դրությունը։

Գյուղացիներից հազարավորներին զրկում ելին ազատությունից, կապում ելին գործարանին և ստիպում ելին աշխատել։ Շատերը փորձեցին փախչել, բայց իզուր — բոլոր տեղերը պահապան ելին դրել ու ճանապարհները փակել։

Գործարանի կյանքն ու աշխատանքի պայմաններն այնքան ծանր, ելին վոր բանվորության անբավականության ու տրտունջների առիթ ելին ծառայում, դրա համար ել նրանք մարդ ուղարկեցին Պուգաչովի մոտ և ցանկություն հայտնեցին մասնակցել նրա ապստամբության և կռվել մինչև վերջ։

Իսկ այժմ Ուրալում ուրիշ կյանք է։

Ուրալն ամեն որ խորհրդային իշխանությանը մեծ քանակությամբ չուգուն է տալիս, իսկ չուգունից մենք յերկաթ և ամուր պողպատ ենք պատրաստում։ Ուրալն իր հանքային հարստություններով խիստ ոգտակար է ամբողջ Խորհրդային Միության համար։ Այլևս նա առաջվա նման հարուստ անբաներին չի կշտացնում, այլ աշխատավորներին։

---

1. Ինչպիսի կյանք գոյություն ուներ բանվորների համար Ուրալում Հոկտեմբերից առաջ։

2. Ինչպես և ում համար ելին շահագործվում Ուրալի հանքերը։

3. Ինչպիսի կյանք է ստեղծված ներկայումս Ուրալի բանվորության համար։

4. Ուրալի հանքերի ոգտագործումը և նրա նշանակությունը մեր յերկրի ծանր արդյունաբերության զարգացման համար։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Այս հոդվածի առաջին հատվածում ցույց տվեք բոլոր պարզ և բարդ խոսքերը և արտագրեցեք ձեր տետրերում։

9. ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ՅԵՐԳԸ

Հանքերից մետաղ, չուգուն շալակած,
գնացք իմ, թռիր,
Այդ է հարկավոր գործարաններին—
գնացք իմ, թռիր
Վոր հին գութանի, արորի դիմաց
տրակտորը կանգնի,
Վոր յեռ ու տենդոտ հաղթական յերկրիս
սիրտը բերկրի,—
գնացք իմ, թռիր։
Յեվ բալշևիկյան տեմպերն անհաղթ,
վոր դադար չառնեն,
Ու հնգամյակի վճռական տարին
կատարենք շուտով։

Հետո յել Բագվի նավթահանքերից
նավթ պիտի տանենք,—
Դաշտ ու շախտերում նավթի են կարոտ
մեքենաները։
Իմ հերոս ընկեր, թափ առ դու նորից
այնտեղ շուտ հասնենք,
Մինչև վոր չբացվի վառ առավոտը,
ընկեր իմ, ընկեր,—
գնացք իմ, թռիր։

Թող հիմա յերգեն անիվներիդ տակ,
ռելսերը պողպատ,
Այդ բալշևիկյան հաղթական մարշն է,
վոր հյուսել ենք մենք։

Այդ մարշը պիտի վերջին պայքարում
դեռ մեզ ուղեկցի
Ու բանվորները թնդանոթներին
պիտ գնան այցի,—
գնացք իմ, թռիր։

Հանքերից մետաղ, չուգուն շալակած
գնացք իմ, թռիր։
Այդ յես ու դու յենք, հարվածային ենք,
գնացք իմ, թռիր։

---

10. ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈԿԵՐՈՎ

Կայարանի ծառայողները զարմացան, յերբ լույսը նոր բացված ներս մտավ դյուզացիների մի խումբ։ Նրանց մեծ մասը կլոլված եր բրդե վերարկուների մեջ, գլուխը փաթաթած տաք շալով։ յերևում ելին միայն աչքերն ու քթի հետևի մասը։ Տաք գոլորշին սառել և փոքրիկ ասեղներ եր դարձել՝ շալից կախված։ Վոմանք ուղտի բրդից փափուկ ձեռնոցներ ունելին։ Նրանց մեծ մասը յերիտասարդներ ելին, միայն մի քանի հասակավորներ կային, վորոնց թվում մեկը մի յերկար ձող ձեռքին քայլում եր խմբի առջևից, ձողը խրում այս ու այնտեղ, սառած ձյունի հաստությունը և խորությունը վորոշելու։

Հենց այդպես ձյունաթաթախ խմբով ներս մտան հերթապահի սենյակը։

Սմբատը մեկնեց գրությունը։ Հերթապահը կարդաց, տեղից վեր կացավ ու գնացին կայարանի հետևը, վորտեղ ծածկոցի տակ, մի անկյունում փայտե վանդակի մեջ նրանց սերմազտիչներն ելին դարսված։ Գիշերվա բուքն առատ ձյուն եր լցրել մեքենաների ներսը։

— Ել մի կանգնեք,— ասաց մեկը, վորի դլխին մաշված կոմունարկա յեր,— ձյունը մաքրեք... կտաքանաք։

Կոմյերիտականների մի խումբ մոտեցավ մեքենաներին։ Կես ժամ չանցած՝ մեքենաները հանեցին փայտե վանդակից, մաքրեցին և պարաններով պինդ կապեցին հենց այն տախտակներին, վորոնցից շինված եր վանդակը։

Նրանք կառուցել ելին սահնակի պես մի բան։

— Լեռն, առ փայտը,— և կոմունարկայով մարդը, վոր ինքը՝ նախագահն եր, փայտը մեկնեց նրան։— դու կգնաս՝ առջևից... Տես վոր փափուկ տեղեր չլինեն, չիրվենք։ Սմբատ, դու վերջին մեքե-

նայի հետ կլինես։ Ապա դառնալով մյուսներին՝ ուրախ քացախանչեց,— Տաքանանք հը՞... Դե, ձեզ տեսնեմ, կոմսոմոլի անունը գետնով չտաք...

Ու փոկերը, պարանները հագցրին մեքենայի վոտքերից, սահնակի տախտակից, շարվեցին մեքենայի կողքին, իրենց ուսերին քաշելով փոկի ծայրերը։

— Մեկ, յերկու, յերեք...

Ճռռացին տախտակները, սառած ձյունը, թափորը շարժվեց դեպի գյուղը, ապիտակ բլուրների լանջով, ձյունով լցված ձորակների վրայով։

Կայարանի հերթապահը պերրոնի վրա կանգնած դիտում եր նրանց։ քանի հեռանում, այնքան փոքրանում եյին։ Կարծես մրջյունների յերկու խումբ եր, վոր գլորելով իրենց բունն եյին տանում մի վիթխարի վորս։

Քամին դադարել եր։ Յերթե յերկնքի մշուշը չլիներ, սառը փայլով կշողար ձմռան ցուրտ արևը։

— Կտանեն,—ուրախացավ հերթապահը, յերբ առաջի մեքենան հասավ բլուրի գագաթը։—Նրանց մերը չմեռնի... հերոս են, հերոս...

Մեքենաները չքացան նրա աչքից։

Նրանք բլուրից սահելով իջան սարահարթի վրա, վորի այն կողմը սկսվում եր նոր վերելք, նոր բլուրներ, ապա միայն պիտի յերևար գյուղը։

Քրտինք եր կաթում յերիտասարդ ճակատներից։ Ամեն անգամ, յերբ ճիգ եյին անում, գոլորշին քուլաներով եր բարձրանում։ Վոմանք արձակել եյին վերարկուների կոճակները, ավելի հեշտ շընչելու համար։

Յերկրորդ մեքենան առաջինից հետ չեր մնում։ Յերբեմն բոլորը միանում եյին և մեկ-մեկ անցկացնում նեղ տեղերից. վոմանք քաշում եյին, իսկ մնացածները հրում ձեռքերով, ուսով, կրծքով։

Թարմ ձյունի վրա մարդկային բազմաթիվ վոտնատեղերի հետ մնում եյին մեքենաների հետքերը— իբրև լայն ակոսներ։

Առաջին անգամն եր մեքենան բարձրանում դեպի այդ գյուղը։

Բազմությունն եր հավաքվել ծածկոցի տակ, վորտեղ տեղավորել եյին մեքենաները։ Գյուղացիներից շատերն առաջին անգամն եյին տեսնում սերմացուիչը։ Ճիշտ է, գյուղին չհասած, յերբ տեղեկացել եյին, վոր կոմսոմոլները մեքենաները բերում են, շատերն եյին գնացել առաջ և ոգնել բերելու, բայց հրելու ժամանակ նրանք լավ եյին դիտել մեքենաները։

— Ապրի Սմբատը,—ասաց մի կին։—կռնե՛ր կդինջանա...

— Ել խախալ չկա՞... Որը հարյուր փութ ել լցնես, կմաքրի...

— Հարյուր փութ— ծոր տվեց կինը։

Յերբեմն մեքենաներին եր մոտենում կոմյերիտականներից վորևե մեկը։ Նա հաճույքով եր պատասխանում հարևանների հարցերին, թե ինչպես բերին մեքենան, վոր շուռ չեկավ, ձյունը շատ եր։ Նրանք իրար հետ վիճում եյին, թե քանի փութ կլինի մեքենան, սակայն վիճողների յերկու կողմն ել գովում եյին կոմյերիտականների հերոսական աշխատանքը։

— Չորանա մեր կոմսոմոլը...

Իսկ գյուղխորհրդի գրասենյակում Սմբատը, նախագահը, Լևոնը և մի քանի յերիտասարդներ հաշվում եյին սերմացուն, վորոշում սերմացման հերթերը, նշանակում հսկիչներ, վորոնց պատասխանատվությամբ որ ու գիշեր պիտի աշխատեյին մեքենաները։

Յենոքը թեժացնում եր վառարանը և նրանց լսում խոր հավատով։

— Ի՞նչ անելիքներ ունի կոմսոմոլը գյուղում։

Ինչպե՞ս կարող է ոգտակար լինել պիոներական կազմակերպության կոլեկտիվը գյուղին։

— Ի՞նչ հասարակական աշխատանքների յե մասնակցել ձեր դպրոցը, դասարանը, կոլեկտիվը։

— Ի՞նչ վերնագիր կդնեք այս հոդվածի չորս մասերից յուրաքանչյուրին։

ՀԻՇԵՑՈՒՄ

— Մենք մեր մտքերը հաղորդում ենք իրար ամբողջական խոսքերով. ամբողջական խոսքից հետո մեր ձայնն իջնում է, և մենք դադար ենք առնում։ Գրելիս այդ դադարի տեղը դնում ենք վերջակետ։

Որինակ՝ Յենոքը թեժացնում եր վառարանը և նրանց լսում խոր հավատով։

11· ԽՈՏՀՈՒՆՁ

Հոգնե՛ր, հոգնե՛ր շընչշընչում՝
Հովարան եր մեր սարը,
Յես չեմ տեսել այդքան վառ,
Այդքան պայծառ տեսարան։

Սարալանջում խոտհունձն եր,
Ամբողջ սարը խոտ ու հով,
Որորվում եր մեր սարը
Ալի՛ք, ալի՛ք, վորպես ծով։

Հի՜նգ գերանդի, հի՜նգ մանգաղ
Տաս կոմյերիտ ընկերներ,
Հովերի մեջ փաթաթված
Շարժվում եյին սարնիվեր։

Հոգնե՛ր, հոգնե՛ր շընչշընչում,
Հովարան եր մեր սարը,
Յես չեմ տեսել այդքան վառ,
Այդքան պայծառ տեսարան։

Քոտն եր հոսում ու պառկում,
Քոտը, խոտը, լուսի պես,
Ու եղ պայծառ խոտհարքում
Հարբել եմի լերգով լեռ։

Լայնաթիկունք, կրծքարաց
Ցեվ գլխաբաց և հ. բրած,
Հարում ելին նրանք վառ,
Ու հոսում եր խոտը ցած։

Հոմն եր, հոմն եր շընգշընգում,
Հովարան եր մեր սարը,
Ցես չեմ տեսել այդքան վառ,
Այդքան պայծառ տեսարան։

***

Հիմա նորից խոտհունձ է.
Ցես հիշում եմ մեր սարը,
Աչքերի դեմ, հենց հիմա
Փռվել է մի տեսարան։

Հինգ գերանդի, հինգ մանգաղ,
Տաս կոմբիրիտ ընկերներ՝
Հովերի մեջ փաթաթված
Գրոհում են սարնիվեր։

Հոմն եր, հոմն եր շընգշընգում,
Հովարան եր մեր սարը,
Ցես չեմ տեսել այդքան վառ,
Այդքան պայծառ տեսարան։

12· ԿՈՄԲԱՅՆԸ

1.

Ցերը մարդն իմացավ, վոր իր բնակած տեղից լերեք որվա ճանապարհ լեկվոր մարդիկ տափաստանում մեքենաներով վարել են դեռևս վոչ մի անգամ չհերկած մի խոշոր հողակտոր և մեքենաներով ել ցանել, մտածեց, վոր դրանք Նուլնպիսի հին մարդիկ են, ինչպես ինքը, բայց իրենից մի քիչ ավելի հիմար են։

Նրա հին մարմնի մեջ ապրում եր հազարամյա հոգին, և նա գիտեր, վոր տափաստանում բոլոր մարդկանց վիշտն ու ուրախությունը հող վարելը, ցանելը և հացահատիկ հավաքելն է, իսկ մրթյունը հող վարելը, ցանելը և հացահատիկ հավաքելն է, իսկ մրնացած բոլորը, ինչ վոր անում են մարդիկ, կարելի լե չանել։

Հողը ծնում է մարդուն, վորպեսզի նա իր վրա աշխատի, իսկ լերբ մարդն այնքան է աշխատում, վոր իր ամբողջ ուժն սպառվում է, այն ժամանակ հողը կլանում է նրա մարմինն ու վոսկորները։

Ամառը լերկրի վրայից դանդաղորեն անցնում է կիզիչ արևը, իսկ նրա հետևից արևելքից սուլում է տաք քամին և այլելով ցանքերը, խոտերը, չորացնում է մարդուն թախիծով, չորացնում է սովի սարսափով։ Ցերբեմն քամին քշում բերում է տափաստան սև-սև ամպեր, վորոնք վոռոգում են գետինն անձրևով, և նրա հոգին ուրախանում է, վոր հաց շատ կլինի։

Զմեռն արևն արագությամբ սահում է լերկնակամարով, սուր, սառը քամին անցնում է տափաստանի վրայով, խշխշում է գետնի լերեսին, սուլում է, ժլատությամբ դանում ձյուն։

Մարդը մտածում եր իր տավարի, իր բնակարանի և հացի մասին, մտածում եր լերբեմն իր կնոջ մասին, բայց մտածում եր միշտ միայն իրեն պատկանողի և համարյա լերբեք՝ իր մասին։

Նա հավատացած եր, վոր չկա մի մեքենա վոր կարող է հաղթահարել շոգի և ցրտի ուժը, և մեքենան չի կարող փոխել չար քամիների ճանապարհը։

Այս մարդը հենց հին ժամանակվանից սովոր եր ապրել աստծուց լեկող ողնությունի հուլսերով, ապրել առանց հույս տածելու գեպի իր խելքի ուժը։

2.

Ցերբ հունձի ժամանակը լեկավ, նա, այդ կիսավայրենի տափաստանարնակն իր աղքատ բերքը հավաքելուց հետո գնաց նտելու, թե ինչպես են լեկվոր մարդիկ մեքենաներով բերքը հավաքում։ Կարող է պատահել, վոր հաջողվի մի քիչ նրանց վրա ծիծաղել։

Լայնաթիկունք, կարճավոտ, ծանր սապոգներով, փոշու գունի բաճկոն հագած՝ նա կանգնած եր տափաստանի մեջտեղը, կարծես քարից եր ապած։ Նրա մոխրագույն միրուքավոր դեմքը նույնպես քարից եր։ Հոնքերի վրա քաշած գլխարկի և միրուքի մեջտեղից անվստահությամբ ու մռայլ փայլում ելին մութ աչքերը։ Նրա մազոտ քթածակերը հավասարապես շնչում ելին, շարժելով մոխրագույն բեղերը։

Նա նայում եր, թե ինչպես լեկվորները շարժվում են մի կառուցվածքի շուրջը, վորը քիչ եր նման մեքենայի, ավելի շուտ նման եր մի վագրի գազանի, վորին լերբեմն տեսնում եր լերազում։ Այդ գազանի լերկար վիզը գլուխ չունի, իսկ նրա պոչն ամբողջովին կազմված է դանակներից և կպած է ահագին անճոռնի իրանի կողքին։ Ցեվ իրանն այնքան խորդ ու բորդ եր, վոր կարծես արդեն ճմռտված, կոտրտված է տափաստանի քամուց։ Դժվար է հասկանալ՝ ինչպես է աշխատում լերկաթից և փայտից շինած այդ հրեշը, ինչպես են մարդիկ ղեկավարում նրա ուժը։

Այդ մարդիկ սովորական մարդիկ են, բայց ջահել են, արագ են շարժվում, բայց չի լերևում, վոր աշխատում են շտապելով։ Ցերբ այդ մեքենան շուռ գա կողքի վրա, ամենաքիչը հինգ մարդ տակով կանի։

— Դրա անունն ինչ է,— հարցրեց մարդը։

— Մի կողմի վրա անցիր, — պատասխանեցին նրան։ Բայց նա տեղից չշարժվեց։

Հրեշի կողքին կամ առաջից գոռում ու վազում եր լերկաթե արջը՝ անիվների վրա։ Նրա հաստ վիզը թամբել է անբեղ լերիտասարդը, համարյա մի լերեխա։ Նրա վրայի բաճկոնը կեղտոտվել է,

կարծես թե ծածկի թիթեղից է կարած։ Պատանին իր մեքենան վոտքերով հրելով, պատեց անիվը, յերկաթե անիվների լայն շրջանակները նույնպես պատվեցին, մեծ մեքենան տեղահան յեղավ, թրխկաց և սահեց չոր գետնի յերեսով, պոչով ավելելով հասկերը և հավաքելով տասնյակ մեխի նման բարակ յերկաթյա մատներով։ Հասկերը լոգացին մեքենայի պոչի վրայով դեպի նրա կողքը, իսկ մեքենան շարժվում և վոռնում եր ագահությունից՝ նրանց խրժռելով։ Մեքենայի կորված վզից դուրս եյին թռչում ծղնոտը և փոշին։

Մարդը կանգնած նայում եր մեքենայի հետևից։ Նրա բերանը բացվում ու փակվում եր, մորուքը շարժվում եր։ Թվում եր, թե նա գոռում եր։ Նրա գլխին և ուսերին թափվում եր ծղնոտը, թռչում եր յերեսին, մորուքին։ Նա յերերում եր, փայտը խրում եր հողի մեջ, առաջ եր քաշում ուսերը, ուղղում եր մեջքի տոպրակը։ Ապա կարծես նրան հանկարծ պոկեցին գետնից։ Նա ծանր, բայց շտապ վազեց կոմբայնի յետևից, ձեռնափայտը շարժելով։ Տոպրակը մեջքին ցատկոտում եր, կարծես ուզում եր նրա հետևից հասնել։ Միայն նա չեր վազում, վազում եյին և ուրիշ գյուղացիներ։ բայց նա, ըստ յերևույթին, ցանկանում եր մեքենայի շուրջը պտտել։ Բոլորից առաջ եր վազում, բայց մեքենային չեր հասնում, սալթաքում եր, և միշտ թվում եր, թե նա՝ դողում է։

Այնուամենայնիվ նա կոմբայնին հասավ, յերբ նրա ընթացքը դանդաղեց, հասավ և քիչ եր մնում հնձող մասի դանակի տակ ընկներ։

Մի յերկար մարդ մի կողմը հրեց նրան։

— Դե՛,—խռպոտ ձայնով ասաց նա, սրբելով ճակատի քրտինքը չուգունե թաթով։

Կոմբայնը կանգ առավ։ Նա մոտ վազեց դեպի, վորտեղից պարկի մեջ եր լցվում հատիկը, և ափը դեմ տալով հատիկների հոսանքին, վերցրեց մի բուռ։ Մի քանի վայրկյան նա նայում եր հատիկներին, բուռը դեմքին մոտեցնելով և փոշոտած վիզը ծռելով։ Ապա ցույց տալով հատիկը շրջապատողներին, ասաց խռպոտ և շնչակտուր։

— Իսկական դեղը, հը՞մ։

3.

Նրա կողքին կանգնած եյին նրա պես մարդիկ, բայց նրանից ավելի ջահել։ Նրանք նայում եյին մեքենային։ Ծերունին հատիկները թափեց պարկի մեջ և իսկույն նորից ափը դեմ տալով հոսանքին, վերցրեց մի բուռ հատիկ և խնամքով թաղցրեց բաճկոնի դրպանում։ Նույնն արեցին նաև յերկու-յերեք մարդ։

Մեկն ասաց հառաչելով.

— Հնարել են, հա՜...

— Հետևից չես հասնի,—ասաց մեկ ուրիշը։

Իսկ յերրորդը մոայլ վրա բերեց.

— Վիրտեղից...

Շարունակեցին ասել ևս մի քանի անորոշ խոսքեր, բայց դրանցից վոչ մեկի մեջ ուրախություն չեր յերևում։ Հպարտությունն ու ուրախությունը հնչում եյին միայն այն մարդկանց խոսքերի մեջ, վորոնք պատմում եյին մեքենայի ներքին կառուցման, նրա աշխատանքի մասին։

— Այնուամենայնիվ նրա շուրջը հավաքված են մեր հողագործները,—մտազբաղ կերպով ասաց մեկը։

Հապա ով։ Հողը պահանջում է փորձ... Մեկը մյուսին մխիթարելով այդ մարդիկ հեռացան «Գիգանտ»-ի բանվորների մոտից, իսկ այն ծեր կարճվոտանին մնաց։

Նա դեմնից վերցրեց ձեռնափայտը և վոնց վոր թուրը, սրբեց նրա ծայրը բաճկոնի փեշով, ապա մատներով թափ տալով ծղնոտը մորուքի վրայից դանդաղորեն սկսեց մեքենայի շուրջը պտտել։ Նա շոշափում եր այն ձեռքերով, թեթև թխկացնում իր ձեռնափայտով, մտածելով կանգ եր առնում, և նորից գնում եր, թափահարելով մորուքը և ուղղելով գլխարկը։ Նրա քարե դեմքը կարծես ավելի լայնացավ.—դուցե նա ատամներն եր կրճատացնում։

Ապա նա ամբոխի հետ կանգնած եր միտինգին և լսում եր հռետորների ճառերը՝ յերկու ձեռքով հենված ձեռնափայտի վրա, դեպի գետին նայելով։ Յերբեմն ձեռնափայտով փորփրում եր իր վոտի մոտի հողը, կարծես ուզում եր ստուգել՝ նույնն է այդ հողը, ինչպես վոր միշտ եր։

Նվերներ բաժանեցին այն բանվորներին, վորոնք ամենից շատ յեռանդով աշխատել եյին նոր հակալական դաշտի վրա։ Յերբ բանվորներն ստանում եյին նվերները, նա աչքերը սևեռած նայում եր նրանց։ Նվեր ստացավ նաև տրակտորի վրա աշխատող աղջիկը։

— Աղջկան եյ,—ասաց ծերունին հարևանին, ապա քմծիծաղ տալով ավելացրեց.—գրավում են։

Շուտով նա թողեց հեռացավ, հավասարապես, յուրաքանչյուր յերեք քայլից հետո ձեռնափայտը հողի մեջ խրելով, առանց շուրջը նայելու։ Հավանական է, վոր շատ խորն եր հուզված նրա հազարամյա, բնության ուժերին հնազանդ հոգին։

— Ի՞նչ գյուղատնտեսական մեքենաներ գիտեք։ Համեմատեցեք ձեզ ծանոթ հին ու նոր մեքենաները իրար հետ։

— Այս հոդվածի վրա պատմեցեք, թե ինչ հասկանում ունեք հին մարդը հողը մշակելու նկատմամբ։

— Նոր մեքենաներն ինչ փոփոխություն են մտցնում գյուղատնտեսական աշխատանքների մեջ և ինչպե՞ս և ազդում այդ փոփոխությունը գյուղացիության հոգեբանության վրա,

---

Դիտեցեք ստորև դրված խոսքը և պատասխանեցեք տված հարցերին. Ամառը յերկրի վերևից դանդաղորեն անցնում և կիզիչ արևը։

1. Քանի միտք կա այստեղ, կամ քանի՞ խոսք։
2. Գտեք այն բառը, առանց վորի միտք չի լինի (բայը)։
3. Արևն ի՞նչ և անում. 4. ի՞նչն և անցնում. 5. ինչպե՞ս և անցնում. 6. վորտեղի՞ց և անցնում. 7. յերբ և անցնում. 8. ինչի՞ վերևից և անցնում 9. ինչպի՞սի արև։

Ցույց տվեք այն բառերը, վորոնք, 1) վերաբերում են անցնում և բային (ի՞նչը—արևը, ինչպե՞ս—դանդաղորեն...) 2) վերևից բառին. 3) առեվր բառին։

— Խոսքի մեջ, բացի բայից, ամեն մի բառ լրացնում և վորևե բառի միտքը։ Մենք հարցերով կարող ենք իմանալ, թե վոր բառը վորի լրացումն և։

---

13. ԱՅՑ ԿՈԼԽՈԶԻՆ

Ցնկել եմ ահա Քեզ մոտ կրկին,
Ո՞վ յեղբայրներ իմ արևավառ,
Վոր զգամ շունչը Ձեր նոր յերգի
Ու Մարտը տեսնեմ Ձեր այս համառ։

Ցնկել եմ յերգով լիահնչուն,
Վոր դառնամ մարտին Ձեր մասնակից։
Ցնվ իմ մակոկից ու դաղգյահից
Բերել եմ ինձ հետ սեր ու վողջույն։

Ցնկել եմ յես Ձեր պարարտ հողին
Իմ մկանների ուժը տալու,
Ցնվ առանց գովերգ ու ներբողի
Ձեզ խնդալու ու ժպտալու։

Ձեզ հետ միասին յես ել համառ
Ցնվ բարձրանում եմ և պայքարում
Այն հսկա ու մեծ գործի համար,
Վոր արևափայլ կյանքն և վառում։

Ցնկել եմ ահա Ձեզ մոտ կրկին,
Վոր յերգը լսեմ Ձեր կարկաչուն.
Ո՞վ Դուք ընկերներ իմ թանդագին,
Ձեր բազկի յերգին հաղար վողջույն։

Ուսումնասիրեցեք շեֆարկյալ գյուղի կոլտնտեսությունը և գրեցեք նրանց կատարած աշխատանքների մասին։

---

14. ՅԵՐԳԸ

Հիմա իմ յերկրի բոլոր մասերում, բոլոր հանքերում բազուկներն են զարկեր տեղում։ Զարկեր են տեղում քրտնած մարմինները հանքերում, և աղի քրտինքը հոսում և դեմքով պղնձագույն։

Պղնձի հանքերում հիմա քանի՞ ամուր բազուկներ են մկանված։ Հանքերը դղրդում են, հողը տնքում և զարկերից, բայց քրտինքն ուժով խլում և պղինձը։ Ձիերը փռնչալով քաշում են բեռները ծանր, բեռները պղնձի։

Տնքում են բեռները ծանրությունից, դղրդում են ռելսերը, ու պղինձը հոսում և դեպի գործարան։ Այնտեղ մռնչում են կոնվերտորները, ասես՝ հաղար կենդանի յե մորթվում։ Բառաչում են կոնվերտորները, և հալվում և պղինձը՝ պայքարով, քրտինքով, ուժով։

Հորդում և պղնձի զանգվածը կաս-կարմիր կորած, վոնց վոր սրով կտրած սիրտ լինի... Ցնվ բաբախում են սրտերը լարված, վառվում են դեմքերը պղնձի առաջ... Ուժերը կուտակվում են վարպետի աչքերը վառվում, հրդեհվում, յերբ տեսնում և պղինձը հալվող և առաջ և մղվում նոր թափով, նոր ուժով...

Կոմպրեսորները ծղրտում, ճչում են ձորում փռված գործարանում, և ավելի յե բորբոքվում հալվող պղինձը, մռնչում և նա, ցանկանում և ջարդել կոնվերտորի կողերը...

Ցնրգում և պղինձը, յերգում են մեքենաները... Ասես համերգ և ձորում, պղնձի այդ աշխարհում։

Ցնրկաթուղին մտնում և յերկաթավորվող իմ յերկրի բոլոր յերակները և կարմիր պղնձի բեռներն իր հետ տանում և հեռու-հեռու, իմ լուսե յերկրի բոլոր յերակները, բոլոր կողմերը։

Ցնվ ամեն տեղ պղինձն և խոսում, պղնձի ձայնն և զրնգում...

— Աշխատանքի ինչ պայմաններ են դուրս բերված այստեղ։
— Ի՞նչ տրամաբանություն և իշխում այս հոդվածում։
— Ի՞նչ նշանակություն ունի պղինձը մեր ժողովրդ. տնտեսության համար։

Կոնվերտոր — մեծ կաթսա, ուր զտում են կոմպրեսոր — ոդամուղ մեքենա
հալված պղինձը։

Հիմնվելով այս բաժնի հոդվածների վրա, կազմիր մի փոքրիկ զեկուցում և զեկուցիր այդ խմբում հետևյալ հարցերի մասին.

Հնգամյա պլանի իրագործման պայմանները։

Գյուղատնտեսության մեքենայացման նշանակությունը։

Քաղաքային ծանր արդյունաբերության զարգացումը և դրա կապը գյուղատնտեսության հետ։

Քաղաքի և գյուղի միջև հաստատվող արտադրական դաշինքի ձևերը։

15. ԸՆԿԵՐԸ

1.

Հաց աշխատելու համար ինձ գցեցի Բաղդա. հուլյս մի ծանոթի վրա յեր, վոր նա պաշտոն կգտնի ինձ համար։ Նա հարուստ եր, նավթային աշխարհում լավ դիրք ուներ։ Պատահմամբ եկի ծանոթացել այդ պարոնի հետ Դիլիջանում, ուր նա ամառանոց եր յեկեր։ Մի խմբով Հաղարծնի վանքն ելինք գնացել, նա յել հետներս եր, մի խոսքով՝ մոտիկ ծանոթացել ելինք։

Բագվում սկզբի որերն զբոսնում եի քաղաքին ծանոթանալու համար ու միևնույն ժամանակ աչքս փնտռում եր նրան, և յերբ այդպիսով չգտա, մի որ եկ գնացի նրա բնակարանը։ Ինձ ասացին, վոր պարոնը Թիֆլիս է գնացել, շուտով կգա։ Մի քանի որ հետո իմացա, վոր արդեն Բագվումն է, բայց իմ կուրը բախտից չեկի կարողանում նրան մի տեղ հանդիպեի։ Գնում եի բնակարանը, ասում ելին՝ գրասենյակ է գնացել։ Գնում եի գրասենյակը, ասում ելին՝ Բալախանի յե գնացել, կամ բանկը։

Քանի վոր գրպանումս դեռ մի քանի կոպեկ կար, յես որորվում եի նրան գտնելու հուլյսով։ Բայց յերբ մի որ եկ փողս հատավ և հյուրանոցի տերը դուռը փակեց իմ առաջ, յես վորոշեցի այդ որը, ինչ եկ վոր լինի, գտնեմ ծանոթիս, պաշտոն խնդրեմ, իսկ մինչև պաշտոն գտնելը միքիչ փող պարտք վերցնեմ։ Գնացի նրա բնակարանը, բնակարանից՝ գրասենյակ, գրասենյակից՝ բանկ։ Ցեվ այդպես ամբողջ որը։ Արդեն յերեկոյանում եր, յես դեռ վոչինչ չեի կերել, միայն անընդհատ ծխում եի։ Ցերը վերջին անգամ գնացի գրասենյակ, ինձ ասացին, վոր տուն է գնացել և այնտեղից եկ պետք է յերթա ժողովարան։ Իսկույն շտապեցի ժողովարան, կանգնեցի փողոցում, դռան առջև։ Քաղաքի հարուստները, ինժեներները, ինտելիգենտները կառքերով գալիս ելին իրար յետևից, գոհ և ուրախ։

Մեկ եկ հանկարծ տեսա նրան՝ ծանոթիս, վորին տասնհինգ որեր յերազել եի։ ուղղակի աչքերիս չեի հավատում։

Վազածանոթի ժպիտով իսկույն դեմը յելա և գլխարկս վերցնելով ձեռք մեկնեցի։

— Բարև ձեզ, պարոն այսինչ։

Շատ դժկամակությամբ ձեռք տվավ և ասաց.

— Ցես ձեզ չեմ ճանաչում, ներողություն։

— Մթթե չեք հիշում, — զարմացած հարցրի յես — անցյալ ամառ Դիլիջանում ծանոթացանք. ուսուցիչ այսինչը։ Ձեզ շատ վորոնեցի...

Պարոն ծանոթս իբրև թե սկսեց փորփրել իր հիշողությունը և ապա սառնորեն պատասխանեց.

— Վոչ, չեմ հիշում, չեմ կարողանում մտաբերել։

— Միևնույն է, — ասացի յես, — գլխավորն այդ չէ, այլ այն, վոր յես տասնըհինգ որ է այստեղ եմ, պաշտոն գտնելու յեմ յեկել, միակ հուլյս դուք եք, խնդրում եմ ձեզ...

— Ներողություն, սիրելիս, — խոսքս կտրեց պարոնը՝ ձեռքը թափահարելով։ յես, յես... ժամանակ չունեմ, դիտեք, ժամանակ չունեմ պաշտոն գտնելու, դուք գտեք, յես կմիջնորդեմ։ Ցտեսություն...

Ցեվ առանց իմ պատասխանը լսելու թռավ ներս։

2.

Մնացի քար կտրած. հուլյսերս բոլորը խորտակվեցին ձեռքի մի հարվածով։ Ինչ արած, տեղիցս շարժվեցի և մտամոլոր քայլերով անցա ծովափը։

Արդեն գիշեր եր, վախի պես մի զգացմունք բռնեց սիրտս։ Ուր անցնեմ գիշերս, ինչ անեմ, ուր գնամ...

Ծովից փչող քամին փողոցների ավազոտ փոշին բռներով լցնում եր քիթս ու բերանս. յերբեմն կանգնում եի մի անկյունում, մի դռան առաջ ու նորից քայլում, վորովհետև համբերանքս չեր տանում կանգնած մնալ։

Քաղցած, ամբողջ որը վոտքի, ընկած մի մեծ քաղաք, վոր ասես թե թշնամու բանակ լիներ։ Վոչ մի լուսամուտից բարեկամական մի լույս չեր շողում ինձ համար։ Ցես չկայի, յես վոչինչ եի այդ շեն ու հատարակ տների մեջ ապրողների համար։ Ձե, յես հուսահատված չեի, գիտեի, վոր չեմ մեռնի, այսպես կամ այնպես լույսը կբացվի, և վաղն ուղղակի մշակ, բեռնակիր կդառնամ և հաց կգտնեմ. բայց բանն այն եր, վոր հիմա յես շատ անոթի եի և շատ հոգնած — հաղիվ եի կարողանում քայլել, յեթե մի տաք անկյուն գտնեի, մեռածի պես իսկույն կքնեի՝ մոռնալով քաղց և ամեն բան։

Վերջապես մի քիչ թափառելուց հետո՝ գտա մի բաց դարպաս։ Ներս մտա պատսպարվելու. լավ տեղ եր, քամի յել չկար։ Փողոցի լապտերի դժգույն լույսն ազոտ լուսավորում եր այդ վայրը։ Դիտեցի չորս կողմս և տեսա, վոր մի անկյունում խոտերի վրա պառկած եր մի մեծ շուն։ Զվախեցա, վորովհետև նա հանգիստ նայում եր ինձ և յերևում եր, վոր վրաս հարձակվելու վոչ մի միտք չունի։ Զգուշ քայլերով մոտեցա նրան և մի քիչ հեռու նստեցի խոտերի վրա, նայեց ինձ և աչքերը խփեց, յես շոյեցի նրա գլուխը

և բոլորովին հանգստացա, վոր ապահով տեղ եմ։ Լավ տեղավորվե՞ցի, վոտներս մեկնեցի և սկսեցի ծխել, սակայն անոթի լինելու պատճառով ծխախոտը սիրտս խառնեց։ դեն գցեցի ծխախոտը։

Այդ միջոցին խոտի վրա աչքիս ընկան հացի կտորներ։ լուցկի վառեցի և սկսեցի ջոկել իմ կարծիքով այն մաքուր կտորները, վորոնց դեռ չեր դիպել շան բերանը։ Գտա մի քանի կտոր ու կերա։ Իմ հարևանն այդ բոպելին աչքերը մեղմով գցեց վրաս։ յես մի փոքր վախեցա։ ով գիտի։ մեկ էլ չհարձակվի։ Բայց նա սպասածից շատ ավելի բարի յեր։ Նայեց, վեր կացավ կանգնեց ու թաթերով յետ տարավ այն խոտը, վորի վրա ինքը պառկած եր, նրա տակից հանեց ավելի մեծ կտորներ ու վոսկորներ ու բոլորը դարսեց խոտի վրա այնտեղ, ուր յես հացի կտորներ էլի գտել, հետո նստեց իր պաշարի առաջ ու նայեց յերեսիս։ ապա վեր առավ մի վոսկոր և սկսեց կրծել, յերևի ինձ որինակ տալու համար...

Յես հիացած եյի, բայց ավելի շուտ՝ զգացված սրտիս խորքից։ այդ ժամին յես զգում եյի ինձ և՛ բախտավոր, և՛ աշխարհի մեջ վոչ մենակ։ բռնեցի բարի շան դլուխը և բուռն զգացմունքով համբուրեցի։

Յես մոռացել եյի, թե շան հետ եմ սեղան նստել։ ինձ թվում եր, վոր յես մի ազնիվ բարեկամի, ընկերի հետ եմ ընթրում, այն աստիճան իմ աչքում այդ բոպեին շունը մարդ եր դարձել և մարդը՝ շուն։

— Ի՞նչ ժամանակաշրջանի յե վերաբերում այս պատմվածքը։

— Ի՞նչներ ստիպում մարդկանց «հաց աշխատելու համար» Բագու դնալ։

— Հասարակական ինչ խավի ներկայացուցիչ և ուսուցչին ծանոթը։

— Ինչով կարող ենք բացատրել նրա վարմունքը՝ իր ծանոթի հանդեպ։

— Այս հոդվածում հիշված ուսուցիչը հասարակական վոր խավին եր պատկանում։

— Ի՞նչ դրության մեջ եյին ուսուցիչներն այդ ժամանակ։

— Համեմատեցեք ուսուցչի դրությունը ներկայումս և հեղափոխությունից առաջ։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Թվարկման դեպքում թվարկվող բառերն ու ասույթները բաժանվում են իրարից ստորակետով, յեթե միացած չեն «եւ»-ով կամ «ու»-ով։

Որինակ՝ գնացի նրա բնակարանը, բնակարանից դրասենյակ, դրասենյակից բանկ։

Այս հոդվածի մեջ գտեք ուրիշ որինակներ։

Ինքներդ կազմեցեք նման որինակներ։

Յերբ գրի յենք առնում յերկու կամ ավելի անձերի խոսակցությունը, յուրաքանչյուրի խոսքն սկսում ենք նոր տողից մեծատառով, սկիզբը գիծ (—) դնելով։ Որինակ՝

— Յես ձեզ չեմ ճանաչում։

— Մի՞թե չեք հիշում։

16. ՉԻԹ

1.

Ճանապարհը թեքվում է շոսեյից, մտնում պարսպի գլխավոր մուտքից ներս, հետո նրա ծայրը կոմբինատի բակում բաժանվելով բազմաթիվ ճյուղերի՝ լուծվում է տարբեր կողմերի վրա։

Լեռներից պոկվում և քամին, որորում պարսպի ներսի ծառերը՝ գործարանների և նրանց կորպուսների կտուրների վրա։ Ծառերն, նրանց տակը՝ ճանապարհ, իսկ ճանապարհի աջ և ձախ կողմերին փչե ցանկապատեր։ Նրանց ներսը փռվել են ծաղկանոցների մարգերը։

Յերկաթուղու ռելսերը մտնում են կոմբինատի բակը և պատհեստների մոտ փակագծերի պես վերջանում են նրանց ծայրերը։ Այդտեղ են վերջանում նաև գործարաններից ծայր առած վագոնետկաների նեղ ռելսերը, վորոնք սարդի վոստայնի նման տարածվել են կոմբինատի վողջ բակը։

2.

Յերբորդ կվարտալին չթի գործարանը թերակատարեց պլանները։

Նախկին չթի վարպետ, կոմսոմոլի բջիջի քարտուղար Նիկոլը, վորն առաջ եր քաշվել կոմբինատում, ռադիոյով լսեց մի քանի անգամ, հետո կարդաց թերթերում անտհաշվարկալին բրիգադների մասին։

Իսկ իրեն դազդյահի վրա աշխատող բանվորը թերի յեր թողնում գունավոր ու նաշխուն չթի վճռական պլանը։

Նիկոլը մի տեսակ ինչ վոր բան և ամոթ զգաց, հետո վորոշեց թողնել գրասենյակային աշխատանքներն ու գնալ իր դազդյահի մոտ։

Նիկոլն ուզեց իրենց ցեխում, բջիջում ցույց տալ և մտցնել աշխատանքի նոր ձևեր, կատարել գործարանի պլանները՝ ղեկավարի ցուցմունքներով, վոր պատվի ամոթով չմնա իր գործարանի ու դասակարգի առաջ։

Նիկոլը մտնում եր գործարան և վողջ հարյուրավոր դազդյահները հարազատ եյին թվում իրեն։

Գործարանն աշխատում եր վոնց վոր հսկա մի ժամացույցի բաց մեխանիզմ, իսկ Նիկոլն ինչպես ժամագործ վարպետ՝ գիտեր ղեկավարել նրա ամեն մի մեքենան ու մասը։

Ցեխում կոմյերիտականներից կազմակերպվեց Կոսարյեվի անվան առաջին անտհաշվարկալին բրիգադը։ Նիկոլը նորից աշխատեց

ցեխում, իր դազգյահի վրա, վորպես հարվածային տնտեսվարկի բրիգադիր։

Ցեխում թերահավատներ յեղան, վորոնք գնդլիկ Սիսակի հետ ծաղրեցին Նիկոլին ու մյուսներին։

Իսկ բրիգադը սոցմրցման կանչեց ցեխի անհատ բանվորներին և հետ մնացած ողակներին։

Հետո կազմակերպվեց Մյուդ-ի անվան տնտեսվարկային 2-րդ բրիգադը՝ անկուսակցական յերիտասարդ բանվորներից։

Ցեխում ավելի ծավալեց սոցմրցումը, վոր դազգյահների վրա աշխատող մկաններն ավելի արագ շարժվեն ու քուլա-քուլա ծալքերով հոսի ծաղկավոր չիթը։ Ցեվ գնացքը մտնի գործարանի պարիսպներից ներս՝ պահեստների մոտ, հետո դուրդ սլաքների պես ռելսերի վրա շոդեքարշերը սլանան հազարավոր կիլոմետր, անցնեն կամուրջների վրայով, հասնեն յերկրի բոլոր ծայրերը՝ հեռու։

3.

Ցեխում Կոստրյեվի անվան բրիգադն ուներ իր նախանձողը։

Բրիգադն այդ մասին գիտեր։ դա գնդլիկ Սիսակն եր, վորի արտադրանքի քառասուն տոկոսը բրակ եր։ Դրանից եր, վոր Սիսակը խանդում եր բրիգադին և ոգտագործում առիթը։

— Ա՛յ, տեսնք, Նրանք վոչ թե հարվածային բանվորներ են, այլ պրոդուլշչիկներ,— ասում եր նա ցեխի մյուս բանվորներին։

Սիսակը հաճախ աշխատանքը թողած նայում եր չթերին ու հետո թոնթորում ինքն իրեն։ Քաղաքում նրան ամեն ինչ թվում եր այնպես, վոնց վոր չթի անհատ ծաղիկները։ Ճիշտ է, նա յերկար ժամանակ աշխատում եր գործարանում, նույնիսկ սովորել է դազգյահը ղեկավարել, բայց այն, ինչ իրեն հետ բերել եր գյուղից, վորոշ փոփոխումներով պահել եր իր մեջ։ Սիսակը թողել է իրենց գյուղը, փախել քաղաք, վոր շատ փող աշխատի, նորից վերադառնա գյուղ, նորոգել տա իր սեփական մարագն ու տունը։ Ու յերբ գարունը բացվի գյուղի հանդերի վրա, ինքը ծանր կանգնի իր արտի ծայրին։ Այդ բոլորն իրենը կլինի։ Թվում եր, թե դրա համար գյուղի աղջիկները կսիրեն իրեն։ Լեռներից կպոկվի քամու թեշն ու կֆռֆռացնի շորերը, բայց իրեն գործած չթե շապիկի կրծքի վրա նա չի ունենա մի բան, այդ էլ Կիվ-ը կլինի։

Նիկոլը շարունակ կռվում եր պլանովշչիկի հետ, վորը վորոշակի կերպով տապալում եր Կոստրյեվի և Մյուդ-ի անվան բրիգադների միջև յեղած սոցմրցումը։

— Ո՞ւր է ճիշտ պլանը՝ նրա հաշվառումը, այստեղ նույնիսկ

դրանց հոտը չի գալիս, մենք այնպես չենք թողնի, վոր Մյուդ-ի բրիգադը մեզ բուքսիր դա,— ասում եր Նիկոլը։

Վորոշ բանվորների թվում եր, վոր ցեխում աշխատանքը միանման է, խիստ, և վոչինչ չեր կարելի փոփոխել նրանում։ կարծում էլին, վոր այդ միայն ղեկավարների գործն եր։ Բայց մի որ ցեխի արտադրական խորհրդակցությանը՝ գործարանի դիրեկտորն ասաց բանվորներին, վոր հենց իրենք էլ պետք է մտածեն ուղղումներ մտցնել աշխատանքների մեջ։

Աշխատում եր գործարանը, նրա ներքը ցեխը, իսկ ցեխում՝ Կոստրյեվի անվան բրիգադը։ Ցեվ վոնց վոր խորը հուզվում էլին շարունակ կոմյերիտականներին բրիգադի հերոսները, այդ նրանից եր, վոր դազգյահների ապարատներին փաթաթվող չթի թելերը միշտ կտրվում էլին, աշխատանքը դժվարանում եր և կիսատ պլանների համար բրիգադը գործարանին մնում եր պարտք։

Արտադրական խորհրդակցությունից և դիրեկտորի խոսքերից վորոշ ժամանակ հետո Նիկոլը գտավ թելերը չկտրվելու միջոցը։ Նա առաջարկեց դազգյահների ապարատները ձևափոխել, վոր ավելի եժան և ամուր կարելի յե պատրաստել Խորհրդային գործարաններում, Խորհրդային նյութերից ու վոչ մի կախում չունենալ ոտար յերկիրներից։

Նիկոլի առաջարկը կիրառվեց։

Նորից աշխատում եր գործարանը, նրա ներսում՝ Կոստրյեվի բրիգադն ու յերի՛ի պարքը տալիս հավելումներով։

Նիկոլի առաջարկի փորձից հետո շուտով, շատ շուտով, ռացիոնալիզատորական աշխատանքները ծավալեցին ցեխում։

Թելի շշակից հետո, յերբ ցեխում նորից սկսվեց աշխատանքը, բանվորներից վոչ վոք չտեսավ, թե ով Սիսակի դազգյահի վրա կախեց նրան այնքան նման մի դիմանկար, վորի տակը գրված եր.

Սիսակն իր պլանը թերի յե թողնում,
արտադրանքի 40 տոկոսը բրակ է. ամոթ
նրա պատվին։

Հոսում եր ցեխի առորյան, աշխատում էլին տնտեսարշվարկային բրիգադները։ Ցեխում չեր աշխատում միայն մի դազգյահ, այդ Սիսակինն եր, իսկ ինքը չկար։ Մեկը մոտեցավ ու աշխատացրեց դազգյահը—դա Արշակն եր։

Աշխատանքից հետո Նիկոլը, Արշակը և բրիգադից ելի մի քանի հոգի նստեցին թերթի համար հոդված գրելու պլանավորողի և Սիսակի մասին։

4.

Պառկել եր ու մտածում։

Թվում եր Արշակին՝ յերեք որ անընդհատ ցեխի բանվորները խոսում են այն մասին, վոր ինքը պրոգուլ ունի։ Իսկ յերրորդ որը բրակի վրա մեկը կավճոտ տառերով թեք գրել եր. «Այս չիթը պատրաստել է Արշակը, վորը պրոգուլ ունի»։ Հետո ձեռքը թաթախել եր կավճի մեջ, խփել չթին, ու նրա վրա մնացել եր սպիտակ մատների նկարը։

Այդ սպիտակ թաթի նման Արշակի ուղեղում կարծես ծանրացել եր մի բան։ Ու նրա միտքը նորից ժամանակից յերեք որ յետ անցավ։

Գիշերը կիսվել եր։

Ցեխում պղնձի թելերից հոսում եր լույսը, թափվում դազգյահների դունավոր չթերի վրա։

Սեացել եյին գործարանի պատուհանների մեծ ապակիները։

Աշնան քամախառն անձրևը զարնվում եր պատուհանների ապակիներին, մայթերին, թափվում կտուրների խողովակներից, հետո փոսերում լճանում, վորոնց մեջ լողում եյին փշրերի պես ելեկտրական լույսերը։

Գործարանի ներսում չիկչիկում եյին դազգյահներն ու դրսից չեր լսվում անձրևի շփշփոցը։

Հետո անձրևի տակ յերկար-յերկար կանչեց գործարանի շչակը։ ցեխում դադարեց յերրորդ հերթի աշխատանքը, դազգյահները կամաց-կամաց կանգնեցրին։

Միջանցքը լցվեց բանվորներով։ Նրանք խմբերով հավաքվեցին դռների մոտ։

Շուտով բեռնատար ու ծածկված մի ավտո՝ ցեխոտ ճանապարհի վրա սահեց դեպի բանվորական շենքերի սպիտակ թաղերը, տանելով մի խումբ կապույտ բաճկոնավորների։

Արշակը մնաց, նա չհասավ առաջին ավտոյին, իսկ յերկրորդին չուզեց սպասել, գուցե նրա համար, վոր հանրակացարանը մոտ եր։ Նա նայեց միջանցքի պատի ելեկտրական ժամացույցին, վորի սև սլաքները փոքր թվերի վրա ուղիղ անկյուն եյին կազմել, կեպին իջեցրեց աչքերին և ձեռքերը շալվարի գրպանները խրած, դուրս լեկավ ու շտապ-շտապ քայլեց թաց մայթերի վրա։

Սառն անձրևը զարնվում եր նրա դեմքին ու ծայրերը վեր ցցված ուսերին։

Յերբ Արշակը պառկեց քնելու, զգաց՝ ինչ վոր սառը մի բան սահեց մեջքի վրա։ Ու վողջ գիշերը տենդում եր։

Հետո լուսաբացին նա արթնացավ լուսաբացի պես գունատ։

Ընկերներից մեկը նրան ջուր տվեց, ինչ վոր բան հարցրեց։ Արշակը չպատասխանեց, նայեց սառը հայացքով։ Ու կարծես թվում եր նրան՝ որորվում եյին հանրակացարանի փոքրիկ սենյակի իրերը։

Հիշում եր, վոնց վոր տենդի մեջ՝ սպիտակ խալաթով մի մարդ մոտեցավ իրեն, բռնեց ձախ ձեռքը, քիչ անց՝ դեղերը բերին։

Հետո, յերբ առողջացավ Արշակը՝ զգաց, վոր պատի որացույցից պոկվել և յերեք թերթիկ։

Հետևյալ որն Արշակը հերթապահ տաբելշչիկին հանձնեց հիվանդության կապույտ թերթիկը։ Ցեվ հենց յերրորդ որը տաբելից կորավ այն։ Իսկ ցեխի բանվորներից մի քանիսը պատմում են իրար, վոր Արշակը պրոգուլ ունի ու կավճոտ տառերով գրում բրակի վրա։

Արշակի ուղեղում կարծես առագաստի պես պարզվել եր այն կորած կապույտ թերթիկը և մտքերը, վոնց վոր ծովի քամի՝ զարնվում ու քշում եյին նրան։

Իսկ դուրսը գործարանների, կորպուսների ու փողոցների վրա հողից բարձրանում եր կապույտ լերեկոն։

Արշակն աչքերը փակեց ու յերեսը դարձրեց դեպի պատը։ Նա նորից սկսեց մտածել, բայց մտքերը, կորվում եյին։ Պատուհանից դուրս թվաց, թե ծառերը խշշացրին և կապույտ թերթիկն ոդի մեջ կամաց իջավ ու կավճոտ մի թաթ վերևից բռնեց նրան։

5.

Արշակն անհամբեր սպասում եր։

Ակումբի հանգստի սենյակի պատուհանից նայում եր դուրս։

Ելեկտրական առաջին լույսը վառվեց մոտիկ հեռագրասյան ուսերին, հետո գործարաններում, բանվորական հանրակացարաններում, թաղերում կամաց-կամաց սկսեցին պատուհանի ապակիները։

Քամին որորում եր լույսերը՝ հետո կարծես նրա ազմուկը հանկարծ լավեց ռադիո բարձրախոսից։ Արշակը պատուհանից հեռացավ, սկսեց լսել։ Ռադիո թերթը հաղորդում եր Կոսարյովի անվան բրիգադի աշխատանքների մասին։

Արշակը զարմացավ մի քիչ, հետո ուրախությունից կարծես լայնացավ կուրծքն ու ինչ վոր բան բարձրացավ նրա տակը։

Գործարանում, ցեխում ամեն որ աշխատանք կար ու պայքար և այդ բոլորը մոտիկից, ինչպես և ամեն բան, Արշակին այնքան զգալի չեր թվում, վորքան հեռվից։

1. Ի՞նչպես եր աշխատում չթի գործարանում կոմսոմոլի բջջի քարտուղար ընկ. Նիկոլը։

2. Ի՞նչ միջոցների դիմեց Նիկոլը պլանները ժամանակին կատարելու և գերակատարելու համար։

3. Ովքե՞ր եյին նախանձում Նիկոլին, տվեք Սիսակի բնութագիրը։

4. Ի՞նչ նշանակություն ունի տնտեսական հաշվարկի կիրառումը պլանների կատարման գործում։

5. Կոմսոմոլի առաջավոր դերն արդյունաբերության ռացիոնալացման աշխատանքների մեջ։

6. Ի՞նչ ձևով պետք է պայքարել սիմուլյանտների դեմ, վորոնք լքում են աշխատանքը և խանգարում են պլանների կատարմանը։

Այս հոդվածը քանի՞ մասի կարելի՞ ե բաժանել։

Յուրաքանչյուր մասն առանձին վերնագրեցեք։

Ընտրեցեք մի կտոր և իր առանձին վերնագրով արտագրեցեք ձեր տետրերում։

Համեմատեցեք հետևյալ բառերը, գիտելով նրանց կազմությունը։

1. Ցանկ-ցանկապատ. 2. յերկաթ-յերկաթուղի. 3. վակ-վակագիծ. 4. ժամ-ժամագործ. 5. գինի-գինեգործ. 6. հեռու—գիր—տուն=հեռագրատուն։

Այն բառը, վոր կազմված է յերկու կամ ավելի բառերի բաղադրումից, վորոնք միանալով մի իմաստ են արտահայտում, կոչվում է ԲԱՐԴ ԲԱՌ։

Բարդ բառերի բաղադրիչ մասերը միացնող Ա-ն կոչվում է հոդակապ։

Եթե յերկրորդ բաղադրիչ մասն սկսվում է ձայնավորով, ապա Ա հոդակապ չի դրվում (յերկաթուղի)։

---

17. ՆԱՎԹԱՇԱՆՔԸ

Ընդարձակ բարձրավանդակի վրա յերևում եր մի սև անտառ։ Անտերև, անճյուղ ծառերի մի կախարդական անտառ, ուր ստվերակ աղբյուրների փոխարեն հոսում է թանձր ու սև մի հեղուկ, ուր թռչունների յերգերին փոխարինում են շվիկների սուլոցները, առավոտյան շամանդաղին՝ շոգին ու ծուխը։ Ուր գիշեր-ցերեկ գործում են հազարավոր մեքենաներ ու նավթալին հորեր սև բուրգերի խառությունը, դաժանատեսք, ինչպես շրջակա ավազուտներն ու աղային լճերը։

Մթին անտառը հետզհետե նոսրանում է, սև ծառերը հեռանում են իրարից։ Յերևում են ցածր, սև շինություններ, յերկաթե գմբեթաձև շտեմարաններ, ապա ելեկտրական լապտերների և տելեֆոնի բարձր սյուները։

Աջ ու ձախ գործում են հանքերը։ Այստեղ փորում են նոր հորեր, այնտեղ մաքրում են հները։ Բուրգերի գագաթներին պտտող անիվները ցույց են տալիս հորերի անդադար գործունեությունը։ Մերթընդմերթ այս ու այն կողմից լսվում են ինչ վոր խշյուններ։

Հորերից դուրս բերվող հեղուկն է այդ, վոր թափվում է մոտակա չանների մեջ, խողովակներով հոսում ամբարները և հետո, ամենահաղթ շոգու ուժով մղվում դեպի գործարանները։ Այնտեղ նա զտվում է, մաքրվում, արտահանվում աշխարհի բոլոր կողմերը, վոսկի դառնում և անցնում է մի քանի տասնյակ բախտավորների գրպանը։

Անցնելով ցեխոտ ու նավթոտ մի տարածություն, մտնում ես բուրգերից մեկի տակ։ Ցերկայնաձև վայրյա մի շինություն է այդ, պատերը նավթով վողողված, հատակը՝ հողային։ Մեջտեղում փորված է հորը՝ յերկու թիզ լայնությամբ և կես վերստ խորությամբ մի կլոր ծակ, վորի պատերը պատրաստված են յերկաթով, այնպես վոր իսկապես ներկայացնում է այն յերկաթի խողովակ՝ գետնի մեջ ուղղահայաց խրված։

Ներս մտնելով, մարդ զգում է գազի սուր ու շշմեցուցիչ հոտը։

Շոգին մի անկյունում պտտում է մի մեծ անիվ, վորին փաթաթված կաշվե հաստ ու լայն փոկը, յերկճյուղ անցնելով մինչև շինության կեսը, պատեցնում է թմբկաձև ահագին գլանը։ Մերթ դեպի առաջ, մերթ դեպի յետ պտտելով, թմբուկը բաց է անում կամ հավաքում իր վրա վոլորված յերկայն պարանը, նայելով, թե ինչ ուղղություն է տալիս գլանին նրա մոտ կանգնած բանվորը։

Պարանն ուղղահայաց բարձրանում է վեր, ինչպես ոդալին ոճ, բուրգի ծայրում փաթաթվում է մի անիվի և թեքվում ցա՛։ Նրա ծայրին կապած է մի քանի սաժեն յերկայնությամբ մետաղյա դուլ։ Ցերը գլանն արձակում է պարանը՝ դուլը սրընթաց իջնում է հորի մեջ, զարկվելով յերկաթե պատերին, դղրդալով ընկնում է ստորերկրյա լճի մեջ և խուլ շառաչյուններ արձակելով՝ նորից բարձրանում է վեր՝ թանգագին հեղուկով լի։ Այդ հեղուկն որ-որի վրա պիտի ավելացնի գործարանատիրոջ հարստությունը։

Այնտեղ, հորի բերանին, մթին անդնդում, կարծես կատարվում է ինչ-վոր գեհենալին գործողություն։ Նավթը յեռում է գարերով կուտակված գազի զորությունից։ Լսվում են տարորինակ ձայներ, նման քամու՝ խուլ փոթորկի անտառի խորքում, կամ ծովային ալիքների հեռավոր շառաչյուններին։

Ցերկայն դուլը վշշալով դուրս է սողում, վորպես մի վիշապ, իր բնից։ Մի քանի վայրկյան նրա կինոմոնագույն ծծվոր մեջքը փայլում է ոդում։ Նա արագ բարձրանում է վերև, նորից կանգ է առնում կարծես հոգնած և մտածելով, զարկում է քիթն ինչ վոր ամրության և իր միջի հեղուկը թափում չանի մեջ։ Գազախառն նավթի կաթիլները բյուրավոր փոշի դառնալով ցրվում են ոդի մեջ։

Անցնում ես մի ուրիշ բուրգ, հետո յերրորդը, չորրորդը։ Ամենուրեք կեղտ, մուր, ցեխ։ Յերևում են վոտաբոբիկ եյակներ, վոտից մինչև գլուխ նավթոտ, ինչպես կենդանի պատուլներ։ Այստեղ մարդկային կյանքը յուրաքանչյուր րոպե յենթարկված է վտանգի, մի թեթև անզգուշություն կրակի հետ, և կիզանյութ գազը կարող է բռնկվել ու ոդը ցնդել մարդկանց։

Մտնում ես մի առանձին քարաշեն շինության մեջ։

Հինգ վիթխարի հրեղեն աչքեր աղյուսի պատի միջից վառվում են, խլացուցիչ աղմուկ արձակելով։ Նավթային բոցը գլանաձև կաթսաների տակ մրրիկի պես պտույտ-պտույտ է անում, գազանի պես մռնչում ու կատաղած լիզում յերկաթե ակոթի պատերը։ Կաթսաների մեջ յեռում է ջուրը և մեքենաների համար շոգի արտադրում։ Յերկու բանվոր հերթով գիշեր-ցերեկ պտտվում են հրեղեն ակների առջև և նրանց մեջ շարունակ վառ պահում կրակը։

Անսովոր մարդու վրա սարսափ է ազդում տիրող աղմուկը։ Մի-բոբը կամա-ակամա պտտվում է հեռու ու հեռու, և մտածածին դժոխքը դառնում է իրական այն տարբերությամբ, որ իրական գեհենին մարդիկ իրենք իրենց դատապարտում են կամավոր։ Թվում է, որ կաթսաներից մեկը, մյուսը, չդիմանալով ջրի ու կրակի դիվային մրցմանը, կորաքի և ոդը կցնդի ամբողջ շինությունը, և ամենից առաջ իր առջև պտտվող բանվորներին, որ սոսկալի տաքության մեջ հազիվ կարողանում են շունչ քաշել...

Այստեղ այդ բոլորովին չկա։

Տասը քայլ յերկայնությամբ և հինգ քայլ լայնությամբ կանգնած է մի սենյակ՝ ցածր լուսամուտներով։ Հատակն աղյուսից և, բայց շատ տեղ ավերված, խորդուբորդերով լի։ Հազիվ մարդու հասակից մի թիզ բարձր առաստաղը ծխից ու մրից սևացել է, ինչպես խոհանոց։ պատերը խոնավությունից բորբոքվել են, սպիտակ բծերով ծածկվել, որպես բորոտի դեմք։ Սենյակի յերկայնությամբ մի պատի տակ յերկու կանգուն բարձրությամբ փայտե թախտ է շինած, որի հատակը հողալին է։ Թախտի վրա դարսված են կեղտոտ, մրոտ ցնցոտիների կույտեր—բանվորների անկողինները։ Այդ խեղճերն ինչ տաժանակիր աշխատանք են վարում, ինչ վտանգավոր գործեր կատարում և ուր հանդստանում ու գիշերում։ Պարզ եր, որ գործարանատերն ապորինի յեր տիրացել հարստության, որ բոլորը, բոլորը, ինչ որ նա դիպել է, պատկանում է այդ խեղճերին և միայն նրանց սև ու կոպիտ ձեռների աշխատանքին։

* * *

Սև քաղաքն արդարև սև եր, որպես կախարդական մի աշխարհ, որ կրում եր վրան բնության անեծքի դրոշմը։

Գիշեր-ցերեկ ծխնելուղներից առատորեն դուրս սլացող մուրը ներկում և ապականում եր ամեն ինչ, որ կար այստեղ, սկսած շինություններից մինչև յերկինքն ու թռչունները։

Մթնոլորտը մշտապես տոգորված է թանձր ծխով, որի միջով արեգակի ճառագայթները հազիվ-հազ տարածում ելին յերկրի վրա մի տեսակ պղնձագույն լույս։

Փողոցները լի ելին նավթային փոսերով ու ճահիճներով, որ շրջապատված ելին ամեն տեսակ ապտոտություններով։ Այստեղ մրրից սևացած խոզերը խորթալով ու միմյանց դնչահարելով, ուտելիք ելին փորտնում, իսկ չքավոր կանայք գուլպերով նավթ հավաքում։

Գետնի յերեսին ու գետնի տակ տարածված ելին մեռատղե անթիվ խողովակներ։ Լսվում ելին նրանց միջով հոսող նավթի ձայնը, որ հիշեցնում եր մերթ ծղրիդների յերգը գիշերային խավարի մեջ, մերթ մուրճերի ծանր հարվածները մի անհերևույթ դարբնոցում։ Նավթային արդյունաբերության զարկերակներն ելին դրանք—մարդկային բյուրավոր եյակների հարստության չափը։

Նավթային գործարանը գտնվում է Սև Քաղաքի կենտրոնում։ Մի ընդարձակ շինություն եր այդ, զանազան բաժանմունքներով։ Բակը շրջապատված եր մարդու հասակից քիչ բարձր քարե պարիսպով ու լի անթիվ պարագաներով։ Յերևում ելին յերկաթե նավթային շտեմարանները, լայն բարձը դմբեթներով, այս ու այն կողմ ճյուղավորված գետնի վրա և ոդի մեջ, ջրմուղներ, կորած կաթսաներ, ինչ-որ անիվներ, ծորակներ։ Մերթընդմերթ շինություններից դուրս ելին դալիս ինչ-որ մարդկային եյակներ՝ կեղտոտ, վոտից մինչև գլուխ թաթախված սև հեղուկի մեջ, կիսամերկ, մռայլ, որպես վալել եր սև աշխարհի բնակիչներին։

* * *

... Շատրվանը գտնվում եր բավական հեռու։ Բուրգերի յետևում, յերկնքի մոխրագույն հորիզոնի վրա նկարված եր մուգ-կինամոնագույն մի կիսակամար։

Հաղվադեպ ու սքանչելի յեր տեսարանը։ Սև նավթը, գազի ուժգին զորությամբ դուրս մղվելով յերկրի խորքից, սլանում եր վեր, ինչպես հրաբխային կրակ։ Հասնելով իր վերջնակետին, կիսաշրջան եր կազմում և ներքև թափվում։ Քամին տարածում եր հեղուկը ոդի մեջ և մանրացնելով, ափում չորս կողմ անձրևի պես

Բուրգի դագաթն ու կողմերը խորտակվել էին շատրվանի ամեհի զորությունից և նրա մթին ուրվագիծն էր միայն լողում սև հեղուկի մեջ, վորպես կմախք դարձրած վիթխարի կաշին յերկնային հեղեղի տակ։

Ցերբեմն հորի խորքից դուրս էին արձակվում մարդու գլխի չափ քարեր։ Կատաղի պոռյաններ գործելով, նրանք հեղուկի հետ սլանում էին վեր թնդանոթի ռումբի պես և ընկնում բուրգի վրա կամ շրջակա սև լճակների մեջ։ Գազը մռնչում էր և յերկիրը թընդում նրա զորությունից։ Մերթընդմերթ շատրվանը, կարծես հոգնում էր, ցածանում, խուլ հնչյուններ արձակում։ Բայց անցնում էին մի քանի վայրկյան, և նորից լսվում էր ստորերկրյա խլացուցիչ ժխորը։ Այն ժամանակ սև հեղուկի հսկայական սյունն առանձին ուժով էր ձգվում դեպի վեր։

Բանվորների մի մեծ խումբ, թիերով ու բահերով զինված, մրջյունների պես շրջապատել էր բուրգի անոգնական մնացած կմախքը և աշխատում էր թանգագին հեղուկի համար ժամանակավոր ճամբա բանալ։ Մի քանի մղիչ մեքենաներ էին դրված, վորոնք նավթն ուղղում էին դեպի Սև Քաղաք տանող նավթահանքերը։ Արհեստավորները պատրաստում էին ինքնուրույն պատվար, վորով շատրվանին կանոնավոր ընթացք պիտի տային, վորպեսզի հեղուկն ապարդյուն չցրվեր։

Ցերբեմն բանվորները ծիծաղելով, վոստոստալով, ցրվում էին այս ու այն կողմ, փախչելով վայր սլացող քարերից։ Նրանք կիսամերկ էին, վոտները մինչև ծնկները և թևերը բաց։ Շատերը սկհում էին լայրծուն ավազի վրա, ընկնում նավթի մեջ, շարժելով ընկերակիցների ծիծաղը...

ՀԱՐՑԵՐ ՑԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Վո՞ր ժամանակվա նավթաշխարհն է նկարագրված այստեղ։

— Նշեցեք այն տեղերը, վոր վերաբերում են աշխատանքի պայմաններին ու բանվորների վիճակին։

— Այժմ ՀԱՍՆ են պատկանում նավթահորերը։

— Հնգամյա պլանը կատարելու գործում ինչ աշխատանք ու փոգևորություն ցուցաբերեցին Բազվի բանվորները։

— Ներկայումս ի՞նչպիսի նոր տեխնիկական միջոցներով են մշակվում նավթահանքերը։

Լսում եք· սպասեք մի փոքր, յես ձեզ կպատմեմ բոլորն սկզբից։ Գնում եք՝ լավ, յես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին։

— Սիրուն կակաչներ, դե լավ լսեցեք արևի պատմությունը։

Աղջիկս հիվանդ եր...

Գիտեք, նա յել ձեզ նման մի ծաղիկ եր, նաշխունիկ դեմքով, վոսկեգանգուր մազերով։

Աղջիկս հիվանդ եր...

Բժիշկը յեկավ, իջավ մեր բնակարանը· նա տխուր եր։ Ինչու... Հա, հիշում եմ·—նա չեր սիրում ներքևի հարկերը։

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին։

— Խոնավ է,—ասաց,- պիտի փոխեք բնակարանը, պիտի արևկող սենյակ ճարեք։

— Քանի՞ յերեխա ունեք,—հարցրեց։

— Յերեքն էլին, յերկուսը մեռան... մնաց այս մեկը... Ազատեք իմ աղջկան, նա մեր տան վոգին է։

Նա ինչ վոր դեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց։

— Հայրիկ, ի՞նչ գրեց բժիշկը,—հարցրեց աղջիկս։

— Արև գրեց, սիրելիս, արև գրեց, վոր քեզ փալլի և դու առողջանաս։

Ու են որը գնացի արև փնտռելու... Գնացի շատ հեռու և վերջապես գտա արևկող մի բնակարան։

— Սիրուն կակաչներ, արևի կարմիր զավակնե՛ր, ավելի լավ չեր՝ ձեզ մոտ բերեի իմ վոսկեծամիկ աղջկան։

Դուք նրան կզուգեցիք կարմիր ու կանաչ...

Բայց հա, գիտեմ, դուք հաց չեյիք տալ իմ աղջկան· դուք անվում եք վաղորդյան ցողով։

Լսեք, յես դեռ չեմ վերջացրել։

Մյուս առավոտ պիտի տանեի Լուսիկին արևի տուն։ Բայց յերբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը։

Հետո մարդիկ յեկան տարան...

Ու յերբ վոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզնից, մեր տան վոգին ել նրա հետ գնաց։

Մենք բոլորս ալրվեցինք լալուց, յես դարձա արևի հիվանդ։

Յես գնում եյի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպասում արևածագին։

Ու միշտ տեսնում եյի Լուսիկին՝ տրեր գրկած և իր մազերը փռած նրա վրա...

Բայց լերը պատմում ելի արևի մասին, կինս ու մայրս չելին հավատում։ Նրանք կարծում ելին, թե խելագարվել եմ... և վոչ-բում ելին այրված, ցամաքած աչքերով։

Ու մի որ ել լես դիմեցի արևին։

— Հզոր արև — ասացի, — մի մեծ գանգատ ունեմ քեզանից։ Ինչու դու մի հատ շողդ խնայեցիր իմ աղջկան, ինչու սպանեցիր ու տարար իմ Լուսիկին։

Նա տխրեց ու մթնեց։

— Գնա, — ասաց, — գնա, հայտնիր աշխարհին, ասա վոր վերևի հարկն արևի շողերը խլեց։ Սովը գցեց ներքևի հարկին ու սպանեց քո վոսկեհեր աղջկան։

---

1. Ինչից եր հիվանդացել Լուսիկը և ինչը կարող եր նրան բուժել։
2. Ի՞նչ իմաստով և ասված «վերեվի հարկն արևի շողերը խլեց»։
3. Ի՞նչ պատկերներ և գործածել հեղինակը։

Ցույց տվեք այս հոդվածում գործածված բարդ բառերը։

Հետևյալ բառերի իմաստն արտահայտեցեք ուրիշ բառերով ընդարձակ, կախարդական, սառնորակ, սուլոց, դաժանատեսք, նոսրանալ, շեմքան, լապտեր, անիվ, մերթ, դույլ, գեհենային, դրշմ։

Ցերևում են ցածր, սեվ շինություններ։

Այս խոսքի մեջ վոր բառերն են վերաբերում շինություններ բառին (ինչպիսի՞ շինություններ)։ Քանի՞ լրացում ունի այդ բառը։ Նույն իմաստով լրացումներ են այդ բառերը, թե տարբեր իմաստով։

Կանոն.— Խոսքի մեջ միևնույն իմաստով լրացումներն իրարից բաժանվում են ստորակետով (ցածր, սև)։

---

19. ԻՎԱՆԵՆ

(Վրացերենից)

I

Իվանեն դաշտային աշխատանքի մեջ եր, լերը կլինն անսպասելի կանգնեց նրա առաջ և հանգստությամբ ասաց։

— Տանուտերն ուզում ե քեզ տեսնել։ պրիստավից թուղթ ե լեկել։

— Տանուտերը, — զարմացած հարցրեց Իվանեն և գունատվեց։ — խելագարվել ես, ինչ ե։ Ինչու համար, վոր մեղքիս համար։

— Ցես, ասում ե, պարտավոր չեմ ամեն բան ասելու քո կարմիր — սոցիալիստ ամուսնուն... թող բարեհաճի գնալ գրասենյակ և ոչնտեղ իմանալ, թե նրան ինչու լեն կանչում։

— Տես եղ տնիրավին, ի՞նչպես թներ ե առնում։ Ցերես ենք տվել։ չաղացել, խոզ ե կտրել, ել ուրիշի վիճակի մեջ չի մտնում։ Մի հարցնող լինի, թե ինչու համար ե այդ թշնամանքը ռուս վիզն եմ կտրել, ռուս տունն եմ թալանել, վորին եմ վատություն արել, ռումից կաշառք վերցրել, ինչ ե ուզում այդ անխիղճն ինձանից։

— Այն, վոր լեզուդ կարճ չելիր պահում և շարունակ խոսում ելիր նրա դեմ և թշնամացնում քեզ հետ։ Ախր ով ե նրա ձեռքից պրծել, վոր դու պրծնելիր։ Ամբողջ գյուղը ճանաչում ե նրան, բոլորն ել նրա վատ արարմունքների մասին են խոսում, բայց ծածուկ, իրար մեջ և վոչ թե քեզ նման՝ լերեսովը տալիս ամեն ինչ։ Ախր շարունակ ասում ելի՝ այ մարդ, լեզուդ քեզ քաշիր, վատ որեր կգան գլխներիս։ Բայց ով եր լսում ինձ։ լես ասի, լես լսեցի... Տես... շուրջդ նայիր ու տես, թե ինչ են անում ուրիշները... պապանձվել, լռել են, վոչվոք չի առարկում նրա դեմ։ Ասում են՝ «կառավարության մարդ ե, տանուտեր ե, ինչ կարող ենք անել»։

— Հերիք ե, այ կնիկ, դու լել մի կողմից լես սիրտս կտրատում։ ինչ խրատների ժամանակ ե։ Բողոքել եմ և միշտ ել կբողոքեմ ամեն տեսակի անարդարության դեմ, — ասաց վճռական և շարունակեց իր աշխատանքը...

Սիդոնիան մտազբաղ տուն վերադարձավ....

Աբդեն կեսոր եր...

Կիզիչ արևը կարծես կանգ եր առել լերկնակամարի վրա։ Իվանելի գլխավերևը և հանգիստ ու անտարբեր նայում եր ներքև կատարվող ժրաջան աշխատանքին...

II

— Բարի որ։ — անժպիտ կերպով կանգնեց գյուղի տանուտերը Իվանելի գլխին՝ ձիավոր գզիրների հետ միասին։

— Բարև, հազար բարի, — անբավականությամբ պատասխանեց աշխատավորը՝ հազիվ իր գլուխը բարձրացնելով։

— Այս առավոտ կանչել ելի գրասենյակ, ինչու չներկայացար։

— Այ մարդ, աշխատանքի այս լեռուն որերում ինչպես արտս կխատ թողած՝ գրասենյակ գալի։ չե՞ վոր ինքդ ել գյուղացի լես և լավ գիտես մենակ աշխատավորի վիճակը։

— Դա իմ գործը չե։ Ինձ հրամայված ե, և լես պարտավոր եմ ճշտությամբ կատարել հրամանը։

— Ի՞նչ ես ուզում, ասածդ ինչ ե։

— Հենց այժմ պիտի պրիստավին ներկայացնեմ քեզ, — չորրորդ պատասխանեց տանուտերը և նայեց գզիրներին։

— Ինչու, վոր հանցանքիս համար չէս կարող արդյոք ասել։

— Ինչու համար՝ չգիտեմ։ «Նաչալնիկի» գրությունն է — «Վորտեղ պատահեք Իվանե Կեթիլաշվիլուն, անմիջապես ձերբակալեք և ուղարկեք ինձ մոտ»։

— Այս բոլորը քո բաներն են, Փիլիպ, ուրիշ վոչ-վոքի — ասաց վրդովված Իվանեն։

— Ի՞նչպես, ուրեմն հանցանք թել ես բարդում վրա։ Լավ, շատ լավ։ Ինչպես տեսնում եմ, առանց մարակի դործը գլուխ չի դա։

— Ինչպես, ուզում ես մարակի բամբն դարձնել ինձ։ Վոչ, այդ քեզ չի հաջողվի։ Իվանեն դեռ այնքան չի ընկել, վոր այդ որին հասնի...

— Բավական է ասում եմ, Ցես չեմ լսել այստեղ խոսք ու զրույց անելու, Ցեկել եմ ձերբակալելու, ձեռք ու վոտքդ կապելու և պրիստավին ուղարկելու։ Այդպես է հրամայված։ Ցեթե ըմբոստանաս և չուզենաս հնազանդվել, տեղն ու տեղը կար՝ ես սպանվ՝ - տված է հրաման-կարդադրության մեջ։

— Ինչու, վոր հանցանքիս համար ավազակ հո չեմ, ում ինչ ուզի թյուն եմ արել, այ մարդ...

— Ում ինչ վատություն ես արել... Դու կարծում ես, մոռացվեց այն բոլորը, վոր գյուղացիների ականջները մտած՝ գիշերցերեկ հուզում, աղմկում, զրդռում ելիր ապետ գյուղացիներին իմ դեմ, կառավարության դեմ։ Մոռացար այդ բոլորը, հա, կարծում ելիր եժան կնստեր այդ։ Կարճ կարիր, վեր կաց այս բոպեիս, վեր կաց, — գոռաց տանուտերը և քացով տվեց գետնին փռված Իվանեյի կողքին։

— Գոռալդ բավական չէ, քացի լել ես տալիս, շան սեղ ես դնում դու ինձ հա...

— Ձայնդ, թե չե մարակս կիջնի մեջքիդ։

— Ինչպես, դու համարձակվում ես...

— Ա՛յ թե ինչպես... — շարժվեց մարակն ոդի մեջ և պլնդ իջավ Իվանեյի հոգնած մեջքին։

— Վա՛յ... — բռունցքը կրծքին տալով գոռաց դայրացած Իվանեն և տատմները կրճատացնելով առյուծի նման վոտքի թռավ...

— Կապեցեք ձեռքերը, — նորից լսվեց տանուտերի կատաղած ձայնը, և յերրորդ անգամ մարակը խաղաց...

Գղիրները իրար անցան...

— Տո՛ քավթառ, ինչ ես ուզում ինձնից, — համբերությունից դուրս գալով՝ գոռաց Իվանեն, հարձակվեց, արևի ճառագայթների

տակ փայլփլող մանգաղը շողաց ոդի մեջ, և մի ակնթարթում գետին փռվեց տանուտերը...

Գղիրները սարսափից դես ու դեն փախան, տուն վերադարձան... Իվանեն ուշքի գալով՝ նայեց իր շուրջը, տեսավ ինքն իրեն միայնակ կանգնած տանուտերի անշնչացած դիակի առաջ...

— Անպիտանները, գոնե դիակին տեր կանգնելիք, — փնթփնթաց Իվանեն գղիրների յետևից։

Մի բոպե կանգ առավ... նայեց հեռուները... լիառատ թոքերով ազատ շունչ քաշեց և գլուխը կախեց...

*
* *

Այն որվանից Իվանեն թողեց դաշան ու մանգաղը և հրացանը ձեռքն առնելով՝ գնաց միանալու ըմբոստ վոդիներին, հեղափոխականներին։

— Գյուղական վիր խավի ներկայացուցիչն է Իվանեն։

— Վո՞ր ժամանակաշրջանին և վերաբերում այս հոդվածը, ինչից և այդ յերևում։

— Ինչու ելին ուզում Իվանեյին բանտարկել Որենքը վիր դասակարգին եր պաշտպանում։

— Իվանեյի կատարած սպանությունն անհատական, թե դասակարգային պատճառով եր։

— Սպանությունից հետո Իվանեն ուր գնաց և ինչու։

Դիտեցեք հետևյալ խոսքի կեսադրությունը. — տանուտերը, — զարմացած հարցրեց Իվանեն և գունատվեց. — խելագարվել ես, ինչ է։

Կանոն. 1) Յերբ հեղինակի կամ պատմողի բառերն ընդհատում են ուրիշ բառերի միջև, սկզբից յեվ վերջից դրվում է, — կամ. — կամ։ — 2) Հարց տանողի բառի ուժեղ արտասանվող ձայնավորի վրա հարցական նշան է դրվում (տանուտերը, խելագարվել ես, ինչ է)։ 3) Ուրիշի խոսքի սկիզբը դրվում (—)։

---

20. Ա՜Յ ՍԵՒ ԱՄՊԵՐ

Ա՜յ սև ամպեր, վա՜յ սև ամպեր,
Սիրտս պատեց սև ու մութ.
Յարաբ ինչ եք դուք ինձ բերում,
Գարնան անձրևո՞, թե կարկուտ...

Յուսով-լուսով արտ եմ ցանել,
Արյուն թափել ու քրտինք.
Վողջ սուրբերին մոմ եմ վառել
Աղոթք արել, վոր յերկինք

Արտիս նայի, տունս խնայի,
Որ տա, կյանք տա իմ հացին.
Վայ բալեքիս... ասված չանի—
Թե վոր անհաց մնացին...

Մ՚ոչ սև ամպեր, ինչ եք գոռում,
Սիրտս պատեց սև ու մութ.
Ցարաբ ինչ եք արտիս բերում,
Գալնան արևո՞, թե՞ կարկուտ։

Դիտեցեք յերեք կետի կամ կախման կետերի (...) գործածությունը.
Վայ բալեքիս... ասված չանի—թե վոր անհաց մնացին...
Կ ա ն ց ։— Այնտեղ. վարտեղ հեղինակն սկսած միտքը զանազան պատճառներով կիսատ է թողնում, գրության ժամանակ դրվում է յերեք կետ։

21· ԸՆԿԵՐ ՄՈՒԿՈՒՉԸ

Ամեն ինչ փոխվում եր, բացի Մուկուչից։

Տաս տարի յեր, ինչ նա պահապան եր կաշեգործարանում։ Այդ միջոցին պետական կարգերը յերկու անգամ հեղաշրջվել ելին, գործարանի գլխով հինգ կառավարիչ եր անցել, բայց դժվար թե մեկն ու մեկը նկատեր Մուկուչի վրա վորևի փոփոխություն։

Ամեն նորեկ կառավարիչ նկատում եր Մուկուչին առաջին որը գործարանն ընդունելու ժամանակ, յերբ անհրաժեշտ եր լինում այցելելու նրա ամեն մի անկյունը։ Յեվ ամեն անգամ ընդունելու ձևականությունները վերջացնելուց հետո նոր կառավարիչը դիմում եր Մուկուչին այս խորհրդավոր խոսքերով.

— Հա, դու ելի շարունակիր գործդ, մինչև այդ մասին կարգադրություն կանեմ։

Սակայն այդ կարգադրությունը չեր լինում, և Մուկուչը, վոր իսկի չեր ել հասկանում ասածի իմաստը, շարունակում եր մնալ իր պաշտոնում։ Այնուհետև, ինչպես կարգն ե, նա հիմնովին մոռացվում եր, կամ լավ ե ասել՝ չեր նկատվում։ Կարճ ժամանակում նորեկ մարդու աչքն այնպես եր ընտելանում, վոր Մուկուչին նայելիս թվում եր, թե նա յել գործարանի հիմնական մասերից մեկն ե, վոր պիտի մնա ընդմիշտ և անփոփոխ։

Մուկուչի արտաքինն ել հաստատ խոսք եր տվել անփոփոխ մնալու։ Նա միջին տարիքումն եր, այսինքն այն հասակում, յերբ Մուկուչի նման մարդիկ առանձնապես յերկար կանգ են առնում և սահող ժամանակից դուրս մնում։ Նրա մսուտ, կոշտ գծված թուխ դեմքը՝ իր լայնանիստ, հիմնավոր քթով ու անխնամ սև մուրուքի մեջ թաղված՝ փքված տեսք ուներ։ Ինչից ելն ուռած նրա դեմքը։ Քաղցածությունից, թե՞ շատ ննջելուց։ Ավելի ճիշտը՝ յերկուսից ելն։ Անշարժ, խոշոր աչքերի մեջ միայն մոտիկից տեսնողը կնկատեր քարացած հոգսի ու թախծի արտահայտություն։

Բայց ամենից հետաքրքրականը Մուկուչի կոշիկներն ելին, վորոնց վրա կարկատանների թիվն այնքան շատ եր, վոր կոշիկների հիմնական կաշին այլևս չեր նկատվում։ Յեվ ինչով ասես, չելին ամրացրած կարկատանները՝ թելերով, մեխերով, մավթուլներով...

Ճիշտ ե, պիտի խոստովանել, վոր ամեն կառավարիչ հենց գործարան մտնելու առաջին որից նկատում եր այդ տարորինակ հակասությունը, վոր չնայած Մուկուչը կաշեգործարանի պահապան ե, նրա կոշիկները վողբալի վիճակի մեջ են, ու կարգադրում եր, թե՝ կուզ որենքից դուրս, նրան կաշի տալ կոշիկների համար։ Սակայն մի քանի որից հետո Մուկուչը փոխանակում եր այդ կաշին այլուրի հետ, ու իր հին կոշիկները շարունակում ելին մնալ իրենց փառավոր դրության մեջ։

Յեկել եր մի նոր կառավարիչ, մի համառ մարդ, կարճահասակ, նիհար, ակնոցները աչքերին։ Նախկին կառավարիչներին հակառակ՝ նա վոչ միայն միշտ նկատում ե Մուկուչին, այլև համարյա ամեն որ նկատողություն ե անում։ Շարունակ դես ու դեն ե վազում։ Մտնում, նայում ե գործարանի բոլոր անկյունները։ Թե ինչ եր նրա միտքը, Մուկուչը չեր հասկանում։ Նա շշմել եր ու չեր իմանում, վոնց շարժվի, վոր նոր կառավարչին դուր գա։ Մի ամսեն վրա Մուկուչի հոգսն արդեն կորվել եր։ Նա ենպես եր մտածում, թե կառավարիչը վճռել ե իրան հեռացնել և միայն ժամանակի խնդիր գալիս»։

Սակայն այս ծեր բեռն ել կտաներ Մուկուչի համբերատար մեջքը, յեթե մի դեպք չպատահեր, վոր նրան տակն ու վրա արավ։ Մի առավոտ իմացավ, վոր գործարանի պահեստից մի կապոց կաշի լեն գողացել։

Ել ի՞նչ հարցնենք Մուկուչի հալից։ Իրան ասելով՝ «երազ եր, ելավ խանձրահամ»... Որեկան քանի՞ անգամ ե հարցուփորձ անում կառավարիչը, հետո միլիցա յեն տանում, ելի խոսեցնում։ Ու ամեն անգամ Մուկուչը մի գլուխ են ե լսում, թե՝

— Պահապան ես, ուրեմն մեղավոր ես։

Ու ամեն որ Մուկուչի կինը ծնկները թակելով, ճղճղում ե, սուտ ու իվան անում։

— Բա ենպես բան կըլի՞, վոր մարդուս շառի մեջ գցեն, տանեն։ Ղեղով կորցնեն, «Զեկա» տանեն։ Բա մի մարդ չկա, վոր տիրատեղով կորցնեն, «Զեկա» տանեն։

թյուն անի, ես խաթից ազատի՛, բա չՔՔ տեսնում, վոր միջին թըշ-
նամությունն կա…

— Ի՞նչ ես ճղճղոցդ վեր արել· մի իմ սրտին էլ մտիկ, Ե,— ասում եր Մուկուչը, աշխատելով «տղամարդավարի» սուս կացնել կնոջը, բայց կինն ելի շարունակում եր իր շիվանը։

«Սա չել մի խաթա չա, մտածում է Մուկուչը։ Դե են ա մի-անգամից ոչանեն՝ պրծնեն, ելի։ Ել ոնր են ժողովում, խալիի առաջ խալտառակ անում, «Զեկա» դարգմ»։

Թարսի պես էլ Մուկուչին տանում, նստեցնում են հենց առաջին շարքում։ Դե պարզ բան է, հալբաթ ուզում են ենպես անեն, վոր Մուկուչը չփախչի, համ էլ ամենքը լավ տեսնեն։

Վախը մի կողմից, ամոթը՝ մեկել կողմից։ Ես ի՞նչ կրակի մեջ ա ընկել Մուկուչը։ Գարնան տաք չեղանակ ա, բայց նա սարսուռի մեջ ա, ենպես ա թվում, թե՝ ես ա՝ պիտի դողացնի։

Կողքին նստած բանվորները խոսում են, սիրտ են տալիս Մուկուչին։ Բայց նա ինչ կլսի, նրա միտքը շատ հեռու չե…

Չե, պրծած բան ա… Մուկուչը կորած ա… Ի՞նչ պիտի անի նա եսքան մարդկանց դեմ, վորոնք բոլորն էլ լավ խոսում, հասկանում են։ Դե պարզ բան ա, կառավարչին կպաշտպանեն։ Դե նա ազա մարդ ա, իրա նման խեղճ ու կրակ չի։ Հրեն, վոնց ա նստել ու չեշմակի տակից ենպես ա մտիկ անում, հենց իմանաս ասում ա, թե՝ եդ բոլորդ վոր կաք, սաղ իմ բռի մեջն եք…

Մուկուչի աչքին է ընկնում դիմացի պատին կպցրած Լենինի մեծ պատկերը։

«Ասում են՝ լավ մարդ ա,— մտածում է նա։— ախ, թե ստեղ ըլեր, ինձ քոմակ կաներ, չես էլ ես որը չելի ընկնի»։

Զանգահարում են։ Ժողովն սկսվում է։ Ինչ-վոր բաներ են ասում, վոր Մուկուչը չի կարողանում հասկանալ։ Նա ուշքի չե գալիս են ժամանակ, յերբ սկսում է խոսել բանվոր Սահակը։ Նրա ձենն ամենից բարձր է, խոսելն էլ ամենքն էլ հասկանում են։ Ի՞նչ չարացած ա, թամամ բերանից կրակ ա թափվում։ Հալբաթ Մուկուչի վրա չա չարացել… Միայն զարմանալին են ա, վոր, հրեն «հընկեր Մուկուչը» ասաց· թե չարացած ա Մուկուչի վրա, ընչի՞ չա պատիվ անում՝ «հընդեր» ասում։ Թեև այդ բառը Մուկուչը շատ եր սիրում, բայց մինչև այժմ նրան վոչվոք «հընկեր Մուկուչ» չեր ասել, այլ «տանավարի» ասում ելին «Մուկուչ»։

Եդ հրա բավական չի։ Նրա ճառի ժամանակ կառավարիչը վերվեր ա թռչում, հենց իմանաս ասեղների վրա ընկի նստած, շուռ-շուռ մատ ա բարձրացնում, մթամ ուզում ա շուտով պատասխանի…

ու դեռ հրա Սահակը խոսքը չվերջացրած, դուրս ա գնում ժողովից մինչև ակտնջները կարմրած ու փնթփնթալով։

Բոլորը մտիկ են անում կառավարչի վրա, իսկ Մուկուչի կողքին նստած բանվոր Յեղոն ասում է նրա ականջին։

— Հը, տեսար, Մուկուչ, վոնց հուշա արինք քու կառավարչին։ Մեզ բանվոր կասեն, հա…

Չե, ես ուրիշ բան ա դուրս գալիս… հրեն ելի յեն խոսում, ելի «հընդեր Մուկուչ» են ասում· պարզ է, նրան զովում են։ Ասում են Մուկուչը վոչ ցուրտ ա հարցրել, վոչ քաղցածություն։ Միշտ իր գործի վրա պինդ կանգնած ա ելել, վոնց վոր մի ղինվոր… Թե կառավարիչը լավ կառավարիչ ա, իսկի մի որ հարցրել ա, թե Մուկուչը վորտեղ ա քնում գիշերը, վոնց ա ապրում…

Չե, էլ ի՞նչ կասկած… Մուկուչին քոմակ են անում, պաշտպանում են, նրա սրտի կապված թելերը բաց են ըլում· հենց իմանաս սառած յեկել ա Մուկուչն ու հիմի տաքությունից յետ ա գալիս։

Մեկ էլ հանկարծ Մարգարը փեշիցը քաշում է։

— Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին,— նորից կրկնում է նախագահը։

Մարգարը մոտենում է Մուկուչի ականջին ու ասում·

— Մուկուչ, հիմի դու պիտի խոսես։ Ինչ վոր ասելու յես՝ ասա, մի քաշվի։

— Հընդերներ, դե յես մի խեղճ մարդ եմ, ամա յես իմ նամուսը չեմ ծախել… յես եդ գողությանը խաբար չեմ։ Ամա դե վոր փիս մարդու ճանկ եմ ընկել, գուք գիտաք ու ձեր խիղճը։

Ասում է, ծանր շնչում։ Նախագահն ելի մի քանի խոսք է ասում, մի յերկու մարդ էլ կարճ խոսում են, ու ժողովը վերջանում է։

Բանվորները շրջապատում են Մուկուչին, ամեն կողմից սիրտ տալիս։

— Հընդեր Մուկուչ, քեֆդ քյոք պահիր, յետուգ սարի պես կանգնած ենք։

Խոսում են, ձեռքներն ուսին գնում ու ամեն կողմից «հընդեր», «հընդեր» կանչում։

Ենպես է լցվել Մուկուչի սիրտը, վոն ինչ հաց, ինչ նեղություն։ Նա թեկուզ կյանքն էլ տա, ելի «վեջը» չե։

«Հընդեր Մուկուչ», կանչում են նրա ականջին հազար տեղից։ Հենց իմանաս Մուկուչն ամդահա յե դառնում, մեծանում է, բարձրանում, կռները լցվում են արյունով ու հպարտ-հպարտ նա կանչում է, իմաց անում բոլորին·

— Հեյ, լավ իմացեք, յես «հընդեր Մուկուչ» եմ։ Սրանից դենը էլ ինձ վոչ մի բան քյոր չի անիր։

Անցել եր յերկու տարի, յերբ յես նորից վերադարձա իմ հարբենի քաղաքը։

Մի յերեկո գնացել եյի բանվորական ժողովի, վոր հրավիրված եր քաղաքական մի հարցի շուրջը։ Լսում եմ խոսողներին ու միաժամանակ նայում չորս կողմը խիտ նստած բանվորներին և համեմատում մոտիկ անցյալի հետ։ Վերքան բան եր փոխել։

Ցերեկը թե չորս հոգու խոսելուց հետո ականջիս հասավ նախագահի՝ բանվոր Սահակի հուժկու ձայնը։

— Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին։

Բեմ յելավ ածիլված, մազերը կարճ խուզած մի բանվոր, փոքր ինչ կանգ առավ շփոթվելուց, ապա սկսեց խոսել այն զգացված տոնով, վոր հատուկ է հեղափոխության վրա սիրահարված բանվորին։

— Հընգերներ, ես քանի տարի յա, մեզ շրջապատել են, ուզում են խեղդել։ փորձեցին հացով խեղդել՝ չելավ, փորձեցին զառով՝ չելավ... թող լավ իմանան՝ են ժամանակն անց ա կացել, մեր միտքը, մեր աչքերը բացվել են, որանի՛ց դենը մեզ վոչ մի բան քյար չի անիլ։

Ծափահարությունները թնդացրին ամբողջ դահլիճը։

Խոսողի դեմքը կարծես ծանոթ լիներ։ Ուզում եյի հարցնել կողքիս նստած բանվոր Մարգարին, բայց նա ինձ կանխեց։

— Գիտես ով ա եդ խոսողը, — ասաց նա, — հայտնի Մուկուչն ա։

Կարող եյի շատ բանի հավատալ, բայց եսպես բանի վոնց հավատալի։ Տեսնել Մուկուչին ածիլված, նոր կոշիկներով, տեսնել նրան բեմից խոսելիս... չե, դժվար եր հավատալը։

... Ահա այդ մտքերով պաշարված, քայլում եյի, վերհիշում անցյալը... ու ականջիս շարունակ հնչում եր բանվոր Սահակի հուժկու ձայնը՝

«Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին»։

---

1. Նկարագրեցեք Մուկուչի արտաքինը, հագուստը, կոշիկները, ընտանեկան դրությունը։
2. Ի՞նչպես եր վերաբերվում Մուկուչը դեպի «քաղքցի» ժողովուրդը։
3. Ինչո՞ւ կառավարիչները նրան չեյին նկատում։
4. Ինչո՞ւ նա այդքան ճնշված եր։
5. Ինչո՞ւ Մուկուչը չեր փոփոխվում։
6. Ի՞նչ շրջապատի ծնունդ եր Մուկուչը։
7. Նկարագրեցեք Մուկուչի ապրումները դատավարության ժամանակ։
8. Ի՞նչ հանգամանքների ազդեցությունների տակ Մուկուչն ամբողջովին կերպարանափոխվեց։

9. Ի՞նչպես եր նա վերաբերվում դեպի հացը՝ պատմվածքի սկզբում և վերջում։
10. Համեմատեցեք Մուկուչի արտաքինը, խոսելու ձևը և այլն պատմվածքի սկզբում և վերջում։
11. Ինչ մտքով և վերջում շեշտած, թե «խոսքը պատկանում է ընկ. Մուկուչին»։

Ուսումնասիրեցեք մեր դասարանի կարգ ու կանոնը և զեկուցեցեք այդ մասին խմբի ուսանողներին. գրեցեք մի օրինակելի ծանուցագրի ձև։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շարադրություն գրելիս կամ զեկուցում տալիս հաճախ հարկավոր է պոլիս տվյալ պատմվածքի կամ հոդվածի բովանդակությունը կարճ կերպով գրել կամ պատմել։ Այս կոչվում է համառոտագրություն։ Համառոտագրությունը տարբերվում է պլանից նրանով, վոր վերջինս նշում է միայն տվյալ պատմվածքի հիմնական կետերը, առանց գաղափար տալու նրա բովանդակության մասին, վորը, ընդհակառակը, կազմում է համառոտագրության հիմնական հատկությունը։ Համառոտագրությունը պիտի խուսափի մանրամասնություններից ու կենտրոնացնի իր ուշադրությունը միայն կարևորի վրա։ Համառոտագրելիս ոգտակար է զեկավարվել պլանով։

Նմուշի համար ներքևում զետեղվում է «Ընկեր Մուկուչի» համառոտագրությունը։

Աբազու «Ընկեր Մուկուչը» պատմվածքի համառոտագրությունը

ՊԼԱՆ

1. Մուկուչն ու իր արտաքինը։
2. Մուկուչի ընտանիքը։
3. Մուկուչն ու խորհրդային իշխանությունը։
4. Գողություն գործարանում։
5. Մուկուչի դատը։
6. Նոր Մուկուչը։

1. Մուկուչը կաշեգործարանի պահապան եր։ Նա միջին տարիքի մի խեղճ ու կրակ մարդ եր, վորին կառավարիչները չեյին նկատում։ Ամառվանից հագնում եր միևնույն ցնցոտիներն ու միևնույն՝ հազար տեղից կարձմեռ հագնում եր միևնույն ցնցոտիներն ու միևնույն՝ հազար տեղից կարված՝ կոշիկները։ Տարիների ընթացքում Մուկուչը չեր փոխվում և անշարժ եյին նաև նրա՝ հոգս ու թախիծ արտահայտող աչքերը։

2. Մուկուչն ուներ մի կին ու չորս յերեխա, վորոնցից ամենամեծը յոթ տարեկան եր։ Իր բազմամարդ ընտանիքն ու ամբողջ ստացվածքը, վոր սպառվում եր լաթերից կազմած անկողնով ու մաշված պղնձով, նա տեղավորել եր գործարանի մոտ գտնվող ավերակ մի տան մեջ։ Մուկուչի միակ հոգսը հացն եր ու այդ պատճառով բոլոր իշխանությունների ժամանակ նա ուներ միայն մի յերազ — տեսնել այդ հացն եժանացած։

3. Խորհրդային իշխանության որոք Մուկուչի մտքերի հիմնական առանցքը նորից կազմում եր հացը։ Ճիշտ է, նա գրաղվում եր և միտինգ ներով, սակայն այնտեղ կարևոր եր համարում միայն հացի մասին յեղած

խոսքը, մնացածը հաշվում էր «քաղաքացիների» ու «աղա մարդկանց» «խոսք ու զրից»։

4. Գործարան չեկավ մի նոր կառավարիչ, վորը, նախկին կառավարիչներին հակառակ, շատ էր նկատում Մուկուչին ու մինչև անգամ, կարծես, հետապնդում։ Հենց այդ ժամանակ գործարանից մի կապոց կաշի գողացան։ Այդ գողությունը կառավարիչը բարդեց Մուկուչի վրա։ Մուկուչին միքանի անգամ տարան մի[illegible]։ Մուկուչի տանը վայնասուն բարձրացավ։

5. Դատարանում Մուկուչն իրեն շատ վատ էր զգում։ Բայց չերը բանվոր Սահակն իր ճառի մեջ անվանեց նրան «հընդեր Մուկուչ», իսկ մի քիչ հետո նույն Սահակի ուժեղ խոսքից դրդված՝ կառավարիչը կարմրատակած դուրս փախավ դահլիճից, Մուկուչն իրեն շատ թեթևացած զգաց։ Մուկուչը դուրս չեկավ գործարանից արդարացված, զգալով իրեն մարդ և ընկեր։

6. Միքանի տարուց հետո Մուկուչը միանգամայն այլ մարդ էր։ Չերը բանվորական ժողովներում նախագահն ասում էր՝ խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին, բեմ էր չվնում ածիլված ու համեստ հագնված մի բանվոր, վորն զգացված տոնով խոսում էր բանվորության անելիքների մասին։ Սա ինքը՝ հենց մեր Մուկուչն էր։ Այո, «խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին»։

---

22. Ա՜Խ, ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Որ ու արև չտեսանք.
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

Հարուստ մարդիկ կուտեն, խմեն
Աշխարհի ճոխ սեղանից՝
Մենք աշխարհի խորթ աղերքն ենք,
Մեզ փայ չկա աշխարհից։

Խեղճ աղքատի հոգին դուրս գա,
Բարից, հողից հաց քամի,
Բհռով հացը հարուստին տա—
Հարուստն իշխի, վայելի։

Խեղճ աղքատը դառը դատի,
Դատարկ հոտի... Ե՜յ, աշխարհ,
Ել ինչու չես քարը թաղնում
Քարի վրա, քար աշխարհ։

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Որ ու արև չտեսանք.
Վա՜յ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

— Ի՞նչ դասակարգեր են հակադրված այստեղ։

— Ի՞նչ արամադրություն և իշխում այս վոտանավորի մեջ։ Բանաստեղծը բողոքի շեշտեր ունի։ Ինչպես և արտահայտում այդ բողոքը։

Դիտեցեք յերկար (՛) նշանի գործածությունը՝ «ա՜խ, մեր սիրտը»՝ «Վա՜խ, մեր կյանքը»՝ «Ե՜յ, աշխարհ»։

Խոսքի մեջ այն բառերը, վորոնք մի ձայնով կամ բացականչությամբ զգացմունք են արտահայտում (*տխրություն, ուրախություն, հիացմունք, տխրանք և այլն*), կոչվում են ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ (*ա՜խ, վա՜խ, ե՜յ*)։

Ձայնարկությունների վրա դրվում է յերկար նշան (՛), յերբ յերկար են արտասանվում կամ շեշտ (՛)։

Ձայնարկությունները խոսքից բաժանվում են ստորակետով։

---

23. ԳԱՐՈՒՆ

Գարուն, գարուն Ցերևանում,
Ցերևանում ահա նորից
Շնչում է խոր, թնդում անհուն
Մի խնդություն վոսկեորիկ։

Ահա կանգնած իրար կողքի
Աբովյանի յերկայնքն ի վեր՝
Լույս են խմում գարնան շողից
Ու կանաչում ծառերը մերկ։

Հիշում ես, սիրտ, գարուն մի այլ,
Ցերը տնկեցին ծառերն այս նոր.
Ցերը մեր բոբիկ մանկանց նման
Նրանք գլուխ մերկ, նրանք տկլոր։

Ցերը մեր լուսե մանկանց նման
Այնպես վոտիտ, այնպես բարակ—
Դեռ շուրջը սով, դեռ շուրջը մահ—
Շարք կանգնեցին այնտեղ նրանք...

Մեր մանկանց պես տկլոր, վոտիտ
Ծառերն այս չերը կեցան հերթի՝
Շառերն արդյոք հավատացին
Նրանց պայծառ առավոտին։

Տես՝ ինչպես են փթթել հիմա,
Հասակ առել ու կանաչել—
Տես ինչպես են նրանք աճել
Մեր լուսեղին մանկանց նման...

— Վեր ժամանակաշրջանին են վերաբերում 3-րդ կամ 4-րդ տները։ Պատմեցեք ձեր հուշերն այդ շրջանից։

— Վեր ժամանակաշրջանին են վերաբերում մյուս տները։

— Ինչի շնորհիվ առաջացան այդ փոփոխությունները։

— Ուրիշ ի՞նչ փոփոխություններ մտցրեց խորհ. իշխանությունը Հայաստանում (պատմեր մի քանի քո տեսածն ու զգացածը)։

---

24. ՄԵՌՆՈՒՄ Է...

Մեռնում է ծեր տատս այնտեղ,
Մեռնում է, գնում է հավետ,
Մեռնում է սև կատուն իր հետ,
Մեռնում է և հինը անհետ...

Քանդում ենք տնակը տատիս,
Հասել է որհասը հին...
Քանդում ենք տնակը այն հին,
Թափում է փոշին հնի...

25. ԱՃՈՒՄ Է...

Աճում է, յելնում է նորը,
Վառվռուն, ջահել ու կայտառ,
Բացել է թևերն իր հզոր,
Գրկել է աշխարհը արար...

Ցանցել է լարերով պողպատ,
Սփռել է լույսն անմար.
Ցելնում է գործարանը տիտան,
Սուլում է, կանչում է զվարթ...

— Այս յերկու վոտանավորների մեջ զգացվում է արդյոք հնի և նորի հակադրությունը։ Ի՞նչ իմաստով են գործածված «ծեր տատս», «սև կատուն» բառերը։

Մեր կյանքից վերցրած կոնկրետ որինակներով ցույց տվեք այդ հակադրությունը։

Դիտեցեք ստորակետի գործածությունն ստորև բերված որինակում. յելնում է գործարանը տիտան, սուլում է, կանչում է զվարթ...

Քանի՞ ասույթից է կազմված այս խոսքը։ Ցույց տվեք յուրաքանչյուր ասույթի բայը։

Կ ա ն ո ն,—Բարդ խոսքի ասույթները, յերբ մտքով իրար մոտիկ են, բաժնվում են ստորակետով։

«Ցելնում է գործարանը տիտան»—այս խոսքի մեջ վեր բառի դասավորությունը սովորական չէ։ Ինչպես ավելի լավ է ասել, գործարանը տիտան, թե տիտան գործարանը։ Ուրիշ որինակներ բերեք և ցույց տվեք բառերի շրջումները կամ վոչ սովորական շարադրությունը և ձեր շրջումները ջնջեցեք։

26. ԿՈՄՈՒՆԱ

Այնտեղ, ուր առաջ
բահով և խոփով
գեղջուկն էր կռվում
հողի հետ,
լավեց մի շառաչ...
Հսկա մեքենան
քայլում է, վարում.
լերկաթե մի յեղ
դաշտերում
հողն է կրծոտում։
Այնտեղ, ուր առաջ
մեծ արտը ցկով
հնձվում էր հսկա
տանջանքով
և մեծ ջանքերով,
թեթև շարժումով
մի թուխ ձեռք միայն
առաջ է տանում
հնձվոր մեքենան
դնդղնդան...
Ցանցապատվեցին
բյուր դպրոցներով
գյուղերը հիմա
ամենուր,
մեր աեծայը յերկրում։
Ցեվ ագահաբար
հնչուն ռադիոյին
ականջ են դնում
գյուղերում,
հրապարակներում։
Ճրագի փոխարեն
փոքրիկ լարճիթում
լույս ելեկտրական,
բոցկլտող,
կայծեր արձակող...
Բոլորը, կարծես,
յելած արշավի,
շտապում են, մրցում,
աշխատում,
և կյանքն է յեռում։
Շինվում են տներ,
ընթերցարաններ
գյուղերում,
ամեն անկյունում։
Միանում են իրար
խրճիթներ անհամար
և կազմում կոմունա։
Ընդհանուր
վար ու ցանքս դաշտերում
Վերջ հեծկլտանքին
և տառապանքին...
Թող յերգերը հզոր
մեզ իշխեն
հառաչի փոխարեն։
Չի վերադառնա
հին կյանքը փոշոտ.
Հոկտեմբերն է մեզ մոտ
ազմկոտ
ամեն անկյունում։
Վերջ թշնամության.
Թող իշխի հիմա
կոմունան՝
հզոր, հաղթական։

Շտկեցեք բառերի հետևյալ շրջուն շարադրությունները՝

1) Ճրագի փոխարեն փոքրիկ լարճիթում լույս ելեկտրական, բոցկլտող, կայծեր արձակող...

2) Միանում են իրար խրճիթներ անհամար։

3) Չի վերադառնա հին կյանքը փոշոտ։

4) Թող իշխի հիմա կոմունան՝ հզոր, հաղթական։

---

1. Ինչպես և կազմակերպվում կոմունան և ինչպիսի պայմաններում են ապրում կոմունայի անդամները։

2. Ի՞նչ տարբերություն կա կոմունայի, կոլտնտեսության և անհատական տնտեսության մեջ։

3. Ի՞նչ կոմունաներ գիտեք Հայաստանում։

4. Պատմեցեք ձեզ ծանոթ կոմունայի կառուցվածքի, աշխատանքի պայմանների և ներքին կյանքի մասին։

27. ԳԱԲՈ ԲԻՁՈՒ ՇԵՐԱՄԱՊԱՇՈՒԹՅՈՒՆԸ

Ցես ու Գաբո բիձեն անցնում ելինք Լոռու ձորով։

— Հէ՛յ, տիրացո՛ւ — ձայն տվավ նա։

— Համմե։

— Հրամանքդ շատ։ Ցես տեսնում եմ, վոր ես մեր նոր ուսուցմառաձները շատ աշխարհքից դուրս մարդիկ են, դու սրան ի՞նչ կասես։

— Ինչո՞ւ, Գաբո բիձա։

— Նրա համար, վոր հենց գիտեն՝ ամեն բան մենակ իրենք են հասկանում, իրենցից առաջ ել վոչ մարդիկ են յեղել, վոչ բան են հասկացել։ Մին ել կտեսնես՝ բռնեցին ու գլխիդ դելի ավետարան կարդացին — հա ես ճանճ պահիր, ես աբրեշումի ճիճու պահիր, ես-պես մածուն շինիր, ես-պես ցանիր, ես-պես հնձիր...։ Տո՛, հեր որհնած, մի առաջ հարցրու, տես՝ եդ բաները դրանք ել միտք են արել, թե չե նրանից յետը՝ թեկուզ ուշունց առ։

— Ցետո մի՞տք եք արել վոր, Գաբո բիձա։

— Ա՛խպեր, ա՛յ, յես հիմա որինակի համար՝ մինն ասեմ դու տես՝ մենք ել հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում, թե չե։

— Մի աշուն մեր Դավոն գնաց քաղաքը խող ծախելու։ Մի ճանանչ մարդ աբրեշումի ճիճվի սերմ եր տվել թե՝ սարեք ձեր տեղը առաջ բերեք։ Ճամփա պահեցինք, մինչև դարունքը բաց եղավ։ Գարունքը վոր բաց ելավ, վոնց վոր խրատ եր տվել՝ ես ճիճվի սերմը բերինք մեր խիզանի ծոցում դրինք, վոր տաքանան, դուրս գան։ Դուրս եկան ասեղի ծերի չափ մանր, սև զադեր։ Տիրացո՛ւ։

— Համմե։

— Ես ձեր ուսմնականները թե գիտեն՝ աբրեշումի ճիճուն ի՞նչ կուտի։

— Թթան տերև։

— Ապրես, դրուստ ա։ Գնացի ձորից մի շալակ թթան տերև բերի, կապեցի մենծ տան ամբարի վոտիցն ու ճիճուն վրեն ածի։ Ինչքան մարդ եկավ նայելու, վոչ-վոքի տուն չթողինք՝ վոր աչքով չտան, ասինք՝ թող մի տեսնենք՝ ինչ ա դուրս գալիս։ Ա՛յ տղա, եդ տանտեր ճիճուները մի քանի որ կացան ու կոտորվեցին։ Հիմա թե

բումը աբրեշումի ճիճուն տաճում չի, բան չի դառնում։ Դե, զարմանալու ինչ կա վոր։ Ենպես լերկիր կա՝ հավք չի ապրում, ենպես լերկիր կա՝ ցորեն չի դուրս գալի։ ամեն աշխարք մի տեսակ բնություն ունի։ բայց ես մեր նոր ուսում առածները ասքանն էլ չեն հասկանում։

— Ինչպես եր դատում Գաբո բիձեն շերամապահության մասին։

— Արդյոք ճիշտ մոտեցում ուներ նա։

— Ինչպես ենք զարգացնում մենք շերամապահությունը։

— Ի՞նչ նշանակություն ունի շերամապահության զարգացումը մեր լերկրի համար

ՀԻՇԵՑԵՔ

1. Բայի ձևից արդեն իմանում ենք անողը կամ լինողը յե՞ս եմ, դո՞ւ, նա՞, մե՞նք, դո՞ւք, նրա՞նք։ Որինակ՝ գիտեմ (յես), գիտես (դու), գիտե (նա), գիտենք (մենք), գիտեք (դուք), գիտեն (նրանք)։

Բայի ցույց տված անողի կամ լինողի այդ դաղափարը կոչվում է դեմք։

Խոսողն իր համար գործ է ածում առաջին դեմք (գիտեմ, գիտենք),

Խոսակցի համար՝ յեկրորդ դեմք (գիտես, գիտեք), իսկ այլ անձնավորության համար՝ յերրորդ դեմք (գիտե, գիտեն)։

2. Ցերբ բայի դեմքը վորոշվում է առանձին դրվող բառերով, ապա այդ բառը կկոչվի յենթակա։ Որինակ՝ յես ու Գաբո բիձեն անցնում եյինք Լոռու ձորով։

---

28. ՆՈՐ ԳՅՈՒՂԸ

Բայց աթարածուխ բուխարիկի մոտ,
Են հին «հայրենի ոջախի առաջ»
Նախկին որերի մանուկ հուզումով
Հիմա չեն պատմում յերկար ու բարակ
Հոպիտ չարքերի և արնածարավ
Վիշապի մասին՝ յերեք գլխանի։
Այդ բոլորն ավելց, սարերից տարավ
Մի աշխարհացունց յերկաթե քամի։
Եվ չարք ու հեքյաթ չկա սարերում
Ու վոչ էլ խավար մսուրում կոխվ
Ցեվ հիմա այնտեղ էլ չի վախենում,
Չի խելագարվում և վոչ մի հովիվ,
Չե՞ վոր մտերիմ աչքերի նման
Հեռվից կայծկլտում ու սիրա են տալիս
Ելեկտրական լույսերը նրան.
Ցեվ Քանաքեռից, և՛ Ցերևանից։
Չե՞ վոր նա գիտե խանդավառ սրտով,
Թերթում կապելով կարդացել և նա,

Վոր եդ լույս-աչքերն անվրեպ հերթով
Նրա անտառին էլ կմոտենան։
Կելնեն Փշալով Քանաքեռցիից,
Հետո Սոլակից, հաղթական, անդարձ,
Կելնեն և խավար դիշերվա կեսին
Հեղեղի նման կմտնեն անտառ։
Գվառվեն անհաս են ժայռի ծերին,
Աղնիվ մարմարի հարուստ հանքերում,
Գալը չի դիպչի էլ չար եձերին,
Ինչքան էլ նրանք արածեն հոռուն...
Գիտե նա, վոր տեմպ ու թափ կբերեն
Եդ լույսերն իրա հայրենի գյուղին
Ու վաղն այստեղից դիշեր ու ցերեկ
Ճչալով կանցնի նա - յերկաթուղին։
Էլ չարք ու հեքյաթ չկա սարերում.
Ցվ աթարածուխ բուխարու առաջ
Ուրիշ հարցերի շուրջ են պտտվում
Մտքերը նոր թափ ու նոր թև առած։
Հարցեր այսորվա ու ապագայի,
Զոր, հարվածային, յերկաթե հարցեր,
Հարցեր, վոր լերկիր, մյուս որ չկային,
Այսոր մտքերի հեսան են դարձել։

— Պատմեցեք, թե հին գյուղում բուխարիկի առաջ գյուղացիք ինչ զրույցներով եյին զբաղվում և ինչու։ Պատմելիս ոգտագործեցեք ձեր կարդացածներն ու լսածները՝ ցիտատներ բերելով։

— Ինչու նոր գյուղում այլևս չկան յերկյուղ ազդող հեքյաթները. ինչը սրբեց, տարավ այդ բոլորը։ Շեշտեցեք առանձնապես ելեկտրականության դերը։

Բացատրեցեք ստորակետի գործածությունը հետևյալում.

Զոր, հարվածային, յերկաթե հարցեր, հարցեր, վոր յերեկ, մյուս որը չկային։

Դիտեցե՛ք բայի ներկա ժամանակի դրական յեվ բացասական ձևերը.

յեզակի	հոգնակի
պատմում եմ	պատմում ենք
պատմում ես	պատմում եք
պատմում է	պատմում են
չեմ պատմում	չենք պատմում
չես պատմում	չեք պատմում
չի պատմում	չեն պատմում

Ներկա ժամանակը ցույց է տալիս, վոր բայի գործողությունը կամ յեղելությունը կատարվում է խոսելու րոպեին։

Բացասական ձևեր կազմելու համար ավելացվում են՝ ՎՈՉ, Չ, ՄԻ (վոչ կարդա, վոչ գրի.—մի՛ կարդա, մի՛ գրի.—չեմ կարդում)։

29. ՍԱՔՈՒԼՆ ՈՒԽՏ ԳՆԱՑ

Սաքուլն անկողնու մեջ կուչ լեկած, զգում եր, թե ինչպես տաք ու այն կողմից ներս ծորացող առվակները շատանում են և վերմակը անձրևի ջրից թրջված տոպրակներից ու կարպետից հետզհետե խոնավանալով ճնշում է իր վոտ տարմինը։

Ոդ չկար, վոր շնչեր և շնչածն էլ բաղնիքի տաք գոլորշու պես մի բան եր, վորից քիչ եր մնում խեղդվեր։

Տեսնելով, վոր այլևս չի կարողանում դիմանալ, վրալի ծանրությունը մի կողմը շպրտեց և նստեց անկողնում։ Այժմ անձրևն սկսեց թակել ուղղակի նրա գլուխն ու մեջքը։

— Տե՛ս, դուք ասված չունեք, ինձ խո սպանեցիք եստեղ, — կանչեց նա։

Կինն ու մայրը շտապեցին նրան վերկացնել և հորդահոս անձրևի տակից մի կերպ տեղափոխեցին սենյակ։

Յերեք որվա ուխտն արդեն կատարված եր՝ թեև Սաքուլը յերբորդ որվա դիշերը չեր անցկացրել բաց յերկնքի տակ։

Չորրորդ որը «Թելեժկեն» քաղաքից լեկավ, վոր մեր ուխտավորներին տուն տանի։ Սաքուլին պառկեցրին թելեժկի մեջ՝ ուժից բոլորովին ընկած։ Ճանապարհին մի գլուխ բղավում եր կողերի մեջ զգացած անտանելի ծակոցներից։ դադարում եր բղավելուց այն ժամանակ միայն, յերբ հազը բռնում եր։ Հազում եր չոր ու թուլ, վոբի ժամանակ ձայնը կարծես հորից եր դուրս գալիս։ Յերբեմն պարզապես շնչասպառ եր լինում։ Մայրն ու կինը նստած ելին կողքին և հետները վերցրած գինու շշից յերեսին ջուր ելին ցրցամ տալիս, վոր շունչը յետ բերեն։

Թախտի վրա անկողնու մեջ պառկած է Սաքուլը, գլուխը կապած սպիտակ փաթաթանով, վորի տակից դուրս են պրծել յերկարացած մազերը և, քրտինքից ու կեղտից թաղիք դարձած, կպել վոսկրացած քունքերին։

Դեմքին մնացել եր միայն քիթը խոշոր ուսուր, և աչքերն անգին ու պսպղուն ապակու պես նայում են բաց դռնով դեպի դուրս։ Այնտեղ ամառվա միջորելից արևը հրաշեկ ճառագայթներով կիզում է դիմացի տան պատը և այն ատիճան շողշողում, վոր ուղիղ նայելիս մարդու աչքերը ցավում են։

Սաքուլը բարձն ի վեր կիսանստած անթարթ նայում եր դուրս քթացած հայացքով և ծանր շունչ քաշում։

Անհուն վիշտը ցամաքած դեմքին՝ մայրը նստած է մեռնող վորդու կողքին և թաշկինակով քշում է ճանճերը նրա դեմքից։

Նատոն որորոցի մոտ չոգած՝ ծիծ է տալիս յերեխային և հուսահատ հայացքով է նայում սենյակի պուճախին։ Նրա հայացքը ցույց է տալիս, վոր նա առաջուց արդեն հաշտվել է անխուսափելի թշվառության հետ։

Թախտի վրա լուսամուտի տակ չոգած է փոքրիկ աղջիկը և աշխատում է բռնել ապակիների վրա պսպղացող ճանճերին։

— Սաքուլ ջան…

Սաքուլը կամաց բաց է անում աչքերը և նայում նրան։

— Ի՞նչ կլլի, վոր տերտերին իմաց տանք։

— Տե՛ս, եկի տերտեր,—բացականչեց Սաքուլը զարմացած։ Նրա ձայնը հանկարծ կտրվեց, աչքերը լցվեցին արտասուքով և նա այլևս վոչինչ չկարողացավ արտասանել։

Յերկար լռությունից հետո նրա շրթունքները շարժվում, ինչ վոր բան են ասում, բայց դժվար է լինում վորոշել արտասանածը։ Նատոն, վոր դեռ ևս շարունակում եր ծիծ տալ յերեխային, գեմքը դարձնում է դեպի նա և ականջը սրում։

— Ասում եմ փոդրաթչիկ Սերգոն, վոր իրեք թուման եմ պարտ… փիս մարդ չի… կլլի վոր չուզի…. համա թե ուզի… յաթաղս ավեք, հերիք չանի… քամարս ծախեցեք… հոդիս չծանրացնեք…

Խեղճ պառավ մայրը միանգամայն կարկամում է և չի իմանում՝ ինչ ասի։

Նատոն զգում է, թե ինչպես ամուր մի բան բռնում է բուլը։ Գլուխը գնում է որորոցի վրա, գեմքը ծածկում կռների մեջ և ամեն կերպ աշխատում է զսպել խեղդող հեծկլտանքը։

Իսկ փոքրիկ աղջիկը շարունակում է մատները շարժել լուսամուտի ապակիների վրա, վոր բռնի ճանճերը և, նմանեցնելով կինոտոյի կանչին, մերենայաբար կանչում է կամացուկ՝

«Թութա, թութա, ախաուի թութա»։

— Ի՞նչ հիվանդությամբ եր տառապում Սաքուլը։

— Ի՞նչ միջոցներով ելին ցանկանում բժշկել նրան։

— Ի՞նչն եր նրանց դրդում դիմել այդպիսի նախապաշարված միջոցների։

— Արդյոք այդ ձևով կարողացան բժշկել Սաքուլին, թե՞ ավելի բարդացրին նրա դրությունը։

30· ՆԱՐԳԻԶԻ ՄՈՒՐԱՉԸ

Նարգիզը հասակն առած աղջիկ եր· գյուղի աղջիկների մեջ գրեթե ամենահասակավորը։ Բայց դեռ վոչ-վոք խոսք չեր արել նրան ուզելու, այսինքն՝ ամուսնության առաջարկ անելու։ Պատճառն, իհարկե, այն եր, վոր դեմքը չեչոտ եր և մի փոքր էլ կազում եր աջ վոտից։ Բայց գյուղում այդպիսիները, ինչպես գիտեք, մեծ մասամբ մարդու չեն գնում։ Յեվ այն հանգամանքը, վոր նրան ուզող չկար, վշտացնում եր թե տնեցիներին և թե ավելի իրեն՝ Նարգիզին։

Ամեն ձմեռ, յերբ սկսվում եր նշանդրեքների ու հարսանիքների շրջանը, Նարգիզը մռայլվում եր և սրտատրոփ սպասում, թե ինչ է լինելու... Բայց յերբ մինչև սուրբ Սարգսի պասը վոչ-վոք չեր գալիս, նա հուսահատվում եր, տխրում և, բախտը փորձելու համար, մի տեփուրի մեջ փոխինձ լցրած, սուրբ Սարգսի տոնի գիշերը, տնեցիներից ծածուկ, տանում գնում եր գոմի կտուրը։ Ու ամբողջ գիշերը չեր քնում, մտածելով, թե ինչ կպատահի գիշերը։ Արդյոք սուրբ Սարգիսը կգա՞ և ձիու պատով կխփի՞ փոխինձին... Յեթե խփի, պարզ է ուրեմն, նրա բախտը այսոր չե եղուց, այս տարի չե, մյուս տարի, մի այլ տարի կբացվի... Այդպես է։ ուր փոխինձին սուրբ Սարգիսը, իր տոնի գիշերը, խփի իր՝ ձիու պատով նա մուրազին կհասնի... Այդպես եր լսել նա։ Ու գիշերը յերկար չեր քնում, իսկ յերբ աչքը կպչում եր – վեր եր թռչում և մտածում, թե առավոտը տեսնես ինչ է լինելու։ Իսկ առավոտը, դեռ լուսը հազիվ բացված, հազնվում-գնում եր գոմի կտուրը և, սրտի անհուն հուզումով, նայում փոխինձին – չկա՞ արդյոք սուրբ Սարգսի ձիու պատի հետքը... Յեվ ամեն անգամ տուն եր դառնում սրտաբեկ, տխուր, արտասվակայած աչքերով՝ աշխատելով հուզումը թաղցնել տնեցիներից։ Յերբեմն էլ գնում-նստում եր մի առանձնացած տեղ և լաց լինում...

Բայց վորքան էլ աշխատում եր արածը և տխրությունն ու հուզումը թաղցնել, նրա հարսն այնուամենայնիվ նկատում եր շատ բան և գլուխն որորում եր միշտ։

— Մեղք ա, է, – ասում եր նա, հասկանալով տալի վիշտը։— Հալբաթ ես տարի էլ բան չի էլել...

Ու սիրտ չեր անում մի բան հարցնել, վորովհետև առանց հարցնելու յել ամեն բան պարզ եր լինում նրա դեմքից ու շարժուձևերից։ Միքանի շաբաթ, մի ամբողջ ամիս ավելի Նարգիզի ծաղկատար դեմքին ժպիտ չեր գալիս...

* * *

Վերջին անգամ, սուրբ Սարգսի տոնին, յերբ Նարգիզը փոխինձով լի տեփուրը ձեռին, մթնով դուրս յեկավ տնից, հարսը նկատեց այդ և հետևեց տեսնելու, թե ուր է գնելու։ Նա կանգնեց լուսամուտի առաջ և նայեց Նարգիզի յետևից։

Նարգիզը տեփուրը ձեռին կողալով գնաց դեպի գոմ, կանգնեց փայտե յելարանի առաջ, փեշերը հավաքեց ու, տեփուրը ձեռին, կամաց-կամաց բարձրացավ գոմի կտուրը։ Այնտեղ նա ձեռի բանը դրեց ցած, հետո յերեսը դարձրեց դեպ արևելք, ձեռները բարձրացրեց մի տեսակ հանդարտ շարժումով· ապա զգուշությամբ, շուրջը նայելով՝ իջավ և կողալով յեկավ-անցավ այն լուսամուտի առջևից, ուր կանգնած եր հարսը։

— Մեղք ա, է, – նորից ասավ հարսն ինքն իրեն ու գլուխն որորեց։ Մի նալ (պայտ) ըլեր՝ խփելի, հանգստանար խեղճ աղջիկը...

Ու հիշեց, թե ինչպես իր մորաքուրն այդպես եր արել իրենց հարևանի աղջկա համար...

Ու քիչ հետո, յերբ տանն ամեն ինչ խաղաղվել, բոլորը քնել ելին, հարսը, Նարգիզի նման շուրջը նայելով, մեծ զգուշությամբ գնաց, բարձրացավ գոմի կտուրը և մոտեցավ փոխինձին...

* * *

Հետևյալ առավոտ, լույսը հազիվ բացված, յերբ տնեցիները դեռ քնած ելին, Նարգիզը գնաց գոմի կտուրը։ Մի առանձին հուզումով, փայտե յելարանով բարձրացավ վեր։ Յերբ դողացող սրրտով մոտեցավ տեփուրին — ուրախությունից նրա աչքերը շաղվեցին և ծնկները թուլացան...

Փոխինձի յերեսին՝ պարզ, վորոշ յերևում է պայտի հետքը...

Հարսը, վոր հետաքրքրությունից նույնպես վաղ զարթնել, հետևում եր Նարգիզին, լուսամուտից նկատեց, թե ինչպես Նարգիզը վերադարձավ ժպտագեմ ու փայլող աչքերով։ Ուրախությունից այնպես թեթև եր քայլում, կաղությունը չեր յերևում։

Ամբողջ որը նա ուրախ եր, աշխույժ, ժպտերես. ամեն բան ուզում եր ինքն անել։ Վառարանի փայտը բերելիս քթի տակ ինչվոր յերգ եր մրմռում։ Հարսի յերեխաներին գրկում եր, համբուրում, իսկ փոքրին, թելի ժամանակ, ծնկանը դրած կերակրեց, ինչվոր քիչ եր պատահում։ Յեվ բոլոր ժամանակ բոլորի հետ ասում, խոսում, կատակում եր, վոր նույնպես հազվադեպ բան եր։

Հարսը նայում եր նրան և ժպտում ինքն իրեն։ Դժվար եր իմանալ—ծաղրում եր, թե խղճում։

Իսկ Նարգիզը հրճվում եր հոգու խորքում և մտածում, վոր սուրբ Սարգիսը, վերջապես, խղճաց իրեն։ Նալը վոր խփեց, այնպարզ է—ինքը կհասնի մուրազին։

Ու այդ որվանից նրա տրամադրությունը միշտ լավ եր, միշտ սպասում եր անակնկալ բան ի... Ցերը հարևաններից բացի, կոմսոնում—չլինի խնամախոս են լեկել...

Տարիներն անցնում էին—նա սպասում եր։ Դարձավ հիսուն, ավելի տարեկան—սպասում եր դարձյալ...

Յեվ այսպես էլ մեռավ, հավատացած, թե սուրբ Սարգիսն եր ձիու պայտը խփել փոխինձին...

— Ումն եր սպասում Նարգիզը. ինչի՞ վրա յեր հիմնված այդ հավատքը։

— Կարող եր իրականանալ այդ սպասումը։

— Ի՞նչ կարգերի արդյունք և այդ սնոտիապաշտությունը։ Սնոտիապաշտական էլ ինչ ձևեր են ձեզ հայտնի։

— Ի՞նչպես ե կոչվում խորհ. իշխանությունը կրոնի և բոլոր տեսակի կրոնական սնոտիապաշտության դեմ։

Դիտեցեք բայի անցյալ կատարյալի դրական յեվ բացասական ձևերը

գնացի	գնացինք	չգնացի	չգնացինք
գնացիր	գնացիք	չգնացիր	չգնացիք
գնաց	գնացին	չգնաց	չգնացին

Անցյալ կատարյալ ցույց ե տալիս մի այնպիսի գործողություն կամ յեղելություն, վոր իսկելու տոպչից առաջ ե կատարվել։

Բացասական ձևի վրա ավելացող չ-ն բառին միացած ե գրվում (չգնաց)։

---

31. ԿԱՌԱՊԱՆԸ

1.

Շրջանային փոքրիկ քաղաքում շատերն ելին ճանաչում կառապան քեռի Արզումանին։

Գիշերները, յերբ քեռի Արզումանը պառկում եր քնելու, մտածում եր առորյա մանր հոգսերի, կալոնիկ Բարսամի փոքրիկ խանութի տուրքի ու ընտանիքի մասին։

Հետո արթնացնում եր կնոջ ու հարցնում.—Կաչկաչի Մելքոնի կինը տղա՞ յե բերել, թե՞ աղջիկ։

Իսկ կինը չեր արթնանում, վորովհետև քեռի Արզումանի բեղերի ու մորուքի միջից միշտ փչում եր դառնահամ ողու չոր հոտը։

Քեռի Արզումանը մտածում եր և նորից հարցնում կնոջը, թե ինչ պիտի անի գլխարկ կարող Յենոքը, յերբ նրա փոքրիկ տանը կեսն ընկել և քաղաքի նոր պլանի մեջ, կամ թե բախալ Ծատուրը, խանութը վոր փակեց, ինչով պիտի ընտանիքը պահի։

Քեռի Արզումանը մտածում եր, թե լավ կանի բախալ Ծատուրը, վոր տեղավորվի ծառայության։

Կառապանը մտածում եր և այն մասին, թե քաղաքի մի հին թաղը վոր քանդեցին այդի շինելու՝ ինչքան ու ինչ ծառեր են տնկելու։

Նա նորից արթնացնում եր կնոջ ու հարցնում, յերբ յերկրաշարժ ե լինում, փլվում ե տունը, ապրող մյուսներն ուր են փախչում։

Գոմում խրխնջում եր ձին ու քեռի Արզումանը շրջվում եր մյուս կողքին։

2.

Շրջանային քաղաքի աշնան որերը տխուր ելին լինում ու ձանձրալի, փոշեխառն քամին արշավում եր կտուրների ու փողոցների վրա։

Աշնանն անընդհատ բարակ անձրև եր գալիս, հետո փողոցներում լճակներ ելին գոյանում, ու ցեխը պառկում եր մայթերի վրա։

Թուլ-թուլ կախվում ելին անձրևի տակ քաղաքային դաղարկ ալդում և տնակների հատ ու կենտ ու մերկ ծառերի թրջված ծվենները։

Մարդիկ շրջում ելին սակավ և քչերն ելին կառք վարձում, իսկ քեռի Արզումանը կայարանում յերկար սակարկում եր անծանոթ ուղևորի հետ ու հետո դժգոհում, վոր թանգացել ե գարին։

Քեռի Արզումանը հաճախ հին կառքի մասերը նորոգել տալու յեր տանում կալոնիկ Բարսամի մոտ, հետո նորից դժգոհում առորյա հոգսերից։

Փոքրիկ քաղաքում փոքրիկ լուրն անգամ տարածվում ե բնակչության մեջ։ Յեվ քեռի Արզումանը կալոնիկ Բարսամից լսեց, վոր շուտով քաղաքում ավտոբուս են բերելու։

Քեռի Արզումանին թվաց, վոր յերկաթե մեքենան արգեն մտել ե փոքրիկ քաղաքը. վրնջում են իր լղարիկ ձիերը, հետո խրտնում, իսկ ինքն ընկնում ե կառքից ու կնուտը կոտրվում։

Կառապանին թվաց, թե կառքի անիվները գլորվելով փչրվեցին, իսկ կալոնիկը մտածեց, վոր քեռի Արզումանը ֆայտոնը էլ չի բերի նորոգել տալու։

Քեռի Արզումանը կալոնիկին և՛ հավատաց և՛ չհավատաց,

բայց հայհոյեց։ Հետո բարձրացրեց գլուխը, նայեց հեռու, ու նրա բեղերը ժպտացին։

Կառապանը պատմեց քաղաքի «հարս աղջիկները» յերբ «թայլն-թայլնա» ու լաչակ կապած յեղնեն բաղնիսից, պիտի ավտո նստած վերադառնան տուն, կամ կիրակի որերը, ինչպես ընդունված է, լվացքը տանեն հեռու գետը։ Կառապանն ու կալոսնիկը ծիծաղեցին։

Ճիշտ, ե վոր մարդիկ խորն ուրախություններից լաց են լինում, յերբ գտնում են իրենց կորած հարազատին։ Փոքրիկ քաղաքը «լալիս եր», իսկ կառապանն ու կալոսնիկը ծիծաղում։

Քեռի Արզումանն են գիշեր, յերբ պառկեց քնելու, նա էլ չմտածեց հարևանների ու մկների մասին և վոչ էլ արթնացրեց կնոջը։

Նրա ուղեղի ծալքերում պտտվում են իրեն հին կառքի անիվները։

3.

Անապատելին կատարվեց աշնանային մի որ։

Այդ որը քեռի Արզումանը կառքով գնացել եր կայարան՝ լեկվորներ քաղաք տեղափոխելու համար։

Քեռի Արզումանն սպիտակ կայարանի դռան մոտ կառքի վրա անշարժ նստած նայում եր թրջված ձիերի սրածայր ականջներին և սպասում։ Կառապանի թրջված ու յերկար բեղերից կաթում եր անձրևը։

Յերբ գնացքը վինչալով կանգնեց, ուղևորները խառնվեցին։ Կառապանները մտրակեցին ձիերին ու հայհոյեցին իրար, ինչ-վոր բանի մասին վիճեցին, և մեկի կնուտը կտրվեց։

Իսկ քեռի Արզումանը յեկվոր ուղևորի հետ սակարկում եր յերկար։

Կառքերը սլացան ճանապարհի ցեխի ու անձրևաջրերի լճակների միջով։ Ցեկեղեցուց վերադարձող մի պառավ կառքերի հետևից նայելով ինչ-վոր դժգոհեց։

Բայց կառքերը գնացին, մնաց քեռի Արզումանն ու նայեց ելի ձիերի թրջված ականջներին։

Այդ որն անապատելին այն յեղավ, վոր յեկավ ավտոբուսը, և քաղաքի բնակիչները գնացին դիմավորելու։

Ամեն մի հասարակ քաղաքացի յերջանկություն եր զգում՝ առաջին անգամ վայելել նրա պատճառած բավարարությունը և հաղթական կերպով մտնել քաղաք։

Մարդիկ նայում էլին իրենց տափակ ու կտրված դեմքով նրա դեղնավուն ու փայլուն կողերին։

Հեռվում, անձրևի տակ, կանգնած քեռի Արզումանին մի բոպե այնքան խղճուկ ու փոքր թվաց իրեն հին կառքը, և նա մի տեսակ ճնշվեց ինչպես, ցածրահասակը մաղը բարձրահասակ մարդու մոտ։

---

1. Ո՞վ եր քեռի Արզումանը և ինչի՞ մասին եր նա մտածում։
2. Քնելու ժամանակ ի՞նչ խնդիրներով եր զբաղեցնում իր կնոջը և անհանգստացնում նրան։
3. Ի՞նչ ազդեցություն թողեց կառապանների վրա ավտոբուսի մուտքը,— որինակ բերել քեռի Արզումանին։
4. Ի՞նչ ավտո-մեքենաների գործարաններ գիտեք նոր կառուցված, և ի՞նչ նշանակություն ունեն այդ գործարանները ժողովրդական տնտեսության, տրանսպորտի զարգացման համար։

Գրեցեք թղթակցություն տրամվայի աշխատանքների ընթացքի և նրանց նշանակության մասին։

Դիտեցեք բայի անցյալ անկատարի դրական յեվ բացասական ձևերը։

Ճանաչում էի ճանաչում էինք	չէի ճանաչում չէինք ճանաչում
ճանաչում էիր ճանաչում էիք	չէիր ճանաչում չէիք ճանաչում
ճանաչում էր ճանաչում էին	չէր ճանաչում չէին ճանաչում

Անցյալ անկատարը ցույց է տալիս մի գործողություն կամ յեղելություն, վոր խոսելու բոպեից առաջ սկսվել է, բայց չի վերջացել (կարդում էի)։

---

32. ՄԻԿԻՏԱՆ ՍԱՔՈՆ

Սև-Ջրի գլխին՝ այսոր էլ, կարծեմ, դեռ կարելի յե նկատել մի յերկու ավերակների հետքեր, վորոնք փոքր ժամանակ հնախույզ ճանապարհորդին կանգ առնել կտան և մտածմանց մեջ կձգեն։

Այս մեծ շինության դիմացը՝ նրանից վոչ շատ հեռու՝ Սև-Ջրին ավելի մոտիկ յեղեգնուտներին կից եր մյուս ավերակի տեղը՝ կառավարչի ամարանոցի դինեատունը կամ միկիտանխանան։

Մովրովի ամարանոցի շինվածքն այնքան հետաքրքիր չե մեզ համար։ մի լայն պարսպավոր բակ է այն, մի կողմը կարգով բավականին միահարկ սենյակներ շինած, ուր գետեղվում էլին ինքը՝ գավառապետը, յուր իրավարանը և ոգնականները։ փոքր ինչ հեռվի միքանի մանր-մունր սենյակները գրագրների բնակարաններն էլին, քամակի կողմը գոմն եր, ուր կապվում էլին ձիանքը և կենում էլին ատրին պաշտոնատարքը՝ յասավուլ, մեհտար, կոզակներ և այլն։ Գոմին կպած եր բանտը յերեք-չորս մանր և մութը սենյակներով։

Գինետունն ուներ նուշնպես մի լայն պարսպապատ բակ, որի մեջ կային միքանի տներ· գոմը, մարագը, մառանը, հավաբունը և այլն, ինքը՝ գինետունը շինված եր այդ բակի արևելյան կողմը ճիշտ ամարաթի դիմացը· Ցերկու մուտք ուներ նա, մինը ուղղակի դրսից, որ եր հասարակաց դուռը, իսկ մյուսը՝ բակի միջից· Այս կողմից մտնում ելին հեռու տեղերից լեկած խնդրատուները, կապելով յուրյանց ձիանքը բակի մեջ, կամ գոմումը·

Սև-Ջրի գլխի միկիտաններից մեկին միայն մենք ճանաչում ենք և որի հետ մենք բախտ պիտի ունենանք շուտ-շուտ հանդիպելու· Դա միկիտան Սաքոն ե, ընթերցող, որի հետ պատիվ կունենամ քեզ ծանոթացնել·

Գինեվաճառ Սաքոն ուներ Աշտարակումը մի յերկու այգի· Վոր աշխարհքիցը կլինի Սաքոն, թող լինի, մեզ համար վողջ մեկ ե· մենք նրան ճանաչում ենք տասը, տասն յերկու տարեկան հասակից, յերբ քարշ եր գալիս նա գորանոցների գինեվաճառների դռներին· Ասում են, որ վոչ մի գինեվաճառ չի կարողացել յերկու-յերեք ամսից ավելի պահել Սաքոյին· մեր գալում լակոտը մոր կոճակ կարող ե յեղել, աչքի սուրմա թոցնող· վոչ միայն հաճախորդների գրպաններից անհայտացել են նրա որովը դանագան մանր-մունր առարկաներ, գինեվաճառի ծոցից կամ գլխատակիցն ել գիշերը քնած ժամանակը թռել, վերացել ե նրա քսակը, ել ով եր գժվել Սաքոյի հետ յերկար կյանք վարել·

Թե ինչպես յեղավ, ինչպես չեղավ, մին ել Սաքոն գարձավ Այդը-գյոլի ամարաթի լիազոր գինեվաճառը· Շատ չանցավ, նա գրավեց բոլոր այցելուների և ամարաթի բնակիչների համակրությունը, մանավանդ նրա հարգանքն ավելացավ, յերբ վոր ամենքն իմացան, թե Սաքոն մովրովի յերկու աչքի լույսն ե· Այնուհետև գյուղացոց պաշտպանն և թանգագին հյուրն եր Սաքոն, տանուտերների թև ու թիկունքը, գավառական Ջրպետի սերտ բարեկամը, յասավուլների մտերիմն և նույնիսկ ոգնականների սիրելին· Սաքոյի անունն ամբողջ գավառի մեջն հարգելի յեր· Ամեն մի գյուղացի իրան պարտք եր համարում մովրովի մոտ գալուս յուր գյուղումը գտնված ազիզ բերքիցը Սաքոյին բաժին բերել· յեթե յուր տանը չլիներ, փողով կգներ ու առանց ընծայի Սաքոյի շեմքը չեր մտնիլ· Վոչ միայն շեն գյուղերումն եր Սաքոն հարգելի, – քարափների, ձորերի ու քարանձավների բնակիչ՝ յերկիրը սարսափեցնող ավազակների համար ել Սաքոն մի պաշտելի անձնավորություն եր· Սխար վոնց չսիրելիր Սաքոյին, նրա պես քաղցր վարվեցողություն, նրա պես ճարտար

լեզու ով կունենա· Շնորհ արեք նրա գինետունը և դուք ել կհամոզվեք·

— Սաքո Ջան, բարով քեզ·

— Վայ տատծու բարին, բարով ճաղար բարի յես յեկել, քեզ մատաղ, իմ աչքի, իմ գլխի վրա·

Դու չկարծես, ընթերցող, թե այս խոսքերը Սաքոն միայն նշանավոր անձնավորությունների համար ե խարջում· Վերջին գյադեն ել լինի, նրա աչքի, նրա գլխի վերա բազմելու տեղ ունի·

— Այ տղա, շուտ,— հրամայում եր Սաքոն յուր սպասավորին, տղա կարոյի ձիու հոգսը քաշեցեք, բոլ խոտ ու դարման լցրեք առաջը, թամքը թուլացրեք· ծանրությունը տունը բերեք·

— Համեցեք, քեզ զուրբան, տղա կարո Ջան, ճամփից յեկած ես, բեզարած ես, մի բողազդ թաց արա ու ներքև գնա՝ օթախումը միքիչ գնջացի, ինչ անուշ կանես, գլնի թե արաղ·

— Սաքո Ջան, նեղություն մի քաշիր·

— Վայ գլխիս, ամոթ չի՞ եդ թավուր խոսքերը, մեր աչսպերությունի մեջն ըտոնք պտի մանի՞ն, սաղ դուքանը քեզ զուրբան, վեր կալ չոլն ածա, ծպտուն հանողը մարդ չի·

— Սաքո Ջան, քեզ համար միքիչ ալին-ոլին եմ բերել, թողություն կանես, քեզ ավելի պատիվ եր հարկավոր·

— Եդ ինչ նեղություն ա, կարո Ջան, վոր քաշել ես, խնդրում եմ, վոր ես վերջինն ըլի, թե չե գիտես, կխռովենք այ·

Մի յերկու որից հետո զզլթամուրցի նախրչի Կարոն յուր գործը պրծել գնում ա·

— Սաքո Ջան յես գնալու յեմ·

— Աստված բարի ճամփա տա, Կարո Ջան·

— Սաքո Ջան, մեր հաշիվն ինչ ա·

— Ի՞նչ պտի ըլի, քո սաղ թյունը·

— Չե, Սաքո Ջան, յես եդ թավուր բաները շատ չեմ սիրում, դու յել միքանի սև փողի համար ես գլուխդ չոր քարին դրել, ելի տխպեր ենք, ինչ վոր հասնելու յա՝ ասա·

Շատ չեմ ու չում անելուց հետո, վերջապես հնչում ե վճռական խոսքը· – Ցերեք մանեթ ու կես·

Թուքը կուլ տալով՝ ձեռը ջերը տարավ մեր նախրչին· Նա տասը մանեթ պարտք եր արել մի չնչին գործի համար, Սև-Ջրի գլուխն յեկել· վերջին յերկու մանեթն ել Սաքոյին տվեց ու խնդրեց, վոր գնա թե չե, մնացածը առաջին յեկողի հետ դրկի·

— Քո ցավը տանի, թեկուզ ըսկի մի դրկիլ, կամ թե ունեցած ժամանակդ դրկի, քեզ վրա կորած հո չի,

նրան Սաքոն ու ճանապարհ ձգում։ Տեսնք թե մեր միկիտանն ինչպես և շարունակում իր տեսակցությունները մովրովի հետ։

Մութը դեռինն առավ, վոտքը խաղաղվեց, Սաքոն հանձնեց գինետունը յուր սպասավորին և գնաց դեպի մովրովի ամարտը։ Սաքոն ունի յուր բախելու ձևը։ խիստն դուռը նրա առաջին կբացվի։ Մովրովի քնած ժամանակն ել Սաքոն կարող ե ուզղակի մտնել ննջարանն և զարթեցնել։ այդ կնշանակե, վոր մի անհետաձգելի գործ կա։

Մտնում ե Սաքոն մովրովի մոտ, կանգնում դռան տակին և գլուխ տալիս՝ ձեռքերը կրծքին դրած։ Նա գլուխը չի բարձրացնում, մինչև մովրովը չհարցնի։ — Հը, ինչ կա։

— Քո սաղությունը։

— Լավ, յես գիտեմ թե իմ սաղությունը քեզ համար ինչ ժամի, ասա մաքինդ, խնդրատուներ են յեկել։

— Հրամելիք, աղա Ջան։

— Քանի հոգի յեն, ինչ են ուզում, չաղ են, թե լղար։

— Յերեք ախպեր են, խնդիրը մի հասարակ բան ա, համա մեջը նյութ կա։ դրանք ուզում են բաժանվի, մեջները համաձայնություն չկա, մենծ ախպերը մեծահարկ ա ուզում, պստիկները չեն տալիս, հիմի յեկել են, վոր դու բաժանես։

— Ընչի իրանց տանուտերը չի վերջացրել։

— Չե՞ վոր յես քեզ խնդրեցի, վոր քո կողմից տանուտերներին պտի հրամայեմ, վոր յեղալի գործերը չհամարձակվին իրանք վերջացնել։

— Վորքան միտքս ե, այդ իրավունքը յես քեզ չեմ տվել։

— Ե՛հ, աղա, դու ել շատ բանի քամակիցն ես ընկնում, ամեն բան հո մատնահեսաբ տալով չպտի՞ հրամայես, մենք ել մարդ ենք, խոտ հո չենք արածել, պտի հասկանանք ու ել գլխացավանք չտանք քեզ, յես եմ քո կողմից հրամայել։

— Հրամանաթուղթ հո չե՞ս ղրկել։

— Գժվե՞լ եմ, ինչ ա։ մեկին իր ետեղ յեղած վախտն եմ պատվիրել, մեկելին յասավուլի բերնով եմ ապսպարել։

— Ամեն, Սաքո, դու մեր գլխին մի փորձանք չբերես։

— Թող իմ Ջանին գա, թե վոր սրանից քեզ մի վնաս հասնելու ըլի, ով կա մեր մհալումը, վոր բան հասկացող ըլի, յա ձեռիցը մի բան գա, անասունը քեզ որինակ։ քո խոսքը մհալի մեջ թաղավորի խոսքից վեր ա։ դու յես մեր տերը, մեր դատավորը, մեր կյանքի ու մահի վճիռ տվողը։ Թուղթն ել ա քո ձեռին՝ դալամն ել, ինչ կամեցար՝ կամեցար։ ասում ա։ զոր ինչ գրեցի՝ գրեցի, ով ա

քո հառաջը բռնողը, ուզես՝ քոթկի մեջ կփթացնես, ուզես՝ Սիբիր կղրկես։

— Հիմի ինչ պտի անենք։

— Վոչինչ, գլխիդ մեռնիմ։ հենց վոր քու մոտ կգան, իրեքի վրա յել կբարկանաս, վոր ամեն դարտակ բանի համար քեզ գլխացավանք են տալիս, կհրամայես ծակը կոխել, յերկու որ կճգնեն, հետո յես միջնորդ կընկնեմ, կբաշխես։ մենծին կհրամայես պստիկներին չզբնել, պստիկներին ել կպատվիրես մենծի պատիվը պահել, ինձ ել կկանչես, կհանձնես, վոր ինչպես խելքս կտրում ա, դրանց բարիշացնեմ։ իհարկե դրանից հառաջ աջամբուրը իր վատոցն յեկած կըլինի։

— Շատ զուրուցն ա ես Սաքոն, թե վոր սրա պեսները չլինելին, ինչ պտի ըլներ մեր հալը, մենք քաղցած կզկոտա ինք, ով եր կարող ամեն մի գյուղացու հետ յերկար մասլահաթներ անելով մի քանի կոպեկ պոկել։ ախար մի ուճկով մարդ կապրի։ տարեկան չորս-հինգ հարյուր մանեթ ա՝ վոր բսկի Յերևանու մենծամենծների դռներին կանգնած յասավուլներին չի հերիք՝ թե վոր են ել սատանք, — մտածում եր ինքն իրան մովրովը Սաքոյի հեռանալուց հետո։ բայց թե ինքը Սաքոն ինչպես վարվեց այս գործի վերաբերությամբ, այդ խոզ ընթերցողը իմանա։

Վեր ժամանակվա մասին և պատմում հեղինակը։
Ո՞վ եր միկիտան Սաքոն և ում հետ եր գործում։
Ինչպես միջոցներով եկին նրանք շահագործում շրջանի գյուղացիությանը
Տվեք Սաքոյի բնութագիրը։
Վեր հասարակարգում են վերանում մովրովի և Սաքոյի նմանները։
Հա եմատեցեք հին գյուղը ներկայի հետ։
Մովրովի և Սաքոյի նախկին ամարտներն այժմ ինչի՞ յեն վերածված։
Բնութագիր կազմելիս նկատի ունեցեք տվյալ անհատի միջավայրը, նիստուկացը, աշխատանքը և բնավորության գծերը։
Հեղինակի լեզվից, գործածած բառերից յեզրակացրեք հեղինակի մասին — նեռ գրող և նա, թե հին։
Հիմա յել գործ են ածվում — մտածանց, պաշտոնատարքը, յասավուլ, մեհտար, յուրյանց, պատիվ կը համարիմ և այլն։
Գտեք այդպիսի հնացած բառեր ու ձևեր, փոխարինեցեք նոր բառերով կամ ձևերով։

---

33. ԱՐՅՈՒՆՈՏ ՑՈՒՑԱԿԸ

Մեր դիվիզիան Հ... գյուղումն է. շաբաթորյակ ենք գնացել։ Բանակայինների մի մասին քաղղեկն ուղարկեց չքավոր ու միջակ տնտեսությունների արտերը հնձելու, իսկ մնացածս՝ զինված գերանդիներով, փոցխերով, կոլխոզի 3 բրիգադների ուղեկցությամբ, շարժվեցինք դեպի կոլխոզի արտերը։ Ահա անցնում ենք կալի մոտով, ուր բարձրացել են դեղին ցողունի յերեք վիթխարի բլուրներ ու փայլում են արևի առատ ցոլքից։ Այդ հսկա դեղերի արանքում կանգնած է վագոնի նման մի բան. այդ կալսիչն է, վոր առավոտյան պիտի սկսի խժռել ահագին դեղերը։

Դաշտում ենք. մեր դեմ բացվում է ցորենի դեղնած հասկերի ծովը, վոր առավոտյան մեղմ զեփյուռի շնչով յերերում, ալիքներ է տալիս, և դու լսում ես մի խուլ խշշոց. «ուկրայինկայի» բեղուն հասկերի քիսաներն են։

— Ես սառնային դեռ ձեռք չենք տվել,— ասում է Ցեզոր բիձան դոհ ժպիտը դեմ լին՝ բանակայիններին։

10 բրիգադ ելին. սկսվեց մարտը. բրիգադներն իրար հետ սոցմրցման պարմանագիր ունեին՝ «Ով՝ ինչքան», չմոռանալով վորակը։ Սուլում ելին գերանդիները և վիշապի պես դանդաղ առաջ շարժվում՝ իրենց հետևը թողնելով խուզած քյուլաշի զուգահեռ թմբեր։ Ցեզոր բիձայի դեմքից ժպիտը չեր հեռանում. նա քաղում եր ավելի վարպետորեն ու հետն էլ «զարարադի» ասում։ — Ես տարվա մեր դախտոը գլխակեր ա, տղեք Չան. ես յաշիս մեջ եսպես ցորեն ես արտերում տեսած չկայի։ յես քո սերմ բերողի հոգուն զուրբան,— ասում է Մաթոս բիձան, վոր զբաղված եր միայն գերանդիներ սրելով։

Այո, դա բալշևիկյան 2-րդ գարնան բեղմնավոր ցանքսի արդյունքն է։ Ցուրաքանչյուր բրիգադ ինքը քաղում, կապում, փոցխում, դիզում եր, իսկ ֆուրգոնները մեր սայլերի հետ կրում ելին։ Տասներեք բրիգադը բռնել ելին մոտ 100 մետր ճակատ ու գրոհում ելին։

— Տղեք, մեր բրիգադն անցավ թևանցուկ կատարելու ,— կատակում ելին կարմիր-բանակային 7-րդ բրիգադի հնձվորները, նմանակելով այն մարտավարությանը։ Ցեվ իսկապես, նրանց բրիգադը քաղելով դուրս յեկավ մյուսների առջև։ Արեգակը բռնել եր մայրամուտի ճանբան, վոսկյա վարսերը կախել հեռու ծանրաբիրտ սարերի գլխին։ «Շաբաշ»-ը յեղավ և այդ օրվա աշխատանքը վերջացնելով՝ ուղեվորվեցինք դեպի գյուղ։

Ցերեկը յե. գյուղամիջում աղմուկ է. բանակայինները գյուղի կոմյերիտականների ու կոմյերիտուհիների հետ պար են բռնել, իսկ հասակավորները հավաքվել, նայում են։ Փոքրիկ ակումբում նույնպես աղմուկ է. բանակայինները ներկայացում պիտի տան. կանայք, յերեխաները, տղամարդիկ տեղավորվում ելին նստարանների վրա։ Մի խումբ կարմիր բանակայիններ, քաղղեկը կոլխոզի նախագահ Արամի, բիձա Ցեզորի և վարչության մի քանի անդամների հետ, մնացինք զրասենյակում, ուղեցինք ծանոթանալ «26 կոմունարների» անվան կոլխոզի պատմության ու գործունեության հետ։ Կոլխոզն իր մեջ ընդգրկում եր 114 տնտեսություն, վորը կազմում է գյուղի 60 տոկոսը, բիձա Ցեզորը, վոր միշտ ժպիտը դեմքին եր, առանձին հպարտությամբ ասաց,— մենք «ով-ումի»-ի խնդիրը լուծել ենք, ընկեր քաղղեկ։

Մենք բոլորս ծիծաղեցինք։

— Կոլխոզի մեջ հո տատանվողներ չկան, վարչությունը կազմն է, թե վոչ, կուս. բջիջը լավ է ղեկավարում...

Ցերը հարց յեղավ վարչության կազմն լինելու մասին, Ցեզոր բիձայի դեմքի ժպիտը փոխվեց և նա մի տեսակ հուզված՝ սրտի խորքից մի հոգոց հանեց ու ասաց.— Չե, տատանվող չկա, բոլորը մեզ սիրում են ու յավաշ-յավաշ դեպի մեզ են գալիս... հո ինքներդ աչքերովդ տեսաք ելի, մեր ցանքը. հալա մի ձեր տղերքից կհարցնեք, վորոնք գնացին անհատականների համար քաղ անելու, մերը... նրանցը...

Ցեվ նա դարձավ նախագահին,— Արամ, էն մեր ձեռք դրած կարմիր դավթարը տուր, թող ընկերները տեսնեն։ Նախագահը հանձնեց մի տետր, վորի պարզ ամպագույն շապիկը կիսով չափ արնոտ եր։ «Գյուղատնտեսական արտելի կազմակերպչական կանոնադրությունն» եր այդ։ Բրոշյուրի վերջին յերեսի վրա կալին արյան չոր-բացած շիթեր, վորոնց տակից հազիվ նշմարվում ելին մանիշակագույն թանաքով գրված 12 ստորագրություն։ Մենք բոլորս ուշի-ուշով նայում ելինք մերթ տետրին, մերթ բիձա Ցեզորին, վորի աչքերը լճացել ու շրթունքները դողում ելին հուզմունքից։

— Բա ես 12 ստորագրություն գնողների գլուխները մեռել են, վոր թողան կոլխոզի վրա թող իջնի՝ վոր դուշմանն ուրախանա։ Տեսավ

քյուլակներին յերեսից թե խաթրով, թե զոռով սաղ գեղը կոլեկտիվացրին, մեր ունեցած խոսն ու դարմանը կերցրինք սրանց անասուններին, վոր գարնանը լավ ցանք անենք։ Յերբ ընկեր Ստալինի հոդվածը լեկավ, քննեցինք, ինչքան մտել ելին զոռով՝ դուրս յեկան, մնաց 21 տուն։ Գյուղի կուլակները և դաշնակների թափթփուկները դուրս յեկան սարն ու սկսեցին կռվել մեզ հետ, թե՝ «գյուղում կոլխոզ անունը չպիտի ըլի»։ Գյուղացիների մի մասին սրեցին մեր դեմ 8 հոգի դուրս յեկան, մնացինք ես 13 տունը։ Ցերկու զուլդ յեղնեքին, գաշտում վար անելիս, յերբ մանկալները ճաշելիս են լինում, գյուլլեցին, մի խոսքով միշտ խանգարում ելին մեր աշխատանքը։ Ուստի խորհրդակցեցինք առ ժամանակ ցրվել ու եդպես ել արինք։ 1930 թ. մայիսի սկզբներին կուս. բջիջը քննության առավ կոլխոզի վերակազմակերպման խնդիրը։ Ցուցակագրելուց հետո յերեկոյան ունեցանք հիմնադիրների ժողով, նորից քննեցինք արտելի կանոնադրությունը։

Բանգիտ Սամվելն ու Ալեքսին այդ որը կուլակ Բալասանի թելադրանքով գյուղն ելին յեկել։ «Ելի ուզում են կոլխոզ կազմակերպել, հարկավոր է դրանց գլխավորներին բեմուրաղ անել»։ Դուրսը մութն ել, փողոցները՝ ցեխ։ Յերկու որ ել, ինչ բարակ անձրևն անդադար մաղում ել... ու են ինչ գիշեր ել։

Կանոնադրությունն ընդունելով՝ բոլոր հիմնադիրները ստորագրեցինք, Արսենին, վոր մեր նախկին կոլխոզի նախագահն ել՝ ելի ընտրեցինք նախագահ, նա չել ստորագրեց ու փեչատ բերանի գոլոշիով խոնավացրեց ու խփեց մեր ստորագրությունների տակը, նա դեռ սեղմում ել, վոր լավ տպի, այդ պահին ել՝ յերբ լուսամուտի առջև գրսից յերևաց մի ուժեղ փայլ, վորին վարկյանաբար հաջորդեց պայթունը, փշրելով լուսամուտի ապակիները։ Ընազդաբար նայեցինք դեպի լուսամուտը, կարծես սպասելով յերկրորդին։ Արամը գրկել ել Արսենին, իսկ մնացածները պայթունի հետ դուրս թափվեցին։ Արսենի խաղաղ ու հանդարտ շնչառությունը փոխվեց խռխռոցի, նրա արյունն ոձիքից թափվում ել գրասեղանի վրա։ Արամի հետ միասին կապեցինք նրա վերքը, նա արդեն թուլացել ել Արամի գրկում։

Դժբախտության լուրը կայծակի արագությամբ տարածվեց գյուղում։ գրասենյակը կամաց-կամաց լցվում ել մարդկանցով, գալիս ելին նաև կանայք։ Ցերկուսս հենարան դառնալով նրա թեքերին՝ վոտքի կանգնեցրինք, վոր կառքով բժիշկ հասցնենք, նա կցկտուր ձայնով ասաց՝ «չի ուզի»։ Նրան նստեցրինք։ Նա պահանջեց ցուցակը նորից տեսնել։ մոտեցրինք։ Նա յերկար նայելով ցուցակին, վերը թրջվել ել իր արյունով, ասաց։ «Ես ցուցակը կպատեք, լավ կպատեք, քանի դեռ կոլխոզի թշնամիները դուրս չունեն, թող բոլոր նոր ընդունվողները նայեն սրան ու իմանան...» Նա ալ-ևս ուժ չուներ շարունակելու, նրա կուրծքը վերջին անգամ ուժեղ բարձրացավ-իջավ, և նրա աչքերը հավիտյան փակվեցին։

Բանդիտներից մեկը փախել ել, իսկ Ալեքսեյին բռնեցին։ Միլիցիան ձերբակալեց հինգ հոգու, գտանք նաև յեղները սպանողներին։ Այ, թե ինչպես ենք կազմակերպել կոլխոզը։ Բա ես ցուցակին թամաշ անողը, բա Արսենին հիշողը կթողամ, վոր գուշմանը ծիծաղի մեզ վրա»։

Բիձա Յեղորը լռեց։

Բացատրեցեք յերեք կետի (...) կիրառումը։—«Թող բոլոր նոր ընդունվողները նայեն սրան ու իմանան...»։

1. Ինչպես են ոգնում կարմիր—բանակայիները կոլտնտեսություններին, չքավոր ու միջակ տնտեսություններին։

2. Սոցմրցման դերը բնրքահավաքի գործում։

3. Ինչպիսի կոլտնտեսական ել բիձա Յեղորը և ինչ թափով ել լծված նա կոլխոզի աշխատանքներին։

4. Ի՞նչ պատմություն ունի «26 կոմունարների» անվան կոլտնտեսությունը։

5. Ի՞նչ սխալներ կատարվեցին համատարած կոլեկտիվացման ժամանակ և ինչ միջոցներ ձեռք առավ կուսակցությունն այդ սխալներն ուղղելու համար։

Դիտեցեք բայի ապառնի ժամանակների դրական յեվ բացասական ձևերը։

գրելու յեմ	չեմ գրելու	կգրեմ	չեմ գրի
գրելու յես	չես գրելու	կգրես	չես գրի
գրելու յե	չի գրելու	կգրի	չի գրի
գրելու յենք	չենք գրելու	կգրենք	չենք գրի
գրելու յեք	չեք գրելու	կգրեք	չեք գրի
գրելու յեն	չեն գրելու	կգրեն	չեն գրի
պիտի գրեմ	չպիտի գրեմ	պիտի գրենք	չպիտի գրենք
պիտի գրես	չպիտի գրես	պիտի գրեք	չպիտի գրեք
պիտի գրի	չպիտի գրի	պիտի գրեն	չպիտի գրեն

Ապառնի ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն կամ յեղելություն, վոր կատարվելու յե խոսելու րոպեյից հետո։

Կ և չ ընդունված է կապած գրել, պիտի առանձին և գրվում։

34· ՁՈՉՈ ՔԱՐ

Զոչո-քար կոչվածը մի ժայռոտ և անտառապատ լեռ եր, վոր ցցվում եր կնճռոտ ձորակի ժայռին։ Այդտեղ մեղվի փեթակներ եյին պահում գյուղացիք· յերևի առաջ փարախներ են յեղել և ով գիտե՝ ինչ։ Սակայն այդ տարերը նշանավոր են նրանով, վոր այնտեղ են սպանված յեղել Հասար գյուղացի չորս հայտնի յեղբայրները··

Հասարցի չորս յեղբայրներն իրանց գյուղի ամենակարիճներն եյին։ Տուն ու տեղ եյ ունեյին։

Իսկ Դուզան գյուղում հայտնի յեր Հաբեթ աղան, վոր հարուստ մի աղա յեր, լիրը··· Փողի ուժը փորձել եր ու լրբացել··· Հաբեթ աղան փող ուներ, շատ փող· բավականին դիզել եր, տոկոսով եր տալիս, հարյուրին ամենապակասը քսան, հաճախ նույնիսկ քառասուն։ Նախ իր գյուղացոց եր սարուկ շինել, հետո մուրհակներով, գրավներով շղթայել, շրջանը մթացրել եր այնքան, վոր հասել եր Հասար գյուղը։

Գյուղացի չկար, վոր պարտք չունենար նրան· մի տարվա տոկոսներն ինձ ու իմ ընտանիքիս կապահովացներ ընդմիշտ։

Ու այսպես ընկերս սկսել եր պատմել ինքնահատուկ դառն, կծու հեգնությամբ լի, սրախոսություններով և պատկերացումներով։

— Լավ մարդ ե յեղել··· Ծիծաղեց փեսան։

— Ազդեցիկ մարդ եր,—շարունակեց ընկերս,— այնքան ազդեցիկ, վոր ահա տասնութ տարի յե նրա մեռնելը, բայց յես չեմ հանդգնել այս պատմությունը ճշտորեն պատմելու մեր գյուղում։

Գյուղ մանենք, ձեզ ցույց կտամ յեկեղեցու մոտ նրա գերեզմանը, վանդակապատ, վանդակներն ել կանաչ յուղաներկ։

Ցեվ այսպես, նա իր գրպանի և բռան մեջ եր հուպ տվել մի ամբողջ գավառ։ Իր յուղը, պանիրը, բուրդն ու հնձվորները տոկոսի տոկոսներ եյին։

Զմեռը հասարցի չորս յեղբայրներն ընտանիքներով մնում են անոթի։ Աղան ամեն կերպ աշխատում եր փողի ուժով հասցնել նրանց այդ դրության։ Խլում է տավերը, խոտը, կալի արդյունքը··· Սողոմոնի կինը կրած տանջանքներից մեռնում է։

Գարունը յերբ բացվում է, այլևս չկա վոչ յեզ, վոչ գոմեշ, վոչ սերմացու, վոչ ել փող··· Չորս յեղբայրները դառնում են որվա հացի կարոտ մարդիկ։ Ցեվ մի խորունկ զայրույթ, վառվող կատաղություն բռնկվում է մի ժամանակ մեծ, առատ տան զավակների սրտի մեջ։ Ավելացրեք դրանց վրա Հաբեթ աղայի ծաղրը, ամեն տեղ, ամեն բանում նրանց վնասները։

Վոչ, տանել չեր կարելի այլևս։ Հարկավոր եր քանդված ոջախի վրեժն առնել, գավառն ամբողջ ազատել կլանող հրեշի ձեռքից։

Մի գիշեր ել զինված իջնում են Դուզան, գտնում գյուղի գիշերապահներից մեկին, ստիպում, վոր նա մի պատրվակով բաց անել տար Հաբեթ աղի տան դուռը· ներս են մտնում և բռնում աղայի կոկորդից։

Ցեվ իրավ, ուրիշ ճար չկար· Սողոմոնը վոր ե բերում տանտիրոջ արծաթասպատ հրացանը և լսվում ե մի խուլ թնդյուն· հետո բարձրանում ե ճիչեր, աղմուկ և չորս յեղբայրները հազիվ կարողանում են իրենց դուրս նետել գյուղից, մտնել անտառները և ազատվել հետապնդումներից։

Դիտեցեք բայի հրամայականը յեվ արգելական կամ բացասական հրամայականը.

Կարդա—մի կարդա	*Մոտեցրու—մի մոտեցնի*
Գրիր—մի գրի	*Կարդացրու—մի կարդացնի*
Զարմացիր,—մի զարմանալ	*Թացրու—մի թացնի*
Մոտեցիր—մի մոտենա	*Կոտրվիր մի կոտրվի*
տես—մի տեսնի	
փախիր—մի փախնի	

Հրամայականը ցույց և տալիս, վոր խոսողն իր խոսակցին հրամայում կամ հորդորում ե մի բան անելու։ Հրամայականի վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ ե դրվում (*կարդա, գրիր, հարցրու*)։ Արգելական հրամայականի շեշտը դրվում ե *Մի*-ի վրա։

35· ՊԻՈՆԵՐ ԹԱՆԴՈՆ

I.

— *Բոլա, այ կնիկ, խեղդեցիր եդ յերեխին, մի ուշացնի, մի հետ գցի մեզ ճանապարհից· շուտով արիր կբարձրանա, շոգը կընկնի,—դարձավ Իվանեն իր կնոջ, վորը չեր կարողանում անջատվել միակ զավակից, չեր ուզում բաց թողնել նրան իր գրկից· պաչպչում եր ու արցունքներով թաց անում Թանդոյի թշերը։*

Իվանեյի ընտանիքը վաղ առավոտից վոտքի վրա յեր· ամենքն ել զբաղված եյին· տան մեջ տիրում եր արտասովոր շարժում։ Փոքրիկ Թանդոյին քաղաք ուղարկելու պատրաստություն եյին տեսնում։

— *Բարի աջողում, Իվանե՛, առավոտից վաղ ետ ուր ես հաղրվում,—հարցրեց հարևանը՝ մոտենալով ցանկապատին։*

— Գնում եմ քաղաք, տանում եմ տղիս՝ ուսումի տամ, վոր աշխարհքից յետ չմնա։ Անուսում մարդը կորած ես ես փոխված աշխարհում։ Մենակ թե տղես մարդ դառնա, լավ սովորի, կյանքս էլ չեմ խնայի։

Քիչ հետո, արդեն սայլը ճրճռալով շարժվեց դեպի քաղաք։

Քաղաքում ապրում եր Իվանելի վաղեմի բարեկամ՝ Սրապիոն Կեթիլաձեն։ Իվանեն հենց նրան էլ պահ տվեց իր վորդուն։

— Տես, Թանդիլ Ջան, չտխրես, քեզ լավ պահիր, լավ սովորիր, չարութիւն չանես։ Ցես էլ ամեն տոնի կգամ, քեզ քաղաքից գյուղ կտանեմ։

Այսպես խրատեց վերադառնալու որը հայրն իր վորդուն, տպա մի կողմ քաշելով Սրապիոնի հետ, հատուկ խնդրեց, վոր հետևի Թանդիլին, աչքը վրան պահի, հետևի մանավանդ, վոր տղան կանոնավոր հաճախի դպրոց։

II.

Քաղաքի կյանքը Թանդիլի վրա ապշեցուցիչ տպավորություն թողեց։ Առաջին անգամ եր նա տեսնում մեծ ու վիթխարի տներ, ավտոմոբիլների վազքը, մարդկանց անդադար անց ու դարձը, քաղաքի խուլ աղմուկը շշմեցրին, հոգնեցրին նրան։

Ո՞ւր գյուղը, ուր քաղաքը...

Հանդ ու արոտից, դաշտից ու անտառից հետո յերկաթե քաղաքն իր բազմատեսակ տներով և յեռ ու զեռով մի տեսակ վախ ելին ազդում նրան և Թանդոն տխուր եր, սիրտը պակասում։ Ես ինչքա՞ն մարդիկ կան, ամենքն էլ ոտաբ, ամենքն էլ անծանոթ, իսկ ինքն ընկել է եդ անծանոթ աշխարհը մենակ, վորը ու անոգնական։

Բայց շատ չանցավ, և Թանդոն այնպես ընտելացավ այս ամենին, վոր հարազատի պես սկսեց սիրել աղմկող քաղաքն իր հոյակապ տներով։ Նա յել դարձավ ընդհանուրի մի մասնիկը։

Սկզբում շատ միրելնակ եր հոսում նրա կյանքը։ դպրոցից՝ տուն, տնից՝ դպրոց։ Թանդոն ջանասեր աշակերտ եր, սովորում եր լավ։ Վո՞ւրքան եր ուրախանում, յերբ մոտենում ելին դպրոցական արձակուրդները։

Անցան ամիսներ, հեղափոխվեց Թանդոյի տաղտուկ կյանքը։ Տնեցիք նկատում ելին, թե ինչպես նա հաճախ տուավոտները սովորականից շուտ է վեր կենում և ճաշելուց հետո յել է դուրս գնում տնից։

Յերբեմն Թանդոն դպրոցից տուն եր գալիս՝ ծանրաբեռնված ինչ վոր լրագրերով, թերթում եր, կարդում, ուղղում, հուշատետրի մեջ նշանակումներ եր անում, գրում։ Մի որ էլ յեկավ թմբուկով և շատ խնդրեց, վոր առավոտը, վորքան կարելի յե շուտ զարթնեցնեն։ ընկերներով գնալու յեն եկեղեցիս։ Շատ եր վոգևորված մեր Թանդոն, և այսպիսի բոպեներին վորքան զեղեցիկ եր յերևվում նա։

Մեկ էլ տեսար Սրապիոնենց տուն յեկան Թանդոյի ընկերները, հավաքվեցին ու սկսեցին տաք-տաք վիճել զանազան խնդիրների շուրջը։ Ամբողջական կոլեկտիվի անդամներն ելին լինում հաճախ յեկողները։

... Պատվեն, լենինյան ուղի, պիկորի, պիոներ, խմբկոլ, խորհրդային կառավարություն, խորհրդային կարգեր... Հատ-հատ վորոշած այս խոսքերն ու արտահայտությունները խիստ զարմացնում ելին Սրապիոնին։

Բայց մի դեպք Սրապիոնին ավելի մեծ զարմանք պատճառեց։

Կեսոր եր։ տնեցիք նստած ելին ճաշի սեղանի շուրջը։ Մեկ էլ դուռը բացվեց ու ներս մտավ մեր Թանդիլը՝ կարճ ու կապույտ շալվարով, հագին սպիտակ բաճկոն, վզին կարմիր փողկապ։ Ներս մտավ այդ բոլորովին նոր հագուստով և ժպտաց՝ դռան մոտ կանգնած։

— Վո՞ր տեղից ես գալիս, այ տղա, եդ ինչ շոր է, ո՞վ է բախշել —հարցրեց նրան Սրապիոնը։

— Ցես արդեն պիոներ եմ, պիկորի յել եմ, —խոսեց Թանդոն քիչ լուռ մնալուց հետո։

— Ոհո, ծիծաղեց Վալիկոն։

— Պիկորին ինչ բան է, այ տղա, կամ եդ ինչ բալըշի յերես է, վոր կապել ես վզիցդ։

Այստեղ Թանդոն առանձին վոգևորությամբ սկսեց պատմել, թե ինչպես է ինքը պիոներ դարձել և ապա ընտրվել պիկորի*)։ Շատ ուրախ եր Սրապիոն Կեթիլաձեն։ նա ձեռքը դրեց Թանդոյի ուսին ու գոչեց։

— Կեցցե՛ս, Թանդիլ Ջան, գոչա՛ց։ Տեսա՞ր այ կնիկ, թե ինչ տղա դուրս յեկավ մեր Թանդիլը։ այ, սովորելն եսպես կլինի։ մի տես՝ ինչեր է արել, —շարունակում եր Սրապիոնն իր գովասանքը Թանդոյի հասցեին։

III.

Անցան ամիսներ...

Ցեկավ գարունն իր անուշաբեր բուրմունքով, յեկավ ու ջերմացրեց յերկիրը, կյանք տվեց բնության՝ բույսին, խոտին, առվակին...

*) Պիկորի—պիոներական կորեսպոնդենտ (թղթակից)։

Թանդոն պիոներական ակումբում մյուս ընկերների հետ ուշադրությամբ լսում եր իրենց ղեկավարին, վորը հրահանգում եր, թե ինչ ա շինատանքներ պետք է տանի պիոներն ամառը գյուղում։ Վերջում նա մի քանի հարցեր տվեց ղեկուցողին, վերցրեց մի շարք կարևոր գրքեր, հրաժեշտ տվեց ընկերներին և գնաց տուն, վորտեղից հոր հետ պիտի ուղևորվեր իրենց գյուղը։

Ճանապարհին Թանդոն մի առ մի թվեց հորն այն պարտականությունները, վոր կատարելու յե նա գյուղում՝ պիոներ-կազմակերպության հանձնարարությամբ։

Կիրակի յեր։ Գյուղխորհրդի ժողովից հետո խորհրդի «կանցելյար»-ից դուրս յեկան գյուղացիները և պիոներների հետ մասլահաթ անելով՝ սկսեցին ցրվել իրենց տները։

Ձեր հեռանում ստակոն սպիտակխառն մազերով ծեր Պավլեն նա տխուր, մտահոգված դեմքով կանգնել եր մի կողմ և ձեռքերը տարածած խոսում եր ինչ-վոր բանի մասին։

— Սիրտդ մի կոտրի, ա՛յ մարդ, մի՛ վախենա, ի՞նչ ես հուսահատվել — սրատանդում եյին Պավլեյին կողքին կանգնած հարևանները։

— Վո՞նց թե՝ մի՛ վախենա,— վրա բերեց Պավլեն,— մի շաբաթ եյ վոր ըսենց գնա ու անձրև չգա, մի հատիկ յեգիպտացորեն իմ տունը չի մտնի։

— Պավլե՛, ինչո՞ւ չես առու անցկացնում,— հարցրեց ներկա յեղողներից մեկը։

— Ե՜հ, եդ մասին յես եյ եմ շատ մտածել, համա վոր չի լինում, ի՞նչ անեմ, եդ բանը մեծ աշխատանք է պահանջում. հարկավոր է գետինը ցածրացնել, սարքի դցել, իսկ յես մենակ՝ իմ տկար ուժերով հո չե՞մ կարող եդ բոլորն անել։ Հարևաններիս եյ նեղություն տալ չեմ ուզում. նրաք եյ իրենց տհագին աշխատանքն ունեն։

— Մենք գլուխ կբերենք եդ գործը,— բացականչեց Թանդոն, մտնելով գյուղացիների խմբի մեջ։

Գյուղացիք զարմացական հայացք ձգեցին Թանդոյի վրա. նրանցից մեկն ուրախությունից ժպտաց մինչև անգամ։

— Դուն մենակ դես-դեն ընկի, գործիքներ ճարի։ Եգուցվանից կկանչենք քո տալի գործը և յերկու որվա մեջ ենպես մի առու պատրաստենք, վոր նրա առատ ջրով արտդ կանտչի, ծովի պես ծփծփա, Պավլե՛ ապի։

Հետևյալ որը Պավլեյի արտում պիոներները Թանդոյի ղեկավարությամբ արտդ թափով աշխատում եյին և հետո եյ ուրախ յերգեր յերգում։

1. Ի՞նչ տպավորություն թողեց քաղաքը Թանդոյի վրա։
2. Ի՞նչ պայմաններում և հեղաշրջում կատարվում Թանդոյի մեջ։
3. Ի՞նչ հասարակական աշխատանքների յե մասնակցում Թանդոն։
4. Գյուղ գնալիս ի՞նչ հանձնարարություններ են տրվում Թանդոյին՝ պիոներ կազմակերպության կողմից։
5. Ո՞վ եր Պավլեն և ի՞նչ ոգնություն ցույց տվին նրան պիոներները՝ Թանդոյի ղեկավարությամբ. նկարագրեցեք պիոներ Թանդոյի աշխատասիրությունը, ձեռներեցությունը ու նրա հասարակական աշխատանքները։

---

36. ԽԱՐՈՒՅԿԻ ՄՈՏ

Ամարային պարզկա գիշեր եր։

Պիոներական ճամբարը քուն եր մտել։ Բազմաթիվ ցիր ու ցան յեղած աստղերի արանքից ժպտում եր վոսկելույս լուսինը։

Ճամբարի մոտ խարույկ եր վառվում։ Խարույկի ծուխը վոլորվելով բարձրանում ու ձուլվում եր յերեկոյան գորշ խավարին։ Խարույկի շուրջը բոլորել եյին Մեխակն ու Հովիկը։ Նրանք գիշերային պահակներ եյին։ Վորպեսզի գիշերն անցնի, նրանք պատմում եյին իրենց կյանքից այս կամ այն դեպքը։

Մեխակը վերջացրել եր, հերթը Հովիկինն եր։

*
* *

— «Մութ գիշեր եր,— այսպես սկսեց նա իր պատմությունը,— լուսինը վաղուց թաքնվել եր լեռների թիկունքում։ Ամբողջ գյուղը վաղուց արդեն քնել եր, վոր մենք ժողովը վերջացրինք։ Ընկերներս մոտիկ եյին ապրում, իսկ յես հեռու։ Մեն-մենակ բավական ճանապարհ ունեյին գնալու։

Գյուղը քուն մտավ, մրափում եր։ Ձայն, ծպտուն չեր լսվում, միայն քամուց որորվող բարդիների տերևներն եյին խշշալով աղմկում։ Անցել եյի մեկ փողոց, են է՝ ուզում եյի ծռվել մյուսը, վոր մոտակա տնից մեկում ականջիս ձայների շշուկներ հասան։ Մթության մեջ հազիվ ջոկեցի Ծատուրանց տունը։ Ձայներն այնտեղից եյին լսվում։ Հետաքրքրությունս շարժվեց։ Մոտեցա չթափածածկ պատուհանին։ Վոչինչ չեր յերևում։ Վերջը մի փոքրիկ արանք գտա։ Նայեցի, տեսնեմ թախտի վրա, գունավոր մինդարներին ծալապատիկ նստել եյին Ծատուրն ու Սարիբեգը։ Ես յերկուսն է դուլակներ եյին։ Նրանցից մի քայլ հեռու, սեղանի մի ափին, նստել եր նախկին սուդիա Արշակը, մյուս ափին եյ՝ Տեր-Մարուքը։

— Պետք ա դրա գլխին ոյին խաղալ, մեկ եյ տեսար մեզ եյ կազեթ գցեց, են վախան տրի ու եշը ցեխից հանի,— խոսեց Ծա-

տուրը, լիք թշերն ավելի ուռցնելով ու յերկար բեղերի ծայրերը վոլորելով։

— Ադա՛, Ալեքը հիշո՞ւմ չեք, ինչ եր։ փսլնքոտ հոտաղ, ով եր նրան մարդ ասողը։ Իսկ հիմի ինչ գնաց կարմիր բանակ, թագա շորեր հագավ, գրաճանաչ դառավ··· — խոսեց Տեր-Մարուքը։

— Հա, ե՛··· եղ ասա, ե՛··· — ճպճպացրեց աչքերը նախկին սուդիա Արշակը։

Լեղուս կծեցի։ Ալեքը մեր գյուղխորհրդի նախագահն եր։ Ես վոր իմացա, վազեցի Ալեքի մոտ։ Քնած եր։ արթնացրի։ Ամեն ինչ պատմեցի։ Նա ժպտաց, համբուրեց ճակատս և ասաց, վոր հանգիստ գնամ քնելու։

*
* *

Անցավ մի շաբաթ։

Ալեքն իրիկնապահին քաղաքի ճանապարհը բռնեց։

Հենց եղ գիշեր, Ալեքի գնալուց հետո, Ծատուրանց տան մոտով անցնելի վոտքերի ձայն լսեցի։ Ցես կծկվեցի պատի տակ, աթթարի դեզի կողքին։ Ծատուրանց դուռը ճռռաց։ դուրս յեկան ինքը՝ Ծատուրը, մեկ էլ Սարիբեգը։ Զորս կողմը մութ խավար եր։ Ինձ չտեսան։

— Ալեքը ճանապարհի կեսը կտրած կլինի։ Շուտ, ձիերը···

— Թող կարի, ճամբի կեսին էլ մենք իրեն կկտրենք··· արյունթաթախ դեսին կփռենք··· ա՛յ, են վախտը թող ինձ կաղեթ գցի, — քմծիծաղ տալով վերջացրեց իր խոսքը Ծատուրը։

— Հա, ե՛··· եղ ասա, ե՛··· — դռան արանքից լսվեց Արշակի նվազ ձայնը։

Մի քիչ հետո յերկու ձի առաջ վազեցին, իրենց հետ տանելով Ծատուրին ու Սարիբեգին։

Ցես թռա բՀՀի քարտուղարի մոտ։ Հետո վազեցի գյուղխորհրդի դռանը — ձիերի յետևից։ Մեր ձիերը ճանապարհ ընկան, իրենց յետևից բարձրացնելով դորշ փոշի։ Մեր բախտից ամպերի արանքից լուսինը յերևաց։ Հինդ հոգի եյինք։ Արագացրինք ձիերի վազքը։ Հասանք տեղ։ Ալեքին գետին գցած խեղդում եյին Ծատուրն ու Սարիբեգը։ Մենք վրա հասանք։ Սկսվեց կռիվը։ Մի հինգ րոպե հետո՝ յերկու չարագործները կապկպված, գլուխները կախ, քայլում եյին յետ — դեպի գյուղ։ Զմեռվա մութ գիշերից ավելի մռայլ եյին նրանց դեմքերը։

Նրանց յետևից հանգիստ, համաչափ գոփյուններով մեր ձիերն եյին առաջանում։

Ցերկրորդ որն ամբողջ գյուղը հավաքվեց ակումբ։ Դատում եյին Ծատուրին, Սարիբեգին, նախկին սուդիա Արշակին ու Տեր-Մարուքին։

*
* *

Լուսինն արդեն մայր եք մտել, իսկ խորուչկը շարունակում եր ծխալ, յերբ Հովիկը վերջացրեց պատմությունը։

---

1. Ովքե՞ր եյին Ծատուրն ու Սարիբեգը, գյուղի վոր խավին եյին պատկանում նրանք։
2. Ինչու՞ համար նրանք հարձակվեցին Ալեքի վրա։
3. Ի՞նչ ձևով և պայքարում պիոներ Հովիկը դասակարգային թշնամու դեմ և ինչպե՞ս և ազատում նա գյուղխորհրդի նախագահին։
4. Բնութագրեցեք պիոներ Հովիկին։
5. Ինչպե՞ս պետք է աշխատեն պիոներները և պայքարեն դասակարգային թշնամու դեմ։

Պիոներ Թանդոյին գրավոր յեվ բանավոր կերպով համեմատեցեք Հովիկի յեվ Մեխակի հետ։

Լրացրեք հետեվյալ ցանկը

Կարդալ չկարդալ	կարդում եմ չեմ կարդում	կարդացի չկարդացի	կարդացել եմ չեմ կարդացել	կարդա մի կարդա
(չ) գրել	»	»	»	»
(չ) զարմանալ	»	»	»	»
(չ) մոտենալ	»	»	»	»
(չ) տեսնել	»	»	»	»
(չ) փախչել	»	»	»	»
(չ) կոտրատել	»	»	»	»
(չ) խոսեցնել	»	»	»	»
(չ) կարդացնել	»	»	»	»
(չ) հարցնել	»	»	»	»
(չ) ծեծվել	»	»	»	»

37· ԿԱՐՄԻՐ ՈՐԻՆ

Կարմիր որին, կանանց սոնին
Մեր յերթն ուղղենք դեպ գործարան,
Ուր յերգում են, կպած գործին,
Կարմիր կապած աղջիկ ու կին։

Բանվոր կանայք առավոտից,
Չեն հեռանում մեքենայից,
Տղամարդկանց հետ հավասար
Գայքարում են նորի համար։

Մեր նոր կյանքի դռներն են բաց
Աշխատավոր կանանց համար,
Ու կին, աղջիկ, գործին ձուլված
Նորն են կառում նորի համար։

---

1. Աշխատավոր կանանց դրությունը սեղ մոա և կապիտալիստական յերկրներում։
2. Կանանց սոնի նշանակությունը։
3. Կանանց ակտիվ մասնակցությունը և նրանց լայն ներգրավումը սոցիալիստական շինարարության ասպարեզում։

38· ՍԱԹՈՆ

Սաթոն Կոտայքի գյուղերից Յերևան գալով՝ վարձվեց մի խոշոր դարձյին ծառայողի ընտանիքում։ Ջահել աղջիկեր, մազերը գզգզված, շորերից ծլանգները կախ։ Խիստ հայացք ուներ, բայց ներքուստ հանդարտ եր, բարի։

Ծառայողի ընտանիքը բավականին խստապահանջ մարդիկ եյին։ Բավական եյ շատավոր։ Ինքը՝ տեխնիկ Սմբատյանը, կինը՝ «տիկին Աննան», աղջիկները, մեծ ու կրտսեր և փոքրիկ Կոլյան։

Հյուրեր շատ եյին լինում և հաճախ այնպես, որ Սաթոն հենց սկզբից գործից աչք չեր բաց անում։

Առավոտը վաղ կոշիկներ սրբել, թեյ պատրաստել, գնալ հացի հերթի, գնալ բանկոոպ, շուկա՝ մթերքի։ Ապա սենյակներ մաքրել, ճաշին հսկել, ամեն լվալ, հետո ելի թեյ, ընթրիք··· Հյուրեր յեկած ժամանակ ել մինչև կեսգիշեր սպասել, որ ընթրիքը վերջանա, հյուրերը գնան···

Այս անտանելի յեր Սաթոյի համար։ Նա, որ սովորել եր գյուղում հավերի հետ քնել, աքլորի հետ զարթնել, նստում եր խոհանոցում և գլխով «տանձ կշռում»։

— Քնում ես, ինչպե՞ս կարելի յե, աչքդ վրա պահի,— գոռում և տիկինը։

Սաթոն վեր և թռչում, ամոթխած ժպտում և աչքերը տրորելով ու թեյ և պատրաստում։

Կեսգիշերն անց և, հավերը խոսում են արդեն։

«Տնաշենները լե՞ր են քնում»— մրթմրթում և քնաթաթախ Սաթոն և կոնատակը քորում։

Սաթոն ձեռքը կոնատակին քնում և և գլուխը կշռում, վեր թռչում, կրկին քնում։

Այսպես ծանր եր գիշերը։ Իսկ ցերեկները վոչինչ, տանում և։ Սիրում և գործ անել։ Առողջ և, յեռանդուն, բարեխիղճ։

Մի անգամ, փողոց գնացած ժամանակ, ուշացավ։ Տիկին Աննան խիստ հարդ ի տանեց·

— Փողոցներում ի՞նչ բան ունես։ Գործդ տանն և, յեկ տուն։

Յեվ Սաթոն մնում եր տանը՝ անգամ այն ժամանակ, յերբ մի ժամ պարապ եր։

Այն ժամանակ ել զբաղեցնում եր փոքրիկ Կոլյային, վոր նրան ձի արած, նստում եր վզին, ստիպում իրեն ման ածել պատրաստամբում։

Մի ուրիշ անգամ ել Սաթոն հրաման ուզեց ժողով գնալու։

— Ո՞վ սովորեցրեց տեղը,—գոչեց տիկին Աննան, կարծես հանցանք եր գործել։

— Ծանոթ աղջկերքը։

— Ծանոթ աղջկերքը թող իրենք գնան։

Յերբ Սմբատյանը յեկավ տուն և ուզեց ծխախոտ բերել տալ, ասացին, վոր Սաթոն ժողով և գնացել։

— Աչքներս լո՞ւս,—մրթմրթաց Սմբատյանը,— հը՛մ, հը՛մ···

— Մենք նատենք տանը, քոծը ժողով գնա, նկատեց մեծ աղջիկը և քմիծիծաղ տվեց։

— Ժողովը դեռ վոչինչ, յեթե դուրսը նոր բան-ման չսովորի···

Վերջապես Սաթոն յեկավ։ Նա լուրջ եր, կենտրոնացած։ Պատշգամբից բարձրացավ թե չե՝ տիկին Աննան հարձակվեց վրան։

— Ինչու՞ ուշացար։

— Զեկուցում կար։

— Բա մեր ջուրը, հացը, լվա՞ցքը։

— Յես ի՞նչ անեմ, սպասիր՝ կբլի։ Բա ժողով չգնա՞մ։

— Ի՞նչ անեմ ժողովդ։

— Եդ ա· ուզում ես՝ ուզի, ուզում ես՝ չե։

— Չեմ ուզում. եգուց գնա իմ տանից։

— Շատ լավ,—ասաց Սաթոն հանդարտ և սկսեց իր գործը, կարծես բանի տեղ չդնելով սպառնալիքը։

Խլեց խոշոր վեդրոները և պատշգամբը դմբդմբացնելով վազեց Ջրի։ Շուտով կարմրած, առուլդ, հևալով յետ դարձավ, ջուրը կաթկըթեցնելով։ Ապա վազեց հացի և մի տասը բոպելից բերեց լավ

թխած անուշահոտ հացի բոքոնը։ Մեռած տունը լցրեց ախորժ աշխուժով, դաղարած կյանքը յեկավ, լցվեց տունը։ Մի փոքր անց՝ յերեկոն տրդեն քաղցը սկսում եր հալվել դուրսը, բակում, սենյակում։

Ամեն ինչ խաղաղվեց։ Ելեկտրական լույսը վոսկեգոծեց թեյասեղանն ու շուրջը շարված Սմբատյանի ընտանիքը։ Թեյի թարմ բուրմունքը մլլում եր ոդի մեջ՝ հացի ճոտի հետ։ Տրամադրությունները բացվեց։ Մոռացան Սաթոյի արարմունքը, և ատելության փուշը կորվեց մի առ ժամ։

---

1. Ինչու Սաթոյի համար քաղաքի աշխատանքները տարորինակ եյին թվում.

2. Ինչ վերաբերմունք եյին ցույց տալիս Սմբատյանի ընտանիքի անդամները Սաթոյին։

3. Ինչպե՞ս Սաթոյի մեջ բեկում առաջացավ։

ՏԵՂԵԿԱՆՔ

Բառերը կազմությամբ լինում են՝ պարզ, բարդ, ածանցավոր։

Պարզ բառեր—դաս, կարգ, ձեռ, գիր։

Բարդ բառերը կազմվում են պարզ բառերից. որինակ՝ դասակարգ, ժամանակամիջոց, յեռաձեռաց (յեռ և մեռաց բառերից)։

Ծանոթություն.—«ա»-ն, վորով կապվում են բարդ բառի բաղադրիչ բառերը, կոչվում է հոդակապ. որինակ՝ դաս+Ա+կարգ, ձեռ+Ա+գիր բառերի մեջ «Ա»-ն հոդակապ է։

Ածանցավոր բառերն ունեն ածանց, այսինքն՝ բառի վրա ավելացրած մի մասնիկ, վորը ջոկ իբրև բառ չի գործածվում, ուրեմն և իմաստ չունի։ Որինակ.—յեռաձեռաց+ություն, դասակարգ+ային, կուլտուր+ական, պարտ+ավոր+ություն, ան+կուլտուր+ական+ություն բառերի մեջ «ություն», «ային», «ական», «ավոր», «ան» մասնիկներն ածանցներ են։

Գտիր այս հոդվածի մեջ պարզ, բարդ և ածանցավոր բառեր։

---

39. ԽՈՀԱՆՈՑ-ԳՈՐԾԱՐԱՆ

Խոշոր քաղաքներում այժմ կան խոհանոց-գործարաններ, վորոնք որական մի քանի հազար ճաշ են պատրաստում։ Բազմահարկ տան բակն ամբողջ որը մտնում ու դուրս են գալիս բեռնատար ավտոներ՝ մթերքներով բարձած։ Խոհանոցը մեքենայացած է.—մեքենաներն են կերակուրը յեփում, բաժանում, ամանները լվանում, խնձորն ու կարտոֆիլը կճպում, մրգերի միջուկները հանում։ Այստեղ շոգին է յեռացնում, դրա համար էլ վոչ ծուխ է լինում, վոչ մուր։

Գատրաստի ճաշը մեքենան վեր է բարձրացնում սեղանատան՝ վորտեղից հեռախոսով պահանջում են՝ ում ինչ պետք է։

Կեղտոտ ամանները մեքենայով ներքև են իջեցնում, լցնում են տաք ջրով լիքը տաշտերի մեջ, ապա անցնում է չորանոց և մի բոպե չանցած՝ նորից վերև բարձրանում։

Գործարանն ունի նաև խանութ, վորտեղից կարելի յե վերցնել պատրաստի մթերքներ—կատլետ, մաքրած կարտոֆիլ, տրորած գազար և այլն։

Խոհանոց-գործարանը պատրաստի ճաշ է թողնում տները։ Սրա համար կան հատուկ խոհանոց-սայլակներ։

Պետք է այսպիսի խոհանոցներ ու սայլակներ կառուցել մեծ քաղաքներում, գործարաններին, կոլտնտեսություններին ու խորհտնտեսություններին կից և կնոջն ազատել սենդի հետ կապված մանր-մունը հոգսերից։

---

1. Ի՞նչ նշանակություն ունի մեր բանվորների ու աշխատավորության և կանանց կենցաղը բարելավելու տեսակետից խոհանոց-գործարանը։

2. Ինչպիսի՞ վայրերում կան այդպիսի խոհանոց-գործարաններ։

---

40. ԼԵՆՏԵՔՍՏԻԼԻ ԲԱՆՇԵՆՈՒՄ

— Ահա և մեր տունը,—ընկերուհու հետ սենյակի դռնից ներս մտնելով՝ ասաց տեքստիլ գործարանի բանվորուհի Հայկուշը։

— Ոհո՛, ասա՝ կարգին պալատի պես շենքում ես ապրում, ելի։

— Հապա, Սիրվարդ, չես կարող լերևակայել, թե վորքան եմ ուրախացել նոր սենյակ ստանալու համար։ Այս շենքի մեջ ամեն հարմարություն կա։ Ամեն անգամ վոր սենյակիս ելեկտրական լամպը վառում եմ, սիրտս վառավորվում է, սենյակիս պատերը կարծես ծլծլաղում են դեմքիս։ Մանավանդ լերբ աշխատանքից հոգնած գալիս եմ, մտնում բաղնիքն ու հանգիստ լողանում եմ ինձ համար։

— Բաղնիքն ել շենքի մեջն է, Հայկուշ,—հարցրեց ընկերուհին։

— Իհարկե, հենց սենյակիս մոտ։ Լերբ ուզում ես՝ լողացիր, լերբ ուզում ես՝ լվացք արա։

— Իսկապես վոր շատ լավ է։

— Հապա մի պատուհաններին նայի՛ր։ Ամեն առավոտ արևը ծագում է թե չէ, առաջին հերթին իմ դեմքն է համբուրում. իմ

մազերը շոյում... Ա՛խ, ի՞նչքան լավ բան է արևը, ի՞նչքան լավ է արևոտ ու չոր սենյակում ապրել։

— Նոր գիտես, Հայկուշ։ արևը կյանքի աղբյուր է։ առանց արևի վոչ մի կյանք լինել չի կարող։

— Դրա համար էլ հայրս մեռավ առանց արևի։ այն ժամանակ դառն էր կյանքը, Սիբվարդ։ մենք՝ հայրս, մայրս ու յես, ապրում էինք գետնափոր մի տնակի մեջ։ Մեր անկողինները խոնավությունից միշտ թաց էլին լինում, իսկ արևը յերբեք իր բարի հայացքը չէր ուղղում մեր տնակին։ Մեր տնակը մութ էր գերեզմանի պես ու խոնավ։ Հայրս հիվանդացավ այդ գետնափոր տան մեջ, հիվանդացավ ու մեռավ։ Այն ժամանակ յես 10 տարեկան էլի։ Տարիներ անցան, ամեն ինչ փոխվեց։ Այժմ վոչ միայն յես, այլ այս շենքի բոլոր սենյակներում ապրում են մեր գործարանի բանվորներն ու նրանց բնտանիքները։ Բոլոր սենյակներն էլ լուսավոր են, մեծ-մեծ պատուհաններով, չոր։ բոլորն էլ ունեն իրենց հարմարությունները։

— Իսկ խոհանոց։

— Յուրաքանչյուր տնվոր, իհարկե, ունի իր խոհանոցը։ Յես էլ ունեմ, բայց քիչ եմ գործածում։ Շենքի ներքևի մասում ճաշարան ունենք, վորտեղից եժան գնով և լավ վորակի ճաշ ենք ստանում։ Դեռ շատ ուրիշ հարմարություններ ունի շենքը, վորոնցից ոգտվելու կարիք չունեմ յես առայժմ։

— Այդ ի՞նչ հարմարություններ են, վորոնցից ոգտվելու կարիք չունես դու։

Այ, որինակ, շենքի մի մասում տեղավորված է մանկական մասուրը, վորտեղ պահվում են բանվորուհիների յերեխաները, յերբ նրանք աշխատանքի յեն գնում։ իսկ յես առայժմ չեմ ոգտվում, վորովհետև յերեխա չունեմ,— ժպտալով ասաց Հայկուշը։

— Լավ, դե ինչ վոր պիտի վերցնես, վերցրու գնանք, հիմա ժողովը կսկսվի,— տեղից վեր կենալով դիմեց ընկերուհին։

— Յես պատրաստ եմ։ գնանք։

Նրանք դուրս յեկան սենյակից։

---

1. Ի՞նչ պայմաններում էլին ապրում Հայկուշի ծնողները, և ինչու՞ նրա հայրը մահացավ։

2. Ինչպե՞ս լավացան Հայկուշի բնակարանային պայմանները և ո՞ւմ միջոցով։

3. Ի՞նչպիսի պայմաններում էլին ապրում բանվորները Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ։

4. Ինչպիսի՞ բնակարանային պայմաններ է ստեղծվում բանվորների համար Հոկտեմբերից հետո։

5. Բնակարանային շինարարության դերը բանվորների կենցաղային դրության բարելավման գործում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Պատմեցեք բանվորուհի Հայկուշի կյանքն անցյալում և խորհրդայնացումից հետո—վոչ իր կողմից, այլ հեղինակի։

---

41. ՇՈՒՇԱՆԻ ԽՐՃԻԹՈՒՄ

1.

Շուշանը հիվանդ կուչ եր յեկել իրենց տան անկյունում։ Այդ տուն կոչվածը մի բավական մեծ խրճիթ եր, վոր յերբեմն տիրող կթան կովերի համար գոմի տեղ եր ծառայում։ Պատերն այնքան խոնավ էլին, վոր քիչ եր մնում ջուր կաթեր։ Մի հատիկ լուսամուտի չորս ապակիներից յերկուսը կոտրված էլին, և տեղը թղթեր էլին կպցրած։

Ներսն այնքան մութ եր, վոր որվա լուսից մտնողը պետք է մի քանի րոպե սպասեր, վոր բան տեսներ։ Սակայն դրսից լույսը մտնելուն քիչ չէլին ոգնում և դռան տախտակները, վորոնք մի-մի մատ հեռացել էլին իրարից։

Դռան այդ արանքներից լույսը դրսից յերկայն գծեր եր շպրտում մինչև դիմացի պատը։

Աշուն եր։ Ցուրտ քամին շխշխկացնելով շարժում եր դուռը և սվսվալով ներս եր մտնում նրա արանքներից։

Լուսամուտին կպցրած թղթերն ուռչում, փքվում էլին դեպի ներս, դողում-դողդողում էլին և ապա հանկարծ դեպի դուրս փլբխվում շառաչյունով։

Շուշանն ամբողջ մարմնով դողալով կուչ եր յեկել հին լաթերի վրա և վերմակի նմանություն ունեցող մի ինչ-վոր բան եր վրան առել։ Նա տնքում եր, և քամու կատաղի ձայների մեջ հազիվ եր լսվում նրա տնքոցի ձայնը։ Յերեխաները, մեկը՝ յերկու, մյուսը՝ յերեք տարեկան, ծալապատիկ նստած էլին խոնավ գետնին փռված մի հնամաշ կարպետի վրա և գլխով-վոտով ծածկվել էլին հազար ու մի ծակուծուկ ունեցող մի հին, դեղնած յափունջու տակ։

Այդ յափունջին թուխս նստած հավի դեր եր կատարում, իսկ նրա տակը ցրտից պատսպարված յերեխաները ճուտերի էլին նման։

Տեղը տաք եր, և նրանք խաղում էլին իրար հետ։ յափունջու տակից լսվում էլին անհոգ քչփչոցի և յերբեմն ծիծաղի ձայներ։

Քամու կատաղի փչած ժամանակ, յերբ դուռը սովորականից ավելի յեր չխչխկում, նրանք հանկարծ գլուխներից յետ ելին քաշում յափնջու ծայրը, նայում ելին դռանը մի այնպիսի հայացքով, վոր կարծես թե մարդու ելին սպասում և, տեսնելով վոր վոչվոք չկա, ցրտից սարսռելով յափնջին նորից գլուխներն ելին քաշում և շարունակում իրենց յերեխայական քչփչոցը։

Դուռը բացվեց և շտապով ներս մտավ վոտաբոբիկ, գլխաբաց, գզգզված մազերով վեցից-յոթ տարեկան մի աղջիկ։ Սառը քամին խանձել եր նրա դեմքը։ մերկ վոտները կապտել ելին։ Շալակին մի տոպրակ ուներ։ Մի վոտը գետնին դիմհար տալով, ցրտից սառած ձեռքերով հաղիվ նա կարողացավ քամու ուժգին հոսանքի դեմ յետ դնել դուռը։

Յափնջին նորից շարժվեց, և յերկու փոքրիկներն ուրախական ծղրտոցով վողջունեցին իրենց քրոջ գալուստը։

Նույն րոպեին յափնջին մի կողմը թռավ, և արդեն վոտի վրա ելին յերկու գրեթե մերկ յերեխաներ՝ ուրախ, յերջանիկ դեմքով։ Ցուրտը մոռացան նրանք, վորովհետև հացի հոտ առան։

— Վայ ջանս-մանս, Սոնեն հաց ե բերել, — ուրախությունից պար յեկավ մեծը։

— Վայ ջանս-մանս, Սոնեն հաց ե բերել։— կապկի պես կրկնեց փոքրիկը։

Սոնեն, դուռը փակելուց հետո, արագությամբ մոտեցավ անկողնում պառկած հիվանդ մորը և տոպրակը շալակից վայր բերեց։

— Ա՛յ, հաց ել տվին, պանիր ել,— ասաց նա այնպիսի ուրախությամբ, վոր կարծես թե շալակով վոսկի յեր բերել։

Բայց և այնպես նրա տոտները ցրտից զարկվում ելին իրար։

Մայրը տանջալից հայացքով նայեց նրան։

— Տուր այդ յերեխաներին ուտեն,— ասաց նա։

Բայց Սոնեն կամեցավ նախ տաքացնել ցրտից սառած ձեռները։ Յեվ, մինչդեռ նա մղկտացող տասը մատը կպցրել եր շրթունքներին և բերնի գոլորշին արտաշնչում եր նրանց վրա, յերեխաները հափշտակեցին նրա վոտների առաջ դրված տոպրակը և հավաքական ուժով քարշ տվին դեպի իրենց յափնջին։ Քույրը կատվի արագությամբ թռավ նրանց յետևից և դեռ կիսաճանապարհին պինդ փամփաչեց յերկուսի գլխին։ Հարվածը յերևի սաստիկ եր, վոր ամենափոքրիկը բարձրաձայն սկսեց լաց լինել։ Նրանից մեծն ել պոռչ արեց, բայց դպպեց իրեն։

Սոնեն տոպրակը տարավ դրեց կարպետի վրա, ծալապատիկ նստեց առաջը և տոպրակի բերանը բաց արեց։

Տոպրակը կիսով չափ լիքն եր հացի չոր կտորներով, և յերեսին պանրի փշրանք եր թափված։ Լաց յեղող յերեխան լռեց և մյուսի հետ գնաց նստեց տոպրակի առաջ։

— Ջեռը չտաք,— ասաց քույրը և վեր կացավ, վոր թարեքից մի ման վերցնի պանրի փշրանքը մեջն ածելու։

Բայց քաղցած յերեխաները չլսեցին։ հազիվ քույրը մի յերկու քայլ եր արել, վոր նրանք ձեռները կոխեցին տոպրակը և յուրաքանչյուրը թռցրեց հացի առանձին պատառած պատառը։ Սոնեն այս անգամ ել կամեցավ վրա հասնել, բայց արդեն ուշ եր։ յերեխաներից մեկը մի անկյուն թռավ, մյուսը՝ մի, և յուրաքանչյուրն ագահաբար կրծում եր իր հափշտակած վորսը։

2.

Յերբ նրանք կշտացրին իրենց քաղցած փորը, նորից մտան յափնջու տակ։ Նրանք դոհ ելին իրենց վիճակից։ փորները կուշտ եր։ ել ինչ եր հարկավոր։

Յեվ նրանք ուրախ-զվարթ քչփչում ելին իրենց միայն հասկանալի բաներ։

Այն ինչ աշնանային կարճատև որն արագապես մթնում եր, և առանց այն ել մութ խրճիթը թաղվում եր մթության մեջ։ Դռան տախտակների արանքից ներս թափանցող լույսի շերտերն այժմ հաղիվ ելին նշմարվում։ Որը տարածամելու հետ քամին կարծես ավելի սաստկանում եր և սպառնում եր լուսամուտի թուղթը պատռելով ներս խուժել ամբողջ թափով։

— Աղջի,—կանչեց Շուշանը։

Սոնեն գլուխը հանեց յափնջու տակից։

— Վեր կաց, ճրագը վառիր։

Ցրտից սարսռելով Սոնեն վեր կացավ իր տաք տեղից, վառեց թարեքի վրա դրած փոքրիկ լամպը և վազելով նորից մտավ յափնջու տակ։ Լամպն այնքան լույս չեր տրձակում, վորքան ծուխ, վորովհետև ապակին կիսով չափ կտրված եր։ ծուխը հատատ շերտերով լիզել եր նրա պատերը, և այժմ այդ շերտերի վրա նոր շերտեր եր ավելացնում։

Յափնջու տակ քչփչոցի ձայները շարունակվում ելին։ ամենից շատ լսվում եր քրոջ ձայնը։ ինչպես յերևում եր, նա հեքիաթ եր պատմում։ Բայց այդ քչփչոցի ձայները շուտով տեղի տվին հորանջումների։ Սոնեն նորից դուրս յեկավ յափնջու տակից, հայտնի չե վորտեղից, քաշ տվեց մի փոքրիկ, ներքնակ ու վերմակ, անկողին

պատրաստեց, վորի վրա կուչ յեկան յերեքը միասին, վերմակն ու լավնջին վրաներն առան ու նույն րոպելին եկ քնեցին։

---

1. Ինչպիսի դրության մեջ եր ապրում Շուշանն իր յերեխաներով.
2. Ո՞վ եր կերակրում Շուշանին և նրա յերեխաներին և ինչպիսի միջոցներով.
3. Կին աշխատավորուհու դրությունն առաջ և հիմա։

ՏԵՂԵԿԱՆՔ

Հնչյունները լինում են՝ ձայնավոր յեվ բաղաձայն։

Ձայնավոր հնչյուններն են՝ ա, ե, ը, ի, ո, ու։

Բաղաձայններն են՝ բ, գ, դ, ղ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ։

Ցերը «յ»-ն դրվում է վորևե ձայնավորի սկզբին կամ վերջին և այդ ձայնավորի հետ միասին է արտաբերվում, ստացվում և յերկձայն։

Ցերկձայն են՝ այ—յա, ոյ—յո, ույ—յու, եյ—յե, յի—յը։

— Բացատրեցեք՝ վորաՆղ և «ա»-ից և «ու»-ից առաջ ատորակետ դրված և ինչու։

— Գտեք առաջին տաս տողի բաղաձայնները, ձայնավորները ու յերկձայնները։

---

42. ԴԵՊԻ ՄՈՍԿՎԱ

Գարնանամուտ եր։ Ջնհալ։ Ցուրտ անձրևը շարունակ շրրըպալով ծեծում եր թիթեղածածկ տանիքները, փողոցները և տավակներ կազմելով, խոխոջելով առաջ եր վազում։ Անձրևի կաթիլներն տպակիների վրա միորինակ տաղտկահնչյուն յերգում եյին։ Լայնարձակ դաշտի սրտից ձյան սպիտակ տավանն իր փեշերն եր քաշում, խոնավ հողի սրտից դլուխ բարձրացրած կանաչները ըղանում եյին հորդառատ անձրևի տակ։ Փողոցներից վազող տավակները միանալով իրար՝ թափվում եյին քաղաքի միջից անցնող գետակի մեջ, վորը գարնան այդ որերին փրփուր հադած, բեռնատպատ ափերը լիզելով, ոձագալար վշշալով՝ սրընթաց առաջ եր վազում։ Որերը տաքանում եյին։ Գարնան հրավառ արևը կապույտ յերկրակամարից իր վոսկեշողերի պայծառ խուրձերն եր թափում դաշտի ու քաղաքի վրա։ Կանաչների վրա նստած ցողի կաթիլները շողշողում եյին հրավառ արևի շողերի տակ, վորպես բյուրավոր ադամանդներ։ Խոնավ գետնից բարձրանում եր գոլորշին ու դաշտը մշուշվում եր։

Գործարանն ապրում եր արտասովոր որեր։ Մոտենում եր գործարանի հիմնադրման չորրորդ տարեդարձը։ Գործարանային կոմսոմոլը, դիրեկցիան, գործարկոմները տենդորեն պատրաստվում եյին շքեղ դիմավորել չորրորդ տարեդարձին։ Թափով դառնում եյին անիվները, փոկերն ոձագալար պտտվում եյին, իլիկները քաղցրակարկաչ յերգով փաթաթում եյին հոսող թելը։ Մակուլկներն աշխուժ ցատկոտում եյին, համաչափ զարկերի տակ հոսում, հյուսվում եր ճերմակաթել կտավը։

Մայիսյան լայնարաչ առավոտ եր։ Շչակների կանչերը տարածվեցին քաղաքի վրա։ Սպիտակավառ ամպերը բարդվեցին կապույտի մեջ։ Ցերկաշունչ յերգը քաղաքն որորեց։ փողոցներում գոփեցին հազարավոր մարդիկ... Արևի սկավառակը վեր սահեց կապույտի մեջ թաղված տարերի ուսից։ Վոսկե խուրձեր իջան դաշտի ու քաղաքի վրա։ Ողի մեջ կախված եր մի անուշ թարմություն։ Քաղաքի փողոցներով դեպ գործարան տանող խճուղով սկսեց հոսել հետաքրքրվող մասսան... Գործարանի բակում, բարձրակատար բարդիների տակ, կարմիր բանակալիներն ու կարմիր լաչակավոր բանվորուհիները շուրջպարի բռնած թռչում եյին... Հայացքները հանդիպում եյին իրար։ Խնդության ժպիտն եր տարածվում դեմքերին։ Ավյունը հորդում եր յերակներում ու նորից տաքանում եր պարը։ Կապույտ խալաթավորների իրաններն եյին ճոճվում, վեր-վեր եյին թռչում լիքը դեմքով բանակալինները։ Հետաքրքրվող մասսան ողակել եր պարողներին։ Ամենքի դեմքին ժպիտ կար, խնդության ժպիտ։ Արդեն ժամը 12-ն եր։ Կարմիր դրոշակները դողդողացին փչող գուրալի հովից։ Բանվորական շարքերը բազմաթիվ պլակատներով առաջ շարժվեցին։ Հնչեց փողային նվագախմբի մարշը։ Շարքերը կանգնեցին բարձր ամբիոնի առաջ։ «Ինտերնացիոնալ»-ի հնչյունների տակ արձանացան շարքերը։ Ամբիոնի ճակատից Լենինի մեծադիր նկարն եր ժպտում... Գործարանի շչակը տարածվեց քաղաքի վրա։ «Ինտերնացիոնալ» հնչյուններին միախառնվեց շողեշունչ յերգը։ Դեմքերից սահեց ժպիտը։ Անեղաշունչ յերգը պայքարի հուրն եր թեժացնում ավյունով լի յերիտասարդ սրտերում։ Բարձրանում եյին ամբիոնի վրա կազմակերպությունների ներկայացուցիչները, ու մարտական խոսքերով վողջունում յերիտասարդ մանածագործներին։ Հնչում եր յերգը, դրոշները փողփողելով վերև եյին բարձրանում ու խայտացող պլակատների վրա բևեռվում եյին հայացքները։ Բազվի պրոլետարիատն իր ներկայացուցիչն եր ուղարկել։ Միտինգից հետո գործարկոմի նախագահ Արուսը կարդաց առաջ քաշվող բանվոր-բանվորուհիների ցուցակը։ Բազմամարդ միտինգը վորոշեց կենտրոնական քաղաքներն ուղարկել 10 բանֆակավարտ բանվոր-բանվորուհիներ, բարձրագույն կրթություն ստա-

նալու համար։ Միտինգը վերջացավ, ժպտուրախ դեմքերով բանվորուհիները շրջապատել էին Շուշիկին։

— Շատ ուրախ ենք, Շուշիկ ջան, վոր պիտի գնաս բարձր դպրոց սովորելու։ Կգնաս, կսովորես ինժեներություն, մեր յերկրի համար ավելի պետական մարդ կլինես,— Շուշիկի ձեռքը սեղմելով ասաց գործարկոմի նախագահ Արուսը։

— Կգնամ, Արուս ջան, կսովորեմ և ամբողջ յեռանդս կնվիրեմ սոցիալիստական շինարարությանը... Արևը պահվում եր սարերի յետևը։ Վերջալույսի վերջին շողերն ելին խաղում լայնարձակ դաշտի վրա։ Գործարանի մուտքի վերևը փակցրած դրոշակը ֆրֆռում եր փչող քամուց։

Ցերեկո յեր։ Գործարանի դարբասներից դուրս յելան մի խումբ բանվոր-բանվորուհիներ, թվով 50 հոգի։ Նրանք բարձրաձայն խոսում, զրուցում ելին։

— Տես, չմոռանաս, Շուշիկ ջան, շուտ-շուտ նամակ կգրես,— Շուշիկի թևը մտնելով խոսեց Թիաչյա Խաջեն։

— Վարդ ջան, մեր կյանքը, վորքան արագ է փոխվում, վորքան։ Ցերը հիշում եմ գործարանի առաջին տարին, ու համեմատում ներկայի հետ, զարմանքս մեծ է լինում։ Ով կմտածեր, վոր դյուղից յեկած բատրակ Սարգիսը դառնար գործարանի դլխավոր վարպետ, վորն առաջին որերը վախենում եր մեքենայի մոտ գնալիս, կամ են լվացք անողի աղջիկ Նվարդը՝ ընդհանուր գործարկոմի նախագահ։

— Ինչու յես զարմանում, Սոնյա, արդեն քաղդպրոց ես գընում, լավ ես հասկացել կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականությունը։ Բանվորը պիտի դառնա յերկրի կառավարող։ Չէ՞ վոր նա յե արյուն թափել և նրա արյունով ե ստեղծվել խորհրդային իշխանությունը։

— Առաջ, վոր նոր ելի աշխատանքի ընդունվել, կարծում ելի, վոր դպրոցներում միմիայն հարուստների զավակները պիտի սովորեն։ Զարմանքս մեծ յեղավ, վոր դպրոց պիտի գնամ։ Ուրախությունից լաց յեղա։ Սարգիսը նայեց ինձ, ժպտաց ու գնաց։ Դրպրոցում կարծիքս հիմնովին փոխվեց, քանի վոր ինձ հետ սովորողները բանվորներ ելին։ Հիմա արդեն լավ եմ հասկացել կուսակցության քաղաքականությունը և ըմբռնում եմ կյանքի իմաստը։

— Ինչու յես հեռու գնում, Վարդ, Սոնյա, Հայկուշ։ մեր կյանքը, վոր փոխվում է, դա աքսիոմա յե։ Բավական է մատնացույց անել, վոր մեր բոլորիս կողմից սիրված Շուշիկը յերեք տարի ու կես առաջ թափառաշրջիկ եր, իսկ այսոր նրան ուղարկում են յերկրի կենտրոնը բարձրագույն կրթության։

— Ճիշտ է, ընկերներ, վոր մեր կյանքը փոխվում է։ Փոխվում ենք և մենք։ յերեք տարի ու կես առաջ փողոցներում դուք կտեսնեիք բազմաթիվ թափառաշրջիկներ։ Իհարկե, այդ միայն այս քաղաքում չեր, այլ խորհրդային միության բոլոր քաղաքներում, իսկ այսոր ցույց տվեք գոնե մի քանիսը։ Դեռ յերեք տարի ու կես է անցել, իսկ մի քանի տարուց հետո կվերանան և գործազուրկները և բոլոր շրջմոլիկները։ Ցերբեք մաքիցս չի ջնջվում ընկ. Վարդուշի խոսքերը՝ «Բանվորական միջավայրը միակ այն դարբնոցն է, վոր կոփում է հաղարավոր հիվանդ մարդկանց, դարձնելով նրանց սոցիալիզմի կառուցող անխոնջ մարտիկներ»։ Այդ դարբնոցում կոփվեցի և յես։

— Ճիշտ է, Շուշիկ ջան։ Գնացեք սովորեք, մենք բոլոր բանվոր-բանվորուհիներս պետք է սովորենք։ Չմոռանանք մեր մեծ ուսուցիչ ընկ. Լենինի պատգամները։ «Ամեն մի խոհարարուհի պետք է կարողանա յերկիր կառավարել»։ Կոմունիստական կուսակցությունը, Խորհրդային իշխանությունը կատարում է հանճարեղ առաջնորդի պատգամները։

Խումբը խոսելով մոտենում եր կայարանին։ Ելեկտրական լապտերը կթենագույն լույս եր սփռում կայարանի վրա։ Ռելսերը պաղ փայլփլում ելին։ Գծերի մոտ թափված մազութի լճակների մեջ կարմիր վագոններն ելին արտացոլվել։ Գնացքները սուր սուլոցով սլանում ելին կայարանի սրտից։ Զանգի պաղ շրթին պողպատե լեզվակը մեկ անգամ կպավ։ Զանգի ամուր դողանջը տարածվեց կայարանի վրա։ Դահլիճներից դուրս թափվեցին ուղևորներ, կանայք, ծանրաբեռնված ճանապարհորդական իրեղեններով և խառնվեցին պայծառ լուսավորված պերոնում։ Շոգեկառքերը շդու ծխի մեջ պարուրված՝ ծանր փնչալով, սուլելով կանգ առան կայարանում։ Մարդկային ծովը ալեկոծվեց հորձանքով, վագոնները շարվեցին, ինչ, ծիծաղ, լաց միախառնվեցին իրար։ Զանգի յերկրորդ դողանջը տարածվեց կայարանի վրա։ Շոգեկառքերը սուլեցին, ծխանոցներից դուրս վանեցին ծխի սևաթյուր ամպերը։ Դարձան անիվները, և պաղ ռելսերը յերգեցին։

— Չմոռանաս Շուշիկ, նամակ գրիր, գրիր կարմիր Մոսկվայի ու բարձրացող նոր կադրերի մասին։

Այդ կինբաժնի վարիչ Լիան եր, վոր խնդությունը որաում յեկել եր ճանապարհ դնելու տեքստիլի բանվորուհի՝ նախկին փողոցային Շուշիկին։ Գնացքը նորից սուլեց, արագացրեց ընթացքը և անհետացավ խավարում, յետևի կարմիր լույսերը չքացան։

1. Ի՞նչ շրջապատից եր դուրս յեկել Շուշիկը և ի՞նչ փոփոխություն կատարվեց նրա մեջ։

2. Ի՞նչ միջոցների դիմեց գործարանը նոր կադրեր պատրաստելու ուղղությամբ։

3. Ո՞ւր ուղարկեցին Շուշիկին բարձր կրթություն ստանալու համար։

4. Ի՞նչ տրամադրություններով ճանապարհ դրին Շուշիկին գործարանի բանվորներն ու բանվորուհիները։

5. Ինչպե՞ս են կատարվում Լենինի պատգամները բանվորական կրթության գործում և նրա՝ «ամեն մի խոհարարուհի պետք է կարողանա յերկիր կառավարել» լոզունգը։

6. Ինչպե՞ս են կիրառվում կուսակցության դիրեկտիվները պարտադիր ուսման և համատարած գրագիտության ապարիզում։

---

43. ԳՅՈՒԼՆԱՐԱ

Եվ՛ խանի յերկիր, թաղիրի յերկիր,
Գյուլնարի պես վարդ Շիրազում չկար,
Գյուլնարի պես վարդ, հարեմի յերկիր,
Իրանի վոչ մի հարեմում չկար։

Ղեյլանի ծուխը թե յերկինք յելներ,
Աստղերին հասներ՝ ենպես լուս չկար,
Գյուլնարի սիրտը վոնց արև լիներ,
Արևը վկա՝ Իրանում չկար։

Մայիսին բացվող նշենին անգամ
Գյուլնարի բույրն ու հմայքը չուներ,
Անձրևից հետո լեսամանն անգամ
Գյուլնարի քաղցր թովչանքը չուներ։

Եվ՛, խանի յերկիր, թաղիրի յերկիր,
Գյուլնարի պես վարդ Շիրազում չկար,
Գյուլնարի պես վարդ, հարեմի յերկիր,
Իրանի վոչ մի հարեմում չկար։

1.

Մի աղջիկ եր, ապրում եր Իրանում
Գորգագործ մի աղջիկ եր նա,
Նա մի ծեր հայր եր խնամում,
Գյուլնարա յեր անունը նրա...

Սիրուն եր Գյուլնարան, շատ սիրուն,
Թիթեռից թրվռուն եր նա,
Աչքերին սուրմա չեր քաշում,
Չեր գնում մաղերին հինա։

Նա խանի խանումների համար
Հյուսում եր համամի խալիչա,
Շիրազի վարդանոցից ել վառ,
Բայց խանի խանումների համար։

Ցփում եր դանակը հինվածքին,
Կտրում եր թելերը գունագեղ,
Գյուլնարի հինած դաղգյահին
Շիրազը կարող եր նախանձել։

Գյուլնարի հյուսած վարդերից
Կխաբվեր բյուլբյուլն անգամ,
Նա կարող եր մետաքսե թելերից
Գարտեզներ հյուսել անթառամ։

Մի աղջիկ եր, ապրում եր Իրանում.
Գորգագործ մի աղջիկ եր նա,
Նա մի ծեր հայր եր խնամում,
Գյուլնարա յեր անունը նրա...

2.

Գյուլնարա, սիրուն Գյուլնարա,
Զալամքարը հոնքերիդ տակին
Թախիծ կա աչքերիդ վրա,
Գյուլնարա, սիրուն Գյուլնարա...

Ծաղկազարդ չթով սքողված՝
Սրտիդ մեջ ու հոգու դ վրա
Տրտունջ կա, բողոք կա պահված,
Գյուլնարա, վշտոտ Գյուլնարա...

Գյուլնարա, գորգագործ աղջիկ,
Քո յերկրի բորբ արևի տակ
Հասնում ե բաղամ ու նարինջ,
Բուրում են դաշտերը թովիչ։

Սակայն դու արևի կարոտ,
Արևից ժպիտ չես քաղել,
Տրտունջոտ քո հոգու համար
Նարինջը կարիճ ե դառել։

3.

Լվում ե մրմունջը թառի։
Նվում ե սեգահը վերից,
Ճմլվում ե սիրտը Գյուլնարի,
Միծաղներ են լվում հարեմից։

«Շարյաթին դեմ գնալ չի լինի,
Ուրացում է առանց չաղբայի»,—
Կարծես թե լսում է խանի
Խոսքերն ականջին Գյուլնարի։

Կարծես թե տեսնում է նրան,
Զգում է սարսափն անարկու,
Բայց հյուսում է հինվածքի վրա՝
Կուտակված տրտունջն իր հոգու։

Խալիչա յե հյուսում Գյուլնարան,
Հույզերից է հյուսում կարծես նա,
Ահա նա հինվածքի վրա
Նկարում է պատկերն իրա...

Ահա նա կանգնած է ենտեղ,
Մետաքսե թելերից հյուսած,
Աչքերը վառվում են կարծես,
Զարսավը նետել է ցած։

...Լսվում է մրմունջը թառի,
Նվում է սեգահը վերից,
Հուզված է սիրտը Գյուլնարի
Հարեմի թառից ավելի։

4.

Ու մի որ, յերբ արևը յելավ
Ու ժպտաց Իրանի վրա,
Դուրս յելավ Գյուլնարան տնից՝
Խալիչան ձախ ուսի վրա...

Հասավ նա պալատը խանի,
Գորգաստրդ ոթախը նրա,
Կլկլում եր ջուրը ղեյլանի,
Խանի դեմ՝ սանդալի վրա։

Ղեյլանի հուզված ջրի պես
Թպրտում եր սիրտը Գյուլնարի,
Ամոթով խոնարհվեց նա կարծես
Ու գժկամ բարևեց խանին։

— Գյուլնարան նվեր է բերել,
Գյուլնարան տրտունջ ունի, խան,
Իզին տուր բոլորի հետ մեկտեղ
Գյուլնարան դեն գցի չաղբան։

Ցեվ փռեց նրա դեմ ու դեմ
Խալիչան՝ բողոքն իրա,

Գյուլնարան կանգնած եր ենտեղ,
Համարձակ առանց չաղբա։

— Ինդա, շուն.—խանը վորոտաց,
Դղրդաց պալատն աղմուկից,
Գյուլնարան ճչաց ընկավ ցած՝
Ցերեսին իջած ապտակից։

Ներս ընկան ծառաները խանի
Ցեվ կանայք խանի հարեմից,—
Փռվել եր մարմինը Գյուլնարի,
Գյուլնարան տնքում եր ցավից..

Դուրս տարեք թող մորթեն դրան,
Թող փրթեն առաջը շների,
Իմ հոգում առանց չաղբրա
Վոչ մի կին չպետք է ապրի...

***

Գյուլնարա, գորգաստրդ աղջիկ,
Քո յերկրի բորբ արևի տակ
Հանում է բաղամ ու նարինջ,
Բուրում են դաշտերը թովիչ։

Սակայն դու արևի կարոտ,
Արևից ժպիտ չես քաղել,
Տրտունջոտ քո հոգու համար
Նարինջը կարիճ է դառել։

Այդ որը, իրիկնային պահին,
Արյունը հոսեց Գյուլնարի,
Մեռավ նա արևի կարոտ՝
Իրանի Գյուլը-սարահին...

Ե՛յ, խանի յերկիր, թաջիրի յերկիր,
Գյուլնարի պես վարդ Շիրազում չկար,
Գյուլնարի պես վարդ, հարեմի յերկիր,
Իրանի վոչ մի հարեմում չկար։

Ղեյլանի ծուխը թե յերկինք յելներ,
Ասաղերին հասներ, ենպես լուս չկար,
Գյուլնարի սիրտը վոնց արև լիներ,
Արևը վկա՝ Իրանում չկար...

Ո՞վ եր Գյուլնարան և ինչ պայմաններում եր ապրում նա։
Ինչպե՞ս եր վերաբերվում խանը Գյուլնարին և ինչ աչքով եր նայում նրան։
Ինչի՞ դեմ եր բողոքում Գյուլնարան և ինչով վերջացավ արդ-

Ինչպիսի սովորություններ գոյություն ունեն խառների յերկրում և յինչը կվերանան այդ սովորությունները։

Գիտեցեք և իմացեք, թե յերկու ձայնավորի միջև յերբ և գրվում ձայնակապը և յերբ չի գրվում։

1) Նայել, վկայել, կայարան, Հայաստան.
2. Եյակ, թեյարան, բոզեյական.
3) գոյություն, շոյել, կարոյի.
4) միանալ, ձիավոր, թիավարել.
5) իդեալ, գեոլոգիա, բիոլոգիա, պոեմ.

Կանոն.—Յեթե բառի մեջ իրար հաջորդող յերկու ձայնավորներից առաջինն ա, ո կամ ե յա, ապա յերկու ձայնավորների միջև մտնում է յ ձայնակապը, իսկ մյուս դեպքերում—վոչ։ Ռուսերեն բառերի մեջ, յեթե այդ դեպքում յ չի լսվում չի յել գրվում։

---

44. ՈՐԱՆՋԻԱ

1.

Որանջիայի ձորակում ամեն գարնան մասրիներ են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ։ Յերբ գարուն է յինում և տաքանում են Որանջիայի քարերը, ներից շուրս են ծլկում խլեղները, փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերի վրա, լեզուները ներս ու դուրս անում։

Այն ժամանակ, յերբ շեն եր Մանասի խրճիթը, Որանջիայի ձորակում մասրիներ չկային, տան պատերի վրայով յերկչոտ խլեղները չելին վազվզում, վայրի վարդերի տեղ բոստանում վարունգն եր ծաղկում։

Մի բարակ արտեռ Որանջիայի ձորակը միացնում եր գյուղի հետ։ Այժմ այդ արտեռն ել չկա։

— Մանա՛ս, ինչու՞ տունդ Որանջիայում չինեցիր, չգիտեյիր, վոր Դավոյենց Առաքելն ել աչք ուներ դրած ձորակին, ուր ձյունն ավելի շուտ է հալվում և ձյունի տակից կանաչը ծլում։

Դավոյենց Առաքելը, լեզան կաշվից տրեխները հագին, մի տռամա աչքի տակով նայեց Որանջիայի ձորակին, ուր նախորդից յետ մնացած յերկու հորթ ելին արածում, և մտքում դրեց ձորակում ամարաթ կառուցել։

Իսկ յերկու շաբաթ անց Որանջիայում Մանասն եր քար ու կիր թափել, վոտքերը մինչև ծնկները վեր քաշած ցեխ եր շինում, ուստան ել տաշած քարերն եր շարում։

Դավոյենց Առաքելն եդ մտքում պահեց։

2.

Որեր անցան։ Դավոյենց Առաքելը հասավ իր մուրազին՝ գառնոտով գյուղի քյոխվեն։

Մանասը յերբեմն միտք եր անում, թե Առաքելը վոխը հանելու համար գնաց տանուտեր յեղավ։ Մտածում եր, բայց մտքինը վոչ-վոքի չեր ասում։

Իսկ յեթե ազգ ու բարեկամ ելի ասում ելին—

— Մանա՛ս, տա՛պ տրա, թրի սուր ժամանակն է,—Մանասը փափախը գետնով տալ չեր ուզում, ելի իր ասածն եր կրկնում։

Բայց Առաքելը չեր ել ցույց տալիս, թե ինքը հաշիվ ունի Մանասի հետ։ Այն որից, յերբ տանուտերի շղթան վզովն անցկացրեց, ղղնձե կնիքն ել դրպանը դրեց, Առաքելն այդ որից ձևացնում եր տնպես, վոր իբր թե Մանասին չեր ել տեսնում։

— Մանա՛ս, զարթուն կաց, Առաքելը քեզ նեղն է գցելու։

... Յերբ լուր յեկավ, թե քաղաքներում գոշծաղուլկա, հեղափոխություն է ընկել, Առաքելն ականջները խլշեց։ Նույն գիշեր Առաքելի ձիու սմբակների տակից կայծեր թռան։ Պրիստավը հուսադրեց նրան։

— Ձեր գործին կացեք, ժողովուրդ, տարին խառն ա, չլսեմ չիմանամ, թե լոթի-փոթի մարդիկ են գալիս, գիշերով թաղուն ժողով անում։

Իր շվաքից խրատեց, թե իրոք վտանգ կար գյուղում՝ սակայն մի շաբաթ հետո Առաքելը նորից գնաց պրիստավի մոտ։

— Պրիստավը ապրած կենա, գյուղումն ել չեն յերևում խառնակիչ մարդիկ։ Մի տասը հատ զազալ թոզ հետս դան, գյուղում յերևան մի անգամ, ժողովուրդը զարգանդի։

Պրիստավը բեղերը վոլորեց, բեղը փաթաթեց մատին և ձգեց մինչև աչքատակ, ասես աչքն եր ուզում կոխի։ Բեղերը վոլորելիս թշերն ուռեցրեց՝ զուռնա փչողի պես։

Առաքելը կազակների հետ դեռ գյուղ չհասած, բոլորն ել գիտեյին, վոր գալիս են։ Այդ յերեկոն շատ տներում ճրագ չվառվեցին, շատերը մինչև լույս աչք չփակեցին։

... Ել, դու, հիմար կազակ, ինչու՞ այդքան շատ խմեցիր Առաքելի տանը, արյունդ գլխիդ տավ, տաքացար։ Մանա՛ս, կինդ այդ որը յերանի լվացք չաներ և լվացքը չփռեր պատին, վորովհետև դիմացի ցանկապատի տրանքից Առաքելը կազակին մատով ցույց եր տալիս կնոջդ, վոր լվացք եր փռում։ Կազակ մոռացիր միթե, վոր քո յերկրում ենպիսի ձորակներ չկան, ինչպես Որանջիան։ Ցանկապատի յեռև վերջին տնգամն ելիր պռոշներդ լիզում։

Մինչև այժմ էլ գյուղում, յերբ պատմում են Որանջիայի մասին, մի ականատես միշտ էլ ավելացնում է.

— Սարքովի յեր բոլորը։ Առաքելը սատանի ներկություն ուներ...

— Մթնում եր, դռները կապում էլինք, մանում աները։ Լսում էլին դաղախները, ընկնում քուչեքը։ Շաշկով ենքան հավի վիդ թոցրին...

... Մթնել եր, մեկ էլ Որանջիայից մի ծկլթոց լեկավ, հավաբի ձայն։

— Հենց են ա, ականջս ծկլթոցին եր, մեկ էլ մի անգամ կրակեցին։ Կրակոցից ձորերը դրնգացին։ Որանջիայի ձորակը վառվում եր, ալավը յերկինք եր հասնում։

Ամբողջ գյուղն եր այդ գիշերը թափվում ձորակը, բայց արդեն ուշ եր։ Մանասի խրճիթը, վորի կարին դեղեր կալին, պատերի տակ թափված խուրձեր այրվում եր նավթոտ վալասի պես։ Ցերը լուսադեմ կրակը հանդարտեց, խանձված ընկած էլին Մանասի կինը, յերեխան, կաղակը։

— Ե՛, ինչ չարչարանք քաշեց գյուղը, քանի մարդու ծեծիցին, ինչեր չարին... Մանասին տարան, ինչ տես՝ արին, վիդ չառավ։ Հենց ասում եր, թե յես անմեղ եմ, յես չեմ դաղախին սպանել։ Դաղախներն էլ վկայել էլին, վոր Մանասն է սպանել։ Բա, եսպես բաներ...

Ցերը Մանասին վադոն դրին դեպի հեռավոր տունդրաները, նա իզուր եր կայարանի ժխորի մեջ աչք ածում ծանոթ մեկին։

— Գնաց, էլ թե ինչ լեղավ՝ տեղեկություն չկա...

... Հետո քամին սերմեր բերեց, և Մանասի տան ավերակների վրա ծաղկեց մասրենին։ Ամեն գարնան Որանջիայում այնքան վարդեր են լինում՝ դեղին, սպիտակ։

— Գյուղի վոր շերտին և պատկանում Մանասը և վոր շերտին՝ Առաքելը։

— Ինչ հասարակական պայմանների ծնունդ են Առաքելները և Ռամ շահերի արտահայտիչ։

— Այդ պայմաններում կարող էլին պաշտպանություն գտնել Մանասները։

— Ցեղել են արդյոք ձեր գյուղում Առաքելները.

— Ինչ պայմաններում միայն հնարավոր գարձավ նրանց վերացումը։

ԴԻՏԵՑԵՔ ՇԵՇՏԻ ՑԵՎ ՍՏՈՐԱԿԵՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Մանաս, ինչու տունդ Որանջիայում շինեցիր։

Այս խոսքի մեջ ինչ և ցույց տալիս Մանաս բառը։ Ինչպես ենք կարդում այդ բառը։

Կանոն. խոսքի մեջ այն բառը, վոր ցույց և տալիս այն առարկան, վորին գիմում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար, կոչվում է կոչական բառ։ Կոչական բառը մյուս բառերից ուժեղ և արտասանվում։ Կոչականի ուժեղ արտասանվող վանկի ձայնավորի վրա շեշտ կամ յերկար և դրվում (յեթե յերկար և արտասանվում)։ Կոչականից հետո դրվում է ստորակետ, յեթե կոչականը խոսքի սկզբում և դրված, առնվում և ստորակետի մեջ՝ յեթե խոսքի մեջտեղն և ընկնում։

---

45. ՓՈՔՐԻԿ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌԸ

Խարտյաշ մազերով տղա,
Լճակ աչքերով տղա՝
Ցուրտ և, հազում ես անվերջ,
Թշվառ, կմեռնես հազից։
Տոկուն, համարձակ տղա,
Յեռուն, փողոցի տղա,
Վազիր ու կանչիր ուժգին.
—Նոր լուր, հեռագիր, կազետ...

Բոբիկ վոտներով տղա,
Առույգ, կլսամերկ տղա
Արագ անցնում ես մայթեն,
Մայթը թնդում է վազեդ։
Հպարտ, աշխատող տղա,
Մբի, զրկանքի տղա,
Կանչիր, անցորդին կանչիր.
—Նոր լուր, հեռագիր, կազետ...

Փոքրիկ, տաս տարու տղա,
Ըմբոստ, մաքառող տղա,
Հոսում և քրտինք ճակատդ,
Այտերդ ու փոշոտ մազերդ,
Փողոցը քնող տղա,
Անկյուն կուչ յեկած տղա,
Կանչիր, քնիդ մեջ կանչիր,
—Ցուրտ և, մրսում եմ, կազետ...

---

46. ԳԻՔՈՐԸ

1.

Գյուղացի Համբոյի տունը կռիվ եր ընկել։

Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գոքորին տանի քաղաք, մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխատանք անի։ Կինը չեր համաձայնվում։

— Չեմ ուզում, իմ մատաղ յերեխին են կրակ աշխարհը մի գցի, չեմ ուզում,—լալիս եր կինը։

Բայց Համբոն չլսեց։

Մի խաղաղ գեղեցիկ առավոտ եր, մի տխուր առավոտ։ Տանեցիք ու հարևանները յեկան մինչև գյուղի ծայրը։ Գիքորի թշերը պաչեցին ու ճամբա դրին։

Փուլը՝ Զանին, լաց եր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գըբկին ձայն եր տալիս՝ «Գիքո՛ր»։

Գիքորը շուռ-շուռ յեռ եր նայում։ Տեսնում եր՝ դեռ գյուղի ծայրին կանգնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը։ Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն եր ընկնում։ Մին էլ յեռ նայեց, գյուղը ծածկվել եր բլուրի յետև։

Այնուհետև Գիքորը յեռ եր ընկնում։

— Արի հա, Գիքոր Ջան, արի հա, հասանք հա,—վորդուն կանչելով գնում եր Համբոն, շալակին մի խուրջին, մեջը միքանի հաց ու պանիր ու մի յերկու դաստա ծխախոտ։

Իրիկնապահին, յերբ անց ելին կենում սարերը, մի անգամ էլ յերևաց գյուղը հեռու մշուշում։

— Ա՛յ, ապի, մեր տունն են է, հա,—ցույց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չեր յերևում, ու անցան։

Առաջին իրիկունը հյուր ընկան մի գյուղում։ Տանուտերը Համբոյի հին ծանոթն եր։

Դեղին ոսամավարը թրչում եր տախտի ծերին։ Մի ջահել աղջիկ չրխկացնելով բաժակները լվանում ու թեյ եր շինում։ Նա մի կարմիր, սիրուն շոր ուներ հագին։ Գիքորն ենտեղ մտքումը դրավ, վոր յերբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանընի համար մի են տեսակ շոր ուղարկի։

2.

Մյուս որը քաղաք մտան, իշան բազար։

— Բիձա՛, եդ յերեխին ծառա յես տալիս,—խանութի ներսից հարցրեց մի վաճառական։

— Հրաման քեզ,—ասավ Համբոն ու Գիքորին են կողմը հրեց։

— Բեր ինձ տուր, յես կբռնեմ,—առաջարկեց վաճառականը։

Նրան ասում ելին բազազ Արտեմ։

— Հինգ տարի դեռ փոդ չեմ տա,—ասավ բազազը պայման կապելիս։—Թե դրուստ կուզես, դեռ դու պետք է տաս, վոր քո վորդին բան է սովորելու։ Ախր իսկի բան չդիտի։

— Վիրտեղից գիտենա, խազեյին Ջան,—պատասխանեց Համբոն,—վոր գիտենար, էլ ուր կբերելի։ Ցես էլ բերել եմ, վոր բան սովորի։

— Կսովորի, ամեն բան կսովորի։

— Իմ դարդն են է, աղա Ջան, վոր մարդ դառնա, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, նստել-վեր կենալ սովորի, մարդ ճանաչի, վոր աշխարհքում ինձ նման խեղճ ու զուրկ չմնա։

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց բարձր-բարձր հրամայելով,—չա՛յ բերեք, հաց բերեք սրանց համար...

3.

Ու հայր ու վորդի նստած ելին բազազ Արտեմի խոհանոցում։

— Դե՛, հիմի դու գիտես, Գիքոր Ջան, տեսնեք՝ ինչ տեսակ տղա յես դուրս գալու։ Հենց պետք է անես... վոր յես ինչ գիտեմ... ով տեր ասված...—մռնչաց Համբոն ու չիբուխը լցրեց։

— Վախտ ու անվախտ դես դեն չընկնես, ձեռքդ ընկած փողը քոռ ու փուչ չանես, հազար ու մի պակասություն ունենք։ Քեզ էլ լավ պահի, գիշերները բաց չլինես, մրսես վոչ...

— Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կերակրի թերմացը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, կարգն եդ է... Որեր են, կմթնեն, անց կկենան։

Շարունակում եր հայրն իր խրատը, բայց Գիքորը հորը թինկը տված քնել եր արդեն։

Են յերկու որը նա ենքան բան եր տեսել, ես ու են կողմը նայել, վոր հոգնել եր բոլորովին։

Մրգով լիքը խանութները, դեղերի նման դարսած գույն-գույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող յերեխաների խմբերը, իրար յետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կինտոները։ Ես ամեն գուռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակն իրար խառնված, դժվում եր նրա գլխում։ Ցեվ նա հոգնել եր ու հորը թինկ տված քներ։

4.

Խանութում Գիքորին տղրանք կտային մուշտարիների հետ տանելու, չիթ կծալեր, խանութը կսրբեր, իսկ պարապ ժամանակը հաճախորդ կկանչեր։

Ցեվ տնա Գիքորը հաց է տանում խանութը։ Կերակրատանը ձեռքին, մաշված ու դժգույն՝ մեծ-մեծ վոտնամանները քաշ տալով տնց է կենում կամուրջով։ Նայեց ներքև։ Քարվանսարայի բարձր պատերին զարկվելով ծառս եր լինում Քուռը, վոլորվելով պարավում ու ճնշվելով խեղդվում, խուլ թշղում կամուրջի տակին։

Ափից մոտիկ պատավում եր մի կանաչ նավակ։ Ցերկու հոգի կային նրա մեջ, մինն ուռկան եր գցում, մյուսը՝ նավը կառավարում։

«Ա՛յ, հիմի կհանի»՝—ասաց Գիքորն ու կանգնած նայում եր ձկնորսներին։ Ուռկանը դատարկ դուրս յեկավ։

— Ես մինն իմ բախտից,—ասավ Գիքորն ուռկանը գցելիս։

Գիքորի բախտը դատարկ դուրս յեկավ։

— Ես մինն եվ Զանների բախտից։

Նա եվ դատարկ դուրս յեկավ։

— Ես մինն եվ Գալոյի բախտից։

Գալոն եվ եր անբախտ։

— Ես մինն եվ բաս...

Բայց եդ ժամանակ մոտիկ քարվանսարայի դռանն աղմուկ բարձրացավ։ Մի պարսիկ կապիկ եր պար ածում յերգելով։

Ժողովուրդը հավաքվել եր գլխին ու վազում ելին չորս կողմից։ Գիքորն եվ վազեց։ Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնել, առաջ անցնել, չկարողացավ։ Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում եր անպատճառ տեսնի, թե ինչ է կատարվում մեջտեղը։

— Ի՞նչ ես ներս խծկվում, տո լածիրակ, գնա քո բանին,— ասավ մի կինտո ու զարկեց Գիքորի գլխին։

Գիքորը հանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութ։

5.

Իրիկունը Գիքորը կուչ եր յեկել խոհանոցում։ Դեռ արտասանքը չեր ցամաքել նրա յերեսին, դեռ այրվում ելին խաղեղնի աղտակների տեղերը, յերբ շվվացնելով ներս մտավ Վասոն՝ բազդի աշակերտը։ Գիքորին նկատելով նա իսկույն կանգ տվավ ու մատխարա դեմքին լրջություն տալով՝ սպառնալի հարցրեց։

— Կլուբումն ուշացար, տո տրջի քոթոթ, թե գուբերնատորի մոտ վատ գործ ունեցիր։

Գիքորը լուռ եր։

— Չե՞ս իմանում տո, վեր տեղ ելիր է, վոր ասոր ինձ քաղցած պահեցիր։ Վոր մեռնելի հետո...

Ասպես խոսելով կամաց-կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին։ Գիքորը յերկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին։ Վասոն պատրաստվում եր մի ուրիշ ձևի հարված ել հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խաղեղինի ձայնը։ Գալիս եր։

— Ահա տես հիմի՝ քեզ ինչ է անում,—սպառնաց Վասոն։

«Հիմի ինձ կսպանեն»—անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ։

Խազելինն արդեն բավականին ծեծել եր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չտան, վոր իմանա, թե ինչ բան է քաղցածությունը։

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ։

Վասոն հաց եր ուտում։ Գիքորը վերմակի տակից յերբեմն ըզգուշ ծկրտկում, թագուն նայում եր նրան, կրկին աչքերը ծածկում։ Նա էն սրը հաց չեր դրել բերանը, ծեծվել ու լաց եր յեղել, այժմ ել քաղցած պառկել ու քունը չեր տանում։

— Հը՛, վոնց է, սոված քունդ չի տանում հա, եղպե՞ս...—նկատեց չարաճճի Վասոն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին։—Դե առ տեղի տակին թագուն կեր, խազելինը չիմանա։

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թագուն ուտում եր ու մտածում։ Մտածում եր իրենց տան վրա, էն որերի վրա, յերբ ազատ խաղում եր հանդերում ու լիասիրտ հաց ուտում։ մտածում եր էն յերեկոների վրա, յերբ հերն ու մերը կռվում ելին իրեն քաղաք բերելու համար... և մայրը լաց եր լինում, չեր ուզում...

— Ախ, նանի ջան, ինչ լավ եր սիրտդ իմացել,—հառաչում եր Գիքորը տեղի տակին ու հացն ու պանիրն ուտում ականջը սրած, թե խազելինը հո չի գալու։

Իսկ առավոտը կանգնած եր խանութի դռանն ու կանչում եր։

— Ե՛սպի համեցեք, ե՛սպի համեցեք...

6.

Ձմեռը յեկավ։ Սառն աղմուկով, ձյունախառը բուքը թռչում է քաղաքի վրայով։ Փողոցներում սուրում, սուլում հոսան է անում։ Վզզալով մանում է անկյունները, աղքատի ու տկլորի յե մանգալիս՝ պանդուխտ և անտեր յերեխա յե վորոնում։

Ահա գտավ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած ձայն է տալիս նա։

— Ե՛սի համեցեք, Եսի համեցեք…

Հրեաս… չարախինդ սուլելով ցուրտը, անբևեռութ թրի նման դարկեց, անցավ վոսկրներն ու Գիքորը դողաց։

Առանց են էլ նա շատ եր մաշված, եդքանն էլ հերիք եր նրան։ Ու անկողին ընկավ։

Հիվանդ պառկած եր Գիքորը խոհանոցում։ Բաղաղ Արտեմի մայրը—պառավ դեդին որը մի քանի անգամ ներս եր մտնում իրենիրեն խոսելով։

— Ի՞նչ կուզես, վորդի՛, Գի՛քոր։

— Ջո՛ւր…

Դեդին ջուր եր տալիս, հիվանդը դողդողջուն ձեռքերով բըռնում խմում եր ու կրկին ուզում։

— Ես սիրաս հովացնում չի, դեդի՛… լես մեր աղբյուրի սառը ջրից են ուզում… լես մեր տունն եմ գնում… լես իմ նանին եմ ուզում։

Բաղաղ Արտեմը ցավի մեջ եր ընկել։ Նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, տպսպրեց, վոր Համբոն գա, իսկ Գիքորին տարան քաղաքային հիվանդանոց։

Եստեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած։ Տիտուր տնքում եին ու իրար նայում անզոր հայացքներով։

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքերում։

Եստեղ գտավ նրան հայրը։

— Եդ ի՞նչ ես լեղել, Գիքոր ջան,—մղկտալով վրա ընկավ Համբոն։

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը։

— Գիքոր ջան, բա եկել եմ, ե՛, Գիքոր ջան… լես քո տպին եմ, ե՛…

Հիվանդը վոչինչ չհասկացավ։ Նա զառանցում եր ու զառանցանքների մեջ կանչում եր։—Միկի՛չ, Զանի՛, տպի՛, նանի՛…

— Եստեղ եմ, Գիքոր ջան, նանը զարկել է, վոր քեզ տանեմ մեր տունը… գալիս չե՞ս… Միկիչն ու Զանին հրեն կտերը կանգնած քեզ ճամբա լեն պահում։ Ի՞նչ ես ասում, դե խոսա ե՛, Գիքոր ջան։

— Ե՛սի համեցեք, Եսի համեցեք։—բացականչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում եր տաքության մեջ։

Մի լերկու որից հետո Համբոն գնում եր գյուղը։

Նա թաղել եր Գիքորին ու գնում եր։ Կռան տակին տանում եր նրա շորերը, վոր մայրը լաց լինի վրեն։ Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտավ։ Են էլ լերևի քրոջ՝ Զանրնի համար եր հավաքել ու պահել։

Գնում եր Համբոն ու մտածում։ Շատ ժամանակ չեր անցել, վոր եդ միևնույն ճամբով քաղաք լեկավ իր Գիքորի հետ։ Ահա եստեղ եր, վոր նա ասավ,—տպի, վոտներս ցավում են…

Ահա այն ծառը, վորի տակ նստեցին հանգստանալու…

Ահա ենտեղ եր, վոր ասավ։—տպի, ծարավ եմ…

Ահա են աղբյուրն եր, վոր ջուր խմեցին…

Մյուս որը, լերբ Համբոն անցնում եր լեռները, հեռվում լերևաց իրենց գյուղը։ Գյուղից դուրս կանգնած սպասում եին նանը, Զանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում եր։

— Ալի՛, ալի՛, հե՛ Գիքոր…

— Ինչու համար գյուղացի Համբոն իր վորդի փոքրիկ Գիքորին քաղաք տարավ։

— Ի՞նչ պայմաններով վարձեց վաճառականը Գիքորին։

— Ի՞նչ ծառայություն եր անում Գիքորը, և ի՞նչպես եին վարվում նրա հետ բաղաղ Արտեմի տանը և խանութում։

— Գիքորի մայրը քաղաքն ինչու լեր անվանում «կրակ աշխարհ»։ Ի՞նչ կպատմեր Գիքորի մասին պառավ դեդին, լեթե հանդիպեր նրա մորը։

— Արտագրեցեք այն հատվածները, վոր վերաբերում են Համբոյի դարդին։ Ի՞նչ ասել է՝ «մարդ դառնա»։ Այժմ ի՞նչ է ասում գյուղացին իր վորդուն, լերբ նա քաղաք է գնում աշխատանքի կամ սովորելու։

— Նկարագրեցեք բաղաղ Արտեմին։

— Վասոն սիրում եր Գիքորին։ Ո՞վ եր Վասոն։ Զելին կարոտում Վասոն ու Գիքորն իրենց տանը, լերբ մենակ եին մնում։ Փոշմանեց Վասոն Գիքորին բամփելու համար։

— Ի՞նչպես են աշխատում խորհրդային իշխանության մեջ անչափահասները։ Ցերեխաների մասին ի՞նչ է ասում մեր որենսգիրքը։

— Ցեթե Գիքորը լիներ խորհրդային կարգերում, նա այդպես կչարչարվեր ու կշահագործվեր։ Ո՞վքեր են պաշտպանում բանվորների ու ծառայողների աշխատանքն ու իրավունքները։

---

47. ԳԵՂՋՈՒԿԻ ՍՏՈՐՄՈՒՆՔԸ

Նստել եմ շվար
Ու միտք եմ անում,
Թե ինչպես մենակ
Ապրեմ աշխարհում։
Վոչ ջահել կնիկ
Ունեմ իմ կողքին,
Վոչ թև ու թիկունք,
Մտերիմ ընկեր,
Վոչ մի տաք անկյուն,
Վոչ արծաթ, վոսկի,
Վոչ սարքած դուքան,
Վոչ նժույգ մի ձի...

Պակաս որի հետ
Միմիայն մի դանձ—
Բարի նման ուժ
Տվավ ինձ հերս.
Բայց, ա՜խ, հենց են էլ
Ոտաբ դռներում
Կերան, մաշեցին
Դարդ ու ցավերս...
Նստել եմ շվար
Ու միտք եմ անում,
Թե ինչպես մենակ
Ապրեմ աշխարհում...

---

1. Ինչպիսի վիճակում են ապրում չքավոր և աշխատավոր գյուղացիները կապիտալիստական հասարակարգում։
2. Ինչի մասին և մտածում և ինչ ցավերի մասին և խոսում այստեղ չքավոր գյուղացին։
3. Համեմատեցեք կապիտալիստական յերկրներում ապրող աշխատավոր գյուղացիության վիճակը մեր յերկրի գյուղացիության վիճակի հետ։

---

48. ՏԵՐՆ ՈՒ ՍԱՌԱՆ

Լինում են, չեն լինում, յերկու աղքատ ախպեր են լինում։ Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մրտնի, ռոճիկ ստանա, ղրկի տուն։

Ժամանակը նշանակում են մինչև մին եվ դարնան կկվի ձեն ածելը։ Ես հարուստը մի չլված պայման ե դնում ծառային։ Ասում ե. «Մինչև են ժամանակը թե դու բարկանաս—հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե յես բարկանամ—յես տամ»։

— Ցես վոր հազար մանեթ չունեմ, վիրտեղից տամ,—ասում ե ծառան։

— Բան չկա, փոխարենն ինձ տասը տարի ձրի կծառայես։

Ասում ե՝ լավ. համաձայնում ե։ Պայմանը կապում են ու մրտնում ե ծառայության։

Մյուս որը վաղ տերը վեր ե կացնում ծառային, ղրկում ե արտը հնձելու։

— Գնա,—ասում ե, քանի լույս ե, հնձի, վոր մութն ընկնի, կգաս։

Ծառան գնում ե,—ամբողջ որը հնձում, իրիկունը գալիս ե տուն։ Տերը հարցնում ե.

— Եդ ուր յեկար։

— Դե արևը մեր մտավ, յես ել յեկա։

— Չէ՛, եդպես չի։ Ցես քեզ ասել եմ՝ քանի լույս ե, պետք ե, հնձես։ Արևը մեր մտավ, բայց տես նրա ախպերը լուսնյակը դուրս յեկավ։ Սա ինչ պակաս ե լույս տալիս...

— Եդ վոնց կլինի... զարմանում ե ծառան...

— Հը՞, դու զարդեն բարկանում ես,—հարցնում ե տերը։

— Չէ, չեմ բարկանում...—յես միայն ասում եյի՝ հոգնած եմ... մի քիչ հանգստանամ—կակազում ե վախեցած ծառան ու գնում ե նորից հնձելու։

— Վա՛յ, քու արտն ել հարամ ըլի, քու հացն ել, քու աված ռոճիկն ել...—սկսում ե հայհոյել հուսահատված։

Ու պայմանի ուժով ստիպում ե՝ ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի։

Միտք ե անում միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ ե տալիս հարստին, դառն ու դատարկ վերադառնում ե տուն։

— Հը՞, ինչ արիր—հարցնում ե փոքր ախպերը։ Ու մեծ ախպերը նստում ե, գլխի յեկածը պատմում, ինչպես վոր պատահել եր։

Վեր ե կենում հիմի յել փոքր ախպերն ե գնում ծառա մրտնում եյի նույն հարստի մոտ։

Հարուստը դարձյալ վորոշում ե մինչև գարնան կկվի ձեն ածելը, ու պայման ե դնում, վոր յեթե ծառան նեղանա, հազար մանեթ տուգանք տա, կամ տասն տարի ձրի ծառայի։ Թե ինքը բարկանա, հազար մանեթ տա, ու են որից ել ծառան ազատ ե։

— Չէ, եդ քիչ ե,—հակառակում ե տղեն։—Թե դու բարկանաս, դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հազար մանեթ տամ, կամ քսան տարի ձրի ծառայեմ։

— Լավ,—ուրախանում ե հարուստը։

Առավոտը լուսանում ե, ես ծառան վեր չի կենում տեղիցը։ Տերը դուրս ե գնում, տուն ե գալիս, ես ծառան դեռ քնած ե։

— Ա՛յ տղա, դե վեր կաց ե՛, որը ճաշ դառավ։

— Հը՞, բարկանում ես... գլուխը վեր ե քաշում ծառան։

— Չէ՛, չեմ բարկանում, վախեցած պատասխանում ե տերը,—միայն ասում եմ՝ պետք ե արա գնանք հնձելու։

— Հա, վոր եդ ես ասում, վոչինչ, կգնանք, ինչ ես վռազում։

Վերջապես ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխները հագնել։ Տերը դուրս ե գնում, ներս ե գալի, սա դեռ տրեխները հագնում ե։

— Ա՛յ տղա, դե շուտ արա, հագի ելի...

— Հը՛, հո չէս բարկանում։

— Չէ. ո՞վ է բարկանում, լեռ միայն ուզում էլի ասել՝ ուշանում ենք…

— Հա էդ ուրիշ բան է. թե չէ՝ պայմանը պայման է։

Մինչև ծառան տրեխները հագնում է, մինչև արան են գնում, ճաշ է դառնում։

Էլ ինչ հնձելու ժամանակ է,—ասում է ծառան,—տեսնում ես՝ ամենքն էլ ճաշում են, մենք էլ մեր ճաշն ուտենք՝ հետո։

Նստում են, ճաշն ուտում։ Ճաշից հետո լեռ ասում է. «Մշակ մարդ ենք, պետք է մի քիչ քնենք, հանգստանանք, թե չէ»։ Գլուխը կոխում է խոտերի մեջն ու քնում է մինչև իրիկուն։

— Տե՛, վեր կաց, մթնեց է, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց… Վա՛յ, քու դեսը դրկողի վիզը կոտրի, վա՛յ քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ… Ես ինչ կրակի մեջ ընկա…—սկսում է գոռգոռալ հուսահատված տերը։

— Հը՞, չլինի թե բարկանում ես,—գլուխը վեր է քաշում ծառան։

— Չէ՛, ո՞վ է բարկանում, լեռ են էլի ասում, թե մթնել, է տուն գնալու ժամանակն է։

— Հա՛, էդ ուրիշ բան է, գնանք, թե չէ հո մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ։

Գալիս են տուն։ Տեսնում են հյուր է եկել։

Ծառային դրկում է, թե՝ գնա վոչխար մորթի։

— Վո՞ր։

— Վորը կպատահի։

Ծառան գնում է։ Մի քիչ հետո լուր են բերում հարուստին, թե հասի, վոր քո ծառան ամբողջ հոտը կոտորեց։ Ես հարուստը վազում է, տեսնում է՝ ճիշտ վոր, ինչ վոչխար ունի, բոլորը ծառան մորթել է։ Գլխին տալիս է, գոռում։

— Էդ ինչ ես արել, ա՛յ տնտեսված, քո տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր…

— Դու ասիր՝ «վոր վոչխարը պատահի՝ մորթի», լեռ էլ եկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթեցի. ուրիշ ավել-պակաս ինչ եմ արել—հանգիստ պատասխանում է ծառան,—բայց կարծեմ դու բարկանում ես…

— Չէ՛, բարկանում չեմ, միայն տխրսոս գալիս է, վոր էսքան ապրանքս փչացավ…

— Լավ, վոր բարկանում չես, էլ կծառայեմ։

Հարուստը մտածում է՝ ինչ անի վոր ես ծառայից ազատվի։

Պայման է կապել մինչև մին էլ գարնան կկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ վիրտեղ են գարունն ու կկուն։

Մի՞թք է անում, ճար չի գտնում, վորոշում է ազատվել ծառայից։

— Հա, տխպեր հերիք է։ Արի՛, ինչ տուգանք տալու լեմ, տամ, քեզնից ազատվեմ։ Իմ դրած պայմանն է, լեռ էլ պետք է տուժեմ։

Եսպես փոքր տխպերը մեծ տխպոր տված պարտքի թուղթը պատռում է, հազար մանեթ տուգանքն էլ առնում ու վերադառնում տուն։

---

1. Ի՞նչ նպատակով է հարուստն այսպիսի պայմանագիր կնքում ծառայի հետ։

2. Ի՞նչ հետևանք ունեցավ մեծ լեղբոր և հարստի կնքած պայմանագիրը։

3. Ի՞նչ տարբերություն կա լերկու լեղբայրների կնքած պայմանագրերի մեջ։

4. Ի՞նչպուտ ստացավ հարուստը փոքր լեղբորից։

ՀԻՇԵՑԵ՛Ք

Չակերտը դրվում է այն ժամանակ, լերբ ուրիշի խոսքեր են մեջ բերվում։

Այդ մեջբերումները լեթե գործադրվում են իբրև վկայաբերություն,—ցիտատներ են կոչվում։

Գործարանների հիմնարկների, լրագրերի և այլն անունները դրվում են չակերտների մեջ։ Որինակ՝ «Արարատ» գործարան, «Խորհրդային Հայաստան»։ Ցեթե «Խորհրդային Հայաստան» բառերը չակերտների մեջ չառնենք, կհասկացվի վոչ թե լրագիրը, այլ յերկիրը։

Բառերը հեգնական իմաստով գործածվելիս նույնպես առնվում են չակերտների մեջ։

---

49. ՄԵՐ ՃԱՄԲԵՆ ԿՈԼԽՈԶՆ Ա, ԿՈԼԽՈԶԸ

… Մոսեսը յերբ ուշքի լեկավ, աղջիկը չկար։

Ողալի լուսամուտից Մոսեսը դուրս նայեց ու տեսավ, վոր ձյուն է գալիս։ Ձեռքերին նայեց, չանգռոտված ելին։ Հետո տատամները կրճատացնելով վեր կացավ խսիրով ծածկված յերկար թախտից ու կնոջը կանչեց, վոր դռում աղբն ել ավլում։

— Ո՞ւր գնաց շան աղջիկը։

Ցեղսոն չպատասխանեց, նստ բարկացած ել ամուսնու վրա։

— Քեզ եմ հարցնում, ո՞ւր գնաց Մանուշը։

— Հանգիստ չպիտի թողնես աղջկան։ Ինչ պատիկ չի։

Մոսեսն աչքերը խոտացրեց, ըստ սովորության ունքի մեկը բարձրացրեց վեր, բայց վոչինչ չպատասխանեց, միայն շալե վերնազգեստի ոձիքը բարձրացրեց և դուրս լեկավ։

Հինգ տարի եր, ինչ Ղ... գյուղում կոլեկտիվ եր կազմակերպվել 35 տնտեսությունից բաղկացած։

Որ-որի վրա մեծանում եր ու աճում։ Գյուղացիներն սկսել են հասկանալ կոլեկտիվ կյանքի նշանակությունը։

Կոլեկտիվը մեծանում է, կուլակ Գալուստն անհանգստությամբ և թարթում իր աչքերը։

Մոսեսը միջակ գյուղացի լե։ Թերահավատորեն և վերաբերվում կոլեկտիվի հաջողություններին։ Նա մի քանի անգամ թեյ և խմել Գալուստի մոտ, իսկ յերբ դուրս է լեկել նրա հարկի տակից, Գալուստը ժպտացել է խորամանկորեն և շշնջացել։

— Մոսեսն ել չի մտնի կոլխոզ։

Մոսեսի ընտանիքում խռովությունն սկսվեց այն որից, յերբ նրա աղջիկը՝ Մանուշը հորից պահանջեց կոլեկտիվ մտնել։ Սկզբում նա հորը համոզում եր, բայց վերջինս քիչ ուշադրություն եր դարձնում աղջկա ասածների վրա, վորովհետև Գալուստի ամենորյա հորդորներն ուժեղ ելին։

Մոսեսի աղջկան—Մանուշին ընկերները միշտ նախատում ելին, վոր նա ընտանիքին չի կարողանում համոզել ու բերել կոլխոզ։

Բացի դրանից, չունի վճռականություն և լեռ է մնում... Նամանավանդ Մանուշի սիրտը ծակում ելին բջջի քարտուղար Գարեգինի նախատինքները։

Մանուշը լռում եր, վոչինչ չեր կարողանում պատասխանել Գարեգնին, վորովհետև զգում եր, վոր նա ճիշտ է խոսում։

Նա տանը դարձյալ ստանում եր բացատրական աշխատանք։ Մայրն արդեն անցել եր իր կողմը, բայց Մոսեսի համառությունն անկարելի յեր, վորովհետև կուլակ Գալուստը չեր դադարում թունավորել նրա միտքը։ Յերբ Մանուշը տեսավ, վոր իր բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում, ստիպված լեղավ հարցը դնել վճռական կերպով։

— Տվեք ես տանից, ինչ վոր ինձ հասնում է, լես կոլխոզ եմ գնում։

Մոսեսն աչք-ունքը բարձրացրեց, ուսերը լայնացան, իսկ ձեռքերն սկսեցին դանդաղկոտությամբ սահել սպիտակ բեխերի վրայով։

— Ինչ ասիր,— ասաց նա համարյա անլսելի, բայց խռպոտ ձայնով։

— Գնում եմ կոլխոզ...

Կատաղած Մոսեսը քոնեց աղջկա ձեռքերը և սկսեց վոլորել։ Վրա հասավ Ցեղսոն և սկսեց Մանուշին ոգնել։

Մանուշը չանգռեց հոր ձեռքերը և մի կերպ ազատվեց, հրելով նրան թախտի վրա։ Նա դուրս թռավ ոդայից և ինքն ել իմացավ, թե ինչպես ներս ընկավ կոլխոզի գրասենյակը։

Շնչասպառ նա դիմեց նախագահին՝

— Մինաս, Մինաս ջան... ինձ կոլխոզ տրի։ Ել չեմ կարող համբերել։

Մինասը ժպտաց։

— Դիմում գրի,— ասաց նա։

Մանուշը չտեսավ, վոր գրասենյակի անկյունում ժպտում եր նաև Գարեգինը։

*
* *

Պայծառ գարուն եր։ Արևի տակ ծփում են կոլխոզի դաշտերը։ Նրանք սրտատրոփ սպասում են, սպասում են մի մեծ «հրաշքի», բարախում է կոլխոզնիկների սիրտը։

Հեռվից վրնջաց յերկաթե ձին՝ տրակտորը։ Թնդաց ուռռան, բարձրացավ կարմիր դրոշը ու ծածանվեց քամու ալիքների տակ։

Մանուշը բռնել է դրոշակը, նայում է մոտեցող տրակտորին։

Պայծառ գարունը, պայծառ արևին ու պայծառ որերին ժրպտում ելին կոլխոզնիկները։

— Ուռռա, կեցցե՛ տրակտորը։

— Անիծվի՛ նա...— մրմնջաց կուլակ Գալուստը և նորից դիմեց Մինասին։

— Տո՛, ինչ կա եդ տրակտորի մեջ, վոր եդպես զարմացել են։ Փող ունենաս, դու լել կարաս առնի։

— Ասում ես ելի, Գալուստ։ ախար աչքեր ունեմ, տեսնում եմ։ Մարդիկ կարգին աշխատում են ու մարդավայել ապրում։ Հիմա լել խո տեսնում ես, տներ են շինում կոլխոզնիկների համար։ Համ ել կոլխոզն ահագին մեծացել է։ ասում են՝ վաթսուն տնտեսություն ա դառել։

Գալուստը դժգոհ, աչքերը կկոցեց։

— Եդ դիվն աչք կապելու համար է։ սրանց բալշևիկ կասեն։ Ենքան խորամանկ են, վոր քեֆդ գա։

— Ե՛ Գալուստ, ջիգյարդ երված է, ենդուր ես եդպես խոսում։ Համա լես, ինչ... միջակ գեղացի լեմ, աղջիկս ել հրեն կոլխոզումն ա, աղբեր տեսնում եմ, վոր մեր ճամբեն կոլխոզն ա, կոլխոզը։

... Ու այդ գիշեր անկողնում պառկած, Մոսեսը յերկար միտք եր անում, նախքան քնելը։ Մոսեսը մրմնջաց։

— Մանուշը դրուատ եր ասում։

— Ընկերներ, ընթացիկ հարցերում կարդում եմ կոլխոզ մտնել ցանկացողների միքանի դիմում, խոսեց կոլխոզի նախագահ Մինասը։

«Ստալինի» անվան կոլխոզին

Դիմում

Ղոնախուան գյուղի բնակիչ Մոսես Կարապետյանից

Խնդրում եմ ինձ, վորպես միջակ գեղացի, ունենալով 1 կով, 2 լեզ, 1 աշտա, ընդունեք ձեր կոլխոզական շարքերը։ Խնդրում եմ դիմումս չմերժեք։

Դիմում եմ (ստորագրություն)։

Ժողովատեղում լավեցին բուռն ծափահարություններ։ Մանուշն ուրախությունից թռավ տեղից և համբուրեց հորը։—խելքի՛ լեկաը, հալրի՛կ։

— Հա՛, ախպեր, միջակ գեղացի լեմ, խոմ կուլակ չեմ,— մեր ճամբեն կոլխոզն ա, Ե՛, կոլխոզը։

---

1. Գյուղական վոր շերտին եր պատկանում Մոսեսը և ում հետ եր նա ընկերություն անում։
2. Ո՞վ եր Գալուստը և ի՞նչ լուրեր եր տարածում նա կոլխոզի մասին։
3. Ի՞նչու համար Մոսեսը չեր համաձայնում իր աղջիկ Մանուշի հետ, կոլխոզ մտնելու համար։
4. Ի՞նչ դրության մեջ եյին դրել Մանուշին նրա ընկերները և կոմսոմոլի բջջի քարտուղար Գարեգինը։
5. Ինչպե՞ս ազատվեց Մանուշն այդ դրությունից։
6. Ինչի՞ արդյունք եր Մոսեսի շրջադարձը։
7. Գրեցեք մի որինակելի դիմում այս կամ այն ձեռնարկության հասցեով։

---

50. ԿՇԼԱՆ

...Մի քանի բոպե լուռ ճաշեցինք։ Հեռու, կիսամթան մեջ, սինու շուրջը բոլորած գյուղացիք ևս դադարել եյին փոփսալուց։ Ուտում եյին և անդադար դիտում մեզ։ Ցեթե կաթողիկոսը պատահմամբ նրանց կողմն եր նայում, իսկույն ուղղվում եյին աշակերտների պես, կծկվում և ակնարկները խոնարհեցնում։

Մինչև վոր մի քանի գավաթ չխմեց և մի լավ չկերավ, կաթողիկոսն այլևս չխոսեց։ Մենք ել լուռ եյինք։

Ջավարե վլավից հետո գյուղացիներից մեկը շարժվեց, քոլոզը հանեց և ձեռքին բռնած հողե կուլիկը՝ մոտեցավ և ասաց կաթողիկոսին.

— Հոգևո՛ր տեր, որհնե՛... Մեզ արձակե՛, յերթանք այս գիշեր։

Կաթողիկոսը նայեց գյուղացուն, խաչակնքեց կուլիկի վրա և ասաց։

— Այս յերեկո դժվար թե յերթաք, ռես Մլո։ խոսելու շատ բան ունենք։

Ռեսը, վոր մի ալեզարդ և պղնձագույն հուժկու ծերունի յեր, բարձրացավ չոքած տեղից։

— Աջիդ դուրբան, հոգևոր տեր,— գոչեց նա աղաչավոր ձայնով,— մեր տուն ու տեղը մնացել է անտեր-անտիրական 5—6 որ, ել ո՞վ գիտե՝ ինչեր են պատահել գյուղի մեջ։ արձակե՛ մեզ, այս գիշեր յերթանք։ լավ գիշեր է, բավական ճանապարհ կկտրենք։

Կաթողիկոսը դեմքը կնճռեց։

— Ե՛, յես ինչ անեմ,— ասաց նա քիչ նեղացած ձայնով— տերության գործն է. նրա հրամանն է. թեթև գործ ել չէ, վոր շուտով պրծնենք։ մտածել է հարկավոր։ Մի քանի լիրայի բան հո չե՞.. հարյուրներ են պետք...

— Դու գիտես, հոգևոր տեր,— շարունակեց ռեսն ավելի աղաչավոր։— վճռիր՝ ինչ վոր խղճմտանքդ տա։ ինչ արած, զուլումը պիտի տանենք։ Վո՞ր մեկին բան ենք ասել, վոր այսոր ասենք... Հրամանքդ մի բան ասա, վորոշի՛ և արձակի՛ր մեզ, մեր տուն ու տեղը գնանք, մեր ցավերին նայենք...

— Գիտե՞ս ինչ, Մլո՛— ասավ վերջապես կաթողիկոսը ռեսին,— քանի՛ վոր այսպես է, լավ, այս յերեկո վերջացնենք, ու գնացեք... Բանն այն է, վոր այդ կշլանի համար 500 վոսկուց ավելի ծախս կերթա։ Դեռ չեմ ասում գերան, քար, ձրի գործավորներ...

— Ցամա՛ն, հոգևոր տեր— բացականչեց ռեսը։ —Ասա, վոր մեր յերեխաների շապիկը հանենք տանք ու մենք ել նրանց անոթի թողնելով՝ գնանք կշլան շինենք... Ցամա՛ն, եդ ի՞նչ զուլում է։ 500 լիրա վոր քամես՝ 10 գյուղից չի դուրս գա։

— Ի՞նչ անենք,— խոսեց կաթողիկոսը։ —Ասա թողնենք, վոր զինվորները գյուղերը ցրվեն ու ամեն ինչ քարուքանդ անեն, ձեր յեկեղեցիներն տխոռ դարձնեն... Չե՛, ինչ վոր ել լինի, պիտի կշլան շինել...

Այդ միջոցին գյուղացիներից մեկը, վոր մոտեցել եր ռես Մլոլին, խառնվեց խոսակցության։

— Վանքը ինչ է տալիս իր կողմից,— հարցրեց նա վախկոտ ձայնով։

Կաթողիկոսը գդալը փլավի վրա դրեց, հետո կռացավ և խոսողին նայեց։

— Մեկ ես կողմը նայե՛, եղ ում եր խոսողը,— գոչեց նա։— Դուն ես, ռես Մլո։ Չե՞ս ամաչում։ Վանքն ինչ ունի, վոր՝ ձեզ համար տա։ Չե՛, ինչպես յերևում է, սրիկաներ են մտել ձեր մեջ... Կարգս վկա, եղ սրիկաներին ձեռք պիտի տամ արդեն։ Ել վոչ հավատ և վոչ խոնարհություն։

Գյուղացիները սարսափից կծկվեցին, բայց ռես Մլոն խսկույն մեջ մտավ։

— Հոգևոր տեր,— ասաց նա,— մի նեղանա, աջիդ զուրբան։ Ռես Մլոն ջահել է, համբերել չգիտե։ Իհարկե, մենք պիտի վանքին տանք, և վոչ թե վանքը մեզ։ Մեռնեմ վանքի գորությանը... Բայց քո վոտքն ենք ընկել, 500 վոսկին մի բարձիր մեր գյուղի վրա։ Ցես քո ծառան եմ, մենք քո զավակներն ենք, հոգևո՛ր տեր, այնպես արա, վոր գոնե 10-ական վոսկով ազատվենք...

— Ի՞նչը, տմսը... Չե, տես, եղ շատ քիչ է։ Մնացածը յես ումից առնեմ։

— Ա՛խ, հոգևոր տեր,— հառաչեց ռեսը,— վոր տեսնես մեր հալը, մեր տառապանքը, այդ տասը վոսկին մեր վողջ գյուղի գլխը կնամարես։ Մեր կնիկները մերկ են, մեր մանուկները ցրտի դեմ վոչինչ չո՛ւնեն, մեր կերածը բանջարն է մնացել։

— Ե՛, լավ, լավ, կարճ կապիր,— ասաց կաթողիկոսը։— Գյուղացի յեք, վո՞րքան լավ դրություն ունենաք, դարձյալ լաց կլինեք, վոր ինչ է՝ չտաք։ Այսպես չե՞, վարդապետ։

— Ուղիղ է, վեհափառ,— ասաց հայը սուրբը։— Անցյալ տարի յել, յերբ յես «պտուղ» ելի ժողովում, դարձյալ լաց ելին լինում, սուտ ելին ասում, վոր չպահանջենք։

Ցեվ անշուշտ մտադիր եր այդպես շարունակել, յեթե ընկերս չընդհատեր նրան։ Կնճռոտ, դաժան ու խիստ՝ Կարապետը դարձավ նրան ու ասաց։

— Դուք սասսիկ սխալվում եք, հա՛ր սուրբ։ Դուք գիտեք, վոր գյուղացին այլևս վոչինչ չունի, վոր նրա ընտանիքը մերկ է, անոթի, և վոր նա ինքը հալածված է, հափշտակության զոհ դարձած... Գիտեք այդ և սակայն նոր ծանրություն եք բարձում նրա ջարդված ուսերի վրա։

Հուզմունքից լռեց։ Կաթողիկոսն ապշել եր։

Ղազար վարդապետը շփոթված՝ գդալը ցած դրեց։

— Ցես աչքովս տեսա,— շարունակեց Կարապետը քիչ լռելուց հետո։— Ահա մի քանի տմիս է, վոր ման եմ գալիս այս Թշվառների յերկրում։— Աչքովս տեսա սոսկումներ։ Տեսա, վոր աշխատավոր ժողովուրդը, վորին հարստահարում են ու հալածում, իր աղի արցունքն է կուլ տալիս և իրավունք չունի լալու, հառաչելու... Ցեվ այդ է ամենից սարսափելին...

Ու յելավ։ Կաթողիկոսն ընթրիքը վերջացրեց, ապա Ղազար վարդապետին մի բան փսփսաց։ Գյուղացիներից շատերը դուրս յելան, մենք ել գնացինք դեպի բլուրը և այնտեղ լուռ՝ նստեցինք մի տպառաժի վրա։

— Այո, ուրանում են, ծածկում են,— շարունակեց Կարապետը հուզմունքով։— Ցեվ այդ ամենասոսկալին է, վորովհետև յեթե հաստատեն, իրենց գրպանը վոչինչ չի մտնի։

Ասա կռացավ, նայեց սպիտակ մշուշով լիքը հովտին և գոչեց։

— Վո՞ր քան Թշվառ ես դու, անբախտ ժողովուրդ և վո՞ր քան խորն են վերքերդ...

Գիշերով հեռացանք վանքից։ Մեկնեցին նաև գյուղապետերը։ Մի զինվորանոց շինելու համար յուրաքանչյուր գյուղի վրա 15-ական վոսկի նոր տուրք բարձած, գնում ելին նրանք։

Նրանց վոտքերի հանած փոշին թանձր ամպերով բարձրանում եր։ Իսկ իրանք գնում ելին, տանելով դեպի գյուղը մի նոր տառապանք...

Ո՞ւմ հաշվին ելին ապրում հոգևորականները։ Նկարագրեցեք կաթողիկոսի վերաբերմունքը դեպի գյուղացիները։

Ովքե՞ր ելին գյուղացիներին կեղեքողները։

Ի՞նչ դրության հասցրին գյուղացիներին։

Ինչպե՞ս աղատագրվեց աշխատավոր մասսան հոգևորականության ծանր լծից։

ՏԵՂԵԿԱՆՔ

Վանկատումը (վանկերի բաժանելը) պետք է գալիս տողադարձության համար։

Ցերբ մի բառ չի տեղավորվում տողավերջում, ապա այն բաժանում ենք վանկերի և միայն ամբողջ վանկերն ենք տեղափոխում հաջորդ տողը։

Այդ կոչվում է տողադարձություն։

Տողադարձության ժամանակ բաժանվող բառի տողավերջի վանկից հետո դրվում է փոքրիկ գծիկ, վոր կոչվում է տողադարձի նշան կամ յենթաթեռ։

Միավանկ (մեկ վանկ ունեցող) բառերը չեն տողադարձվում։

Բազմավանկ (մեկից ավելի վանկեր ունեցող) բառերը տողադարձելիս՝

1. Ցերը մեկ բաղաձայն է ընկնում յերկու ձայնավորների (կամ յերկձայնների) մեջտեղը, ապա այն ձայնավորն անցնում է հաջորդ վանկին։ Որինակ՝ սա-բեր, ա-բե-վի։

2. Ցերը յերկու բաղաձայն է ընկնում ձայնավորների (կամ յերկձայնների) մեջտեղը, ապա մեկը մնում է, մյուսն անցնում է հաջորդ վանկին։ Որինակ՝ կար-միր, լեռ-ներ։

3. Ցերը յերեք բաղաձայն է կողք-կողքի, ապա յերկուսը մնում է, մեկն անցնում է հաջորդ վանկին։ Որինակ՝ դարթ-նել Վարդ-գես յերկ-րին։

---

51. ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔ

Մի քանի բոպելից արդեն կառքը տանում եր Նրանց քաղաքի փողոցներով, ու Տիգրանը ցուցց տալով Միրյանին քաղաքի նեղ, ծուռ փողոցներն ու գորշ, սև տները, պատմում եր նրան այդ հին քաղաքի անցյալից, ներկայից, ծանոթացնում եր քաղաքի ընդարձակվելու հնարավորություններին, խոսում եր նրա ջրային ուժի մասին, թե վորքան ոգուտներ կարող է տալ այն ապագայում. խոսում եր հին թաղերի մասին և այն մասին, թե ինչ սարեր կան մոտերքում, վորոնք «լիքը գանձեր ունեն». դրանք շահագործելու համար կարելի յե գործարաններ շինել. այսպիսով սա կդառնա արդյունաբերական քաղաք, ճալով միաժամանակ հանգստի վայր, քանի վոր ոդն այնքան նպաստավոր է։

— Ահա անտառը.— ձեռը մեկնեց Տիգրանը դեպի քաղաքից վերև յերևացող կանաչ անտառը.—տների մի մասը կարելի յե շինել նրա փեշերին կամ մասամբ նրա մեջ։ Ցերևակայում եք՝ տերրասներ, սպիտակ տներ, ուղիներ... կդառնա սանատորիա-քաղաք. թե չե՝ նայեցեք այս հին տներին, ինչի լեն նման՝ անող և անլույս, ամեն մեկը մի բուն՝ նախապաշարմների և հնության... Ցես կարծում եմ, ընկեր Միրյան, ավելի շուտ համոզված եմ, մինչև վոր մենք սրանք չքանդենք, չենք կարող արմատախիլ անել հին սովորությունները, հին կենցաղը, հին հոգեբանությունը։ Հին տներում քարացած նախապաշարումներն ու տրադիցիաներն ավելի յերկար են ապրում... Հին տունը՝ պառավի նման՝ նոր, թարմ բան չի ընդունում իր մեջ... Մինչդեռ նոր տունն այլ բան է։ Նոր տունը նման է նոր աշխարհի։ Այնպես չի՞։ Նոր տունը, նոր քաղաքը մարդու մոռացնել է տալիս հինը, իր անցյալը և ստեղծում նոր, առուլդ տրամադրությամբ։ Այդ բանը լինում է նույնիսկ ակամա, անգիտակցաբար... Ցավ դրա համար ինձ թվում է, մինչև վոր այս քաղաքացիներին մենք դուրս չբերենք իրենց հին տներից, չենք կարող հասկացնել նրանց վոչ սոցիալիզմ, վոչ կոմունիզմ...

— Իհարկե, իհարկե,—գլուխը թափ տալով համաձայնվում եր ճարտարապետը, թեև սրտում համոզված եր, վոր դրանով սոցիալիզմ չի կառուցվի, վոր սոցիալիզմն իրեն չի յել վերաբերում բնավ, ու զարմանում եր կոմունալ տնտեսության վարիչի հափշտակության ու շատախոսության վրա և լսում եր անտարբեր, ճիշտ այնպես, ինչպես արհեստավորը քմահաճ պատվիրատվի յերկար բացատրությունները. ինքը գիտի իր անելիքը, բայց լսում է քաղաքավարությունից դրդված։ Այդպես ել Միրյանը, մի քանի խոսքից հասկացել եր բանի եությունը, մնացածը լսում եր ակամա։ Ու նրան թվում եր, թե այն բոլորն, ինչ ասում է կոմունալ տնտեսության վարիչը՝ նոր կոմունալ տների, նոր կենցաղի մասին, այդ բոլորն անիրագործելի, ֆանտաստիկ բաներ են, վոր մարդիկ չեն կարող ապրել այնպիսի տներում ու հաշտ մնալ իրար հետ և իրենց յերջանիկ զգալ։

Ձիերը գնում եյին բաշերը հովին տված, կառքը հանդարտ գլորվում եր փողոցից փողոց, և Տիգրանը թեթևակի թեքված դեպի ճարտարապետը, պորտֆելը ծնկներին սեղմած՝ ծանոթացնում եր նրան դարձյալ թաղերին, այն շենքերին, վոր կառուցել եյին վերջերս և այն ծրագրներին, վոր ունեցել են։

— Այստեղ մենք մտադիր եյինք ընդարձակել և զբոսարան պարտեզ դցել, բայց հետո վորոշեցինք, թե ավելի լավ է դարձնենք լայն հրապարակ՝ հասարակական խաղերի, հանդեսների և լերթերի համար... Ապագայում սա կլինի քաղաքի կենտրոնը... Ցավ անհրաժեշտ է, վոր կենտրոնում լինի այնպիսի հրապարակ, վոր տեղավորի բոլոր քաղաքացիներին՝ մանուկներից սկսած մինչև ծերունիները... հրապարակ, ուր կլինեն ապագայում խաղեր, մրցություններ ու պարգևատրություններ...

— Այո՛ այո՛,—գլխով է անում ճարտարապետը, նայելով այդ թզաչափ հրապարակի շուրջը կքած զառամ տներին, վորոնց ծեփը, ներկը ճաքճքված-թափված եյին, սանդուղքները ծռված, լուսամուտները հնորյա ու տձև։

Ձիերը դարձյալ բաշերը հովին տված վազեցնում եյին կառքը փողոցից-փողոց, մերթ դժվարությամբ յեղնում զառիվերը, մերթ սրնթաց իջնում ցած, և Տիգրանը շարունակում եր դարձյալ.

— Մենք ավելի ուժ պիտի տանք, իհարկե, այն տիպի տներին, վորոնք քաղաքացիներին դաստիարակեն կոմունալ վոգով, ընդհանուրի շահերով... և վոչ թե բուրժուական տների նման մարդկանց զատեն, առանձնացնեն իրարից, ինչպես կալանավորին մեկուսարանում... Առանձնացած ընակարանը զարգացնում է հոգու ա-

ռանձնություն, մեքենական տրամադրություններ... տա՛ Թե ինչո՛ւ լեռ դեմ եմ առանձին բնակարաններին, թող բոլորն ապրեն ինչպես մի ընտանիքի անդամներ... Այսպես ավելի լավ չէ՞, ընկեր Միրյան։

Տները Միրյանին չելին վերաբերում, նրանը հատակագիծն եր, բայց և այնպես հետաքրքրվեց քաղաքավարությունից դրդված, մասամբ էլ իր անհավանությունը հայտնելով։

— Ուզում եք, ուրեմն տները լինեն հանրակացարանի՞ ձևով։

— Վո՛չ, չկարծեք Թե իմ ո դածը զինվորական հանրակացարաններ են. վո՛չ, տներ այնպիսի հարմարություններով, ուր ամեն ինչը՝ խոհանոցից մինչև հանդերձարանը լինի ընդհանուր...

— Այո՛, այո՛, — ասաց ճարտարապետը, մտածելով դարձյալ, վոր անիրագործելի, ֆանտաստիկ բաներ և ասում կոմունալ տնտեսության վարիչը և վոր դրանով մարդը դժվար Թե հասնի սոցիալիզմին։

Ցեվնա վոչ այնքան լսում եր Տիգրանին, վորքան մտածում եր այն մասին, Թե վորքան ժամանակում կարող և վերջացնել հատակագիծը. ու հաշվում եր, վոր կարելի չե վերջացնել և մի ամսում, և մի տարում, նայած հանգամանքներին ու պայմաններին...

---

52. ԱՐՈՐԸ՞, ԹԵ՞ ՏՐԱԿՏՈՐԸ

Ոհան ամին լծեց յեզը,
Խաչակնքեց իր յերեսը,
Ասված կանչեց, ենպես սրտանց,
Վոր Թե վերում լիներ նստած
Ասվածակերպ մի բան... գոնե...
Պիտի իջներ, պիտի ոգներ։

Եսպես բռնեց արտի ճամբան.—
Բայլում եյին յեզներն անբան,
Ինքն էլ յետից, քայլով յերկու,
Ու մի սրտոտ յերգ և յերգում։
Ցերգեց, քայլեց Ոհան ամին,
Մինչև հասավ արտի խամին։

Առավոտ եր։ Արևը վառ
Լուսավորեց յերկիրն արար,
Հողն ու ծովը ու աշխարհը,
Հանդը, արտը, ձորն ու սարը,—
Ու վոնց վոր մի վոսկե դհոլ
Արևը հոլ, արևը հոլ...

— Ցել-հա, հա-յել...
Ու հորովել,—
Արտն է վարում Ոհան ամին,
Ու լեռնային դուլալ քամին
Զով շոյում է նրա դեմքը,
Ու տանում է նրա յերգը,
Նրա յերգը ու յերգելը,
Ցեղան պես ծանր հորովելը,
Հորովելը, որորվելը։

Կոլեկտիվի վերի արտում
Այդ տրակտորն է հերկում արթուն,
Հերկում արթուն արագ-արագ,
Վոնց վոր քամի կարած կրակ,
Վեր է վազում, վար է վազում
Հողի շերտը հատ-հատ դարսում։
— Ցել-հա, հա-յել,

Ու հորովել...
Ցերեք անգամ յեկավ, գնաց
Ոհան ամին, յերեք անգամ.—
Մինչ տրակտորը գնաց յեկավ,
Կարաս, հաշվի՝ քանի՞ անգամ...
Շոգն սկսեց վոնց խորովել։

— Ցել-հա, հա-յել,
Ու հորովել...
Ցերկրորդ դարձի կեսը չարած,
Վոնց պատահեց... դիպլված.
Ջուրը քարի դեմ առավ
Ու կոտրվեց... չարի արկած...
Ոհան ամին կանգնեց սառած,—
Դանակ խրես նրա սրտում,
Չի կաթի մի կաթիլ արուն...

— Ցել—հա, հա-յել...
Հա-յել, հա-յել,
Ոհան ամի, քեզ չեր վայել,
Ես տաք որով գործդ սառավ,
Խոփդ քարին գնաց առավ,
Էլ ինչ անես կոտրած չուքով,
Կոտրած չուքով, կոտրած սրտով։
Կանգնել է նա աչքը խոլոր,
Արտի մեջին շվար, մոլոր...
Կոլեկտիվի վերի արտում
Ժիր տրակտորն է հերկում արթուն,
Վեր է վազում, վար է վազում
Ու շերտերը դարսում, դարսում...

— Թու, քո անվան, ստեղծողին,
Ստեղծողին, մարդ ասողին...
Ես էլ գործ է, ես էլ ապրումս,
Մեռիր, ելի, ի՞նչ ես ապրում...
Խառնվեցին որ ու հաշիվ,
Վեր կաց հիմա քաղաք քաշի
Նորոգել տուր, ելի յետ արի,—
Ոհան ամի, կանգնի պարի,
Լավ է գործդ, ասված վկա,
Թանիդ թթու ասող չկա...
Մի շեկ աղջիկ թռվռալեն,
Թռվռալեն, վոտին տալեն
Արտը հասավ,—
—Ի՞նչ ես կանգնել աչքդ խոլոր,
Արտի միջին շվար, մոլոր,
Ճաշ եմ բերել յես քեզ համար,
Նստի ու կեր, կեր ու ուժ առ։

— Իշտահ մնաց... գնաց, չքավ,—
Ասավ ամին իր աղջկան,—
Ես տաք որով գործս սառավ
Խոփըս քարին գնաց առավ.—
Մի թումբ փլավ աղջկա արտում —
Ի՞նչ սուտ, ուրախ լուրեր շարեր,
Ամու սիրտը մխիթարեր.
Կանգնեց անդոր, լռեց անճար,
Մեռելատանն ի՞նչ խաղ ու պար...

Կոլեկտիվի վերի արտում
Ժիր տրակտորն է հերկում արթուն
Յել,-հա, հա-յել...
Ե՞ս եր վայել
Արմենակը
— Գիրք է սերտում...
— Այ, չար մտնի նրա սրտում,
Յես ի՞նչ անեմ
Կոտրած չութով.
Կոտրած չութով,
Կոտրած սրտով։
Հրեն... յեկավ Արմենակը...
— Վոնց է գործդ...
— Ա՛յ, կրակը...
Առաջ վազեց Արմենակը.
Վառված-տարված վոնց կրակը.
Ու կոմյերիտական տրակտորիստին
Հասավ, ասավ,—

—Արի ըստի,
Նեղն է ընկել ալևորը,
Արի՝ շանց տանք մեր շնորքը...
Տրակտորն եկավ տալով հարա,
Ամու արտը տակոփ արավ,
Գնաց յեկավ, յեկավ գնաց...
Ամու սիրտը մթագնած
Լուսվեց վոնց վոր
Գարնան արև,
Գարնան արև,
Գարնան արև։
Լուսնակն եկավ վոնց վոր սինի.
Ամու սիրտը — մի տիկ գինի,
Յեռ է գալիս ուրախ, խնդուն
Չհերկված վոչ մի թիզ արտում։
— Ամի, վե կալ էլ հաշիվը...
— Սաղ մնա ձեր կոլեկտիվը...
Մենակ ձեռով ի՞նչն կգտնեմ,
Կգամ, ախպեր, կոլխոզ մտնեմ։

— Ի՞նչ պատկերներ կան այս վոտանավորում։ Հակադրեցեք երբը և ցույց տվեք տրակտորի առավելություններն արորի հանդեպ։
— Ոհան ամին ինչու յե չարանում ու լքվում։
— Ո՞վ է նրան նեղ դրությունից հանում։
— Կոմյերիտականներն առհասարակ ինչ պարտականություններ ունեն գյուղում։

---

53. ԿԻՍԱՏ ՏՈՒՆԸ

Եղ են ժամանակ եր, յերբ ամեն ինչ շարժվեց, յերբ մութ խորքերից լույս աշխարհ յեկավ դարավոր տանջանքը, յերբ բացվեցին փակ բերանները հզոր աղմուկով...

Են ժամանակ Սարգիսը վերադարձավ քաղաքից ու հայտարարեց գյուղի շուկայում։

— Ել հարուստ-աղքատ չկա, սրանից դենը բոլորս մին ենք։

Ու պատմում եր քաղաքի բաներից, շշմեցնում գյուղացիներին իր բերած նոր մտքերով։

Շուտով յեկան և ուրիշները՝ նույն հովերով, ու ամբողջ գյուղը դղրդաց նոր խոսքերի տարափից։

Եղ որերին եր տեսա, յերբ Սարգիսն ուրախ-ուրախ սկսեց իր նոր տան շենքը. նա բարձրացրեց պատերը, բայց չկարողացավ ծածկել իր տունը։

* * *

Անցան տարիներ, անցավ են ժամանակը...

Սարգիսը մնացել եր գյուղում, եվ գործ չկար քաղաքում։

Նա ման ե գալիս լուռ, ինքն իր մեջ խորասուզված՝ աշխատելով անընկատելի դարձնել իրեն։ Խուսնացել եր նրա հոգին, վորի վրա յերևում եյին յերկու մեծ կարկատաններ. դժգոհել եր նրա դեմքը, տես նույնպես խունացել, իսկ նրա տունը դարձյալ կիսատ եր։

Անցել եր են ժամանակը. կյանքը նորից իր նախկին հունի մեջ եր մտել։ Գյուղի շուկայում դարձյալ իրենց առաջվա դիրքերն եյին գրավել յերկու վաշխառուները՝ հաստափոր Սանդրոն և նիհար, չորացած Մարտիրոսը։

Ու ամեն անգամ, յերբ Սարգիսը լուռ, իր մտքերի հետ ընկած անցնում եր շուկայով, Մարտիրոսը տերողորմյա գցելով՝ սպասում եր, վոր նա մոտենա, ու կամացուկ ասում եր.

— Սարգիս, կարելի յե փող ե հարկավոր, տրի տամ տունդ վերջացրու։

Յեվ նրա խոշոր, վոսկրացրած դեմքի վրա խաղում եր խորամանկ ժպիտը, իսկ մանը, խոր ընկած աչքերը պսպղում եյին հեգնող փայլով։

Սարգիսն աշխատում եր արհամարհել, լուռ անցնել, բայց ահա նրա առաջ եր գալիս հաստափոր Սանդրոն շրջապատված իր մարդկանցով։ Դեռ հեռվից բղավում եր իր լիտառա, հրճվալից ձայնով

— Սարգիս, բա ասում եյիր՝ եվ հարուստ-աղքատ չկա։ բա ինչի՞ չես տունդ շինում։ տխր կիսատ ե մնացել։

Սարգիսն այրվում եր եդ խոսքերից, վորոնք հիշեցնում եյին անցած որերը, յերբ ինքն եր հարձակվում յերկու վաշխառուների վրա, ու եվ չեր համբերում։

— Շատ մի յեղակալիլ,—ասում եր նա,—մի տավով վոր ջուր ե գնացել, մին եվ կգա։ սաղ աշխարհի տունն ե կիսատ մնացել, մենակ իմը հո չի։ Լավ իմանաս, են որը ելի կգա, տունս կթամամեմ քու աչքն եվ կհանեմ...

— Հա, հա, հա... Մին եվ կգա,—հռհռում եր Սանդրոն ծիծաղելով և ավելի ևս փքվում ու լայնացնում իր տեղը։

Նրա հետ ներդաշնակ հռհռում եյին նաև իր շուրջը պատած համախոհները։

— Ծիծաղիր, ծիծաղիր։ Տեղդ լենացել ե, տամ լավ միտդ պահիր, քանի ես խալխի ցավը կա, են որերն ուղտի նման կչոքենք դռանդ առաջը։

Ասում եր Սարգիսը, դառը հեգնանքով չափում վոտից գլուխ Սանդրոյին ու հեռանում դանդաղ քայլերով։

Գնում եր ու իր այրվող աչքերով մի յելք փնտռում են նեղ փողոցներում։

Յեվ վորպես մի արձան են անցած որերի՝ խորհրդավոր լռությամբ հանդիպում եր նրան իր կիսատ տունը...

— Ինչու՞ հեղինակն իր հոդվածի անունը դրել ե «Կիսատ տունը»։

— Վո՞ր իրավակարգի ներկայացուցիչներն եյին «հաստափոր Սանդրոն» և «չորացած Մարտիրոսը»։

— Յե՞րբ շինվեց այդ «Կիսատ տունը»։

---

54. ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐՎԱԾԸ

1.

Գործարանի սուլիչը սուլում ե բարձր-բարձր... Քաղաքի հեռավոր շենքերն արձագանգում են նրանց՝ նոր բացվող արևի առաջին շողերի տակ։

Գործարանի մուտքի առաջ կանգ են առնում բոլորը։ Կայտառ ու արևաշող դեմքերին խաղում են արտասավոր ժպիտ, պայծառ, իմաստալից հայացքներ։

Առաջ ե գալիս գործարանի դիրեկտորը, վորի դեմքի կեսը պատել ե կեպիի լայն կոզիրյոկի ստվերը, իսկ իրանը կքվել, կորացել ե կաշվի պինջակի տակ։

Դեմքին ակնոցներ և յերկաթե ժպիտ։

— Ձեզ տեսնենք, ընկերներ, ամոթով չթողնեք թե ձեզ և թե մեզ։ Այ, տեսնում եք, բոլորս հարգում ենք ձեզ... իսկ դուք վճռական յեղեք, իսկական բանվոր, կազմակերպիչ—պրոպագանդիստներ...

Խճացած փողոցով սահում ե ավտոբուսն ու կանգ առնում գործարանի մուտքի առաջ... սուլիչը սուլում ե բա՛րձր-բա՛րձր...

Կաշվե կեպիով ու պահանջկոտ դեմքով Արփիկը վճռականորեն շարժում ե գլուխը և նստում ավտոբուսը՝ չորս բանվորի հետ...

— Մեր վողջույնը կոլխոզնիկներին... Ցեղե՛ք իսկական հարվածող...

Ավտոն սուլում ե ու սլանում...

— Նրանց տեղն ազատ չենք թողնի, կբերենք նորերին,—թևերը վեր քաշելով ասում ե մի բանվոր։

— Այո՛, սոցիալիստական արտադրությունը մի բոպե անգամ

չպիտի գանդտղի,—ծոր է տալիս մի ուրիշը։ Դիրեկտորը ծանր շարժում է գլուխը։

— Այո՛։

Գործարանում սկսվում է աշխատանքի որը։

2.

Հեռվում, արևի պայծառ շողերի տակ ժպտում է գյուղը։ Պատերին թառել են կարմիր խալիները··· կամարների վրա Լենինի, Շահումյանի ու կարմրագույն դրոշները։ Պատերի տակ՝ արեկող տված ջահեղներ, ծերեր, մանուկներ, վորոնց հայացքը հետևում է գյուղի ուղղաձիգ ուղիով սլացող ավտոբուսին···

Ո՛ւ··· Ո՛ւ···

Գյուղացիք ճամբա յեն տալիս նրան, իսկ նա կանգ է առնում դպրոցի շենքի առաջ։

— Բարև,—ասացին բանվորները։

— Բարև···—Առաջ յեկավ կոլխոզի նախագահը՝ վառվռուն մի յերիտասարդ։

Սեղմում են իրար ձեռք ու կարծես ելեկտրական հոսանք է անցնում նրանց միջով··· Ժպիտ, վողջույն և ուրախություն։

Գնում են գյուղկոոպ, խորհուրդ, փոկ ու այլ տեղեր, լսում, խոսում, դատում, բատրակներին, չքավոր գյուղացիներին ներգրավում են դեպի կոլխոզը։

Յերեկոն է իջնում հանգիստ ու խաղաղ··· դպրոցի դահլիճում հավաքվել են գյուղացիք՝ ուրախ և ցնծուն դեմքերով։

— Ընկերներ, մենք հարվածայիններ ենք, ուդարնիկներ։

Ժպտում են յերիտասարդները, կարդացել եյին նրանց մասին, բայց չեյին տեսել։ Ծերերը խորախորհուրդ իրար են նայում, իսկ փոքրիկ մանուկներն ադմկից վախեցած՝ հետ-հետ են քաշվում···

— Մենք հարվածայիններ ենք··· մենք ձեզ հետ սոցիալիզմ ենք կառուցում···

Թռչում են բառերն ու ընկնում, մեխվում ուղեղներում··· զարնանացան, գյուղկոոպ, կոլխոզ, սովխոզ··· առաջ պիտի գնանք, յերկաթ է հարկավոր, կատանք։

— Կատանք։

— Ի՞սկը մեր սրտից են խոսում··· մեզ նման աշխատանքի մարդիկ են··· բաս···

— Մեր թևերի տակ ոյուն են տալիս, վոր մենք բարձրանանք··· և մենք կբարձրանանք։

Արփիկը թափահարում է գլուխը։

— Գեղջկուհիներ, շարժվեցեք դեպի կոլխոզները, մենք՝ բանվորուհիներս կոգնեք ձեզ։

Աշխատանքի գարունը ծաղկում է դաշտում··· Խինդ ու յեռանդ կա, աշխատանքի ուժեղ թափ կա գարնան դաշտերում··· Նորից գալիս է ավտոբուսը, յետևից յերկաթե մեքենան—տրակտորը···

Նվեր են բերել։

Նվեր։

Կոլխոզին նվեր են բերել։

Վազում է տրակտորը դեպի անվար դաշտերը, արտերը գարնան··· բոլորի սրտերը լցվում են խնդությամբ։

— Ի՞նչ պայմաններում առաջացավ «հարվածային բրիգադների» շարժումը և ինչ դեր ունեն նրանք բանվորների և գյուղացիների դաշինքի ամրացման գործում։

— Վերն է այժմ այդ դաշինքի եյական կողմը։

— Նկարագրեցեք, թե ձեր գյուղում ինչ բրիգադներ են յեկել, ինչ գծով և ինչով են ոժանդակել ձեզ։

---

55. ՔԱՂՀԱՆԸ

Խնդաց լույսում արեգակի
Քուլրն իմ անանկուն,—
Արտերի մեջ ծով բամբակի,
Ձեռքի գրոհում։
Ուր յեկել են··· ահա նրանք—
Կանայք, աղջկերք···,
Քաղահանում են արտը կանաչ,
Սրտերում հրդեհ։
··· Վոր պլանները բարձրանան
Արևի պես վառ։
Ու յերկիրս կրկին խնդա···
Բամբակով պայծառ։
Քուլրն իմ ահեղ մարտ է մղում···
Սրտում սեր, գարուն։
Մոլախոտերն արտից հանում
Ու հաղթում, հաղթում։

··· Վոր բերքի արտը կանաչ
Յեվ առատ սնվի։
Ու ամառն այնքան կակաչ
Ծիծաղեն հուռթի։
Չե՞ վոր միլիոն իլիկները
Բամբակ են ուզում···
Ու կորովի մկանները
Մարտում չեն հոգնում···
Քուլրն իմ գրտե, գիտե հիմա—
—Ինչու՞ յես մարտում···
Հարվածային, հերոս է նա—,
Հերոս աննկուն։
Դրա համար պլանները
Նրան են ժպտում։
Սահուն անցնող տարիները՝
Վարկյաններ թվում։

---

1. Ի՞նչ նշանակություն ունի բամբակը մեր տեքստիլ արդյունաբերության զարգացման համար։

2. Բամբակի մշակումը Անդրկովկասում ինչ տեղ է գրավում յերկրորդ հնգամյակում։

3. Ինչպե՞ս պետք է մշակել բամբակը՝ լավորակ ու շատ բերք ստանալու համար։

---

56. ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Արի, գութան, վարի, գութան,
Որն յեկել ե՝ ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,
Որհնյալ ե աստված, հորովել։
Քաշիր, յեզը, ուսիդ մատաղ,
Քաշիր, քաշիր վար անենք.
Ճիպտին արա, քշենք, հոտաղ,—
Մեր սև որին ճար անենք։
Պարտքատերը գանգատ գնաց,
Քյոխվեն կգա, կծեծի,
Տերտերն որհնեց, անվարձ մնաց,
Կբարկանա, կանիծի։
Են որն յեկան, թովչի արին,
Հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կոռին ու բեգյարին...
Վարի, վարի, իմ գութան։
Ձեռս պակաս, ուժս հատած,
Հաղար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։
Արի, գութան, վարի, գութան,
Որն յեկել ե՝ ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,
Որհնյալ ե աստված, հորովել։

Դիտեցեք, թե ի՞նչ դեպքում բառի վերջը լսվող ըն-գրվում ե ն և ի՞նչ դեպքում փոխվում ե ը-ի։

Աշոտն ասաց։	Աշոտն սկսեց։	Աշոտը տեսավ։
Աշոտն ուզեց։	Աշոտն սպասեց։	Աշոտը գնաց և այլն
Աշոտն ընկավ։	Աշոտն ստացավ։	
Աշոտն իջավ։	Աշոտն զգաց։	
Աշոտն ոգնեց։	Աշոտն շտապեց։	
Աշոտն եզուց կգա։	Աշոտն ոլորվեց։	

Ցերը բառերի վերջը լսվում և ըս, ըդ ըն, գրվում ե՝ ս, դ ն (ը), որբ-նակ՝ գիրքս, գիրքդ, գիրքը, (ն), գրքերս, գրքերդ, գրքերը (ն)։
Ցեթե ըն վերջացող բառին հաջորդում ե ձայնավորով կամ սկ, սպ, սա, զգ, շտ և այլն յերկու բաղաձայնով սկսվող բառ, այդ դեպքում ըն գրվում ե ն (Աշոտն ասաց). մյուս դեպքում գրվում ե ը—Աշոտը տեսավ)։

Ցույց տվեք ս, դ, ն, (ը) գործածությունը «Գութանի յերգը» գրվածքում։

---

57. ՅԵՐԳ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Աղետ յեղավ։ Պատերազմ։ Ու ժողովուրդն անտեր
Զավակներին իր՝ հեռու թշնամու դեմ ուղարկեց։
Ձեր հասկանում՝ թե ինչու, ինքը վոչինչ չգիտեր։
Գնաց յերկրորդ զավակն ել—ու տունն ամբողջ մնաց խեղճ։

Եսպես յեղավ։ Յեվ ահա քաղաքներում բազմամարդ,
Ուր յերկաթե բյուրավոր գործարաններ կային մեծ,
Մի առավոտ յերկնահուպ ծխնելույզները յերկաթ
Կոչ նետեցին զինվորին՝ զինվորի դեմ չկռվես։

Չհամբերեց ել զինվոր-զորքը, յելավ գահի դեմ,
Ամբողջ յերկիրը յելավ, վորպես զինվոր մի արթուն.
Ժողովուրդը հասկացել ու արթնացել եր արդեն.—
Ու զինվորն են ծերից պատերազմից յեկավ տուն։

— Ել չեմ կռվի,—ասաց նա,—թշնամու դեմ դրսի,
Մենք ի՞նչ ունենք կիսելու, բաժանելու աշխարհում,
Նույն արևն ե բոլորիս արևել ու կարևի—
Մեր ունևորն ե միայն մեր թշնամին արնախում։

Կռիվ ազրուկ ու վիշապ հարուստների դեմ բոլոր,
Վո՛չ մի հարուստ չմնա թող աշխարհի յերեսին.—
Եսպես ասին ու հսկա բանակներով ահավոր՝
Ճակատներից տուն դարձան դրանք մի որ միասին։

Ու տվեցին կրակի որենքները հնամյա,
Հարուստների ստեղծած իրավունքն արնատաս,
Ասին՝ ամբողջ աշխարքում մի իրավունք միայն կա—
Մարդու քրտինքը զուլալ ու աշխատանքն արդար։

Հողերն առան, ցանեցին աշխատունակ, ժրաջան.
Գործարանները մի նոր հպարտությամբ յերգեցին,
Մինչդեռ յերկրի ծայրերից թշնամիներ բարձրացան,
Վոր յետ խլեն կարգը նոր ու հաստատեն կարգը հին։

Բայց ել զինվոր եր հիմա մեր բանվորն ու գյուղացին,
Բազմահազար հրացան ու թնդանոթ ուներ նա.
Հավաքվեցին բանվորներ ու բանակներ կազմեցին,
Վոր մարտնչեն մինչև վերջ, մինչև վոսոխ չմնա։

Յելան հաստատ, վորպես սար ու սարի պես անսասան,
Կուրծք տվեցին բյուրավոր ահեղազարկ հարվածի,
Հազար կռիվ արեցին, բայց պարտություն չտեսան,
Հազար կռիվ արեցին ու բոլորին հաղթեցին։

56. ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Որն յեկել ե՝ ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,
Որհնյալ ե աստված, հորովել։
Քաշի՛ր, յեզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛ր, քաշիր վար անենք.
Ճիպտին արա՛, քշենք, հոտաղ,—
Մեր սև որին ճար անենք։
Պարտքատերը գանգատ գնաց,
Քյոխվեն կգա, կծեծի,
Տերտերն որհնեց, անվարձ մնաց,
Կբարկանա, կանիծի։
Են որն յեկան, թովչի արին,
Հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կոռին ու բեգյարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան։
Ձեռս պակաս, ուժս հատած,
Հազար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։
Արի՛, գութան, վարի՛, գութան,
Որն յեկել ե՝ ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,
Որհնյալ ե աստված, հորովել։

Դիտեցեք, թե ինչ դեպքում բառի վերջը լսվող ըն-գրվում ե ն և ինչ դեպքում փոխվում ե ը-ի։

Աշոտն ասաց։	Աշոտն սկսեց։	Աշոտը տեսավ։
Աշոտն ուզեց։	Աշոտն սպասեց։	Աշոտը գնաց և այլն
Աշոտն ընկավ։	Աշոտն ստացավ։	
Աշոտն իջավ։	Աշոտն զգաց։	
Աշոտն ոգնեց։	Աշոտն շտապեց։	
Աշոտն եգուց կգա։	Աշոտն ոլորվեց։	

Ցերը բառերի վերջը լսվում ե ըս, ըդ ըն, գրվում ե՝ ս, դ ն (ը), որ-նակ՝ գիրքս, գիրքդ, գիրքը, (ն), գրքերս, գրքերդ, գրքերը (ն)։

Ցեթե ըն վերջացող բառին հաջորդում ե ձայնավորով կամ սկ, սպ, սա, զգ, շտ և այլն յերկու բաղաձայնով սկսվող բառ, այդ դեպքում ըն գրվում ե ն (Աշոտն ասաց). մյուս դեպքում գրվում ե ը—Աշոտը տեսավ)։

Ցույց տվեք ս, դ, ն, (ը) գործածությունը «Գութանի յերգը» գրվածքում։

---

57. ՅԵՐԳ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Աղետ յեղավ։ Պատերազմ։ Ու ժողովուրդն անտեր
Զավակներին իր՝ հեռու թշնամու դեմ ուղարկեց։
Ձեր հասկանում՝ թե ինչու, ինքը վոչինչ չգիտեր։
Գնաց յերկրորդ զավակն ել—ու տունն ամբողջ մնաց խեղճ։

Եսպես յեղավ։ Ցեվ ահա քաղաքներում բազմամարդ,
Ուր յերկաթե բյուրավոր գործարաններ կային մեծ,
Մի առավոտ յերկնահուպ ծխնելույզները յերկաթ
Կոչ նետեցին զինվորին՝ զինվորի դեմ չկռվես։

Համբերեց ել զինվոր-զորքը, յելավ գահի դեմ,
Ամբողջ յերկիրը յելավ, վորպես զինվոր մի արթուն.
Ժողովուրդը հասկացել ու արթնացել եր արդեն.—
Ու զինվորն են ծերից պատերազմից յեկավ տուն։

— Ել չեմ կռվի,—ասաց նա,—թշնամու դեմ դրսեի,
Մենք ի՞նչ ունենք կիսելու, բաժանելու աշխարհում,
Նույն արևն ե բոլորիս արևել ու կարևի—
Մեր ունևորն ե միայն մեր թշնամին արնախում։

Կռիվ տզրուկ ու վիշապ հարուստների դեմ բոլոր,
Վոչ մի հարուստ չմնա թող աշխարհի յերեսին.—
Եսպես ասին ու հսկա բանակներով ահավոր՝
Ճակատներից տուն դարձան դրանք մի որ միասին։

Ու տվեցին կրակի որենքները հնամյա,
Հարուստների ստեղծած իրավունքն արնատառ,
Ասին՝ ամբողջ աշխարքում մի իրավունք միայն կա—
Մարդու քրտինքը զուլալ ու աշխատանքն արդար։

Հողերն առան, ցանեցին աշխատունակ, ժրաջան.
Գործարանները մի նոր հպարտությամբ յերգեցին,
Մինչդեռ յերկրի ծայրերից թշնամիներ բարձրացան,
Վոր յեռ խլեն կարգը նոր ու հաստատեն կարգը հին։

Բայց ել զինվոր եր հիմա մեր բանվորն ու գյուղացին,
Բազմահազար հրացան ու թնդանոթ ուներ նա.
Հավաքվեցին բանվորներ ու բանակներ կազմեցին,
Վոր մարտնչեն մինչև վերջ, մինչև վոսոխ չմնա։

Ցելան հաստատ, վորպես սար ու սարի պես անսասան,
Կուրծք տվեցին բյուրավոր ահեղազարկ հարվածի,
Հազար կռիվ արեցին, բայց պարտություն չտեսան,
Հազար կռիվ արեցին ու բոլորին հաղթեցին։

Ու կովում են հիմա լեռ, վոր յետ չտան ել լերբեք
Իրավունքը բանվորի. վոր անսասան ե արդեն։
Բարձրացել են նրանց դեմ ունևորներ ահարեկ,
Բայց կովում են նրանք դեռ--ու կհաղթեն կհաղթեն։

— Վոր պատերազմի մասին ե հիշված այս վոտանավորի սկզբում։

— Ցերբ և ինչպես իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածվեց։

— Ի՞նչ լոզունգների տակ եյին մղվում քաղաքացիական կռիվները։

— Ի՞նչ հակահեղափոխական շարժումներ յեղան քաղաքացիական պատերազմների ժամանակ. ինչ յեղավ նրանց վախճանը։

---

58. ԱՐՍԵՆ ՋՈՐՋԻԱՇՎԻԼԻ

Մի որ արտասովոր մի լուր կայծակի արագությամբ ցնցեց ամբողջ Թիֆլիսը...

— Գրյազնովին սպանել են... Գրյազնովին...

— Ի՞նչ Գրյազնով...

— Գեներալ-նահանգապետ Գրյազնովին...

— Ո՞վ ե սպանել։

— Արսեն Ջորջիաշվիլին։

— Ինչու՞ յե սպանել։

— Գրյազնովը բռնակալ եր, վճռել եր բանվորական շարժումը խեղդել արյան ծովի մեջ...

— Իսկ ո՞վ ե Արսեն Ջորջիաշվիլին...

— Մի հասարակ մարդ... չվլաղ բանվոր...

— Վա՛, ի՞նչը դրդեց նրան այդպիսի հանդուգն քայլ անելու, կյանքը վտանգի յենթարկելու։

— Հեղափոխության կրակը... բանվոր դասակարգի սերը... Յեվ Արսենը բռնակալների արյան ծարավի ռումբը փոռացրեց դեպի են շանսատակը...

Այս եր ահա ամենքի համար այդ որվա խոսակցության առարկան։

Ամեն տեղ պատմում եյին Արսենի քաջագործությունը...

* * *

Խոսում եյին նաև մեր ընտանիքում, և յես շատ բան եյի լսում Արսենի մասին։

Ինձնից մեծ յեղբորս անունը Լևոն եր. նա դարբին եր...

Ծանր փուքսը շարունակ փչելուց նա մաշվել եր, նրա տեսքը

փոխվել եր, բայց աչքի մեջ դեռ արտացոլում եր նրա ուժեղ, հաստատուն կամքը...

Նա իր հասակակիցների նկատմամբ, մի գովելի հատկություն ուներ. յերբ նրա ընկերներն ազատ ժամանակ անց եյին կացնում գինետներում, նա ընդհակառակը, նստում և միայնակ կարդում եր ինչ-վոր արգելված գրքեր։ Լևոնի մոտիկ բարեկամներն ել իր նման եյին։ Նրանց մեջ առանձնապես աչքի յեր ընկնում Սոսոն, վոր փականագործ եր... շատ բարի և համակրելի մի անձնավորություն։

Որ չեր լինի, վոր նրանք չխոսեյին Արսեն Ջորջիաշվիլու մասին։

«Մայրիկ, մի տրամիր, հայը, մի լար վշտից, յես ազատեցի աշխարհին հրեշից...»։

Ցերգում եր Լևոնը տխուր յեղանակով, իսկ Սոսոն ել մեկ-մեկ ձայնակցում եր նրան...

Արսենը վերջ տվեց աշխարհի պատուհասին...

Իսկ ո՞վ եր Արսենը... մի հասարակ մարդ, վոր իր արտաքին տեսքով չեր տարբերվում մյուսներից։

Մինչդեռ յես հերոսի մասին ուրիշ գաղափար ունեյի, ուրիշ կերպ եյի պատկերացնում նրան։

Շատ եյի կարդում հեքիաթներ. «Սև ու կարմիր Թեյմուրազներ», «Ղահրաման քաջեր», «Արևի աղջիկը». այստեղ հերոսները հսկաներ են, և վոչ թե սովորական մարդիկ...

Ու յես միշտ մտածում եյի, վոր ժողովրդին ազատություն բերողը պետք ե լինի սովորականից դուրս մի հսկա մարդ...

Դու մի ասիլ, վոր մեզ նման հասարակ մարդ ել կարող ե հերոս լինել, հերոսական գործ կատարել...

Գյուղական անշուք խրճիթում ծնված... ցնցոտիներում մեծացած...

* * *

Ցերևում եր, վոր Լևոնն ու Սոսոն Արսենի մասին շատ բան գիտեյին, լավ եյին ճանաչում նրան...

Մայրս շարունակ զգուշացնում եր նրանց.

— Զավակներս, հիմա այնպիսի ժամանակ ե, վոր պատերն անգամ գաղտուկ հետամտող աչքեր ու թագուն լսող ականջներ ունեն, ամենքին մի հավատաք, գլխներիդ փորձանք կբերեք... Տեսեք՝ չձերբակալեն ձեզ...

— Ինչու՞ մայրիկ, ինչու՞ պետք ե ձերբակալեն... գողեր հո չենք. ինչ գործ ունեն մեզ նման անշար և խաղաղ մարդկանց հետ...

Մայրս հառաչում եր միայն։

Իսկ Սոսոն ասում եր ինձ.

— Համբերիր, փոքրիկս, համբերիր, կմեծանաս, ամեն բան կիմանաս...

* *
*

Զուր չելին մորս անհանգստությունն ու զգուշացումները...

Մի որ էլ, չարագուշակ թռչունի նման, մեկը գուժեց մեր ընտանիքին, թե Սոսոյին ձերբակալեցին...

Մայրս ու Լևոնն այդ լուրը լսելուն պես, տեղն ու տեղը հանգան, յերեսների գույնը պատի ծեփ դառավ։

Մայրս իրեն չկորցրեց, սրտապնդվեց.

— Դե՛հ, վորդիս, յերկար մտածելու ժամանակ չե. շուտով վոչնչացրու, ինչ վոր կասկածելի յե... յերևի քեզ էլ են հետամտելու...

Լևոնը ծխնելուցից հանեց ինչ-վոր թղթեր... ուզում եր ուրիշ տեղ տանել... ափսոսում եր այրել...

Մայրս թույլ չտվեց — ինչ գիտես, վոր արդեն չեն հետապնդում քեզ և հենց փողոցում չեն ձերբակալի՝ թղթերը ձեռքիդ... Այն ժամանակ դե՛, գնա՛ ու ազատվիր։

Լևոնը համոզվեց...

Բոլոր թղթերը կրակը նետեց.. Ցեսս մեքենայաբար ձեռքս մեկնեցի, կարծես թե ուզում եյի ազատել... Արդեն ուշ եր, կրակը բոցավառվեց և լափեց բոլորը ..

Այրվում եյին նրանք. յես չգիտեյի, թե ինչ եր գրված նրանց մեջ, չգիտեյի, թե ինչո՞ւ յեն կրակի մատնվում...

Իսկ այնտեղ, կրակի բոցերի մեջ, բորբոքվում եր ինչ-վոր անավոր գաղտնիք, վորի պատճառով անհաշիվ բանվորներ եյին ձերբակալվում, աքսորվում, կախաղան հանվում...

* *
*

Այնուհետև սպասում եյինք անկոչ հյուրերին...

Լևոնն այլևս տանը չեր քնում...

Ցերկար սպասեցնել չտվին նրանք. շուտով այցելեցին։

Ժամանակ անգամ չտվին մորս անկողնուց յելնելու, այնպես հանկարծակի ներս խուժեցին։

Ամեն ինչ տակն ու վրա արին... շատ քրքրեցին, քունջ ու պուճախ չթողին, բայց ձեռքերը բան չընկավ...

Փոր ու փոշման, վզները ծուռ հեռացան։

Հաջորդ որը նկատեցինք, վոր նրանցից մեկը սապոն եր գողացել, մյուսը՝ գդալ, յերրորդը՝ մի այլ բան...

* *
*

Կաթոգին սրտի տեր եր մայրս. մեր մասին ունեցած հոգատարությունը բավական չեր, հիմա Սոսոն էլ դարձավ նրա հոգատարության և գգվանքի առարկան...

Պատրաստվեց նրան տեսության գնալու։

Գնեցինք ուտելիքները, մրգեղեն, ծխախոտ, մի քանի գրքեր և ճանապարհ ընկանք դեպի բանտը... բարձրացանք Մետեխի զառիվայրը...

Բանտի դռան մոտ անսովոր իրարանցում եր. հավաքվել եր մարդկանց մեծ բազմություն...

Բանտի մոտերքը ման յեկողներին քշում եյին, խփելով նրանց վզակոթին...

— Այս ի՞նչ բան է, մարդ վոչինչ չի հասկանում. բանտարկյալների այցելության որն է, բայց թույլ չեն տալիս,— ասում եյին իրար...

— Ձա՛խ վոտից են վերկացել, ի՞նչ է...

Հանկարծ ինչ-վոր տեղից լսվեց մի սուր, ցնցող ճիչ, վոր հետո փոխվեց աղեկտուր հեծկլտանքի...

Մի կին եր դա... փետում եր մազերն ու բառաչում.

— Վորդի՛, եդ ինչ արին քեզ... ինչո՞ւ կտրեցին կյանքիդ թելը...

— Դահիճնե՛ր, տվե՛ք իմ վորդուն, մարդասպանները... Արսեն, վորդիս, ցավդ տաներ մայրդ... ինչո՞ւ այդքան կարճատև յեղավ կյանքդ, ինչո՞ւ դրանց եկ ռումբով շանսատակ չարիր... ի՞նչպես ընկար դրանց ձեռքը, վորդիս... Չե՞ վոր դու քաջ եյիր... Աչքուծի սրտով, իմ աչքուծ բալաս... Այդ վախկոտ վողորմելի նապաստակներն ինչպե՞ս շրջապատեցին քեզ...

Խելակորույս բոպեներ եյին... իմ աչքերի առաջ անցնում եյին զարհուրելի պատկերներ...

Ահա Արսեն Զորջիաշվիլին... Կախաղան են բարձրացնում նրան... Բանտարկյալներն իմացել են այդ՝ աղմկում են, մեծ իրարանցում է այնտեղ...

Զարդոտում են ձեռքներն ընկած ամեն բան...

Հացադուլ են հայտարարել...

Այժմ պարզ եր, թե ինչո՞ւ եյին այդպես վայրենաբար քշում այցելության յեկած հարազատներին։

* * *

Վերադարձանք սրտամորմոք…

Ամբողջ ճանապարհն անցանք լուռ…

Խանգարվեց հոգուս անդորրությունը…

Ամեն տեղ աչքիս առաջ գծագրվում էր այսպիսի պատկեր. հրապարակի մեջտեղը դրված աթոռ… կարմիր շապիկ հագած դահիճ, վոր բարձրացնում է Արսենին…

Իսկ Արսենն արհամարհական հայացք ձգելով շուրջը՝ ասում է.

— Ինձ կախաղան են հանում… նշանակում է՝ մեզնից վախենում են… Մենք…

Թույլ չեն տալիս, ընդհատում են նրան…

Լսվում է թմբուկի ձայնը, գործի չեն անցնում…

Լկտի խոսքերով ընդհատում են Արսենի հրաշունչ խոսքերը…

Դահիճը գազազած հարձակվում է իր զոհի վրա… պարանի ողակը ձգում է վզով…

Հրում է…

Յեվ…

Խելահեղ ու բութ քրքիջով քաշկռտում է Արսենին… Կախ է ընկնում, վորպեսզի մաշկահան անի…

Ա՛խ, նրա աչքերը… սարսափը պատում է ինձ…

* * *

Տանը հանդիպեց մեզ Լևոնը…

Մայրիկն ասաց, վոր Արսենին կախաղան են հանել։

Լևոնը տխրեց…

Հորդահոս արցունքները թափվեցին նրա աչքերից…

Տիրեց ծանր լռություն…

Սարսափելի չե լռությունը, վոր հետևում է այն գիտակցության, թե կախաղան են հանում ընկերոջդ այն ժամին, երբ դու դեռ պատրաստ չես արժանի հատուցումը տալու…

— Մայրիկ,—սկսեց Լևոնը յերկար լռությունից հետո,—ցավալի չե անշուշտ Արսենի կախաղան բարձրանալը, բայց պետք է ասեմ… մխիթարված եմ… լավ է, վոր… Արսենը մեռավ, և մեռավ հերոսական մահով…

— Ինչպես թե լավ յեղավ, վորդիս, ինչս ես ուզում ասել, չեմ հասկանում։

— Պետք է խոստովանվեմ, մայրիկ, վոր Արսենի վիճակը մտահոգում էր ինձ… շատ անքուն գիշերներ եմ անցկացրել… Արսենը, անկասկած, կորիճ էր, մեզնից մի քանիսը սակայն յերկյուղ ելին կրում, վոր չլինի թե կոտրեն նրան…

Գիտես, չե՞, վոր դահիճները դժոխային տանջանքների ելին ենթարկում, վորպեսզի սարսափահար անեն, և այդպիսով կոտրեն Նկալանավորի համառությունը.. այնքան են ծեծում, վոր ձերբակալվածը կամ մեռնում է ծեծի տակ, կամ, չդիմանալով սոկալի ցավերին, հայտնում է կուսակցության գաղտնիքները… Մենք յերկյուղի մեջ ելինք, թե դահիճները կառաջարկեն նրան՝ ընտրել յերկուսից մեկը—կախաղան, կամ բաց անել բոլոր գաղտնիքները… յերկու խոսքով մեկն՝ թե ա՛յ, այսինչ տեղն են հավաքվում մերոնք և… պարգևը պատրաստ է քեզ համար—ազատ ու հանգիստ կյանք, հարստություն, փառքամ ու յերջանիկ որեր… Դե՛հ, քեզ տեսնենք, Արսեն թե, վորքան խելացի կլինես… յերկուսն ել քո ձեռքին է,—կախաղանի պարանը և յերջանիկ կյանքի բանալին… ընտրիր բանալին… ո՞վ է խանգարողը… ընտրիր, և ազատ ես կախաղանից՝ կբացվեն քո առաջ բանտի դռները, կարժանանաս մորդ տեսության…

— Գիտեյինք, վոր այսպես պետք է գրուցելին Արսենի հետ նրան հրապուրելու համար, և բնականաբար սրտնեղում ելինք և սարսափը պատում էր մեզ…

Արսենը գիտեր ընդհատակյա մեր բոլոր գործիչներին, կարող էր բոլորիս ել բանտարկել տալ… Մի խոսքով, ամենքիս վտանգի յենթարկել…

— Ամենքդ ել այդպես ելիք մտածում, հա՛… Ամենքդ ել այդպիսի անպատվություն ելիք վերագրում դժբախտ Արսենին վճռական այն րոպեներին, յերբ նրան, յերևի, մահվան քրտինքն էր պատել,—վշտագին հարցրեց մայրս։

— Վո՛չ, գորովագութ մայրիկ, վո՛չ… այսպիսի յերկյուղով բռնված ելին մեզնից ջչերը… մեծամտությունը չէր հաշտվում այդ մտքի հետ… ամոթ է, այդպիսի բաներ մտքով անգամ անցնել,—ասում ելին մեզ…—Ուրեմն Արսենին դուք լավ չեք ճանաչել, մինչդեռ ասած է, թե՝ «փորձանքի մեջ է ճանաչվում մարդը, ու հանդես գալիս նրա հոգու անվհերությունը…»։

Ժողովրդի իմաստասիրությունն Արսենի նման անձնավորությունների համար է ասել այս գողտրիկ տողերը…

— Արսենն ուրիշ հերոս է… Նրան սնուցող մայրն ուրիշ մայր է… Բարեբախտաբար, չսխալվեցին նրա մասին լավ ու դրական կարծիք ունեցող ընկերները։

— Արսենը պատվով դուրս չեկավ կյանքի և մահվան պայքարից· հերոսական գործ կատարեց և հերոսաբար եկ մեռավ...

Ականջ եղի դնում այս զրույցներին, և իմ մեջ բոցեղեն տառերով արձանագրվում էր նրա անունը... Իմ մանկական վառ երևակայությունն ավելի գունագեղ փայլ էր ստանում...

Արդեն անցել է 20 տարի։ Այդ միջոցին կյանքը շատ բան մոռացնել տվեց։

Շատ նոր ու պայծառ դեմքեր տպավորվեցին հիշողության մեջ, բայց Արսենի սքանչելի դեմքը մնաց անաղարտ ու գունեղ։ Սքանչելի դեմքն այն հերոսի, վոր բռնակալների արյան ծարավի ռումբը նետեց դեպի վոճրագործ վոսոխը, և մահառիթ ռումբը թռավ նրա ձեռքից այնպես շեշտակի, ինչպես շեշտակի թռչում է ուրուրը, ճեղքելով լերկնքի կապույտ կամարը։

1. Վո՞ր դասակարգից էր Արսեն Զորջիաշվիլին և ինչպիսի՞ մարդ էր նա։
2. Ո՞ւմ և ինչո՞ւ սպանեց Զորջիաշվիլին։
3. Ովքե՞ր էին Արսենի ընկերները և ինչով էին զբաղվում նրանք։
4. Ո՞ւմ դեմ էին պայքարում Արսենն ու իր ընկերները և ի՞նչ ձևերով։
5. Ի՞նչ հետևանք ունեցավ Արսեն Զորջիաշվիլու պայքարը։
6. Բնութագրեցեք Արսեն Զորջիաշվիլուն։

ՏԵՂԵԿԱՆՔ

Այն բառը, վորի ցույց տված գաղափարն անկախ գոյություն ունի, կոչվում է գոյական անուն. որինակ՝ դեմք, Արսեն, հերոս։

59. ՄԵ՛Կ ԵԼ, ՄԵ՛Կ ԵԼ

Հե՛յ, ձեզ մատաղ, բանվոր տղերք,
Մեկ էլ, մեկ էլ, մի զարկ տվեք·
Մի զարկ տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հոմնովին։

Միահամուռ մեր ուժերով,
Հերոսների արյան գնով
Թեև ընկավ ցարն իր գահից,
Բայց չի ջարդված միանգամից։

Այժմ էլ ցարն է մեզ աղաչում,
Վոր խնայենք վերջին շնչում.
Բայց, ձեզ մատաղ, բանվոր տղերք,
Մեկ էլ, մեկ էլ, մի զարկ տվեք...

Մի զարկ տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հիմնովին...

60. ԾՊՏՅԱԼ ՀԵՏԱԽՈՒՅԶԸ

Ցերեկոյան դեմ Ճուտիկը մտավ Աղբաշ գյուղը։

Պահակի աչքին կասկածելի թվաց ցնցոտիները հագին մի պատանի, վորը պտտում էր շտաբի շուրջն ու մի կերպով աշխատում էր ներս խցկվել բակը։ Քիչ անց մի ուրիշ պատանի յեղներն առաջն արած բակը մտավ։ Ցնցոտիներով պատանին խառնվեց յեղներին և նրանց տերը ձևանալով, մտավ բակ ու սկսեց անհանգիստ դիտել թափթփված զենքերը, հեռախոսը և դիմեց ուղղակի պահեստի կողմը։ Պահակը հասավ յետևից, վզից բռնեց, տարավ շտաբ։

— Կոմիսար Խաչատուրի բատրակն եմ, մեր դառն եմ փընտռում, յեկա...

Նրա խոսքը կիսատ մնաց, դուռը բացվեց ու ներս մտավ բարձրահասակ, փայլուն ուսադիրներով կապիտանը։ «Այ թե թակարդն ընկա հա», մտածեց պատանին ու չորս կողմը նայեց՝ ճղելու համար։

— Ո՞, այդ դուք եք, սիրելի Ճուտիկ, շատ ուրախ եմ, վոր դուք մեզ այցի յեք յեկել,—բացականչեց կապիտան Արամյանը և դառնալով հարցաքննող պրապորշչիկին, ասաց·

— Դուք բռնել եք մեր թշնամու ամենաճարպիկ հետախույզին։

Ճուտիկը կուչ յեկավ ու տեղը քարացավ։ Նա տեսավ մոտալուտ մահվան ուրվականը և ուժերը հավաքելով ասաց·

— Պարոն կապիտան, յեթե ինձ խփեք, մեծ ջնասներ կստանաք, վորովհետև յես պարոն Սմբատին շատ կարևոր ռազմական գաղտնիքներ ունեմ հաղորդելու։—Կապիտանը մի քանի վայրկյան տատանվեց, ապա հրամայեց ֆելդֆեբելին·

— Դրան քսան մտրակ։ Ուժեղ պահակախմբերով ուղարկեցեք պարոն Սմբատի մոտ և ասացեք, վոր վտանգավոր շպիոն է, կապիտան Արամյանն անձամբ ճանաչում է։ Քիչ անց մյուս սենյակում լսվեց պատանու բղավոցը և մտրակի ծանր ու համաչափ զարկի ձայնը։

Մի քանի բոպելից հետո չորս հոգուց բաղկացած պահակախումբը ջարդված ու արյունլվա պատանուն վոտքով տարան Աղհամզալու գյուղը և ներկայացրին խմբապետ Սմբատին։

Խմբապետ Սմբատը չէր ճանաչում պատանուն, բարեբախտաբար պահակապետն էլ մոռացավ հայտնել, վոր կալանավորը հուչակավոր Ճուտիկն է, շրջանից հեռախոսագրեր փոխանցողը։

— Աղատեցեք,—ասաց Սմբատն ու նստելով գրասեղանի առաջ, սկսեց խուզարկու հայացքով զննել պատանուն։ Պահակապե-

տը հարգանքով պատվի բռնեց ու շուռ յեկավ, վոր գնա. մեկ էլ կարծես թե մի բան հիշելով յետ դարձավ, նորից ձեռքը ճակատին դրեց ու մեղավորի նման կմկմաց։

— Ձերդ գը·գը··· գերազանցություն· կալանավորը շպիոն Ճուտ···

— Լավ, լավ, մի յերկարացնի, գիտեմ, մարդ։—Պահակը խմբապետի խիստ հայացքից շփոթվելով, շուռ յեկավ ու վախվխելով դուրս գնաց։

Ճուտիկի խեղճացած, ոնմեղի կեղծ արտահայտություն ստացած դեմքը, փոքրիկ հասակը, կարկատած շորերը դիտելով, խմբապետն ամաչեց նույնիսկ մտածել, վոր վողորմելի այս եյակը թշնամի կարող է լինել։

— Ո՞վ է քեզ ուղարկել ու ինչ խնդիր է տվել—ձայնը կեղծ խստացրեց խմբապետը։

Պատանին համարձակորեն ասեց·

— Ցես փախել եմ կարմիրների մոտից ու գնում եմ Ղամարլու խմբապետ Մարտիրոսի մոտ, մի քանի շպիոններ կան՝ բռնել տալու···

Խմբապետը դառնալով պատանուն ասաց.

— Արդեն ուշ է, ճանապարհները վտանգավոր են, մնա, առավոտյան շուտ կգնաս։ Ապա աղյուսանոցին պատվիրեց, վոր առավոտյան լուսը չբացված մի լավ ձի տրամադրեն նրան։ Պահակապետին կարգադրեց՝ պատանուն լուսադեմին դուրս թողնեն։ Անցագիրն էլ պատրաստ եր։ Այնուհետև խմբապետը հարց ու փորձ արավ պատանուն թշնամու ուժերի ու տրամադրություններին մասին։ Ճուտիկը մի քանի սուտ ու օխալ տեղեկություններ տվեց ու հետո խնդրեց իրեն թույլ տան քնելու հենց այդտեղ, մի անկյունում։

Խմբապետը մի սպայի հարևան սենյակն առաջարկեց, բայց Ճուտիկը հրաժարվեց, պատճառաբանելով, վոր գիշերն է դուրս գալու, չի ուզում անհանգստացնի սպային։

— Ե՛յ, լավ շորեր բերեք տղայի համար,—հրամայեց խմբապետը։ Քիչ անց բերին ու Ճուտիկին հագցրին նոր կարած զինվորական շորերը, բոլորն անգլիական։ Նա պառկեց գրասենյակի մի անկյունում թափված անգլիական թամբերի վրա։

* *
*

Պատի ժամացույցը չորսը խփեց։ Ճուտիկը վեր կացավ անկյունից, շինելը հագավ, գոտին ամուր կապեց ու մոտեցավ շտաբի պատի սեղանին։ Նա զգուշությամբ քաշեց սեղանի դարակը և մթնում չիմանալով ինչը վերցնի, ինչը թողնի, յեղած բոլոր թղթերը հավաքեց, զգուշությամբ խոթեց պայուսակը և շինելի տակ գոտին ամրացնելով՝ հանդարտ դուրս յեկավ։

Ննջող պահապանը նրա վոտնաձայնից հանկարծակի յեկավ, վեր թռավ ու ճանաչելով որվա «Թանգագին հյուրին», ժպտալով հարցրեց·

— Հիմա յես ուզում գնալ·

— Այո։

— Ե՞ս բոպելիս։

Մի քանի բոպե չանցած՝ Ճուտիկն արդեն նստած եր իր ձին։ Գյուղի ծայրին մթնում պահակները տնտղեցին նրա անցագիրը և բաց թողին։ Նա Ղամբլվի ճամբեն բռնեց։

* *
*

Առավոտյան նա մտավ Ավշար ու ներկայացավ գնդի հրամանատարին, վորը նրան ընդունեց ժպիտը դեմքին։

— Զոկեցեք, բերել եմ՝ ինչ վոր ճանկս է ընկնի։ Հրամանատարը հեռախոսագրերի, ռազմական պլանների և դաշնակցական «Ազատ Հայաստան» թերթի համարների կույտը տեսնելով, հիացմունքով բացականչեց·

— Ապրես։—Ապա կարգադրեց Ճուտիկին վորպես նվեր տալ 5 ֆունտ քիշմիշ և 1000 ռուբլի չեկ փող։

— Ընկեր հրամանատար, եդ թղթերից մեկը կարդալիս խմբապետները մուրթները շատ փիս կախեցին, մի տես ինչ բան։

Հրամանատարը բարությամբ ժպտաց։

— Տեսել ենք· այսոր կիմանաս, թե ինչու եյին մուրթները կախել։ Միայն մի բան իմացիր, վոր թշնամու ամբողջ գաղտնիքները բերել ես· ապրես, այժմ գնա, պառկիր, հանգստացիր։ Դե, մարդ։

1. Ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում այս պատմվածքը։
2. Ո՞վ է այս պատմվածքի հերոսը։ Ճուտիկի հանձն առած գործն ինչ դժվարությունների հետ եր կապված։
3. Ինչով եք բացատրում Ճուտիկի խիզախ ձեռնարկությունը։
4. Թշնամու գաղտնիքները հայտնաբերելով, ինչ ծառայություն մատուցեց նա կարմիր Բանակին։
5. Պատմեցեք դեպքեր քաղաքացիական կռիվներից ձեր լսածների հիման վրա նախորոք պլան կազմելով։

Պլան կամ ծրագիր կազմելու համար յուրաքանչյուր հոդված պետք է

բաժանել մի քանի հիմնական մասերի, իսկ դրանք ել ստորաբաժանումների՝ համապատասխան վերնագիր նշանակելով։

ՕՐԻՆԱԿ

«Պայծալ հեռախուլզը»

ՊԼԱՆ

1. Ճուտիկն Աղբաշ գյուղում։
   ա. Ճուտիկը կապիտանի մոտ։
   բ. Ճուտիկի կրած պատիժը։
2. Ճուտիկը խմբապետ Սմբատի մոտ։
   ա. Պահակապետի զեկույցը խմբապետին։
   բ. Խմբապետի վերաբերմունքը Ճուտիկի նկատմամբ։
3. Ճուտիկի գործը գրասենյակում։
4. Ճուտիկի վերադարձը կարմիրների մոտ։
   ա. Ճուտիկի բերած թղթերը։
   բ. Նրա ստացած նվերը։

5. ՅԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յեղրակացության մեջ տրվում և ամբողջ հոդվածի հատառոտ փոփոխումն և արծարծված խնդիրների մասին ունեցած դիտողությունը։

— Առանձին անհատների, քաղաքների, լեռների, գետերի, լճերի, ծովերի անունները կոչվում են հատուկ անուններ և գրվում են մեծատառով։ Օրինակ՝ Ճուտիկ, Աղբաշ, Ղամարլու, Զանգու։ Հոդվածում ցույց տվեք ուրիշ օրինակներ։

— Այն անունները, որոնք կարող են գրվել թե մեկ առարկայի և թե նրա տեսակին պատկանող բոլոր առարկաների, կոչվում են հասարակ անուններ։

Օրինակ՝ գյուղ, ժամացույց, տուն, գետ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ցույց տվեք այս հոդվածի մեջ հատուկ և հասարակ անուններ։

---

61. ՄԵՆՔ ԱՆՊԱՅՄԱՆ ԿՇԱՆԴԻՊԵՆՔ...

Փետրվարյան սաստիկ բուք-բորանի, ձյունախառն քամու թրջոցնող հոսանքի հետ հեռվից դեպի գյուղն ել շտապում ձիավորների մի փոքրիկ խումբ։

Գյուղի բնակիչները հոգնած ու դաղրած ամբողջ գիշերվա անքնությունից, ահաբեկված համազարկերի ճարճատյուններից, լուսադեմին իրենց գլուխը քնի ելին տվել։

Ամեն ինչ հանգիստ եր ու լուռ։

Ձիավորներից մեկն իջավ ձիուց, շտապ քայլերով ուղղվեց դեպի հանրակացարան։ Տիգոն հենց նոր եր վեր կացել անկողնուց, ուզում եր գնալ լվացվելու, յերբ իր դեմ առ դեմ, դռան մեջ հանդիպեց տարճանակը ձեռքին մի առողջակազմ զինվորի։

— Դուք ձերբակալված եք։ հավաքեցեք ձեր իրերն ու հետևվեցեք ինձ։

— Զինդին, վոր մինչ այդ դռանը կանգնած ձիավորներին եր դիտում ակնապիշ, բան չհասկացավ։ Միայն յերբ Տիգոյի հետ խոսողի ձեռքի տարճանակը տեսավ, նոր գլխի ընկավ, վոր դավադրություն կա։

— Ո՞ւր և ինչու համար,— տրցրեց Տիգոն։

— Դաշտային դատարան, տյնտեղ կիմանաք...

Զինդիի դողը բռնել եր, լեզուն կարկամել... Միայն յերբ Տիգոն իր պայուսակն ու իրերը հավաքած դռնից դուրս եր գնում, Զինդին վրա ընկավ, գրկեց ու յերեխայի նման սկսեց լալ։

Հինգ վերստ եր հեռավորությունը Կ. գյուղից մինչև յերկաթուղու կայարանը։ Շրջապատված ձիավորներով, Տիգոն անընդհատ քայլում եր, յերբեմն ել, յերբ յետ եր մնում—հայհոյանք կամ մրարակի հարված եր ուտում։

* * *

Յերկաթգծի կայարաններից մեկում պահակների հսկողության տակ Տիգոն կծկվել եր իր մեծ կաշվե մուշտակի տակ, վորի մեջ ըստ յերևույթին, յերեք մարդ կարող ելին տեղավորվել... Գնացքի գալու ժամանակն անցել եր։ ճակատից արձակուրդ մեկնող զինվորները խումբ-խումբ խռնվում ելին կայարանի առաջ, շփոթվում, հայհոյում, հաճախ ել մոտենում ելին փակ կայարանի փոքրիկ դռանը, բռունցքով պինդ զարկում, կայարանապետին պահանջում...

— Ո՞ւր ե են շան ձագը... յերբ ե գալու գնացքը... արձակուրդի մի որն հենց այստեղ ե կորչում...— ասում ելին նրանք ու իրար հրելով յետ ու առաջ շտապում։

Բայց հենց վոր մի սպա յեր յերևում, իրարանցումն իսկույն դադարում եր, բոլորը մնում ելին տեղերն արձանացած, ձեռքները դեպի գլխարկը տանելով՝ պատվո նշան բռնում...

— Վո՞ր տեղից այս սատանի ճուտը յերևաց այստեղ,— ասում ելին զինվորներն իրար և աշխատում հեռու կենալ սպայից, ազատ շարժվելու համար։

Քանի գնում, կայարանի առաջ շատանում եր զինվորների բազմությունը։

Տիգոյի պահակներից մեկը, վոր ձիերը տարել եր հանձնելու մոտիկ տրանսպորտին, առավոտյան վերադարձավ։

— Ե՛յ, սատանա՛, ուր ես, ինչո՞ւ ուշացար, մենք հոգնեցինք կանգնած, այժմ դու նայիր սրան, մենք գնանք թել ճարելու,— ասաց պահակապետն ու յերկուսով գնացին դեպի ձորն ի վեր ցցված տախտակամած խոհանոցը, ուր բացի փոքրիկ ինքնաեռից ու մի քանի բաժակներից ուրիշ բան չկար։

Հեռվից յերևացին շոգեշարժի փայլող զույգ աչքերը, վոր այս ու այն կողմը ծռմռելով շտապում եր հանգստացնելու կայարանում ծալը տված դժգոհությանը։

Մի անսովոր իրարանցում սկսվեց կայարանի առջև։ Գոռում-գոչյունով, իրար հրելով, ամեն մեկն աշխատում եր առաջին տեղը բռնել՝ գոնե բաց վագոններում տեղ գրավելու համար. իրար բզբ

Բավական ժամանակ եր անցել Մարոյի գնալուց հետո։ Քնաբիկն ու Ստեփանիկը վաղուց եյին հագնվել ու աչքերը դեպի դուռն հառած սպասում եյին ճադին։ Տիգոն եվ լվացվել, մի բաժակ թեյն առաջը դրած՝ խորասուզվել եր մի ինչ—որ ձեռագիր կարդալով…

— Տիգոյի ընակարանն այս ե,—հարցրեց բաց դռնից վիզը յերկարացնելով անգլիական կանաչ շինելը հագին սպառազինված մի յերիտասարդ։

Տիգոն խկուն սեղանի սփռոցի բաց ծայրը ծածկեց ձեռագրի վրա և մոտեցավ նորեկին։

— Յես ինքս եմ։

— Ժողովրդական գվարդիայի շտաբի կարգադրությամբ հենց այժմ պետք ե ներկայանաք հատուկ բաժանմունքին։

— Կես ժամից յես անձաք կգամ։

— Վոչ մի րոպե սպասել չեմ կարող,—ասաց ու առաջարկեց Տիգոյին հետևել իրեն…

Մարոն, վոր մի ֆունտ ճադին (չորս հոգու բաժին) ձեռքին, տեսավ զինված գվարդիականին, գլխի ընկավ «դարձյալ նոր պատուհաս»… մրմնջաց ու սկսեց հեկեկալ։

Տիգոն հանգստացրեց, վոր առանձին բան չի կարող լինել և հասկացրեց, վոր սփռոցի տակի ձեռագիրն իր գնալուց հետո անմիջապես վոչնչացնի։ Այնուհետև համբուրեց Մարոյին ու յերեխաներին և գվարդիականի ուղեկցությամբ գնաց «հատուկ բաժանմունք»։

* * *

Մի ընդարձակ սրահում, պատի ամբողջ յերկարությամբ շարված աթոռների վրա նստած եյին քսանի չափ Տիգոյի ընկերները, վորոնք նրա հետ միասին նախորդ օրը մասնակցում եյին խորհրդակցության։ Բոլորն եվ տխուր եյին, անձայն, նայում եյին իրար ու դիմագծերով հասկացնում գործի լրջությունը։

Իսկ սրահում յետ ու առաջ քայլող և դռանը կանգնած գվարդիականներն ականջները սրած, ուշադրությամբ հետևում եյին՝ չլինի թե այդ մարդիկ մի փասատ ան իրենց բայշևիկ լինելը հաստատելու համար։

Սակայն իզուր։ Մեռելային լռությունը պատել եր ամբողջ սրահում։

Վերջապես բացվեց «հատուկ բաժանմունքի» պետի կաբինետի դուռը, մեկ-մեկ կանչեցին դուրս նստածներին։ Հերթը շուտով Տիգոյին հասավ։

— Եղ դու յես, Տիգո,—դիմեց պետն ու մատաբերեց 1905 թ. հեղափոխությունը, յերբ դեռ յերկուսն եվ պատանիներ եյին, յերկուսն եվ աշխատում եյին միևնույն տպարանում, սոցիալ-դեմոկրատների գաղտնի բջիջի անդամներն եյին, յերբ միասին թռուցիկներ եյին տարածում, յերբ կոզակների հետապնդումից ազատեց իրեն…

Այդ անցյալի հուշերը պատկերացան նաև Տիգոյին։ Մի քանի վայրկյան նա տեղափոխվեց 1905 թիվը ու եկրանի ժապավենի նման անցան նրա աչքի առաջ այն բոլորը, վոր նույն վայրկյանին պատկերացել եյին իր խոստակցին։

— Վասո, ինչ բանի համար ես կանչել,—վերջապես խոսեց Տիգոն։

— Այնքան եվ լավ բան չե։ Տիգո, յես քեզնից չեյի սպասում, վոր դու այդ անամոթների հետ կլինես…

— Ի՞նչ անամոթներ… պարզ խոսիր, Վասո։

— Հը՛, իբր թե չգիտես… Յես քեզ բարի խորհուրդ եմ տալիս, ձեռք վերցրու բայշևիկներից… տրի ինձ հետ, մեղք ես, վերջիվերջո դրանք վոչ թե հեղափոխականներ են, այլ բանդիտներ…

Տիգոն հուզվեց, տլլայլվեց, մի րոպե մոռացավ, վոր իր դիմաց այժմ կանգնած ե վոչ թե իր ընկերը, այլ թշնամին, ու գոռաց։

— Դու սո՛ւտ ես խոսում, բայշևիկները բանդիտներ չեն, այլ բանվորական դատի իսկական պաշտպաններ… յես յերբեք չեմ կարող գնալ նրա հետ, վոր գնում ե ազնվականների, բուրժուների, շովինիստների ճանապարհով ու անգլիական իմպերիալիզմի և Դենիկինի բանդիտների հետ միացած՝ դավեր ե լարում բանվորների ու գյուղացիների դեմ…

— Յես քո ձայնը փորդ կգցեմ այս րոպելիս… դու մի՛ մոռանա, վոր իմ հայրենիքի շահերն ինձ շատ ավելի բարձր են, քան քեզ հետ անց կացրած պատանեկությունը…

— Իսկ դու մի՛ մոռանա, վոր ինձ համար պրոլետարական հեղափոխությունը շատ ավելի բարձր ե, քան քո «հայրենասիրական զգացմունքը»…

— Լռի՛ր, այժմ քեզ հետ խոսում ե վոչ թե Վասոն, այլ «հատուկ բաժանմունքի» պետը։ Վո՛չ մի խոսք այլևս։ Սատրագրիր, վոր դու 24 ժամվա ընթացքում պետք ե թողնես Վրաստանի սահմանները… Հակառակ դեպքում, պատասխանատվությունն ամբողջապես ընկնում ե քեզ վրա,—ասաց Վասոն խստասիրտ ասպետի տոնով ու պատրաստի բլանկը դրեց Տիգոյի առաջ։

Տիգոն կիսահեգնական հայացքը շեշտակի ուղղեց Վասոյի աչքերին գրիչը վերցրեց, կարդաց թուղթն ու ստորագրեց այն։ Իսկ թղթի վրա նախորոք գրված եր.

«Ցեռ, բոլշևիկյան կուսակցության անդամ ..... պարտավորվում իմ քսանչորս ժամվա ընթացքում ընդմիշտ հեռանալ Վրաստանի սահմաններից։ Պարտավորությունս չկատարելու դեպքում հատուկ բաժանմունքի հետագա գործողության պատասխանատվությունն ընկնում է ինձ վրա»։

— Վասո՛, ցտեսությո՛ւն... բայց այս թղթում մի սխալ բառ եք գրել, այստեղ ասված է, որ «ընդմիշտ հեռանալ»... Բայց մենք անպայման կհանդիպենք...

*
* *

Տիգոն այլև չերևաց քաղաքում։ Խորհրդային Ռուսաստանի քաղաքացիական կռիվները կլանել էին նրան իր բոցերի մեջ։ Ցերկու տարվա քաղաքացիական կռիվների փորձը նրան դարձրել էին հեղափոխության անձնվեր մարտիկներից մեկը։

Թիֆլիսից վտարված բոլշևիկների ջոկատներն ապստամբված գյուղացիների հետ միասին վճռական ճակատամարտն էին տալիս մենշևիկյան գվարդիային, ռումբերի պայթյունների խլացող ձայները հասնում էին Թիֆլիս։

Բոլշևիկների մի փոքրիկ ջոկատ կռվի չեր բռնվել գվարդիայի հրոսախմբի հետ։

Տեղացող ձյունախառն անձրևի, անճոռնի քամու և ապստամբների գրոհներից սարսափահար լեղած մենշևիկյան գվարդիան նահանջում եր անընդհատ։

Ապստամբությունների ջոկատը շուտով ողակեց փախչող գվարդիականներին։

— Անձնատո՛ւր լեղեք,—լսվեց Տիգոյի զիլ ձայնը։

— Տիգո՛, դաղարեցրո՛ւ կրակը, անձնատուր ենք լինում,— սարսափահար պատասխանեց Վասոն, առաջինն ինքը շպրտեց հրացանը և ձեռքերը վեր պարզած՝ մոտեցավ Տիգոյին։ Վասոյին հետևեցին հրոսախմբի մյուս գվարդիականները։

— Վասո՛, մենք հանդիպեցինք, այնպես չէ՞,—դառն ժպիտը լերեսին ասաց Տիգոն ու ապստամբ ջոկատի հետ անցավ առաջ։

---

1. Վո՞ր ժամանակվա մասին է գրում հեղինակը։
2. Ինչո՞ւ համար են ձերբակալում Տիգոյին։
3. Ինչպե՞ս է ազատվում Տիգոն պահակների ձեռքից։
4. Միապետության տապալումից հետո ի՞նչ իշխանություն է կազմվում Ռուսաստանում և ի՞նչ դրություն է ստեղծվում բանվորների և աշխատավոր մասսայի համար։

5. Փետրվարյան հեղափոխությունից հետո ո՞ւմ կողմից և ինչո՞ւ համար է կրկին անգամ բանտարկվում Տիգոն։
6. Ո՞վ եր Վասոն (ի՞նչ դասակարգին եր պատկանում նա). ի՞նչ անցյալ է ունեցել նա և ի՞նչ ճանապարհով գնաց վերջը։
7. Ի՞նչ հանդիպման մասին է խոսում հեղինակը։
8. Ո՞վ հաղթեց վերջը։

---

62. «ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓ»-ԻՑ

Զաթնանց գերդաստանն անհուշ որերից
Ցեղել է գյուղում անվանի հարուստ,
Նա դավթել է միշտ լավը հողի,
Ցորենն է փթել Զաթնանց ամբարում։

Իսկ Զաթնանց Սանթրոսն անողոք բահով
Ճեղքել է գլուխն աղքատ Ռուշանի,
Հափշտակել է ընտիր սեահողն
Ու սովի մատնել մի տուն ընտանիք։

Մեռել է Ռուշանն ես վերքից հետո
Ցեվ ման է լեկել Սանթրոսն անպատիժ,
Դատարան մտած հիսուն մանեթով
Դարձել է չհաս, չենթակա դատի։

Զավթել են այսպես ու կերել, մարսել
Զանթնանք՝ Ռուշանի հողը բերքառատ։
Բայց հին անունն է վրան մնացել,
Գյուղում ասում են՝ «Ռուշանի քարափ»։

Զանգվի ձորափին, Ռուշանի քարափին
Ցերևում եր մերկ ծառերի միջից,
Զաթնանց Սանթրոսի տան պատշգամբը,
Ցերբ վոր ճեղքելով ձյան շերտն առաջի,
Ցերեք գյուղացի մոտեցան շտապ։
— Ռուշանի քարափն այլևս քոնը չի,
Դու վոչինչ չունես քարափի միջին։
Սանթրոսը մեկեն գույնը թոցրեց,
Ի՞նչ... աքսորում եք... — մռնչաց վորդին։
— Չե՞ վոր ցես դիմում տվի կոլխոզին,—
Բղավեց Սանթրոսն։— Ո՞ւր գնամ, ասա,
Ախր ո՞ւր գնամ սեփական տնից,
Դե մորթեք, ելի՞, թաղեք կենդանի։
Ցես տուն եմ շինել փափագով բարի,
Բաղչա ցեմ տնկել, հասցրել բարի,
Կյանք եմ մաշել, ե՞, քրտինք եմ թափել,
Եդ վոնց եք ուզում քրտինքս լափել։

— Ե՛յ, Սանթրոս աղա, եղ վոնց ես ճառում,
Ո՞ւմ քրտինքով է վաղել քո առուն,
Ո՞ւմ հերն է քո ես ծառերը տնկել,
Ո՞վ է տանջվել շոգին ու ցրտին,
Մեզնից ես խլել — յոտ տուր ելի մեզ,
Իսկ դու յել գնա, աշխատանք ճարի,
Իմացիր մեզ պես հոգսեր ու կարիք,
Մաքրիր մեղքերդ մի քանի տարի,
Թակարդ մի լարի մեր նոր կյանքի դեմ,
Նոր են ժամանակ կոլեկտիվ արի,
Աշխատիր, ապրիր մեզ հետ միատեղ։

— Ո՞վ եր Զաթնանց Սանթրոսը և ինչպիսի տնտեսություն ուներ նա։
— Վորտեղից եր ձեռք բերել նա իր բերքառու հողերը։
— Գյուղական վոր շերտին եր պատկանում Ռուշանը և ինչ դրության հասավ նրա ընտանիքը։
— Ինչու Սանթրոսն անպատիժ մնաց։
— Խորհրդային իշխանությունն ինչպես վերաբերվեց Սանթրոսի նմաններին, վորոնք անպատեժ ելին մնում հին կարգերում։

ՏԵՂԵԿԱՆՔ

— Գոյական անուններն ունեն յերկու թիվ — յեղակի և հոգնակի։
— Յեղակին ցույց է տալիս մեկ առարկա, իսկ հոգնակին ցույց է տալիս մեկից ավելի առարկաներ. որինակ՝
Մեռել — մեռելներ. դատարան — դատարաններ. գյուղ — գյուղեր։
— Միավանկ բառերից հոգնակի կազմելու համար ավելացնում ենք «եր» մասնիկը, որինակ՝
Հող — հողեր. որ — որեր։
— Իսկ բազմավանկ բառերից հոգնակի կազմելու համար՝ «ներ» մասնիկը. որինակ՝
Քարափ — քարափներ. աղքատ — աղքատներ։

---

63. ԱՌԱՋԻՆ ՄԱՅԻՍԸ

1.

Արևը բարձրացել եր։ Ամպերը դանդաղ լողում ելին, և նրանց թափանցիկ սավերները քող ելին փռում տների ու փողոցների վրա։ Ուրախություն կար, ձայներն ավելի բարձր ելին հնչում և խեղդում հեռվից լսվող ֆաբրիկայի աղմուկը և մեքենաների դղրդոցը։

Փողոցի անկյունում հավաքվել ելին մոտ հարյուր մարդ։ Նրանց խորքում լսվեց մի ձայն.

— Ընկերներ, ասում են՝ աշխարհում դանդաղն ժողովուրդներ են ապրում — հրյաներ, գերմանացիներ, հայեր, թուրքեր, ռուսներ...

իսկ յես դրան չեմ հավատում։ Միայն յերկու ժողովուրդ կա, յերկու ցեղ — հարուստներ և աղքատներ։ Մարդիկ տարբեր են հագնվում և տարբեր են խոսում, բայց տեսեք, թե ռուսները, գերմանացիք, ֆրանսացիք և մյուսները ինչպես են վարվում բանվորների հետ։ Տեսեք և համոզվեք, վոր նրանք միևնույն ավազակն են բանվորի համար...՝ Թող նրանց ըկում վոսկոր մնա...

Բազմությանն մեջ մի քանի հոգի ծիծաղեցին։

— Իսկ յեթե մյուս կողմից նայեք, կտեսնեք, վոր ռուս բանվորը, թուրք բանվորը, հայ բանվորը նույն շան կյանքով են ապրում, ինչ վոր ֆրանսացի և գերմանացի բանվորները...

Փողոցից ժողովուրդը հավաքվում եր։ Մոտենում ելին, կանգնում վոտների թաթերի վրա, վզները յերկարում, վոր ավելի լավ լսեն։

— Արտաստհմանում բանվորները հասկացել են այս պարզ ճշմարտությունը և այսոր, մայիսի մեկի պայծառ որը...

— Վոստիկանները, — բղավեց մեկը։

Փողոցում յերևացին յերկու ձիավոր վոստիկան, վորոնք մրտրակները ճոճելով, քշեցին ձիերը նրանց վրա և գոռացին հեռվից.

— Հեռացեք։

— Ես ի՞նչ զրույց ե։

— Ո՞վ եր խոսողը։

Մարդիկ հոնքերը կիտեցին և դժկամակությամբ ճանապարհ տրվին ձիերին։ Մի քանի հոգի բարձրացան ցանկապատի վրա։ Լսվեց ծաղր ու ծիծաղ վոստիկանների հասցեին։

— Խոզերին նստացրել են ձիերի վրա, նրանք ել խռխռացնում են, թե մենք ել կռվող ենք, — կանչեց մեկը։

2.

Հրապարակում յեկեղեցին եր, վորի շուրջը, ցանկապատի մոտ, մարդիկ նստել ելին։ Այստեղ մոտ հինգ հարյուր յերիտասարդներ կային, կանայք և յերեխաներ։

Լսվեց կանանց դսպված ձայնը։ Տղամարդիկ հեռանում ելին նրանցից, մոտենում վոստիկաններին։

— Միա՛ւ, — լսվեց կանացի դողդոջուն մի ձայն, — քեզ խնայեր։

— Թող, — յեղավ պատասխանը։

Իսկ մի ծեր բանվոր խռպոտ ձայնով հանդարտ ասաց.

— Վո՛չ, մենք չենք կարող յերիտասարդներին թողնել... Նրանք մեզնից խելոք են և ավելի համարձակ... Թեև բանտ են նստել, բայց ելի մեզնից խելոք են։

Վոռնաց սուլիչը և խեղդեց մարդկանց խոսակցությունը։ Բազմությունը դողաց, նստածները վեր կացան, մի բոպե ամեն ինչ քարացավ և շատ դեմքեր գունատվեցան։

— Ընկերներ,—լսվեց Պավելի դիլ և հաղթ ձայնը։

— Ընկերներ, մենք վորոշել ենք այսոր աշկարա ասել, թե ով ենք մենք... Այսոր մենք բարձրացնում ենք մեր դրոշը՝ ճշմարտության, աշխատանքի և ազատության դրոշ։

Ոդում փայլեց սպիտակ և յերկար ձողը, կռացավ, բազմությունը ճեղքեց և ապա վեր բարձրացավ, ծայրին կարմիր դրոշը, վոր թռչունի նման թպրտացնում եր թևերը։

Պավելը ձեռքը վեր բարձրացրեց,—ձողը դողաց։ Իսկույն տասնյակ ձեռքեր սեղմեցին դրոշակի փայտը։

— Կեցցե՛ բանվոր դասակարգը,—բղավեց նա։ Հարյուրավոր ձայներ նրան արձագանգ տվին։

Բազմությունն ավելի սեղմեց շարքերը։ Պավելը դրոշակը շարժեց, և նա սկսեց լողալ բազմության գլխների վրայով, փայլեց արևի շողերի տակ։

— Հրաժարվենք, ընկերներ, հին որենքներից...

Յեվ ժողովուրդը հետևեց կարմիր դրոշին։

— Մենք կերթանք մեր չարքաշ բանվորների մոտ—թափվում ելին յերգի հնչյունները, վոգևորում մարդկանց։

— Պինդ կացեք,—լսվեց մի ձայն։

— Դուք թագավոր կայսրի դեմ եք, հա՜... բունտ եք անում... յես ձեզ ցույց կտամ,—ասաց ձիավոր վոստիկանն ու հեռացավ։

— Մի ջոկատ դպրոցի դիմացն ե կտրել, մյուսը՝ ֆաբրիկի...

— Ինքը գեներալն ե հրամանատարը...

— Տեսա՞ք, վոր վախեցան մեզնից,—կանչեց մեկը։

— Ընկերներ,—լսվեց Պավելի ձայնը,—զինվորները մեզ նման մարդիկ են։ Նրանք մեզ վրա չեն կրակի և վորպեսզի նրանց ել համոզենք, մենք պետք ե առաջ գնանք, անվախ, միշտ առաջ...

3.

Փողոցի ծայրին միանման մարդկանց դորշ պատը ցցվեց նրանց դեմ։ Սվիններ փայլում ելին մոլալ ու դաժան։ Յեվ զինվորների ամբողջ շարքից մի սառնություն թափանցեց բանվորների շարքերը։

— Խփեցե՛ք դրանց,—լսվեց մի ձայն։ Պատն անշարժ եր։

— Հրաման ե տալիս,—ասաց բանվորներից մեկը։

— Սվիններ պատ-բայոնետ—լսվեց հրամանը։ Ոդի մեջ ճոճվեցին սվինները, և զինվորները դանդաղ քայլերով մոտեցան դրոշակին։

— Ցրվեցե՛ք,—բարակ ձայնով բղավեց յերիտասարդ սպան, վոր թուրը հանած՝ գնում եր զինվորների առաջից։

Զինվորները և կարմիր դրոշակի շուրջը հավաքված մարդիկ ավելի ելին մոտենում իրար։ Արդեն պարզ տեսնում ելին զինվորներից յուրաքանչյուրի դեմքը։ Սվիններ փայլում ելին, և նրանց բութ մասով զինվորները մեկ-մեկ դեն ելին հրում կարմիր դրոշի յետևից գնացող մարդկանց։

Ցերգը մարեց։ Մարդիկ կանգ առան, շրջապատեցին Պավելին, սակայն նա առաջ ընկավ։ Տիրեց լռություն։ Քսան հոգի սեղմ շարքերով կանգնել ելին դրոշակի տակ և ձեռքերով պինդ սեղմել ելին ձողը։

Ցերիդասարդ սպան մոտ վազեց, ձեռքը մեկնեց դրոշակի ձողին և ծվվաց։

— Թող։

— Ձեռքդ քաշի՛ր,—բարձր բղավեց Պավելը։

Կարմիր դրոշը ոդի մեջ դողդողաց, աջ ու ձախ թեքվեց և նուրից ուղիղ ձգվեց։ Սպան, յետ գլորվելով, ընկավ գետնին։

— Բռնեցե՛ք դրանց,—հրամայեց նա։

Մի քանի զինվորներ առաջ ընկան։ Նրանցից մեկը հրացանի կոթով խփեց, դրոշակը յերերաց, թեքվեց և կորավ զինվորների գորշ բազմության մեջ։

— Այս պատմվածքի մեջ նկարագրված դեպքը ի՞նչ կարգերում ե տեղի ունեցել։

— Ի՞նչից ե յերևում։ Ընդգծեցեք այն տողերը և անունները, վորոնք ցույց են տալիս այն ժամանակաշրջանը։

— Ի՞նչու համար ենք տոնում Մայիսի մեկը։

— Նկարագրեցեք Մայիսի մեկի տոնը ձեզ մոտ։

— Համեմատեցեք Մայիսի մեկը Խորհրդային Միության մեջ և բուրժուական յերկրներում։

---

64. ՄԵՌԱ՛Ն՝ ՉԿՈՐԱ՛Ն

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան,—
մեռան, չկորան...
Կրակն եր ցայտում նրանց աչք-ունքից,
շանթը՝ շրթունքից,
Ցերը խոսում ելին ծով-ամբոխի մեջ
վիշտ ու կարիքից։
Վրեժի, ցասման հրով բորբոքված
նրանք բեմ ելան,

Ցեվ բեմը դարձավ արյունով ներկված
ղոհերի սեղան։
Ինչպիսի հերոս ընկերներ մեռան...

Այսոր բանտերում, վաղը աքսորում,
մյուս որ կախաղան
Հանելու համար դահիճը դաժան
կացին և սրում,
Բայց հերոսների շուրթերից սեղմված
նզովք չե լսվում.
Բաժակն են ըմպում վերածնության
սյուներին կախված
Ու հիմը յերգում հեղափոխության՝
հպարտ, չհաղթված։
Ինչպիսի հերոս ընկերներ մեռան...

Հե՛յ, ազատության անպարտ, զինվորներ,
դուք, վոր անխոով
Ներկեցիք փողոց ու գործարաններ
ձեր տաք արյունով,
Այն վայրում այսոր ջահել-ջիվանները
ըմբոստ շարքերով
Ձեր գովքն են անում... ձեր թափած արյամբ
սնվում, ամրանում...
Ցեվ անմահներիդ յերդվում են անվամբ
ու հպարտանում,
Վոր դուք, հիրավի, պատվով, վեհությամբ
ձեր գործը տարաք.
մեռա՞ք՝ չկորա՞ք։

— Ի՞նչ հերոսների մասին և խոսում հեղինակը։
— Ի՞նչ գնով և ձեռք բերվել Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Դիտեցեք ը-ի գրությունը բառի մեջ. ընկեր — դասընկեր — անընկեր — խաղընկեր; ընթացք — դասընթաց — զուգընթաց — նախընթաց, ընտիր — վերընտրել — նորընտիր.

Կանոն.— Եթե բարդ կամ ածանցավոր բառի յերկրորդ բաղադրիչ մասն սկսվում և ը-ով, բառի մեջ այդ ը-ն գրվում և։ Մնացած դեպքերում բառի մեջ լսվող ը-ն չի գրվում. որինակ, գրում ենք՝ գրիչ (փոխ. գըրիչ), Մկրտիչ (փոխ. Մըկըրտիչ) և այլն։ Տոզաղարձի ժամանակ այս վերջին ը-ն գրվում և—գը-ըիչ, Մը-կըը-տիչ, բը-ժըշ-կու-թյուն և այլն։

---

65. ՎԵՐՋԻՆ ՄԱՅԻՍԸ

Խավարն իջավ ու ծանրացավ.
Ու դաշտերում հին Շիրակի
Հովը փչեց, յերգեց անձայն
Ու անհանգիստ, ու անհանգիստ։

Ու մայր մտավ լուսինն էլ այն,
Խավարն իջավ դաժան, մոլի.
Ծածկեց նրա թևերը լայն,
Կայարանը Ալեք-պոլի։
Ալեք-պոլի կայարանում,
Գծերի վրա, սառն ու անձայն,
Վորպես խոսող մի վարանում՝
Կանգնել է նա վորպես արձան։
Զրահապատը յերկաթակող,
Զարհուրելի, խավարամած։
Զրահապա՞տն յերկաթափող,
Զույգ գծերի վրա դամած։

Վերջին բերդը յելնող ուժի,
Վերջին պահակը Մայիսի։
Նա, վոր ճչաց մեր դրոշի
Ու մեր վերջին մարտի մասին։
Ու Շիրակի հին դաշտերում
Նա զրնգաց, զնգաց նորից։
Ու մոտ թվաց՝ ինչ վոր հեռու։
Ազատ թվաց՝ ինչ վոր դերի։
Վաղվա մասին նա զրնգաց
Մեր հաղթական բախտի մասին,
Հնի մասին մահագնած
Ու մարմնացած մեր յերազի,

— Դիտե՞ք, վոր այժմ վողջ աշխարհում
Բարձրանում է մի նոր հորձանք,
Հուրհուրում է մի նոր գարուն,
Մի նոր արև արևավոր,—
Արևի պես հրանման.
Ու նրա պես լուսապայծառ,
Կյանքը հիմա—և՛ կյանք, և՛ մահ
Կյանքը անծուխ՝ կրակ դարձավ։
Հայաստանից մինչ հեռավոր
Աշխարհները հեռո՞ւ հեռու,
Անպարտելի մի ծարավով
Կարմիր ուրուն է դեգերում։
Կարմիր ուրուն է դեգերում,

Վերջին հյուրը վողջ աշխարհի,—
— Ազատության հողին, գերուն,
Վերջ բռնության, նրա չարին։
Հայաստանից մինչ հեռավոր
Աշխարհների հռհռ հեռուն
Անպարտելի մի ծարավով
Մեր ցասումն է հիմա յեռում։
Յեվ այդ է, վոր ահա դարձավ
Մի պաշարված զրահապատ՝
Մեծ պայքարի խոժոռ արձան՝
Ծառացել է խիստ ու հպարտ։

— Ո՞ւմ դեմ եր մայիսյան ապստամբությունը. ո՞վքեր եյին մասնակցում այդ ապըստամբությանը և ո՞ւմ ղեկավարությամբ։ Ինչո՞ւ։

— Հայաստանի հեղափոխական շարժման վոր շրջանին և վերաբերում այս հոդվածը։ Ինչո՞ւ հեղինակն այդ անվանել է «Վերջին Մայիս»։

— Ինչ նշանակություն ունեցավ այդ «Մայիսը» Հայաստանի խորհրդայնացման համար։

— Պատմեցեք ձեր հուշերը մայիսյան ապստամբության որերից։

— Ընդգծեցեք այս վոտանավորի մեջ բաղաձայնները և յերկձայնները։

---

66. ԱՐՅՈՒՆՈՏ ԾԱՂԻԿՆԵՐ

Ամեն առավոտ արհեստանոց գնալիս, յես կանգ եյի առնում մի քանի րոպեյով են շքեղ տան պարտեզի առաջ և հրճվանքով նայում զարմանալի գունդգունդ ծաղիկներին։

— Ցերանի ձեզ, ծաղիկներ,—ասում եյի,—ձեզ այդպես քընքուշ պահում, գուրգուրում են, աշնան ցուրտ գիշերները խսիրներով ծածկում են, վոր չմրսեք, իսկ ինձ որ չի հասնում, վոր չծեծեն...

Յես իմ փոքրիկ տեղովս այնպես եյի մտածում, վոր մարդս մի ծաղիկ եյ չարժի... Աշնան մի առավոտ յես տեսայի այդ ծաղիկները։

Այդ որը մի դժբախտ որ եր ինձ համար։ Վարպետն ինձ հանձնել եր նորոգելու մի զույգ կոշիկներ, իսկ ինքը գնացել եր իր գործերով։

Յես եյ ուշք ու միտքս տվել եյի փողոցում խաղացող տղաներին։ Մեկ եյ տեսնեմ մեխը ծուռ խփվեց ու ճեղքեց կոշիկի կաղապարը։ Վարպետը վերադարձավ յերեկոյան գայրացած, յերևում եր՝ գործը չեր հաջողվել։

Նա իսկույն իմացավ իմ դժբախտության մասին և կատաղած սկսեց ինձ ծեծել։

Աղի-աղի լաց լինելով դուրս ընկա փողոց և քայլերս ուղղեցի դեպի վարպետի տունը. տուն գնալիս մտածում եյի, թե ինչպես միշտ, այս անգամ եյ վարպետը կհանգստանա ու կմոռանա... բայց սխալվեցի։ Տուն ներս մտնելուն պես վարպետը նորից հարձակվեց և մի քանի հարված տալով, դուրս գցեց փողոց։

Իսկ աշնան քամին վզզում եր ու վզզում։

Նա փշաքաղում եր մարմինս, կարծես վոսկորներիս մեջ եր անցնում, մտրակում եր, վոչ մի տեղ հանգիստ չտալով։

Այդպիսի դրության մեջ յես մոտեցա այն դիմացի մեծ տանը։ Յես հիշեցի, վոր աշնան ցուրտ գիշերներին այդ ծաղիկների վրա խսիրներ եյին փռում, վոր չմրսեն։

Ցավ հենց այդ առավոտ յես տեսել եյի այդ խսիրները։

Ի՞նչ կլինի, մտածում եյի, մտնեմ այն խսիրների տակ և պատրաստվեմ այս դաժան գիշերը։

Լավ նայեցի չորս կողմս, տեսա մարդ չկա ու մի ակնթարթում բարձրացա ցանկապատի վրայով և իջա պարտեզը։ Մտա խսիրների տակ և մի կերպ պատսպարվեցի։ Ծաղիկների հոտը շշմեցնում եր ինձ, ու յերկար ժամանակ քունս չեր տանում։

Ցերազի պես զգացի՝ կարծես ինչ վոր բան փլվեց ու վրաս ընկավ։ Սուր, սեղի նման ծակող ցավը կրկնվեց, ու յես վերթռա։ Բայց մի ակնթարթում ամեն ինչ աչքիցս ծածկեց մի հրեշավոր դեմք, վորն արջի նման կատաղած ինձ հարվածում եր։

— Շուն, տվազակ,—գոռում եր նա,—ինչ կասի իմ տերը, լավ է քո գլուխը մեռնի, քան թե ես ծաղիկները փչանան։

Ասում եր ու կոպիտ հարվածներ տալիս։ Քթիցս ու բերանիցս արյուն եր կաթկթում, իսկ յես կիսաթուն դրության մեջ շշմել եյի։

Ահա այդ որվանից յես ատեցի են շքեղ տան զուգված, զարդարված ծաղիկները...

Ցավ ամեն տեսնելիս՝ ինձ թվում եր, թե նրանք արյունով են ջրվում, թվում եր, թե են կաս-կարմիր ծաղիկներն իմ արյան կաթիլներն են...

— Ինչպիսի՞ վերաբերմունք եր ցույց տալիս վարպետն իր աշակերտներին.

— Տանից դուրս շպրտվելիս վորտե՞ղ եր գիշերում նա.

— Ինչո՞ւ համար կոշկակարի աշակերտն սկսեց ատել դիմացի տան պարտեզի գեղեցիկ անուշահոտ ծաղիկները։

— Ցենթական և բայը թվով ու դեմքով համաձայնում են իրար։

— Ցեղակի յենթակայի հետ դրվում է յեղակի բայ, հոգնակի յենթակայի հետ՝ հոգնակի բայ։

— Որինակ՝ ինքը գնացել եր—նրանք գնացել եյին, նա փշաքաղում եր մարմինս—նրանք փշաքաղում եյին մարմինս։

67. ԼԻԿՎԻԴԱՏՈՐ

Անունը Միսո էր։ Այդպես էլ ասում էին՝ ընկեր Միսո։

Գնդլիկ էրիտ ատամները։ միշտ բաց։ Վորովհետև շարունակ ծիծաղում էր։ Ցեվ ծիծաղում էր, վորովհետև առողջ էր և անհոգ։

Բայց մի քիչ միամիտ էր ու ցրիվ։

Փոչլիկ գլուխը գրքերի մեջ խոթելով՝ ուղղակի խփշտում էր գիտելիքները։

Թե ի՞նչ էր դուրս բերում այնտեղից, վոչ վոք չգիտեր, վորովհետև թվում էր, թե չեր իմանում գրքից ոգտվել, այնքան շրփերթ էր։

Բայց մանավանդ շատ էր խրված հասարակական կոմբերիտական աշխատանքների մեջ։

Ցոթնամյակը նոր էր ավարտում և լիկվիդատոր էր մեծահասակների դպրոցում։

Ամբողջ որը քիթը քամի մտած, հևալով, քրտնամխելով վազում էր դես ու դեն ու ժամանակ չեր գտնում գործերը վերջացնելու։

Կգար տուն, ռումբի պես կնետվեր ներս, գրքերը՝ պատառոտած թոփերի պես կշպրտեր անկողնին, թրմփալով կնկներ աթոռի վրա և առանց նայելու, թե ափսեյում ինչե ածած, մշմշալով, քիթը մեջը, կխպշտեր ու պռուկ։

— Ո՞ւր

— Լիկկայան։

Մեծ յեղբայրը, Արամը, աչքի տակով մտիկ կտար և ուսերը կթոթովեր միայն։

Ի՞նչ էր սովորեցնում Միսոն լիկկայանում։ Ի՞նչ ելին սովորում նրա հասակավոր աշակերտները։

Քուլրը ծիծաղը պահած հարցրեց մի անգամ.

— Ի՞նչ ես ավանդում, Միսո։

— Վորոշ առարկաներ։

Ու մշմշալով գրքերը հավաքեց, դրեց գրպանը։

— Վորոշ առարկաներ։ Որինակ՝ ի՞նչ

Միսոն ժպտաց։

Պիտի փրթկար, բայց շուրթերն էր կծում պինդ։ Կարծես ինքն էլ էր ծիծաղում իր արածի վրա։

— Որինակ՝ մի առարկա ասա։

— Որինակ՝ աշխարհագրություն։

— Բայց ինքդ գիտես լավ։

Միսոն ժպտաց նորից։

— Ինչու չգիտեմ։ Այ, եսոր անցա Զեխոսլովակիան։

— Զեխոսլովակիան։ Ապա ասա նրա մայրաքաղաքը։

— Ինչի՞ ե պետք։

— Պետք ե նրա համար, վոր վստահ եմ, վոր··· չգիտես։

— Ինչու, չգիտեմ։

— Դե ասա։

— Բուդապեշտ։

— Բուդապեշտ։ Զեխոսլովակիայի մայրաքաղաքը։ Այ խելոք։

Միսոն ատամները ցույց տվեց, և հիմար ժպիտը փայլեց արյունոտ այտերին։

— Բա վոնն ե։

Զիսոսլովակիայի մայրաքաղաքը Պրագան ե, խելքի տոպրակ։

— Յա··· ով ե ասում։

Բերին քարտեզը, նայեցին։ Ճիշտ ե···

Բայց Միսոյի վրա չի ազդում։ Ծիծաղում ե ու գդակը վերցնում։ Շտապում ե դասի։

— Դասերդ ինչու չես պատրաստում—հարցրեց քուլրը։

— Ո՞վ չի պատրաստում։ Ա՛յ, թելադրության նյութը։ Բոլորը պատրաստ ե։

— Ապա տեսնեմ։

— Դեռնը, ինչ բան ունես,—հրեց արմունկով Միսոն և տետրակը փոխցրեց։

— Նայեմ, ելի, ինչ կլինի վոր··· Ցեվ քուլրը խլեց տետրակը, նայեց, նայեց ու փրթկաց։

— Հա, ի՞նչ կա։

— Տես ի՞նչ ես գրել։

— Հա, ի՞նչ եմ գրել։

— Գրել ես «ամուրացնինք գուղի ու քաղաքի կապը»։ Ցերկու տառասխալ։ Լիկվիդատորի՞ս մտիկ։

Ու ելի ծիծաղում ե։

— Բա վոնց են գրում։

— Ամաչիր գոնե։ Ամրացնել, գյուղ—ալ ինչպես են գրում։

Միսոն աչքերն ե պսպղացնում։ Իսկի պետքը չի։

— Ե՛, թող լինի «ամրացնել, գյուղ»։ Ցես ել եղպես կսովորեցնեմ։

Արամը, մեծ յեղբայրը մեջ մտավ։

— Լսիր, վառժապետ (ռ-ն շեշտեց) մի քիչ սովորիր, անունդ լիկվիդատոր ե։

Բայց Միսոն դուրս թռավ։

Հետևյալ որը տանեցիք սկսեցին ձեռք առնել Մխոյին։

— Հը՞, Պրագան վո՞նց լեղավ։

— Ուղղեցի, սովորեցին։

— Ուրեմն սխալ ելիր սովորեցրել։

Մխոն սատանի պես պսպղացնում եր աչքերը։

— Սխալ ելի սովորեցրել, ուղղեցի, չիմացան։

Ու քահ-քահ ծիծաղեցին։

— Յերևի ելի ինչքան բան կա, որ չես իմանում։

— Ո՞վ չի իմանում, ուզում ես քննի։

— Լավ, Դերբենտը վո՞րտեղ է։

— Անդրկասպյան յերկրում։

Բոլորը քահ-քահ ծիծաղեցին, հետո բարկացան։

Մխոն շփոթված ժպիտով նայեց չորս կողմ։

— Ի՞նչ, սխա՞լ եր, եդպես չի՞։

Արամը գլուխը շարժեց։

— Ի՞նչ են այս տգետներին ուղարկում սովորեցնելու։ Այս լինչ լիկվիդատոր է։ Սա ինքը դեռ պիտի սովորի, հետո սովորեցնի։

Մխոն հոգնած եր սաստիկ։ Պարապել եր ինքը, պարապեցրել ուրիշներին, վոտով գնացել եր մոտակա գյուղը բրիգադային աշխատանքի, հիմա ել գնում եր ժողովի։

Ուղղակի ժամանակ չուներ խորանալու։ Շտապում եր, պետք է գնար։

Մշաց, տրորվեց, վեր թռավ ուպրուկ։

Այսպես աղմկալից եր Մխոյի կյանքը։ Ու միայն լիկկայանն ու գյուղը չեյին նրա այցելած վայրերը։ Մխոն ամենուրեք եր։

Միշտ նույն արագությամբ, ցրված, ուրախ։ Միշտ ել միամիտ։

Մխոն ուղղակի թաղված եր իրեն բաժին ընկած կյանքի հոգսերի մեջ ու գետն ընկել՝ գնում եր։ Ո՞ւր, ժամանակ չկար մտածելու այդ մասին։

Նա կյանքին նվիրված տղա յեր և այնքան շատ եր կյանքը նրա համար, որ ժամանակ չկար նաև ապրելու։

Շտապում եր՝ ինչպես ամենքը, ու կյանքի հախուռն ընթացքում մյուսների հետ գլուխը զարկելով այստեղ-այնտեղ, ծիծաղելով, մեծանում, աճում եր։

Նրա վրա շատ ծիծաղեցին տանեցիք, ուրիշները։ Նա լավ եր չնկատեց այդ ծիծաղը։ Շատ բան չգիտեր և չեր ել նկատում այդ։ Շարունակ ուղղում ելին նրան, նա յել ուղղում եր ծիծաղելով, գնում եր գործին։

Ցեվ ի՞նչ։ Շարունակ սխալվելով, ուղղելով՝ սովորեց հետզհետե այնպես, վոտի վրա...

Տարիներ անցան։ Մխոն ավարտեց շինուսը, դարձավ տեխնիկ։ Հետզհետե լրջացավ։ Ել չեյին ծիծաղում նրա վրա, այլ ժպտում... ինչ վոր համակրանքով։ Նա յել եր ժպտում։ Բայց նրա ժպիտի մեջ սկսել եր մթնել այն որեկտիվ թախիծը, վոր գործի մարդու լրջության գույնն է։

Մխոն հարվածային տեխնիկ է և կարմիր տախտակին արժանացած։

Նրա ամբողջ կերպարանքը լցված է մի ուրիշ իմաստով, վոր Մխոյի և նմանների իմաստն է, վորը և առաջ վոչվոք չեր նկատում։

Վոր նրանք սովորում են սովորեցնելով։

---

1. Ինչպիսի կոմյերիտական եր Մխոն և ինչպես եր վերաբերվում նա իր աշխատանքներին։

2. Ի՞նչ ոգու ստացավ նա մեծահասակների անգրագիտությունը վերացնելու աշխատանքից։

3 Ի՞նչ ազդեցություն թողին նրա վրա քրոջ և յեղբոր դիտողությունները։

4. Բնութագրեցեք Մխոյին։

Ա.Ս.Ս.Ր. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԽԱՎ ԳՐԱԴԱՐԱՆ

ՑԱՆԿ

1. *Վարդապուշն տուֆի յերկրում*—Ակսել Բ. 3
2. *Հերոսական*—Գ. Հայրիյան 5
3. *Ռազմիկ տուրիստները Զորագիսում*—Ս. Թոմաս 6
4. *Աշխատանքի հերոսները*—Ակսել Բ. 9
5. *Քարհատները*—Դ. Դեմիրճյան 16
6. *Ալանվերդու պղնձահանքերում*—Ն. Զարյան 18
7. *Տպարանի պապաշան*—Ակսել Բ. 21
8. *Ուրալում* 25
9. *Մեքենավարի յերդը*—Գ. Շահյան 26
10. *Կոմսոմոլի փոկերով*—Ակսել Բ. 27
11. *Խոտհունձ*—Խ. Դաշտենց 28
12. *Կոմբայնը*—Մակսիմ Գորկի 30
13. *Այց կոլխոզին*—Մ. Կարյուն 34
14. *Ցերդը* 35
15. *Ընկերը*—Ավ. Իսահակյան 36
16. *Զիթ*—Պայազաս 39
17. *Նավթահանքը*—Շիրվանզադե 44
18. *Արևը*—Սրազի 49
19. *Իվանեն*—Բուչիշվիլի 50
20. *Մ՛ սև ամպեր*—Ա. Ծատուրյան 53
21. *Ընկեր Մուկուչը*—Սրազի 54
22. *Ախ, մեր սիրտը*—Ավ. Իսահակյան 60
23. *Գարուն*—Զարենց 61
24. *Մեռնում ե*—Վ. Սիմոնյան 61
25. *Աճում ե*—Վ. Սիմոնյան 61
26. *Կոմունա*—Բուչիշվիլի 62
27. *Գարը բիձու շերամապահությունը*—Հ. Թումանյան 63
28. *Նոր գյուղը*—Ն. Զարյան 64
29. *Սաքուլն ուխտ գնաց*—Նար-Դոս 66
30. *Նարգիզի մուրաղը*—Ս. Զորյան 68
31. *Կառապանը*—Պայազաս 70
32. *Միկիտան Սաքոն*—Պ. Պոլոյան 73
33. *Արյունոտ ցուցակը*—Ցե. Ղարիբյան 78
34. *Զուր քար*—Վ. Փափազյան 82
35. *Պիոներ Թանդոն*—Կ. Լորդկիպանիդզե 83
36. *Խարույկի մոտ*—Ռուբ. Զարյան 87

7. Կարմիր որին 90
38. Սաթոն—Դ. Դեմիրճյան 90
39. Յոհանոց գործարան 92
40. Լենտեքստիլի բանշենում—Գ. Սարյան 93
41. Շուշանի խրճիթում—Նար-Դոս 95
42. Դեպի Մոսկվա—Ն. Հովնանյան 98
43. Գյուլնարա—Գ. Սարյան 102
44. Որանջիա—Ակսել Բ. 106
45. Փոքրիկ լրագրավաճառը—Ա. Վեսուն 109
46. Գիքորը—Հ. Թումանյան 110
47. Գեղջուկի մտորմունքը—Կայլցով 116
48. Տերն ու ծառան—Հ. Թումանյան 116
49. Մեր ճամփեն կոլխոզն ա, կոլխոզը 119
50. Կշլան—Վ. Փափազյան 122
51. Սպիտակ քաղաքը—Ս. Զորյան 126
52. Արորը՞, թե տրակտորը—Գ. Մահարի 128
53. Կիսատ տունը—Սրազի 131
54. Զորբորդ հարվածը— 133
55. Քաղհանը—Հով. Շիրազ 135
56. Գութանի յերգը—Հ. Թումանյան 136
57. Յերգ ժողովրդի մասին—Չարենց 137
58. Արսեն Զորջիաշվիլի—Դ. Թուրդուսպիրելի 138
59. Մեկ ել, մեկ ել—Հակ. Հակոբյան 144
60. Մալտյալ հետախույզը—Վ. Անանյան 145
61. Մենք անպայման կհանդիպենք—բանվոր Գեվո. 148
62. «Ռուշանի քարափ»-ից—Ն. Զարյան 155
63. Առաջին մայիսը—Մաքսիմ Գորգի 156
64. Մեռան, չկորան—Հակ. Հակոբյան 159
65. Վերջին մայիսը—Գ. Մահարի 161
66. Արյունոտ ծաղիկներ—Սրազի 162
67. Լիկվիդատորը—Դ. Դեմիրճյան 164

50

ՀՀ Ազգային գրադարան
NL0977184

Գնը 1 ռ. 70 կ.

697

11
26937

Соцстроитель

учебник Арм. языка

Госиздат ССР Армении

Ереван 1932